Սենյակից իսկույն դուրս եկա եւ ստիպված եղա ցրտից դողալով սպասել բակում, մինչեւ արեգակի ծագումը:

Ապրեսյանի գրածը իսկապես կատարվեց: Առավոտյան մեզ Հտապից դուրս բերին եւ, մեր իրերը սայլերի վրա դարսելուց Հետո, շրջապատեցին գինվորներով եւ տարան քաղաքի փողոցներով:

Մենք ուրախ եւ երջանիկ քայլում էինք, կարծելով թե շուտով կազատվենք: Բայց Հակառակը դուրս եկավ: Մեզ տարան քաղաքից դուրս գտնվող Բագվի ամրոցները եւ մտցրին բերդի ամրոցի բետոնե սնդուկի մեջ, որի երկարութիւնն էր մոտ երեք մետր, իսկ լայնութիւնը 50 սանտիմ, բարձրութիւնը մոտ երկու մետր: Վերեւի մասում ուներ դեպի դուրս բնկած մի որմախորշ, որի բարձրութիւնն էր 40 սանտիմ: Առանցքում կարելի էր միայն կանգնել, իսկ որմախորշում՝ պառկել: Դիմացը կար մի դուռ, փոքրիկ օդանցքով, որից լույսը ներս էր թափանցում: Դռան մոտ կանգնել էր պահակը:

Պետքարանը գտնվում էր դրսում, ուր մեզ տանում էին երկու պահակների Հակոբության ներքո: Հաց, եռարժամ ջուր եւ ճաշ տալիս էին օդանցքով: Որմախորշի բետոնե պատերի վրա կային մատիտով եւ արլուխով գրված գրութիւններ: Մահվան դատապարտվածները այստեղ մի երկու օր սպասել էին մինչեւ իրենց գնդակահարվելը:

Կային շատ հուզիչ գրություններ: Մի վրացի խնդրում էր իր մահվան մասին կնիքը լուր տալ: Մի քանի ասյա վերջին հրաժեշտն էր տալիս իր մորը, եւ այլն: Այս բոլորը մեզ վրա այն աստիճան ծանր ապավորութիւն ձգեց, որ բոլորովին չէինք խոսում եւ մեր աշխատանքը կատարում էինք մեքենարաբ: Երեկոյան ես նկատեցի, որ բոլորն էլ ինձ Հետ շատ սառն են վերաբերվում: Դրա պատճառն իմ Ապրելյանին գրած նամակն էր: Նրանք կարծում էին, թե նրա ցուցմունքով մեր վճիռը փոխել էին եւ մեզ պետք է գնդակահարելին: Ապաստում էինք, որ այդ գիշեր պիտի գնդակահարելին: Հակոբութիւնը շատ խիտ էր եւ Հնարավոր չէր դրսի Հետ որեւէ կապ ստեղծել: Բոլորին տրամադրութիւնն էլ շատ բնկած էր, բոլորս էլ լուռ էինք, խորատուզված մեր մտքերի մեջ: Պահակները մեր Հարցերին չէին պատասխանում եւ մեզ Հետ շատ կոպիտ էին վարվում:

Այդտեղ մենք մնացինք մի ամբողջ օր ու գիշեր, եւ ոչ ոք մեզնով չՀետաքրքրվեց: Ամբողջ ժամանակ մնացինք պռակած, մինչեւ անգամ գլուխներս չէինք կարողանում բարձրացնել, որովհետեւ դիպչում էր վերեւի բետոնին: Լուսավորութիւնը շատ ուժեղ էր, եւ մենք կարգում էինք բանտարկյալների կողմից բետոնի վրա գրված վերջին հրաժեշտի խոսքերը:

Գիկտեմբերի 30-ի առավոտյան, ժամը 10-ին, օդանցքը բացվեց, եւ մի հոգի մեզ կարգադրեց իրերը Հավաքել: Ապա՝ դուռը բացվեց եւ մեզ դուրս բերին, ուր գինյված պահակներ մեզ անմիջապէս շրջապատեցին եւ փողոցներով տարան դեպի երկաթուղու կայարանը: Այնտեղ, մուտքի մոտ, երկու կողմերում կանգնած գին-վորների միջով, գնացինք երկաթուղու կայարանի ետեւի մասը:

Առաջին գծի վրա կար մի վագոն, որտեղից նոր դուրս էին բերել կողերին եւ եղներին, որոնց աղբերը դուռ չէին մաքրել: Մեզ այդ վագոնը մտցրին: Այդտեղ մեզ միացան երեք բանտարկյալներ եւ վեց գինյված պահակներ: Դրանցից մեկը իր ուսից կախել էր մի պայուսակ, որի մեջ կային երկու ծրարներ: Մենք Հանգստացանք, որովհետեւ մեզ այլեւս չէին տանում ծովը գնդակահարելու:

Պահակները ուռաներ էին: Նրանց գլխավորը Տամբովի նահանգից մի անգրպազեա կարմիր գինյվոր էր: Շուտով նրա ու իմ միջեւ մտերմութիւն ստեղծվեց: Նա պայուսակն ինձ Հանձնեց, երկու ծրարով, որոնցից մեկը Հասցեագրված էր այսպէս՝ Ռոստով-Դոն Չեկալին, որին պիտի Հանձնէինք մեզ Հետ եկող երեք բանտարկյալներին: Մյուս ծրարի վրա գրված էր՝ Ռյազան ճամբարի պետին:

Մեր ճանապարհորդութիւնն ընթացքում պահակների կողմից մեզ վրա Հակոբութիւն չկար: Կայարաններում ազատ գրոսնում էինք, էտապներից Հաց եւ կերակուր ստանում եւ մեր ստացած բաժինը տալիս էինք պահակներին: Բոլոր կարգադրութիւնները մենք էինք անում: Որտեղ կարիք ունեինք սպասելու, կարգադրում էինք վագոնը բաժանել գնացքից, իսկ երբ ցանկանում էինք, վագոնը միացնում էինք մեր ուզած գնացքի Հետ:

Երեք օրից Հետո Հասանք Ռոստով-Դոն, ուր ապրում էին ծնողներս: Կարգադրեցի մեր վագոնը բաժանել եւ դնել պահեստի ճանապարհի վրա: Որոշեցինք այդտեղ մի երկու օր Հանգստանալ: Պահակապետի Հետ գնացի Չեկա՝ ուր Հանձնեցինք ծրարը եւ երեք բանտարկյալներին: Հետո պահակների Հետ գնացինք մեր տուն: Բոլոր պահակներին երկու օրվա ուտելու պաշար տվի եւ առաջարկեցի կայարանում մի Հերթապահ թողնել ու մնալ մեզ մոտ, եթե ցանկանում էին:

Երկու գիշեր մնացինք Ռոստովում: Ռոստով-Նախիջևանի ամբողջ Հայ Համայնքը եւ Գրիգոր Զայնուշյանը մեզ սիրալիք ընդունելութիւն ցույց տվին: Նույնիսկ առաջարկեցին լրացնել մեր անհրաժեշտ կարիքները՝ տրամադրելով տաք զգեստ, դրամ եւ կենսամթերք, որոնց կարիքը, սակայն, մենք չունեինք: Միայն մեր պահակները շատ լավ նվեր ստացան:

Մի շաբաթից Հասանք Ռյազան քաղաքը: Պահակները մեզ Հանձնեցին ճամբարի պետին:

Ճամբարը գտնվում էր Ռյազանի կենտրոնում, նախկին վանքի շէնքում: Հսկա տարածութիւն վրա կառուցված մի քանի առանձին շէնքեր էին, որոնք ունեին նաեւ երկու եւ երեք Հարկանի տներ, եկեղեցի, ճաշարաններ, արհեստանոցներ: Այդ բոլոր շէնքերը Հատկացված էին բանտարկյալներին. իսկ եկեղեցին վերածված էր ակումբի եւ թատրոնի:

Մեզ տեղավորեցին շէնքերից մեկի երկրորդ Հարկում գտնվող մի առանձին մասում, որը բաղկացած էր երեք սենյակներից, որոնք նախկին վարդապետների խնցքերն էին:

Մյուս օրը, վաղ առավոտյան, մեզ դուրս բերին բակը, շարքով կանգնեցրին եւ ստուգեցին մեր անուն-ազգանունները, ապա բաժանեցին խմբերի, յուրաքանչյուր խմբի Համար նշանակեցին պահակներ, ցուցմունքներ տվին եւ ուղարկեցին սեւ աշխատանքի:

Այս բոլորը մի ժամից այլի տեսեց: Մենք ստիպված էինք անշարժ կանգնած մնալ 20 աստիճան ցրտում, սաստիկ քամու եմթակա: Մեր ոտքերը սառուց էին, իսկ ցրտից պաշտպանվելու Համար չունեինք Համապատասխան ունեւորներ:

Մեր խմբում մենք էինք միայն, ընդամենը վեց հոգի եւ երկու պահակներ: Երբ բակից դուրս եկանք, պահակները մեզ Հայտնեցին, որ մեր խումբը աշխատելու է աղի պահեստում: Պահակներից մեկը Հարցրեց, թե արդյոք աղ թաքցնելու Համար ունեինք ներսի գաղտնի գրպաններ: Եվ պղեպարեց, թե մենք շատ բախտավոր ենք, որ արժանացել ենք այդպիսի նահավես եւ Հազարալուստ աշխատանքի, որովհետեւ նման աշխատանքի Համար ճամբարի պետը սովորաբար նշանակում էր իր բարեկամներին:

Այդ ժամանակ Ռուսաստանում աղի պակասը շատ զգալի էր եւ արժեքը բաժական բարձր էր: Ժողովրդին աղը տոմսերով էին տալիս, ամեն մի հոգու տալիս էին քսան դրամ մի ամսում եւ դա էլ ոչ կանոնավոր:

Ներքին գաղտնի գրպաններ մենք, իհարկե, չունեինք, բայց կարողացանք ամեն մեկս 200-400 դրամ աղ գաղտնի գրպանել: Աշխատանքը վերջանալուց Հետո պահակները մեզ տարան մի թեյատուն, ուր նրանց ցուցմունքով մեզ մոտ եղած աղի փոխարեն յուրաքանչյուրս՝ քաղաքացիներից եւ գյուղացիներից ստացանք երկու կիլո խոզի ճարպ, տասը կիլո ձավար, տասը Հատ ձիու մսից պատրաստված կաղտեա եւ 20-30 թթու խնձոր: Այդ պաշարը Համարյա 15 օր կերակուր պատրաստելու Համար մեզ լիովին բավարարեց:

Երկրորդ օրը մեր խումբն ուղարկեցին ոչ թե սեւ աշխատանքի, այլ Ռյազանի նահանգային անտառային Հիմնարկութիւն մոտ: Այնտեղ կարգադրեցին, որ մենք աշխատինք այդ Հիմնարկութիւնն մեջ՝ յուրաքանչյուրին ստով Համապատասխան պաշտոն...*

Ես նշանակվեցի անտառապետների բաժնի վարիչ: Մոտ 15 պաշտոնյաների աշխատանքները ես էի ղեկավարում: Նրանց Հիմնական գործն այն էր, որ Մոսկվայի ամեն մի Հրահանգ պետք է 73 օրինակ արտագրեին եւ ուղարկեին Համապատասխան անտառապետներին: Մի ամսվա Համար ինձ տրամադրել էին մի Հատ քիմիական մատիտ, որի միջի կապարը Հանելով՝ բաժանում էի 15 հոգու, դրանից նրանք մեկան էին պատրաստում եւ արտագրում Հրահանգները:

Մեր աշխատանքը սկսում էինք առավոտյան ժամը 8-ին եւ վերջացնում ժամը 9-ին:

Ժամը 12-ին կես ժամ ճաշում էինք...

Մեր աշխատանքից գոհ էին մեր տերերը եւ երկու ամսից Հետո որոշեցին մեզ պարգևատրել: Ես նվիր ստացա հողը Հարթելու Համար փայտից պատրաստված մի փոցի, մի կախարան եւ մի մատուցարան:

Սկսվեց Հայաստանի փետրվարյան ապստամբութիւնը, իսկ մի քանի օրից Հետո էլ Կրոնշտատի ապստամբութիւնը: Տրոցկու Հրահանգով մեզ Հետադրին Հիմնարկութիւնից եւ լծեցին սեւ աշխատանքի: Մեզ Հայտնեցին.

«Դուք պատանդներ եք: Եթե Հայաստանում մի բոլշևիկ գնդակահարվի, նրա փոխարեն ձեզնից տասը հոգի կսպանենք»:

Հակոբութիւնը շատ խստացավ, եւ մենք հոգեկան շատ անհանգիստ վիճակում էինք ապրում:

Այդ օրերին Ռյազան քաղաք Հասավ Հայաստանի բանակի սպաների խումբը: Բայց նրանց ոչ թե ճամբար տարան, այլ կենտրոնական քաղաքի մի տարբեր մասը, եւ նրանցից կազմակերպեցին աշխատավորական վաշտեր:

Մեր վեց հոգու խմբակը տարան երկաթուղու կայարանը, որպեսզի երկաթագծերի առանցքը ստույգից մաքրենք: Պահակապետը յուրաքանչյուրին Համար երեք սաժեն նշանակեց եւ մեզ մի-մի բրիչ տվեց:

ես Հագել էի մի տաք եւ ծանր մուշտակ, իսկ ձեռքերիս ունեի տաք ձեռնոցներ: Մարտի սկիզբն էր եւ սոսկալի ցուրտ քամի էր փչում: Անցավ երեք ժամ, եւ ես այլեւս չկարողացա աշխատանքս վերջացնել:

Պահպանեմ այդ նկատելով, բղավեց ինձ վրա, ձեռքիցս բրիչը խլեց, ապա ինձ ավեց հրացանը եւ բարկացած բացականչեց.

«Այ բուրժուս, գործել չես կարողանում: Մինչեւ ուշ գիշեր չպիտի կարողանաս վերջացնել աշխատանքդ եւ մեզ պիտի ստիպես մնալ մինչեւ մուլթ գիշեր»:

Կես ժամ անց նա իմ աշխատանքը վերջացրեց, ապա Հավաբեց մեզ եւ տարավ ճամբար:

Հետեւյալ օրը ինձ ուղարկեցին աշխատելու մի բարձր տիպի կուսակցական զգլորցում: Այդ կարգազրույթունն ինձ շատ ուրախացրեց, որովհետեւ կարծում էի, թե կուսակցական զգլորցում աշխատանքս ավելի թեթեւ եւ Հեշտ կլինի:

Ինձ Հանձնեցին զգլորցի կամենդանտին եւ նա ինձ տարավ ետեւի բակը, ուր արտաքննչի կեղտը Հորից գուրս էր եկել, սառել եւ կազմել էր մոտ երեք մետր բարձրութեամբ մի սառցակույտ, որը ես պարտավոր էի վեց ժամվա ընթացքում քանդել եւ մաքրել: Այդ օրը եւս շատ ցուրտ քամի էր փչում: Ունեցած Հանգուստով չէի կարողանում ձեռքիս բրիչով աշխատել: Բրիչը խփելիս՝ սառած կեղտի կտորները դեպչում էին քթիս եւ սիրտս խառնում, իսկ ոտքերս սաստիկ ցրտից սառել էին:

Բակի մյուս ծայրում՝ ներքնահարկից զլորչի էր բարձրանում: Ենթադրեցի, թե այնտեղ է լինելու խոհանոցը: Զուր խմելու պատրվակով բրիչն թողի աշխատանքի վայրը եւ կամաց մտա խոհանոց, ուր մի շարք մեծ կաթնանրի մեջ կերակուր էին պատրաստում: Ամեն մի կաթնայի մոտ կանգնել էր սպիտակ հագուստ հագած մի խոհարար: Նրանցից մեկը, որ ուներ նաեւ սպիտակ գլխարկ, մոտեցավ ինձ, խորհրդավոր կերպով նայեց եւ զարմացած հարցրեց.

«Մի՞թե Գուք եք, Ձերդ Մեծապատվութեանը, ի՞նչ եք անում այստեղ»:

Կիեւում ամբողջ երկու տարի նա եղել էր իմ վաշտի գինձորը, Միբզորդակի գնդում: Հետո ինձպես արտրվել էր եւ այդ զգլորցում խոհարարի պաշտոն էր կատարում:

Ես նրան պատմեցի իմ ինչ վիճակի մեջ լինելը: Նա անմիջապես գնաց կամենդանտի մոտ եւ խնդրեց ինձ ազատել իմ անհանելի աշխատանքից ու թույլ տալ, որ խոհանոցում գեանախնձոր մաքրեմ: Այդ օրը ես եղա իմ նախկին գինձորի Հյուրը: Գեանախնձոր մաքրելու փոխարեն նա ինձ եւ պահակապետին լավ չլուրսափրեց: Տապակեց գեանախնձոր եւ պատրաստեց բիֆսթեյք ընտիր ձիւռ մսից:

Երբորդ օրը ես որոշեցի վերջ տալ իմ սեւ աշխատանքին՝ Հայտնելով, որ Հիվանդ էի: Ինձ ուղարկեցին բժշկի մոտ:

Բժիշկը շատ հանելի երիտասարդ էր: Նա եւս բանտարկյալ էր: Ինձ մանրամասն քննելուց Հետո Հայտնեց, թե իմ Հիվանդութեանն իր մասնագիտութեանը չէ եւ թե ինձ պիտի ուղարկեք քաղաքի մի մասնագետ բժշկի մոտ:

Մյուս օրը, մի գինձած պահակի առջնորդութեամբ, գնացի մի հրեա մասնագետ բժշկի մոտ: Ինձ քննելուց Հետո նա Հայտնեց, թե ես էլեկտրական 30 սեանաների կարիք ունեմ եւ ամեն օր պետք է գնամ իր մոտ, էլեկտրական բուժում ստանալու համար:

Ճամբարի պետը Համաձայնութեան տվեց, բայց Հայտնեց, թե մի բանտարկյալի համար չի կարող ամեն օր մի առանձին պահակ արձամարդել, ուստի Ձեկալից իրավունք պիտի ստանար, որ ես բժշկի մոտ գնամ՝ առանց պահակի:

Ձեկան իրավունք տվեց, եւ ես ամեն օր, սեւ աշխատանքից ազատվելով, իմ ցանկացած ժամին գնում էի բժշկի մոտ եւ իմ ուղած ժամանակ վերադառնում: Այսպիսով ես ազատութեան ստացա, ամբողջ օրը մնում էի քաղաքում եւ կարողանում տեսնել իմ նոր ծանոթներին:

Ապրիլի սկիզբն էր: Հայաստանից որեւէ լուր չուներինք եւ նույնիսկ չգիտեինք, որ բոլշևիկները նորից Հայաստան են մտել:

Մի օր, երբ առափոռյան պատրաստվում էի քաղաք գնալ բժշկի մոտ, Հանկարծ իմ սենյակը մտավ Սահակ Տեր-Գաբրիելյանը, ճամբարի կամենդանտի ուղեկցութեամբ: Նա կարողավ գրկեց ինձ, համբուրեց եւ արտասուքն աչքերին սաաց.

«Առտո, նամակդ ստացա: Ներիք, որ ես ուշ եմ գալիս: Բայց դա ինձնից կախված չէր: Ես շատ կցանկանալի, որ քո տեղը ես լինեի բանտարկված»:

Կես ժամ միասին զրուցելուց Հետո նա բանտարկյալ սպաների մասին լսեց իմ գեկուցումը. Հետաքրքրվեց նրանց վիճակով, ապա Հայտնեց, թե նրանց բոլորի գրութեանը շուտով կարգվի:

Ճամբարի պետի կառոզը նա ինձ տարավ կայարան, ուր կանգնած էր իր հատուկ վագոնը: Այնտեղ մեզ սպասում էր Սահակի շուշեցի սպա-քարտուղարը: Երկու ժամ միասին շատ սիրալիք ժամանակ անցկացրինք: Նա ինձ Հայտնեց, որ ուզում էր բոլոր բանտարկյալ սպաներին տեսնել, եւ որ ցանկանում է տեղեկանալ, թե ո՞րտեղ ավելի Հարմար է սպաներին Հանդիպել:

Ես խորհուրդ տվի նրանց բոլորին Հավաքել վանքի բակի մեր ճամբարում, ուր եկեղեցին վերածված է թատրոնի եւ մոտ Հինգ հարյուր Հոգի կարող էին տեղավորվել:

Ճոխ նախաճաշից (Երեւանի գինի, կոնյակ, դեղձի կոմպոս) Հետո մենք նորից գնացինք քաղաք: Այդ օրը ես այլեւս չկարողացա իմ բժշկի մոտ գնալ: Սահակն այդ ժամանակ ՑԵԿ-ի եւ ընդհանուր Ձեկալի կոլեգիայի անդամ էր, ինչպես եւ երեք Կոմկուսյան Հանրապետութեանների ներկայացուցիչ Մոսկվայում:

Գնացինք տեղական Ձեկան, ուր Սահակին ընդունեցին շատ մեծ պատվով: Նա ինձ ներկայացրեց Ձեկալի պետին, իբրեւ իր ներկայացուցիչը Ռյազանում: Պատվիրեց, որ Հայ բանտարկյալների մասին բոլոր հրահանգներն իմ միջոցով կատարեն եւ իրազործեն իմ բոլոր պահանջները, իբրեւ իր կողմից եղած հրահանգներ: Կարգադրեց նաեւ, որ բոլոր սպաները այդ օրը երեկոյան ժամը 7-ին Հավաքվեն ճամբարի թատրոնում:

Երբ Սահակ Տեր-Գաբրիելյանը մտավ թատրոն, սպաները նրան ընդունեցին բուռն ծափերով: Եվ նա Հուզվեց խոսքերով ներողութեան խնդրեց բոլոր Հայ սպաներից, որ, իրենից անկախ, իրեն չի Հաջողվել ավելի շուտ պարզել նրանց գրութեանը: Հույս Հայտնեց, որ 30-40 օրվա ընթացքում բոլորն էլ կազատվեն եւ կվերադառնան Սալեհիք:

Սպաները Հայաստանի մասին տեղեկութեաններ խնդրեցին: Եվ երբ Սահակը նրանց Հարցրեց բավարարութեան տվեց, նրանք խնդրեցին Հեռագրել Երեւան, որ Ռյազանում բոլոր Հայ սպաները ողջ առողջ են եւ Հույս ունեն շուտով Հայրենիք վերադառնալ:

Հեռագրից պատրաստվեց եւ ուղարկվեց Երեւան: Տեր-Գաբրիելյանն իր բոլոր խոստումները կատարեց շատ կարճ ժամանակում: Տաս օրից Հետո հետոսկ սուրհանդակով սպաների Համար ուղարկեց սպիտակեղեն, տաք զգեստ, երկու վագոն սպիտակ ընտիր այլուր:

Ձգեստները, ցուցակի համաձայն, բաժանեցի: Իսկ այլուրը ստանալու համար՝ սպաների ներկայացուցիչները պետք է կայարան գնային, ուր գտնվում էր այլուրը: Բայց, գժբախտաբար, նրանք բախտ չունեցան այլուրից օգտվելու, որի կարիքն այժմեան զգալի էր, որովհետեւ այդ օրերում յուրաքանչյուր սպա օրական ստանում էր 300 գրամ սեւ Համարից պատրաստված Հաց: Նույն քանակով Հաց էին ստանում նաեւ բոլոր բանվորները:

Երկու վագոն ընտիր սպիտակ այլուրի Ռյազանի կայարանում գտնվելը բանվորների համար զարմանալի եւ գայթակղեցուցիչ երեւույթ էր: Եվ նրանք Հավաքվել էին ու որոշել այլուրը բռնագրավել եւ բաժանել իրենց մեջ:

Բանվորներն իրենց որոշումը Հեռագրել էին Մոսկվա՝ ընդգծելով, թե երբ Ռյազանում իրենք քաղցած են եւ Հագիվ 300 գրամ Համարի Հաց են ստանում, ճամբարում գտնվող մի խումբ սպիտակ Հակահեղափոխական սպաների համար Հայկական միսիան ուղարկել է երկու վագոն այլուր՝ նրանց բաժանելու համար: Դրանով յուրաքանչյուր սպա ստանալու է երկու կիլո այլուր: Եվ Հեռագրերը տվողները այդ ախոր գտնելով Հակահեղափոխական, պահանջել էին այդ վնասակար կարգադրութեանն անողներին պատասխանատվութեան կանչել եւ խիստ պատժել:

Բարեբախտաբար, երեք օրից Հետո, Սահակ Տեր-Գաբրիելյանից ստացվեց մի նոր Հեռագիր Հետեւյալ բովանդակությամբ. «Ձեկալի գերագույն կոլեգիայի որո-

* Կենտրոնական գործադիր կոմիտե (ԿԳԿ-ЦК) իշխանութեան բարձրագույն մարմին մինչեւ 1936թ. 10ԱՄ սահմանադրութեան ընդունումը: - Վ.Ղ.

չուժով բոլոր Հայ սպաները Ռյազանի ճամբարից ազատվում են եւ կարող են վերադառնալ իրենց Հայրենիքը»:

Մյուս օրը Տեր-Գարրիելյանից անձամբ ստացա Հետեւյալ Հեռագիրը.- «Ապաներին Երեւան ճանապարհելուց Հետո, գինիորական կոմիսար Տրոցկու կարգադրութեամբ, Դուք պարտավոր եք գալ Մոսկվա եւ ներկայանալ կարմիր բանակի մորիլիզացիայի բաժանմունքի պետին: Իրբեւ մասնագետ, պետք է ծառայեք կարմիր բանակում»:

Ներկայացա Ռյազանի Չեկայի պետին եւ խնդրեցի, որ Հայ սպաներին Երեւան ուղարկելու համար վազոններ տրամադրեմ: Չեկայի պետը ինձ խնդրեց, որ անձամբ ես դիմեմ երկաթուղագծի վարչութեան եւ պահանջեմ անհրաժեշտ վազոնները:

Երկաթուղու վարչութեան պետը խոստացավ, եւ մյուս օրն իսկ կայարանում պատրաստ էին երեք գնացքներ: Երկրորդ օրը բոլոր Հայ սպաները ճանապարհվեցին Ռոստով-Երեւան:

Նախքան Մոսկվա մեկնելու, ես որոշեցի երթալ Ռոստով եւ մի քանի օր ապրել ծնողներին մոտ: Ռոստովում ես բաժանվեցի Հայ սպաներից, որոնք ուղեւորվեցին Բազու-Երեւան:

Երկրորդ օրը ինձ մոտ է գալիս Հայ սպաներից մի սուբհանդակ եւ Հայտնում, որ երբ գնացքները Հասնում են Տիխոնցկայա կայարանը, Մոսկվայի Չեկայի հրահանգով նրանք թույլ չի տրվում շարունակելու իրենց ճանապարհը:

Անմիջապես անթել Հեռագծով կապվեցի ՍաՀակ Տեր-Գարրիելյանի Հետ եւ խնդրեցի նրա օգնութեանը: Նույն օրն իսկ Տեր-Գարրիելյանը Հեռագրով Հաղորդեց ինձ Հետեւյալը.

«Ռյազանից գնացքները մեկնել են առանց բնդհանուր Չեկայի կարգադրութեան: Գնացքները ստացել եք իմ Հեռագրի համաձայն եւ տեղական իշխանութեան կարգադրութեամբ: Դուք շտապել եք: Թյուրիմացութեան արդեն պարզվել է եւ կարգադրվել է, որ գնացքները շարունակեն իրենց ճանապարհը»:

Այսուհանդերձ մեր սպաներին երեք օր պահել էին երկաթուղու կայարանում անորոշ գրութեան մեջ եւ միայն Մոսկվայի Չեկայից նոր հրահանգ ստանալուց Հետո նրանք շարունակել էին իրենց ճանապարհը:

Մի շարքով Ռոստովում ծնողներին մոտ մնացի, ապա անցա Մոսկվա, ուր ՍաՀակ Տեր-Գարրիելյանի Հետ սեսնվելուց Հետո՝ գնացի բանակի գերագույն սպայակույտ, որպեսզի ներկայանայի մորիլիզացիայի բաժանմունքի պետին:

Երբ մտա պետի գրասենյակը, զարմացա, որ այդ պաշտոնում ինձ բնդունեց իմ շատ մտերիմ ընկերը չորս տարիների կռվի դաշտում՝ նախկին սպայակույտի գնդապետ եւ Հետագայում գորավար Մ. Իմ գրավոր դիմումը նա վերագործրեց ինձ՝ Հայտնելով ինձ իր Հասցեն եւ խնդրեց, որ երեկոյան անցնեմ իր մոտ: Ես ծանոթ էի նաեւ նրա կնոջը, որի Հետ նա ամուսնացավ Վարշավայում, երբ ինքը ցարական զվարդիայի սպա էր: Այդ ժամանակ նրա կինը եւ քեներն ապրում էին Մոսկվայում:

Երեկոյան այդ բնտանիքի Հետ շատ սիրալիր եւ ուրախ Հանդիպում ունեցա: Ընկերս պարզեց ինձ կարմիր բանակի մեջ եղած կադրային սպաների վիճակը: Նա նշեց, թե կարմիրները նրանց մի որոշ ժամանակ օգտագործում են, իսկ երբ նրանք բոլշևիկներից նոր կազմեր են պատրաստում, սպաներին, որպես Հակահեղափոխական տարր, աքսորում են եւ շատերին գնդակահարում: Ուստի նա ինձ խորհուրդ տվեց, որ, եթե կարող եմ, չներկայանամ բանակին եւ ինձ մի կերպ ազատեմ:

Այդ խնդրում ՍաՀակ Տեր-Գարրիելյանը չկարողացավ ինձ օգնել: Նա սասց, որ ես որպես նախկին սպա՝ պետք չէ թաքնվեմ եւ պետք է արձանագրվեմ, որպեսզի կարողանամ Սովետական իշխանութեան ներքո ազատ ապրել:

Ես չլսեցի նրա խորհուրդը եւ, իրբեւ նախկին պարսկահպատակ, անցազիրս նորոգեցի եւ մի տասնամյակ, որպես պարսկահպատակ, Մոսկվայում ապրելուց Հետո, 1930 թվականին անցա Իրան:

«Հայրենիք» (ամսագիր, Բոստոն), 1964թ., թիվ 10, էջ 68-78:

...* 1921 թվի Հունվարի 24-ն այն դժբախտ օրն է, երբ զավազրութեամբ Հայաստանի բոլոր սպաներին ցուցակագրեցին միաժամանակ՝ Երեւանում, Վաղարշապատում, Դամարում, Ելենովկայում եւ Քեշիշբենդում: Անգամ առաջվոր դիրքերում եղածներին բերել տվին եւ ենթարկեցին ցուցակագրման:

Մինչեւ այդ Հայաստանից աքսորել էին միամիտ սպաներին, 1-2 տասնյակ հողու՝ իրեն թե հրամանատարական կարմիր կուսերն ավարտելու համար, ապա ուղարկել էին սպաներից յոթնասուներ հողու, Հետո Դրյուին, իր մտերիմներով: Չեղբակալել էին եւ բանտ նետել բոլոր այն սպաներին, Հայ թե ուս, որոնք ճնշել էին մալիսյան Հակապետական ապստամբությունը Հայաստանում կամ կանխապես մասնակցել էին Դեմոկրատիայի կռիվներին:

Յունվարի 24-ի ցուցակագրութեանը մի զգվելի Հեզնանք էր, ուղղված Հայ ժողովրդի դարավոր պատմութեանը եւ նրա արդար Դատին...*

Փետրվար 3-ին Հասանք Բագու: Կայարանում մեզ երկար պահեցին եւ մանրակրկիտ ստուգման ենթարկեցին: Բազմաթիվ քաղաքացի Հայ Հետաքրքրվողներ կային, որոնք երկչոտութեամբ Հեռվից դիտում էին մեզ: Շատ քիչերը Հանդիցեցին բարեւելու իրենց ծանոթներին, որովհետեւ վախենում էին կորցնել իրենց բարեհուսությունը սահմանափակում...

Այլ ու ձայն վրասում էին սովետական Չեկայի բազմաթիվ լրտեսները, որոնցից շատերն անարգել կերպով գալիս էին դեպի մեր շարքերը եւ դիտում շատերին դեմքերը...

Մեզնից առաջ տարած սպաների խմբերը տեղավորված էին Բերդաքաղաքի գորանուրեցի եւ մաքսատանը, իսկ մեզ քշեցին դեպի Բայիլ, Բիրի-Էյրավի: Կաղաքում մեզ ժամերով կանգնեցրին 11-րդ գորարանակի Հատուկ բաժնի տան պատերի տակ...

Պահակներն արագութեամբ քշեցին մեզ դիլավոր փողոցներով եւ ծովափով, ապա տարան Բիրի-Էյրավի Լիանոզովի բանվորական Հանրակացարանները: Տեղավորեցին ամեն մի կացարանում 40-50 հոգի:

Երբ մեզ օրը ցերեկով տանում էին Բագվի փողոցներով, Հայերը, անգամ շատ կոմունիստներ, Հուզվեցին եւ սկսեցին Հետաքրքրվել մեզնով: Շատերի ծանոթներն այցելութեան եկան, բերելով ուտելիքներ, սպիտակեղեն եւ ծխախոտ:

Հայ կանայք իրենց սրտին մոտ Համարեցին մեզ օգնելու գործը թե՛ դրամով եւ թե՛ մթերքներով:

Մեզ տալիս էին օրական մեկուկես, երբեմն մեկ ֆունտ Հաց, ձավար, սելյուդկու կամ լոքո ձուկ, այլ եւ թամբաքու: Տվածով կշտանայ, իհարկե, չէր կարելի: Ուստի շատերը ծախեցին երենց հագուստեղենը եւ իրերը: Դրսի օգնութեանը միայն մի կաթիլ էր ծովի մեջ...

Մեր վիճակով ավելի շատ Հետաքրքրվեց տեղական Հայ բանվորութեանը: Վերջինս զարյացավ, որ իր Հայրենիքի սահմանները պաշտպանող Հայ սպայութեանը քշվում է Ռուսաստանի Հեռավոր խորքերը: Բանվորները խնդրի Հարուցին մեզ ազատելու, քանի որ մենք կռիվ չէինք մղել բոլշևիկների դեմ եւ կռիվի դաշտում չէինք դեր ընկել, այլ մեզ խաբերայութեամբ էին ձերբակալել, կանչելով «ցուցակագրութեան»:

Բիրի-Էյրավի Հայ բանվորութեանն իր մասնավոր նախաձեռնութեամբ մեզ տարավ բաղնիս, եւ սապոն տալով՝ Հնարավորութեանը ստեղծեց մաքրվելու ճանապարհի կեղտերից ու ոջիլներից:

Շատերին գրութեանը խիստ ողբալի էր, քանի որ գրկվել էինք փոխնորդից եւ ամեն մի անհրաժեշտ իրերից: Առավոտ-երեկո շատ սպաներ, առանց դիրքի եւ աստիճանի խտրութեան, զբաղվում էին եռանդով «Հետախուզութեամբ», այսինքն՝ ոջիլներ կտորելով:

Սովորական երեւութ է սա Ռուսաստանի այժմյան բանտերում, գորանոցներում, վազոններում եւ ամենուրեք:

Մեր «կոնցենտրացիոն լագերի» պահակը բաղկացած էր գլխավորապես ուսուցիչներից: Բայց պատահում էին եւ՝ տաճիկներ, նախկին օպորտունիստներ, նամականեղանակներ, թուրք սակայրներ եւ երբեմն էլ բոլշևիկ հայեր:

Ամենից աչալուրջ եւ խստորեն հակում էին մեզ տաճիկները: Վերջիններս մեզ հետ շատ կոպիտ էին վարվում: Մի օր բաղնիսից վերադառնալիս՝ ծովափին մի շաղկապ պատահեց: Ծածիկ սակայրներից մեկը հրացանի կոթով խփեց մեր բնկեր սպանելու մեկին՝ պատճառաբանելով, թե նա շարքերից ուզում էր դուրս գալ, փախչել: Մենք մի մարդու պես ծառայանք այդ ողորմելի տաճիկի դեմ եւ ցույց տվինք մեր ուժգին գայլույթը եւ պատրաստի բուռնցքները: Պահակը մեզ կանգնեցրեց Չեկոսի տան առջև, որտեղ գանգատվեցինք, որ այլևս տաճիկ պահակներ չուղարկեն մեզ մոտ, այլապես պատասխանատու չենք հետեանքների համար...

Կարելի է ասել, որ հարկադրված եղան հարգել մեր գանգատը, բայց տաճիկները բաղկացած պահակը փոխարինեցին աղբրեջնյան կարմիր սակայրներով, որոնցից շատերը մասնակից էին եղել Զանգեզուրի եւ մանավանդ Լափանի կռիվներին: Պետք է ասեմ, որ դրանք պատկառանքով էին հիշում մարտնչող սյուներիներին եւ նրանց զեկավար Նժդեհին: Անկեղծորեն խոստովանում էին իրենց շարաշար պարտությունը եւ փախուստը...*

Հայ սպաների վիճակի տնօրինության մասին Բազմում թեք ու դեմ լուրեր էին պտտվում, իսկ Նժդեհի մոտ ուղարկված պատգամավորները Զանգեզուրից վերադարձան գատարկաձեռն, այսինքն՝ Զանգեզուրը չէր համաձայնվել կոչցնել իր անկախությունը:

Փետրվարի 19-ին ամենասուռյաղ աղբյուրից իմացանք, որ Հայաստանում բռնկվել է ապստամբություն, երևանից քշել են կոմունիստներին, ստեղծվել է Հայաստանի Փրկության Կոմիտե, իսկ Վրաստանը տակավին դիմադրում է...

Այդ օրը մեր «լագերում» արտակարգ նիստեր տեղի ունեցան: Մեզ գրադեցնողը Հայաստանի ապստամբությունն էր եւ սպաներիս վիճակը: Կարծիքներ էին փոխանակում, թե այդ ժողովրդական ապստամբությունը մեր վիճակի վրա ինչպե՞ս կանգնա: Կարող է պատահել, որ մեր վիճակը թեթևանա, բայց հավանական է, որ մեզ հեռու քշեն, կամ նարգին կղզում փակեն...

Խորախոտարք, մի քանի օրից հետո իմացանք, որ Լոռվա շրջանի բոլշևիկացիները Հայերի խփել են վրացիներին թիկունքից եւ գուրս եկել Կոջոր, իսկ վրացիները ուսուսական եւ հայկական գերագանց ուժերի ճնշման տակ թողել են ու հետ քաշվել իրենց գեղաձիծաղ մայրաքաղաքից...

Հենց այդ շարաբաստիկ օրերում մեզ մոտ, այսինքն՝ մեր բանասենյակում ստացվեց Ռյազանից մի Հայ ծանոթ սպայի գրած նամակը, որի մեջ նա այսպես էր նկարագրում իրենց վիճակը...*

Այլևս ոչ մի կասկած չկար, որ մեզ եւս պետք է տանեն Ռյազան տանջելու եւ գանդաղ ու անդեն սպանելու: Այդ հանգամանքը առիթ տվեց մեզնից մի քանիսին փախչելու:

Մնացածներին փետրվարի 25-ին Բազմից քշեցին դեպի Ռուսաստանի խորքերը:

Չորավարներ Նազարեկյանին, Հարվերդյանին եւ Լամազյանին թողեցին Բազմի բանտում առժամանակ, իսկ Գենիկինի մոտ ծառայած եւ հակարուշևիկյան գործունեության մեջ աչքի ընկած 2-3 հոգու էլ «ուսիտող» արին, այսինքն՝ ճամփեցին ի վերին երուսաղեմ...

Դարձյալ «տեպուլչյաններում» տեղավորված ուղեւորվեցինք Ռուսաստան...* Նախքան Պրոխորովի հասնելը, մարտի 1-ին մեր խմբի հետ մի տխուր դեպք պատահեց...

Այդ ժամանակ գնացքները երթեւեկության որոշ ժամեր չուներին: Գնացքները կայարանից ճամփում էին, երբ ուզում էին եւ գանգ էլ չէին խփում, որ ճանապարհորդները գզուշանան: Ահա այդպիսի անիշխանական գրուստյան գոհ գնաց գորավար Շեկովիկյանը, որ կանգնած էր երկու վագոնների միացման տեղում, երկաթյա կամուրջի վրա: Երբ մեքենավարը շարժեց գնացքը առանց սուղից եւ գանգահարության, վագոնները մեծ թափով իրար հրեցին, առաջ եկավ ուժեղ ցնցում եւ թշվառ զորավարը տապալվեց գետին, ընկավ առաջ ընթացող գնացքի տակ եւ անիվները նրա փորի վրայով անցան...

Շեկովիկյանի ազգական եւ մտերիմ սպաները մեծ դժվարությամբ հաջողեցին կանգնեցնել գնացքը: Անմիջապես բոլորս գուրս թափվեցինք վագոններից եւ անձամբ տեսանք դժբախտ գինվորականի արորված մարմինը: Աղիքները թափվել էին, բայց խեղճի դեմքը տակավին վարդագույն էր եւ մի ազոտ ժայռ էր փայլում նրա վրա...

«Ի՞նչ եք այդպես շատ փոստում, մի շուն է պակասել, ի՞նչ կա անհանգստանալու», - բարձրաձայն գոչեց «բնկեր» դինվորական կոմիսարը, որ ուղեկցում էր կայանավորներին մինչեւ Ռոստով:

Սակայն Պրոխորովի կայարանում գանգեցին նախկին կուսակներ, որոնք ճանաչեցին գերմանական ճակատի իրենց նախկին պետին, Ստանիսլավ քաղաքը գրավող Հերոսին եւ նրա դիակը դրին պատգարակի վրա եւ իրենց ուսերի վրա տարան հիվանդանոց...

Մեզ համար միանգամայն պարզվել էր, որ սպաներիս տանում են ոչ թե կարմիր մարդիկ պատրաստելու կամ քաղաքական դատախազներ պատրաստելու համար, այլ Ռյազանում եւ ուրիշ վայրերում հարկադրական աշխատանքներ կատարելու աղյու համար: Ցարական ռեժիմի տաժանակար աշխատանքները պետք է կատարելիք առանց դատ ու դատաստանի, առանց որեւէ հանցանք ունենալու: Բայց ի՞նչ եմ ասում, չէ՞ որ սպա լինելն ինքնըստինքյան հանցանք է ուսական «կոմունիստների» աչքին...*

Փախչելու ցանկությունը շատերիս մեջ ուժեղացավ, երբ Հանքային Ջրերում մի նախկին կողակ սպա մանրամասն պատմեց մեզ «ցուցակագրություն» եւ «գաման» գործողությունները...*

Հասանք վերջապես Բատայակ կայարանը, որ շատ մոտ է Ռոստովին: Մեր գնացքը այդտեղ մնաց փշերը: Մյուս օրը, մարտ 5-ին, մեզ տեղից չչարժեցին: Կայարանում ինչ որ փափուկներ էին լավում: Մենք կարծես թե կայանավորներ չէինք, այլ ազատ քաղաքացիներ կամ աուրիստներ: Ազատորեն ներս ու դուրս էինք անում եւ պահակի դինվորները ոչինչ չէին ասում: Դրանք տարբերակ կերպով մեղմացել էին եւ անգամ հայհուցում էին կոմիսարներին ու բոլոր ընկերներին...

Գաղտնիքը շուտով բացվեց: Կայարան եկած Ռոստովցիներից եւ Նոր-Նախիճեանցիներից իմացանք, որ մեծ ապստամբություն է ծագել եւ Կրոնշտադն ու Պետրոպոլիս արգել սպանալ ապստամբների ձեռքն են անցել...

Հարցնում ենք կոմիսարին՝ «Ինչո՞ւ եք մեզ թողել այս կայարանում, ինչո՞ւ չեք տանում Ռոստով»: Նա պատասխանում է, թե՛ «Կարգադրություն չկա, Ռոստովը չի ընդունում ձեզ, իսկ Մոսկվայից էլ տակավին պատասխան չկա, թե ո՞ւր տանեք: Չգիտեք՝ դեպի ինչ ուղիով ձեզ քշենք, թե՛ Վորոնեժի ուղղությամբ...»

«Դեպի Հայաստան, հե՛տ տարեք մեզ», - գոչում էինք մենք: Մեզնից շատերը ենթադրում էին, թե ապստամբած Հայաստանում գերի ընկած կոմունիստների հետ կարող են մեզ փոխանակել եւ գուցե այդ է պատճառը, որ մեզ պահում են Բատայակ կայարանում, որպեսզի Մոսկվան եւ երևանը որոշեն մեր բախտը...

Այսպիսի մթնոլորտում՝ մինչդեռ մեզնից շատերը տակավին խորհում էին, փախուստի գանազան ծրագրերը մշակում իրենց գլխում, ես իմ մի քանի ընկերների հետ նստած սահակում սյանում էի դեպի Ռոստով, ուր հուլիսով էի գտնել նախկին ծանոթներիցս գեթ մեկին...

Մեր փախուստը սպասածից ավելի հաջող անցավ եւ մենք գտանք Ջրերում ընդունելություն...*

Ստեղծված այսպիսի մթնոլորտում փախած Հայ սպաներս շատ լավ ընդունելություն գտանք: Փախածներին թիվը հասավ երկու հարյուրի: Շատերին այնպես էր թվում, թե Տրոցկու կոչը մի հոխորտանք է, եւ հրդեհը Ռուսաստանում այնպես է բռնկվել այս անգամ, որ զժպար թե հրդեհաշեջները կարողանան հանգցնել կրակը: Ամենից գլխավորն այն էր, որ մեր հարազատ Հայաստանը մի պահ անկախ էր դարձել, իսկ մենք օտար հորեղանների տակ էինք եւ փախստականի վիճակում: Ո՞վ գիտե, գուցե Կովկասի ճանապարհը վտանգվեր, եւ մենք երկար ժամանակով կարված մնայինք Հայրենիքից:

Այդ նկատումներով մի խումբ ընկերներ շտապեցին օր առաջ փախուստ տալ եւ՝ Ռոստոփից, չնայած որ այդտեղ կարող էինք ավելի ապահով ապրել, մասնավորապես որ պաշտոն էլ գտել էինք շատերս...

Ինչհետեւ, մարտ 12-ին մենք արդեն երկաթուղային գնացքի մեջ նստած՝ վերադառնում էինք դեպի Անդրկովկաս...

...* Այդպիսի դրուժյան մեջ թողեցինք մեծ Ռուսաստանը 1921 թվի մարտ ամսին եւ լքված, բայց զգաստ հոգով թույլ քայլերն ուղղեցինք դեպի մեր հարազատ, բայց ներկայումս այնքա՛ն անբախտ լեռները, որոնց շուտով հարկադրված եղանք թողնել եւ անցնել օտար հորիզոններ...

Այնուհետեւ տարագրային դարդոտ վիճակում, կրելով կյանքի բոլոր տեսակի զրկանքները, անջատված սիրելիներից՝ միշտ աչքներս հստած ենք պահում մեր հարստահարվող երկրի երկնակամարին՝ Հուսալով որ մի օր կարմիր ցնորամիտները կբաշվեն ասպարեզից եւ տեղի կտան Հայ ազգային կառավարութեան:

«Հայրենիք» (ամսագիր, Բոստոն), 1934թ., թիվ 10, էջ 102-115:

N 3
ԶՈՐ. ՆԱ.ԶԱՐԲԵԳՅԱՆ

Գրեց՝ Արսեն Ա. քաճ.Աիմոնյանց

...* 1921 թվականի փետրվարն էր: Բարեկենդանի կիրակի օրը Մոսկվայի Ա.Սևյակ եկեղեցու մեջ պատարագը նոր էիր վերջացրած: Միականներիցս երկուքի հետ եկեղեցիում բակում կանգնած՝ գրուցում էինք օրվա չարի ու բարիի մասին, երբ Հանկարծ մոտեցան մեզ երկու երիտասարդներ, բնձի մորթիից մուշտակներ հագած, ինչ որ ցույց կտար, թե իրենք օգաչուներ են, եւ Հարցուցին ուսուցիչներն. «Ժամերդուժյունը վերջացած է»: Երբ պատասխանեցինք, որ վերջացած է, հետ դարձան մեկնելու:

Երեքս էլ համարյա միասին ասացինք.

«Սրանք հայեր են երեւում. բայց ինչո՞ւ ուսուցիչներն խոսեցին»:

Եւ իսկույն նրանց ետեւից կանչեցինք.

«Դուք հա՞յ եք»:

«Այո՞», - պատասխանեցին ու կրկին մոտեցան մեզ:

Օգաչուներից մեկը Գ-յանն էր, որ իր օգանավով բուլղարական բանակից 1915-16 թվին փախած էր Փրանսիա, այնտեղից էլ Հայաստան, երբ մեր Հայրենիքը անկախ պետութիւն դարձավ: Մյուս օգաչուն ուսուսՀայ էր, նրա ուղեցույցը թո՛ւքի ժամանակ, եւ Հայրենին չէր տիրապետում:

Երեքս էլ, մերը մյուսի բերանից խելով, պատմեցին, թե ի՞նչպիսի ծանր վիճակ ունեցավ մեր ժողովուրդը Հայաստանի խորհրդայնացումից հետո, եւ թե ինչպե՛ս ամբողջ Հայ սպայակույտը, մոտ 1500 հոգուց բաղկացած, հարկադրվեցավ քարտի ճամփան բռնել եւ, կարմիր բանակի զինվորներով շրջապատված, ոտքով քայլել մինչեւ Ադստաֆա կայարանը, 100 կիլոմետրից ավելի: Պատմեցին, թե ինչպե՛ս Հայ զորավարների, մասնավորապես Նազարեգյանի համար ծանր էր ու անտանելի այդ ճանապարհորդութիւնը, որովհետեւ բացի ստանձաններից, անտթութիւնից ու ոտքով ճամփա երթալու նեղութիւնից, ուղեկցող զինվորների ծաղրն ու հայհույանքներն էլ անպակաս էին:

«Սա ձեզ համար դեռ քիչ է, ձեզ ամենիդ էլ վաղուց պետք է գնդակահարած լինեին, որովհետեւ դուք եք, որ միշտ խմել եք ու ծծել մեր արյունը», - ասում էին շարունակ բողբոջկայն պրոպագանդայից թրունավորված այդ զինվորները:

Օգաչուներն էլ քարտականների մեջ էին եղել, բայց Հյուսիսային Կովկասում դրամով ազատ էին արձակվել, իսկ մյուսները քշվել էին Ռյազանի նահանգը, որ Մոսկվայից հեռու չէր:

Սակայն գոր. Նազարեգյանին, Հախվերդյանին եւ Գամաղյանին Բագվի բանտն էին ուղարկել: Զորավար Հովհաննես Հախվերդյանը Հայ Սպայակույտի պետն էր, իսկ զորավար Գամաղյանը՝ Հայ Հրետանիի:

Այդ պատմութիւնը մեզ շանթառեց ու մեր ներքին աշխարհը հրեհեց: Միանգամայն անմեղ, պարտածանաչ, ազնիվ, հայրենասեր անհատներ, որոնցից ոմանք հայերեն անգամ չգիտեին ու գացած էին մեր Հայրենիքը՝ իր նոր ստացած անկախ գոյութիւնը պաշտպանելու համար: Հայրենիքի սերն էր, որ ստիպել էր նրանց՝ այդ, բոտ երեւույթին ուժացած հայերին, գնալ ու մասնակից լինել Հայաստանի կրթամուսնի, վերաշինութեան ու պաշտպանութեան:

Երկու երիտասարդներն էլ, որ պատմեցին մեզ այս ամենի մասին, ոչ օժեւան ունեին եւ ոչ էլ ուսելու հաց:

Մանր օրեր էին մղձավանջային: Հացի խնդիրն առաջին տեղումն էր: Բոլորս էլ անոթի էինք բառիս իրական մտքով: Անոթի էին մանավանդ մեր պոսիկները, մեր սիրառունց վազակները...

Անմիջապես խորհրդակցեցի երկու մոտիկ ծխականներին հետ, որոնք մեր եկեղեցիում բակում կրնակվեին, եւ որոշեցինք մեր ունեցածով Հյուրասիրել այդ երկու հայրենակիցներին:

Հայի տուն էր, այնուամենայնիվ, բոլորս էլ կշտացանք ու որոշեցինք առաջիկա չորեքշաբթի օրը երեկոյան Մոսկվայի Հայ Գաղութի անդամների ժողով գումարել իմ բնակարանում եւ խորհիլ, թե ի՞նչ կերպով կարելի էր օգնութեան հասնել մեր քարտրական եղբայրներին: Խնդրեցինք երկու երիտասարդներին անպայման ներկա գտնվիլ այդ ժողովին եւ անձամբ գեկուցանել իրենց տեսածների, ապրումների ու գիտցածի մասին: Նամակներ ավի նրանց, թե որտե՞ղ եւ որո՞նց մոտ կարող էին ասպնջականութիւն գտնել եւ ուսելիք, որո՞նց մոտ նորոգել իրենց պատառոտած կոշիկները:

Օրհնյալ լինի Հայ ժողովուրդը: Նրա գավակները ամեն տեղ զոհարեցող են եւ լայն հոգու տեր: Մոսկվայի հայութիւնն էլ այդպե՛ս էր: Հայազգի կյանքի մեջ չէր եղած որեւէ հանրային-ազգային գործ, որին Մոսկվայի հայութիւնը մասնակցած չլիներ առավելագույն չափով...*

Ի պատիվ Մոսկվայի հայութեան, պիտի ասեմ, որ 8 միլիոն ուրբի ժողովեցինք այդ նպատակով այդ վերին աստիճանի տնտեսապես ծանր օրերին, եւ միայն մեկը գտնվեց, որը կամեցավ 25 հազար միայն տալ, փոխանակ պահանջված 75 հազարի: Ի՞մ առաջարկով, որպեսզի գանձարկող չզրկվեր այդ 25 հազարից, հանձնաժողովի անդամներս մտցուցինք այդ գումարը՝ հավասար բաժին հանելով ամեն մեկիս...*

Աքսորված Հայ Սպայակույտին օգնելու նպատակով վերահիշյալ ժողովը տեղի ունեցավ իմ բնակարանի մեջ, Հայոց եկեղեցու բակում:

Ինչպե՛ս քիչ առաջ ասացի, մեր կեցած տան մեջ բավական թվով համայնավար ուսանողներ էին բնակում, իսկ Սահակ Տեր-Գաբրիելյանի բնակարանն էլ իմիս վերն էր գտնվում:

Այդ օրերին, թե՛ս ոչ հայտնի կերպով, բայց որոշ չափով համայնավարներն ականջ էին գնում հասարակական կարծիքին: Նրանք քաջ գիտեին, որ Մոսկվայի Հայ գաղութի հասարակական կարծիքը խոտիվ դատապարտում էր Հայ բողեւիկների ամարզի եւ ստոր գործունեութիւնը Հայաստանի մեջ: Նրանց հայտնի էր նույնպե՛ս, որ բողեւիկյան դժբախտ զոհերին օգնելու նպատակով մենք գումարներ էինք հանգանակում: Իրենք եւս ջանացին գեթ ուսելիքով օգնել նրանց:

Այդպե՛ս, մենք լուր առինք, որ Արտեմ Նոյաթովի միջոցով, որ Նորհրդային Միութեան պարենավորման կոմիտարն էր այդ ժամանակ, Սահակ Տեր-Գաբրիելյանը Հաղորացրել էր մի ամբողջ կառայութեամբ այլուր, գետնախնձոր, բանջարեղեն, պատուց յուղ եւ այլն ուղարկել Ռյազանի նահանգը, ուր քարտրված էին Հայ զինվորականները:

* Պետք է լինի՝ Խորհրդային Ռուսաստանի: - Վ.Ղ.

Մինչ այդ՝ մեր Հանձնաժողովն էլ արդեն մոտ 5 միլիոն ուսուցիչ դրամ ժողոված էր եւ միջոցներ ու Հավատարիմ մարդիկ էինք փնտրում՝ դրամի մի մասն ուղարկելու Համար մեր արտարական կարողություններուն:

Գտնվեցին երկու երիտասարդներ, որոնք պետական գործերով պիտի անցնեին այն կողմերը: Նրանք Հանձն առին դրամը տեղ Հասցնել: Առաջին 4 միլիոնը կարեցինք գոտիի մեջ ու կապեցինք երիտասարդներից մեկի մեջքին: Ես էլ իբրեւ միակ քահանայ այդ ժամանակ Մոսկվայում՝ իմ անձնական պաշտոնական թղթիս վրա իրախուսական մի քանի խոսք ուղղեցի այդ տառապալ պարագիրներուն: Նամակին միտքն այս էր մոտավորապես, թե նրանք մեծակ չեն եւ թե նրանց Հետ են մեր ժողովրդի լավագույն մասի գերագույն ու վեհ զգացումները եւ թե նրանց Համար Հոգացողներ կան, թո՛ղ առայժմ ընդունեն 4 միլ. ուսուցիչ եւ ՀՀուսահատվին ու չըթվին, շուտով իրենց եւս պիտի ազատենք արտորից...

Թե որչափ կարիք կար այդպիսի մի գրու՞թյան, Հետո իրենք՝ մեր տարագիրները վկայեցին: Նրանցից երկու եղբայրներ, Ագուլիսեցի Տեր-Մելիքեղեկ քահ. Թուճանյանի տղաքը, մեկը՝ գնդապետ, մյուսը՝ քապիզան, երբ Մոսկվա եկան, խոստովանեցին:

«Տեր Հայր, չեք կարող երեւակայել, թե ի՞նչ լքումն ու Հուսահատութիւն էր տիրում: Մեզ թվում էր, թե մենք մոռացված եւ արՀամարՀված էինք թյուրից: Շատ դարչելի վերաբերմունք կար մեր Հանդեպ: Այսպես, ծերունի զորավար Միլիկայանի ստիպում էին երկաթուղագծի ծանր երկաթները կրել եւ մի տեղից մյուսը փոխադրել: Ընդժ ծերունին գերմարդկային ուժեր էր գործարարում կատարելու, բայց բեռան ծանրութիւնից ընկճված՝ վայր էր ընկնում եւ գեանի վրա պտկած մնում... Այնչափ էինք Հուսահատված, որ որոշած էինք, իբր բողոք, 50-60 Հոգի մեկեն նետել մեզ շոգեկառքի անիվների տակ ու այդ ձեւով պատվավոր մահ գտնել... Երբ Հասավ ձեր նամակը մենք զգացինք, որ մոռացված չենք եւ մեր տառապանքները վերջ պիտի գտնեն, մի քիչ շունչ առանք»:

Մեր ուղարկած տղաքը դրամը նամակին Հետ Հանձնում են արտարականների պարագրու՞թիւներին: Աքտրայները կարգում են նամակս, դրամն էլ գոտիով Հանձնում են Ալեքսանդրապոլցի գնդապետ Ստեփան Ստեփանյանին, որ մեջքից է կապում այն: Հազիվ Հեռանում են մեր տղաքը, եւ ահա Չեկայի զինված խմբերը, Հոսն առած, չըթապտում են արտարավայրը, եւ սկսում է կատաղի իտզարկութիւն: Նամակս մեկը պատառ-պատառ է անում եւ կուլ տալին: Դրամն էլ ազատվում է Հրաջրով... Երբ մոտենում են գնդապետ Ստեփանյանին ու տեսնում նրա աղատ ու մրտած շապիկը, որ նա փորձում է բարձրացնել, առում են. «Ո՛չ, ոչ, պետք է՛, գոցեցեք ձեր մարմինը»: Եւ նա Հանուլքով ծածկում է մարմինն ու ազատում գոտին՝ դրամի Հետ միասին:

Մոսկվայի Հայ բոլշեւիկներն էլ, կատարելով իրենց խոստումը, մթերքներով լի մի ամբողջ կատախումբ են ուղարկում Ռյազան: Բայց այս մթերքները վայելում են ոչ թե մեր արտարական զինվորականները, այլ չեկիսաները՝ մի մասն էլ սեւ շուկա Հանելով:

Ահա այս եռուգեռի մեջ էինք, երբ մի օր, իմ բացակայութեան ժամանակ, գալիս է մեզ մոտ մի անձանութ Հրեա եւ պատմում է երեցկիներին, թե ինքը նոր է ազատված Մոսկվայի Բուսիրկա բանտից, եւ թե բանտում գտնվող Հայ երեք զորավարներ՝ Նազարեգյանը, Հախվերդյանը եւ Գամաղյան խնդրած են, որ երթաւ Հայ քահանայի մոտ ու Հաղորդե, թե իրենք գտնվում են Բուսիրկա բանտում ու թե իրենց ուսուցիչ ուղարկեն: Պատմած էր նաեւ, թե ի՞նչ սոսկալի վիճակ ունին նրանք, մանավանդ մեծը, որ «շատ Համակրելի, պատկառանքի արժանի ծերունի է», եւ թե բոլորն էլ անոթի են բաւրի բուն նշանակութեամբ:

Անմիջապես միջոցներ ձեռք առինք ուսուցիչ ուղարկելու: Ծանր օրեր էին: Բայց մեր զՀնչյալ ժողովուրդը պատրաստ էր զԳաբերութեան: Ոմանք մտեցնից պատրաստի կերակուր խոստացան որոշյալ օրն ուղարկելու, ոմանք էլ՝ կաթ եւ պանիր, Հավիթ, մածուկ, Հաց, գետնախնձոր, կարագ, յուղ, օճառ, թելեւանդ եւ այլն:

Պետք էր, որ ուղարկողը գրեր այս ձեւով. «Միրելի Նազարեգյան, սիրելի Հախվերդյան, սիրելի Գամաղյան» եւ միաժամանակ տար նրանց առաջին անուններն ու Հայրանունները, որոնք ինձ Հայտնի չէին: Օգնութեան Հասավ մեր սիրելի զորավար Դրոն: Այդ ժամանակ նա մի խումբ սպաների Հետ Մոսկվա էր գտնվում

արդեն պատվավոր արքայով: Նա դիտեր մեր զորավարների առաջին անունները ու Հայրանունները:

Երբ լսեցինք, որ մեր Հրամանատարութիւնն էլ Մոսկվայի բանտն էր գտնվում եւ չափազանց ծանր վիճակում է, այս պարագան լեցուց մեր Համբերութեան բաժակը: Հրեայից լուր ստանալուս պես, ես տեսակցութիւն ունեցա Սահակ Տեր-Գաբրիելյանի Հետ ու թափեցի ամբողջ Հոգուս մեջ կուտակված ամաղձը եւ ասացի նրան...*

Ս.Տեր-Գաբրիելյանը, թեեւ Համայնավար, լավ Հայ էր: Նա իրավացի գտավ մեր զայրուլթը եւ խոստացավ միջոցներ ձեռք առնել անմիջապես ու Հաղորդել ինձ:

Հազիվ երկու անգամ մեր բանտարկայնեթիւն ուսուցիչ ուղարկեցինք, երբ մի օր էլ Տեր-Գաբրիելյանը մտավ ինձ մոտ եւ ավետեց.

«Տեր Հայր, շուտով այն «ծերունիներին» կազատեն: Հոգ տարեք, թե բանտից ազատվելուց Հետո նրանք ո՞րի մոտ ապաստանաբան պետք է գտնեն: Ո՞վ կարող է իր սան մեջ ընդունել նրանց»:

Հանձնաժողովի արտակարգ նիստ ունեցանք: Մոսկվայի մեր գաղութի ամեն մի անհամ իրեն Համար մեծ պատիվ կՀամարեր իր Հարկի տակ ընդունել այդ թանկագին Հյուրերին: Սակայն, շատերը վախենում էին: Այն օրերին էր այդ, երբ վտանգավոր էր ոչ թե զորավարների, այլ Հասարակ սպաների անունն անգամ Հիշատակել, այլ ո՞ւր մնաց թե այդպիսիներին իրենց Հարկի տակ ընդունելը:

Մոտմ էր մի ճանապարհ: Ես իբրեւ Հայ ազգային եկեղեցու եւ Հայ ժողովրդի Հեզ սպասավոր, Հանձն առա իմ Հարկի տակ ընդունել մեր Հայրենիքի մեծ Ապարապետին եւ նրա Սպայակույտի պետին ու Հրետանիի պետին:

Այնուհետեւ շատ ջուրեր Հոսեցան կամուրջների տակով: Իմ բախտի անիվն էլ թեքվեց դեպի վար: Ունեցա բանտ, արտոր, Հայածանք, նեղութիւն: Բայց վկա է Աստված, որ թե՛ արտորիս մեջ Միրքիայում, եւ թե՛ Հետո Ռուսաստանում, իմ երկցուՀին մի անգամ իր բերանից չթոցուց. «Տեր Արսն, ինչո՞ւ մենք այն Հախուռն կալլն արեցինք: Ինչո՞ւ մենք մեր ձեռքով մեր Հարկի վրա դժվարութեան ամպերը կուտակեցինք, մեր տունը քանդեցինք ու մեր տղաքը անտեր, անտիական փողոց նետեցինք»...

Ոչ նա, ոչ ես մի վայրկյան այդ մասին վարանում եւ կսկած չունեցանք, որովՀետեւ երկուքս էլ Համոզված էինք, որ մեր սրբազան պարտքն էր այդ գոՀաբերութիւնը:

Հանձնաժողովը Հարաբերութեան մեջ մտավ այն Հայ բոլշեւիկների Հետ, որոնք Բուսիրկայի բանտի Հիվանդանոցում էին ծառայում: Նրանցից մեկը զգուշութեամբ Հանձն առավ դեթ զորավար Նազարեգյանի վիճակը թե՛եւացնել՝ նրան Հիվանդանոց տեղափոխելով, ուր թե՛ րեծիմը եւ թե՛ սնունդն անՀամեմատ ավելի լավ էր, քան բանտինը:

Պետք է ասեմ, որ երեւանի բանտից մինչեւ Ալստաֆա կայարանը ձմռան ամիսներուն ոտքով քալելը շատ ծանր էր ազգած ծերունի զոր. Նազարեգյանի վրա: Նա սկսած էր կազալ, ոտքերից մեկը թուլացած էր բավականաչափ, եւ սննդի պակասութիւնն էլ իր քայքայիչ դերն էր կատարում: Բժշկի առաջարկը բանտի Հիվանդանոց տեղափոխելու, զորավարը մերժել էր, բացարձակորեն ասելով՝ «Ընկերներն չեմ ուզեր մի՞նակ ձգել» եւ մնացել էր մինչեւ ազատվելու օրը նույն խցիկում:

Մինչ այս, մինչ այն ինձ Հեռախոսեց նաեւ կոմունիստ Ներսես Բաղրամյանը:

«Տեր Հայր, - ասաց նա- գեներալ Նազարեգովին շուտով պիտի ազատեն: Ես Հեռախոսով խոսեցի Բուսիրկայի բանտապետի Հետ ու խնդրեցի, որ երբ ազատելու Հրամանագրեր ստանա, ինձ իմաց տա, որ ես քանզի անմիջապէս եմ իմ կուտքով բերեմ նրան ձեր տունը: Կոմեւնտանին խոստացա ծխախոտ տանել զործարանիցս, եւ նա ուրախացավ եւ խոսք տվեց, որ երբ Չեկայից Հրամանը գա, անմիջապես ինձ պիտի Հաղորդե»:

Այդ քամանակ ոչ միայն ուսուցիչի, այլեւ ծխախոտի մեծ սով էր, եւ Բաղրամյանը շատ զուբավ իր գործարանի արտագրած ծխախոտով կրնար որեւէ մեկին կաշտել:

Հանձնաժողովի անդամները Հայերի տներից լավագույն մահճակալներ, մահիճներ ու վերմակներ առան ու բերին իմ բնակարանը մեր թանկագին Հյուրերի Համար: Իսկ նրանց կերակրելու համար որոշեցինք ամեն ինչ սեւ շուկայից ձեռք ձգել:

Եւ ահա 1921թ. ապրիլի 2-ին կամ 3-ին, առավոտյան կանուխ, հեռախոսեց ինձ ներսեւ Բաղրամյանը. «Տեր Հայր, ասօր քրքրեմ (գնում եմ) պանտը՝ գենեթալ նազարեզովին պերելու: Պատրաստ եղեք: Պապիրոս այլ (ծխախոտ) տանըմ եմ պանապետի համար»:

Մի քանի ժամից հետո եկավ նա Ապարապետի հետ միասին: Սկզբում զորավար Հախվերդյանին ու Գամաղյանին եւս առնում է իր օթմոտրիլի մեջ, բայց երբ տեսնում է, որ ծխախոտից մեծ քանակությամբ իր կառքի մեջ առնել չի կարող, երկուքի համար ձիով կառք է վարձում, վարձը վճարում և նրանց ճանապարհում այդ կառքով, իսկ ինքը իր օթմոտրիլով Ապարապետ նազարեզյանին բերում մեր բնակարանը:

Իմ ընտանիքի բոլոր անդամներն էլ անկեղծ ու բաց սրտով ընդունեցինք մեր թանկագին Հյուրը: Երիցուհին ոչ մի ջանք չէր խնայած մեր բնակարանին հրադուրիչ կերպարանք տալու: Եւ ես նկատեցի նազարեզյանի աչքերում փայլիլող աքցունքները: Բանտի դաժան, զարհուրելի պահերից ազատված՝ նա նորեն մարդուն վայել կյանք պիտի ունենար...

Բարձրահասակ էր մեր Ապարապետը, Հաղթանդամ ու առնական, ճերմակ մազերով, համակրելի դեմքով: Աչքի մեկը մի քիչ խփված էր, ինչ որ նրան ապրի էր նախորդեան մեծի դեմ կռիվող զորավար Կուտուզովի տեսքը: Ահա թե ինչու՞ Հայ սպաներն ու գինիորները մեր Ապարապետին Կուտուզովի էին կոչում եւ Հայր, այնքան մեծ էր Հարգանքն ու սերը նրա Հանդեպ:

Շուտով եկան նաեւ զորավարներ Հախվերդյանն ու Գամաղյանը: Նույն սրտաբացությունը ընդունեցինք նաեւ նրանց եւ հրավիրեցինք մեր հարկի տակ...

Ամիջապես սիսան գալ այցելուները: Առաջինը մտավ իրեն հատուկ ազմուկով ու ետանդով զորավար Դրոն: Երկար էր նրանց գիրկընդխառնումը: Վերջապես կամ չէին միմյանց նորեն եւ կարող էին խոսել մեր Հայերենիքի գեղեցիկ եւ դաժ տոտր օրերի մասին... Եկավ նաեւ Սահակ Տեր-Գաբրիելյանը, որպես Սորհրդային Հայաստանի ներկայացուցիչ եւ շատ մտերմիկ խոսակցություն ունեցավ Ապարապետի հետ: Եկան շարան-շարան հանձնաժողովի անդամները, Մոսկվայի Հայ գաղութի անդամները - ծեր, տղա, մայր, աղջիկ, մեծ, փոքր...

Հիշում եմ, երկու օրից հետո, Մաղկազարզն էր: Մոսկվայի հայությունը նման նվիրական տոներին եկեղեցի էր գալիս խուռնեցում: Եթե զորավարները այդպիսի Հանդիսավոր օր եւ մեծ բազմության ներկայությամբ եկեղեցի մտնեին, ժողովուրդը կարող էր համակրանքի ցույց անել նրանց Հանդեպ, ինչ որ անբազձայի հետեւանքներ ունենար: Ուստի որոշվեց, որ նրանք այդ օրը եկեղեցի չգնան, այլ մի քանի օրից հետո միայն, ապրիլի 7-ին, Ավետման տոնի օրը:

Մաղկազարդի կիրակի օրը հապճեպով բժշկական խորհրդակցություն հրավիրեցինք զոր. նազարեզյանի համար: Ներկա էին հինգ Հայ եւ երկու ուսու նշանավոր բժիշկներ, որոնք երկար քննությունից եւ խորհրդակցությունից հետո որոշեցին Հիվանդանոց տեղափոխել զորավար նազարեզյանին: Պրոֆ. Ռոստիմոն, որ ներկա եղող ուսու բժիշկներից մեկն էր, մեծ խիզախությամբ արեց՝ Հանձն առնելով զորավարին իր Հսկողության հանձնված Հիվանդանոցի մեջ տեղ տալ եւ, որչափ հնարավոր էր, շատ շուտով:

Երկու ուսու պրոֆեսորներին ծրարի մեջ առաջարկվեց վարձատրություն 75000 ուսուլի յուրբարանչություն: Պրոֆ. Պետյոֆը հրաժարվեց այդ գումարից, պատճառաբանելով թե՛ «Ջորավար նազարեզյանը Հայ ժողովրդի ազգային գործիչներից է, իսկ ես սովորություն ունեմ ազգային գործիչներին բուժելու համար դրամ առնել»... Իսկ պրոֆ. Ռոստիմոն առավ իր վարձը, բայց արեց իր կարելին:

Ապրիլի 7-ին Ավետման տոնի օրը զորավարներն առաջնորդվեցան եկեղեցի եւ ընդունեցին Հաղորդություն: Մի քանի խոսքով եւ ողջունեցի նրանց ազատությունը: Ջոր. նազարեզյանը շատ հուզված էր:

...* Օրերն անցնում էին, Զատիկը մոտենում էր: Պրոֆ. Ռոստիմոն պահանջած էր, որ անմիջապես մի քանի օրից մինչեւ Զատիկը Ապարապետին

տեղափոխենք իր Հիվանդանոցը, որպեսզի անհասպաղ սկսվի բժշկությունը: Ջոր. նազարեզյանը չէր ուզում Զատիկից առաջ տեղափոխվել Հիվանդանոց: Սրտով ցանկանում էր մեր ընտանեկան հարկի տակ անցնել նվիրական տոնը: Սակայն պրոֆեսորի պահանջը շատ հրամայական էր: Մեզ եւ բոլոր չրջապատին թվում էր, որ եթե մի քանի օր էլ հետաձգվե կամ ուշանա տեղափոխությունը, Հիվանդի վիճակը կվատթարանա: Ուստի շատ խնդրեցինք Ապարապետին, որ օր առաջ համաձայնի տեղափոխվելու Հիվանդանոց, որովհետեւ այդ է պահանջում իր առողջական վիճակը: Ես խոստացա, որ այդ օրը Հիվանդանոցի մեջ կունենա մեր բոլոր խթման գիշերվա ձկնեղեն կերակուրներն ու ավանդական փրվալ:

Տեղի տվավ եւ Ավագ Հինգշաբթի տեղափոխվեց Հիվանդանոց: Խոստումս կատարեցի եւ Ավագ Շաբաթ երեկո մեր տնից ուղարկեցի թե՛ ներկված հավիկթ, թե՛ ձկնեղեն, եւ թե՛ փրվալ:

Հիվանդանոցը գտնվում էր քաղաքի մի այլ ծայրում: Այդ մասերում ապրող Հայուհիներից մի Հանձնաժողով կազմեցի, որպեսզի նրանք այցելեին մեր Ապարապետին, ինչպես եւ՝ անհրաժեշտ, հավելյալ ուսելիք տանեին Հիվանդին, որովհետեւ Հիվանդանոցի ճաշերն անբավարար էին միանգամայն:

Ինքս էլ շաբաթը երկու անգամ այցելում էի Հիվանդին: Առաջին անգամ, երբ գնացի, դարձյալ ցավ հայտնեց, որ Զատիկը մեր տան մեջ չէ անցուցած: Մինչեւ այդ օրը ոչ մի բժշկական խնամք չէր եղած իրեն Հանդեպ եւ, ուրեմն, իզուր էր իր տեղափոխությունը:

Երեք-չորս ամիս մնաց զոր. նազարեզյանը Հիվանդանոցի մեջ, բայց ոչ մի զգալի բարեփոխում տեղի չունեցավ իր Հիվանդության ընթացքին մեջ: Հիվանդություն անբուժելի էր, հետզհետե պիտի դարգանար, թեեւ պրոֆեսորը դեռ ուշյան էր ապրիս...*

Ա.Մյասնիկյանը գնում է Հայաստան, իբր վարչապետ, կազմում է իր նոր վարչությունը՝ հեռացնելով ծայրահեղներն ու պակասամիտները: Ամենից առաջ հրաման է տալիս ազատելու Հանրապետության Ապալակույտի անդամներին: Ռյա-զանի նահանգից շատերն անմիջապես անցնում են Հայաստան, շատերն էլ Մոսկ-վայով անցան: Նրանք Հայոց եկեղեցու բակում գտնված ընդարձակ սենյակներից մեկում երեք-չորս օր Հանդիսա էին ունենում, ծանոթանում Մոսկվայի նշանավոր վայրերի ու հաստատությանց հետ եւ վերադառնում Հայրենիք: Նրանց մեջ կային նաեւ ուսու գինիորականներ - գնդապետներ, կապիտաններ ու սպաներ, որոնք Հան-րապետության օրերին ծառայել էին մեր բանակում եւ Հայերեն խոսել էլ սովորել էին. արքեպ եւս չմնացին Ռուսաստանում, այլ գնացին Հայաստան, ասելով.

«Ջեր երկիրը եղավ մեր երկրորդ հայրենիքը: Մեր կյանքի ամենամասն օրերում նա ասանջականություն չնորհեց մեզ, եւ այսօր հաճույքով ենք վերադառնում այնտեղ՝ նորեն ծառայելու համար նրան...»

Թուլյատրվեց նաեւ վերադառնալ զորավար նազարեզյանին, սակայն ոչ թե Հայաստան, այլ Վրաստան, Թիֆլիս: Նույնպես զորավար Գամաղյանին, որ մի քիչ արտա ծերունի էր, Թիֆլիսում ծնված...*

«Հայրենիք» (ամսագիր, Բոստոն), 1954թ., թիվ 6, էջ 1-12 եւ թիվ 7, էջ 25-34:

Նամակների բնագրերը պահվում են Հայաստանի Ազգային արխիվում՝ ֆոնդ Պ-412, ցուցակ 1, գործ 872 եւ 873: Կրկնութունից խուսափելու նպատակով նամակներին կից արվում են միայն գործերի եւ թերթերի համարները:

Ալվարո Ազգեյան
բանասիրական գիտությունների
թեկնածու

N 1

1923թ.
Վենետիկ

Սիրելի Սաֆրասեան,

Չգարմանք, որ Ձեզ հետ կը խօսեմ Վենետիկէն, ուսկէ ջերմ ողջոյնս կըրկեմ Ձերդ հայրենասէր հոգուն:

Իր ժամանակին իմացայ, որ Ամերիկա գացիք առաքելութեամբ մը: Արդ, բարեյաջող գարձէա յետ, խնդրեմ քանի մի սողով զիս այ իրազեկ ընէք, քաղաքական անցքերուն մեր հարցին շուրջը: Արդեօք բան մը կընեն Trocadero թե... յունական զէնքի յաջողութենէն մեզ եւս մաս մը հանել, թէ ընդհակառակը, այս անգամ եւս հոդն ու ջուրը մեր գլխուն պիտի թափուի: Բարեկամես մէկը Փարիզ հրատարակուող ուս թերթի համարներից մինը յլած էր ինձ, ուր կը հարգուի, որ իբր գաշնակցական Զանգեզուրը նորից ոտքի է կանգնել եւ Քաջազնունու եւ Յոհաննանեանցի առաջնորդութեամբ Կարմիր բանակը ջարդել է եւ այլն եւ այլն, խմբրեմ, յայտնէք, որքան ստույգ է այդ լուրը:

Եթե կրնաք Ձեր թերթի, ինչպէս եւ Պոլսի թերթերից աւելորդ համարներ ինձ դրկել, շատ շնորհակալ պիտի լինիմ:

Կը յուսամ, որ անմիջապէս ինձ կը պատասխանէք Ձեզ յատուկ ձեռնհասութեամբ եւ ան ատեն իմ ասելիքս այլ կը յսեք:

Ողջոյն բոլոր բարեկամներին, առայժմ Ձերդ Ն. Ազոնց

գ.872, թ.6

N 2

Париж
По адресу газеты „Абака,,

18 մայիսի 1927թ.
Լենինգրադ

Уважаемый товарищ

В настоящее время я пишу о литературной деятельности М. Арлена.

В виду этого я был бы Вам очень обязан, если бы Вы могли бы переслать мне:

1) Книгу М. Арлена „Влюбленная молодежь” (Young Menin Love)

2) Его краткую биографию

3) Фотографию

Желательно бы получить и другие произведения М. Арлена, кроме

„Зеленой ялны”, уже переведенной на русский язык.

За исполнение означенной просьбы заранее благодарю.

С приветом Гайк Адоци.

Հայ ազգային պատվիրակության անդամ մասնակցի է Փարիզի խաղաղության կոնֆերանսին: Պաշտոնավարել է իբրև Լոնդոնի Հայ Կարմիր Սաչի լիազոր: Եղել է մշտական անդամը Լոնդոնի Հայ Համայնքային ընկերության վարչութիւնում:

1928թ. սկսած մասնակցել է գեկուցումներով կուլյանի է ունեցել արեւելագետների միջազգային կոնգրեսում ու լեզվաբանական, պատմագիտական համաժողովներում: Ընտրվել է անդամ Լոնդոնի առիական թագավորական ընկերության, հնագիտական ինստիտուտի, Բեռլինի գերմանական արեւելյան ընկերության եւ այլն:

Նամակագրական, անձնական կապեր ու ծանոթություններ է ունեցել Հայ եւ օտարազգի գիտական, քաղաքական, հասարակական, մշակութային, կրօնական, պետական գործիչների, հաստատությունների, հասարակական կազմակերպությունների հետ:

54

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՎ ՀԱՅԿ ԱԴՈՆՏԵՆՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ

1. Библия на английском языке, перевод короля Джеймса, издана в 1612 или 1613г. 2. Экземпляр первого английского перевода корана, издание 1732г. 3. Рукописная книга на персидском и арабском языках. 4. Арабская рукопись на пергаменте. 5. Коран на арабском языке. 6. Рукописное евангелие на армянском языке, издание 1240г. по календарю армянской церкви. 7. Сборник армянских молитв и церковных служб, с иллюстрациями, издание примерно 1626г., Амстердам, Голландия. 8. Роговая икона (повреждена. 9. Деревянная коробка с двумя стеклянными сосудами (повреждены), табакеркой для нюхательного табака и карманным рукописным кораном на арабском языке.

ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 92, թ. 6-9: Բնագիրը: Մեքենագիրը:

N 5

ԱՕԿՍ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԲԵՐՍԱԲԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ ՍԱՐԱՑՅԱՆԻՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ «ՀԱՅ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19.06.1961թ. Երևան

Հարգելի պրն. Սարաֆյան

Մենք անչափ բարձր ենք գնահատում Ամերիկահայ բարեգործական միութիւնի նախաձեռնութիւնը, ինչպես նաև անձամբ Ձեր եւ մյուս ընկերների գործադ-

րած ջանքերը՝ անդիերեն լեզվով «Հայ Հանրագիտարան» ստեղծելու ուղղութիւնում: Դա կօգնի բազմաթիվ օտարախոս Հայ երիտասարդների որոշ պատկերացում կազմելու Հայրենի իրականութեան մասին: Մենք էլ խոստանում ենք մեր կողմից ամեն ինչ անել Ձեր աշխատանքը գյուրացնելու ճամար...

Նախագահու թյան նախագահ Բ.Գրիգորյան

ՀԱԱ, ֆ. 709, ց. 3, գ. 273, թ. 43: Պատճեն: Մեքենագիրը:

N 6

ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՈՂ ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՕԿՍ-Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԻՐ ՎԻՋԱՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.07.1961թ. Երևան

Հարգելի ընկեր

Ներքո ստորագրելու ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ (Ամերիկյան պատարտով ՋԱՆ ՄԱՀԻ), Ամերիկային որպես տուրիստ Հայաստան եմ եկած մինչև հունիսի 16-ը մնալու վրդայով: Երկար տարիներու Հասարակական գործիչը եւ մի ամբողջ շարք աշխատութիւններու հեղինակ, այդ թվում՝ «Այլքսանդրապոլի դաշնագրեն մինչև 1930-ի Կովկասյան պատամբութիւնները» երկհատորյա գիրքը, որու մեջ քննադատած եմ դաշնակցութեան թուրքական օրինատացիան՝ ուղղված Սովետական Միութեան դեմ, բողոքերծած եմ դաշնակցութեան Հակասովետական, ազգակործան քաղաքականութիւնը: Այժմ ես կաշխատիմ մեկ նոր գործի վրա, որը վերահիշյալ աշխատութեան շարունակութիւնը պիտի ըլլա: Այս նոր ուսումնասիրութիւնը կվերաբերի դաշնակցութեան փետրվարյան արկածախնդրութեան: Իմ այդ աշխատանքի ճամար ես կարիք ունիմ ծանոթանալու այդ իրադարձութեան վերաբերյալ Հայաստանում (Պետական Արխիվում) եղած փաստաթուղթերուն եւ որոշ հրատարակութիւններուն:

Այդ նպատակով՝ կխնդրեմ միջնորդել Հայաստանի պետական մարմիններու մոտ, որպեսզի իմ Հայաստան մնալու վիզան երկարաձգվե մեկ ամիսով:

Կանխաձայտ շնորհակալութեամբ եւ Հարգանքներով

Շահան Նաթելի

ՀԱԱ, ֆ. 709, ց. 3, գ. 274, թ. 49: Բնագիրը: Մեքենագիրը:

N 7

ՍՓՅՈՒՆ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՈՂ ՎԱՀԵ ԱՅՅԿԻՆ ԻՐ ԱՐԽԻՎԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

09.06.1964թ. Երևան

Հարգելի բարեկամ

Մեծ հաճուքով ապրիլի 23-ի Ձեր նամակից տեղեկացանք, թե մտադրվել եք Հայրենիք ուղարկել Ձեր արխիվը: Փոխադրութեան հետ կապված խնդիրը, որ մտահոգում է Ձեզ, մեր ընկերութիւնը վերջնում է իր վրա: Մենք արդեն մի նամակ ենք հղել Ամերիկահայ ՄիջՀայրենակցական միութեանը, խնդրելով կազմակերպել Ձեր արխիվի Հայաստան փոխադրութեան գործը...

Նախագահի տեղակալ Ա.Մարիրոսյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 287, թ. 44: Պատճեն: Մեքենագիրը:

N 8

ԿՈՂՈՒՄԲԻԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ ՌՈՆԱԼԴ ԳՅՈՒՆԻՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՆ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ ԻՐԵՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

01.01.1965թ.
[Փենսիլվանիա]

Հարգելի կոմիտեի անդամներ

... Ես Գոյումբրիա Համալսարանում ուսանող եմ, եւ երբ ես երեւանում այցելում էի, ես խնդրեցի կոմիտեից որոշ գրքերը ու հանդեսները, եւ Դուք խոստացաք ուղարկել ինձ նույնը: Բայց մինչեւ այսօր որեւէ գրականություն չեմ ստացել Ձեզանից: Նկատելի է Ձեզ Համար երեւակայել, թե, որքան կարեւոր են այս գրքերը իմ ուսումնասիրության Շահումյանի կյանքի մասին: Խնդրում եմ որ ամեն միջոց գործացրէք կատարելու այս խնդրանքս: Հույսով եմ, որ ամեն ջանք պիտի գործացրէք:

Մեծայն շնորհակալությամբ մնում եմ:

Ռոնալդ Այունի

Այս գրքերը շատ կարեւոր են իմ գիտերտացիայի համար:

1. Атлас Азербайджанской Республики
2. Հին բույսերի կենդանի հիշողություններ, գիրք առաջին, (Երեւան, 1958)
3. Гарибджанян Г.Б., Коммунистическая организация Армении в борьбе за победу Советской власти (Ереван, 1957).
4. Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении (Сборник документов), Ереван, 1957.
5. Պատմաբանասիրական Հանդես
6. Տեղեկագիր
7. Եվ ուրիշ գիրքեր ուսուցիչային Հայաստանու մասին

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 135, թթ. 18-19 Հակ.: Ինքնագիր:

N 9

ՍՓՅՈՒՌ-ԲԱ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՊԱՏԱՍԽԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՅՈՒՆԻՒՆ Ա.ՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.02.1965թ.
Երեւան

Սիրելի Ռոնալդ Այունի

Ձեր Հունվարի 1-ի նամակը ստացանք: 1965թ. քննադրում կստանաք «Սովետական Հայաստան», «Սովետական արվեստ», «Պատմաբանասիրական Հանդես» ու «Տեղեկագիր» (Հասարակագիտական սերիա) հանդեսները: Արդեն ուղարկել ենք նաև մի շարք գրքեր, որ հուսով ենք, թե ստացած կլինենք: Կուղարկենք նաև Ձեր ուսումնասիրությունների համար անհրաժեշտ գրականություններ:

Կոմիտեի ավագ խորհրդական Գր. Գուլումջյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 135, թ. 17: Պատճեն: Մեքենագիր:

N 10

ՀԽՍՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
ՍՍԱՑՎՈՂ ԱՐԽԻՎՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԻՆ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21.01.1965թ.
Երեւան

N 29

1. В целях определения места дальнейшего хранения поступающих из-за границы архивных документов, литературы и музейных ценностей, образовать при Архивном управлении при Совете Министров Армянской ССР республиканскую комиссию в составе:

Арутюнян А.О.- начальника Архивного управления при Совете Министров Армянской ССР (Председатель комиссии), Амазаспьян В.Е. - пред-

109

седателя Армянского комитета по культурным связям с соотечественниками за рубежом, Арутюнян Г.Г. - директора Центрального государственного исторического архива Армянской ССР, Асратян М.С.- директора Государственного исторического музея Министерства культуры Армянской ССР, Гарибян А.С. - директора фундаментальной библиотеки Академии наук Армянской ССР, Даллакян К.Л.- председателя Совета по делам армянской церкви при Совете Министров Армянской ССР, Котанджян А.Г.- начальника Главлита Государственного комитета Совета Министров Армянской ССР по печати, Меликсетян С.А.- директора Музея литературы и искусства Министерства культуры Армянской ССР, Неркарарян В.Н.- директора Партийного архива при ЦК КП Армении, Тирабян А.М.- директора Государственной республиканской библиотеки им. А.Мясникяна, Хачикян Л.С.-директора Матенадарана им.Месропа Маштоца.

2. Обязать республиканскую комиссию определения места дальнейшего хранения поступивших из-за границы архивных документов, литературы и музейных ценностей производить с учетом профиля учреждений и организаций, исходя из интересов обеспечения надежной сохранности и наиболее эффективного использования их.

3. Обязать руководителей министерств, ведомств и организаций республики своевременно уведомить республиканскую комиссию о поступлении из-за границы архивных документов, литературы и музейных ценностей.

Председатель
Совета Министров Армянской ССР

А.Кочинян

ՀԱԱ, ֆ. 113, ց. 97, գ. 25, թթ.2-3: Բնագիր: Մեքենագիր:

N 11

ՍՓՅՈՒՌ-ԲԱ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԽՍՀ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՏԵՂԱՓՈՒՎԵԼԻՔ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28.02.1965թ.
Երեւան

Ուղարկում ենք ցանկը սփյուռքահայ այն գրադարանների ու արխիվների, որ հնարավոր է տեղափոխել Սովետական Հայաստան:

ԱՄՆ

...2. Յրեզնո ... Վահե Հայկի անձնական արխիվը, 3. Նյու-Յորք - Հարոթյուն Պատարյանի ձայնագրերի արխիվը... 7. Գառնիկ Գեորգյանի «Կոունկ» թերթի 40 տարվա հավաքածուն, 8. Բոստոն - Թոփալյան գրադարանի ունեցվածքը, 9. Նյու Յորք - կոլեկցիոններ Հարոթյուն Հազարյանի անձնական թանգարանը (ձեռագրեր, կերպարվեստի գործեր)..., 11. Յրեզնո - կոմպոզիտոր Վաղարշակ Արվանձալյանի երաժշտական արխիվը...

Կոմիտեի նախագահ

Վ.Համազասպյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 47, թթ. 1-2: Պատճեն: Մեքենագիր:

N 12

ՍՓՅՈՒՌ-ԲԱ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԻՍ
ՓԱՓԱԶՅԱՆԻՆ ՆՐԱ ԿՈԶԸ ՈՂՋՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19.05.1965թ.
Երեւան

110

31.12.1965թ.
Երևան

Հարգելի ընկ. Փափազյան
...Վերջերս, ամերիկահայ մամուլում կարգացինք Ձեր կոչը՝ «Գրքերու Հայ-
րենադարձ կատարենք [Հայաստան]» վերնագրով: Այդ կոչն այստեղ արժանացավ
մեծ ուշադրություն: Վստահ ենք, որ Ձեր Հայրենասիրական ելույթը արձագանք-
ներ կունենա ամերիկահայ գաղութում... Միայն վերջին շրջանում Հայրենիքը
ստացավ սփյուռքահայ շատ մտավորականների անձնական արխիվներն ու գրադա-
րանները, բազմաթիվ գեղանկարչական գործեր, թանգարանային արժեքավոր
նյութեր...

Ամերիկյան երկրներէ բաժնի վարիչ Գր.Գուլումջյան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 350, թ. 1: Պատճեն: Մեքենագիր:

N 13

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏՄԱՐԱՆ ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

30.06.1965թ.
Երևան

Հարգելի պրն. Վ.Տատրյան
... Հետաքրքրութեամբ իմացանք, որ նպատակադրվել եք հայոց կուտորածնե-
րի շուրջ նյութեր հավաքելու: Անշուշտ, եվրոպական արխիվները (մանավանդ գեր-
մանական) շատ նյութեր ունեն, որոնք դեռևս չի՛նք են ծանոթ, կամ լրիվ ծանոթ
չեն Հայ թե օտար Հանրութեանը: Մեր արխիվները աղքատ են Ձեր ուսումնասիրած
շրջանի նյութերով: Եղածները վերաբերում են 1918-1920թթ.: Մենք սիրով կա-
րող ենք Ձեր ուսումնասիրությունների համար սրամաղբի այստեղ լույս տեսած
գրքերը...

Կոմիտեի նախագահ Վ.Համազասպյան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 138, թ. 42: Պատճեն: Մեքենագիր:

N 14

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱԳԵՏ ԱՎԵՏԻՍ
ԱԱՆՃՅԱՆԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25.09.1965թ.
Երևան

Մեծարգո պրոֆեսոր
Հալատում ենք Ձեր 12 օգոստոսի թվակիր նամակի ստացումը: Դուք տեղե-
կացնում էիք մեզ, որ Ձեզ վստահված է Կալիֆորնիայի համալսարանի հայագիտա-
կան ուսմանը բաժնի անօրենի բարձր պաշտոնը: Մեր հաճելի պարտքն ենք համա-
րում հայանել Ձեզ, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն,
ինչպես նաև կոմիտեի հայագիտական հանձնաժողովը հնարավոր բոլոր միջոցնե-
րով կաշխատեն օգտակար լինել նորաստեղծ հայագիտական այդ հաստատու-
թյանը...

Կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Մարտիրոսյան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 139, թ. 56: Պատճեն: Մեքենագիր:

N 15

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԳԵՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՅՈՒՑՈՒ ՅՈՐՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

111

Սրբազան տեր
Ամիսներ առաջ, երբ խնդրանք ներկայացրիք, որ Հայաստանի ճարտարապետ-
ներն էլ մասնակցեն Նյու Յորքում կառուցվելիք Հայ եկեղեցու եւ մշակութային
տան շրջարկում կանգնեցվելիք հուշարձանի նախագծմանը, մենք գործի լծեցինք
մեր անվանի ճարտարապետներին ու քանդակագործներին: Օրերս հանրածանոթ
ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն ու քանդակագործ Արա Հարությունյանը մեզ
ներկայացրին հուշարձանի երկու նմուշներ, որոնք իրենց մտահոգությունով բավա-
կանին ինքնատիպ գործեր են դուրս գալիս... Լավ կլինեք, որ ուղարկելիք կառուց-
վող շինությունների մակետների լուսանկարները...

Կոմիտեի նախագահ Վ.Համազասպյան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 345, թ. 18: Պատճեն: Մեքենագիր:

N 16

ՀԵՍՀ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Վ.ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ
ԵՐԱԺԵՇՏԱԳԵՏՄ.ԹՈՒՄԱՃԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

17.01.1966թ.
Երևան

Ամերիկահայ երաժշտագետ-քանահավաք Միհրան Թումաճանը (Կոմիտասի
հինգ սաներից մեկը) շուրջ 45 տարիների ընթացքում անխոնջ ու հետևողական
պրպտումների շնորհիվ հավաքել է հայ ժողովրդական երաժշտության ու բանա-
հյուսման հարուստ նյութեր, որոնք ընդգրկում են մոտ 3450 միավոր: Այդ
նյութերը ներկայացնում են Ակնը, Վանը, Կյուրինը, Մուշը ու Տարսնը, Բաղեշը,
Բյուրեղանի, Տիգրանակերտը, Երզնկան, Խարբերքը, Մալաթիան, Կիլիկիան, Եգես-
իան, Կեսարիան եւ այլն: Արանց մեծ մասը Արեւմտյան Հայաստանի այն վայրերն
են, որտեղից մինչև այժմ երաժշտական-ազգագրական քիչ բան է հավաքված, կամ
բնավ չի հայտնաբերված: Նախնական ծանոթությունը ցույց է տվել, որ Թումաճա-
նի նյութերը, եւ մասնավորապես ժողովրդական եղանակները հավաքված ու նոտա-
գրված են մասնագիտական մեծ հմտությամբ եւ գիտական ու գեղարվեստական
հսկայական արժեք ունեն: Մ.Թումաճանը բազմեցս պատրաստակամություն է
հայտնել իր ժողովածուն Սովետական Հայաստանում հրատարակելու: Նկատի
ունենալով այս բոլորը, խնդրում ենք Մ.Թումաճանին հրավիրել Երևան եւ հնարա-
վորություն տալ այդ մեծարժեք ժողովածուն հրատարակության պատրաստելու:

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ
ՀՍՍՌ Ժող. արտիստ Է.Միրզոյան

Արվեստի ինստիտուտի գիրեկտոր Պրոֆ. գոկտոր Ռ.Զարյան

Հնագիտության – ազգագրության ինստիտուտի գիրեկտոր Պրոֆ. գոկտոր Բ.Առաքելյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 218, թ. 27: Բնագիր: Մեքենագիր:

N 17

ՈՒԶԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ.ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26.04.1966
Լոս Անջելոս

112

Յարգելի Կոմիտեի նախագահ, Վարդկես Համազասպյան
... Հինգ տարի է, հայոց պատմութիւն կը գասաւանդեմ Կալիֆորնիոյ Համալսարանի Լոս Անճելոս ճիւղի մէջ: Այժմս կը հիմնուի հայագիտական ամպիոն մը, որուն Դուք արդէն իսկ Ձեր մասնակցութիւնը բերած էք ուղարկելով մեզ մի քանի հարիւր թանկագին հատորներ: Ստանալով իմ գովառարայի տիպոգր պատմութեան ֆակուլտետէն, այս նամակը կը գրեմ անձնական խնդրանքի մը շուրջ...Տիկինս, որը բժշկուհի է, եւ ես շատ կը փափագինք այցիլել հայրենիքը եւ շատ երախտապարտ պիտի ըլլանք եթէ հրաւիր ստանանք Ձեր կոմիտէէն... Սպասելով դիմումիս պատասխանը, կը մնամ խորհրդի յարգանքով եւ ջերմ գգացումներով:

Բիջարդ (Տիգրան) Յովհաննէսեան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 224, թ. 1ա: Բնագիր: Մեքենագիր:

N 18

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒԲԵՆ
ՄԱՄՈՒԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԻԼՄ ՆԿԱՐԱՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30.09.1966թ.
Երեւան

Յարգելի Հայրենակից
Նյույորքքաքանի ժուռնալիստ Հենրի Բուզալյանը մեր կոմիտեին էր ուղարկել Ձեզ հետ ունեցած տեսակցութեան գրառումը... Մեզ ուրախացրեց Հայաստան այցելելու եւ հայկական մի ֆիլմի նկարահանման աշխատանքներին մասնակցելու Ձեր փափազը: Մեզ հուզեցին Ձեր հայրենասիրական արտահայտութիւնները հայ ժողովրդի եւ Հայաստանի մասին: Մեծապես հաճելի կլինեն Ձեզ ողջունել մայր հայրենիքում...

Կոմիտեի նախագահ Վ.Համազասպյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 226, թ. 49: Պատճեն: Մեքենագիր:

N 19

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԽՍՀ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Բ.ՄՈՒՐԱԳՅԱՆԻՆ
Վ.ԹԱԹՈՍՅԱՆԻ ԿՏԱԿԻ ՄԱՍԻՆ

09.09.1967թ.
Երեւան

Մոնրեալում եղած ժամանակ ԱՄՆ-ի ոսմկավար կուսակցութեան ղեկավարներէրջ Էդմոնդ Քոթլայազյանը... գրուցի ժամանակ հայտնեց, որ երկար տարիներ ամերիկյան բանակում ծառայած հայազգի Վարդիվոս (Մարտիրոս) Թաթոսյանը Սովետական Հայաստանի մանկատների սաներին ու ծնողագուրկ երեխաներին կտակել է 90.000 գոլլար... Նա Արեւմտյան Հայաստանից որբացած վիճակում հասել է Ամերիկա եւ 40 տարի ծառայել ամերիկյան բանակում... Վ.Թաթոսյանը իր ամբողջ խնայողութիւնը... կտակել է Սովետական Հայաստանի որբերին հայ եկեղեցու միջոցով: Վ.Թաթոսյանը մահացել է 1967թ. հուլիսի 28-ին, 79 տարեկան հասակում: Խնդրում ենք համապատասխան կարգադրութիւն անել հայ եկեղեցու գործերի խորհրդին, որպեսզի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը հետաքրքրութիւն հանգես բերի ամերիկյան առաջնորդարանի միջոցով ստանալու այդ գումարը:

Կոմիտեի նախագահ Վ.Համազասպյան

N 20
ԼԵՎՈՆ ՏՈՆՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ.ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ
ԱՄԵՐԻԿԱՀԱՅՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
11.01.1968թ.
Բեւերլի Հիլս

Սիրելի պարոն Համազասպյան
Ամերիկայում միակ հայկական ճանապարհորդական գործակալութիւնն է այս կազմակերպութիւնը, որը լրիվ երաշխավորված է Մոսկվայի «Ինտուրիստ» ընկերութեան կողմից: Այստեղ բազմաթիւ հայեր ցանկանում են մասնակցել Սարգսյանի 50-ամյա հոբելյանական տոնակատարութիւններին: Այս առնչութեամբ խնդրում ենք բարի լինել մեզ հայտնելու մայրս ամսում կայանալիք հանդիսութիւններին մոտավոր ամսաթիւի մասին, որպեսզի հնարավոր լինի կարգավորել այն բոլոր հարցերը, որոնք կապված են նման ուղեւորութեան հետ...

«Հերոն» ճանապարհորդային եւ տուրիստական գործակալութեան գլխավոր ԼԵՆՈՆ Ս.ՏՈՆՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 383, թ. 2: Պատճեն: Մեքենագիր:

N 21

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՍԻՆ
ԱՄԱՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

06.02.1968թ.
Երեւան

Հարգելի Լուսին Ամարա
1968թ. հոկտեմբեր ամսին Երեւանում նշվելու է առաջին հայ օպերայի «Արշակ Բ»-ի 100-ամյակը: Այդ հոբելյանը վեր է ածվելու հայ երգի ու երաժշտութեան մեծ տոնի: Սփյուռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտեն եւ Այ. Ապենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի տնօրինութիւնը նպատակահարմար են գտնում երգի ու երաժշտութեան օրը փառատոնին մասնակցելու եւ Երեւանի օպերայում ելույթներ ունենալու համար այդ օրերին հայրենիք հրավիրել սփյուռքահայ մի խումբ հուշակալոր երգիչ-երգչուհիների: Այդ երգիչ-երգչուհիների ցուցակի առաջին անուններէրջ մեկը Դուք եք: Ուստի խնդրում ենք վարորդը հայտնել մեզ, թե կիրառականք արդյոք, ընդառաջելով մեր հրավերին, վերոհիշյալ ժամկետին այցելել Հայաստան ու մասնակցել այդ փառատոնին:

Կոմիտեի նախագահի տեղակալ Վ.Դավթյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 376, թ. 3: Պատճեն: Մեքենագիր:

N 22

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԴՈՒՇ
ՄՈՒՐԱԳՅԱՆԻՆ ԵՂՐՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

09.04.1970թ.
Երեւան

Հարգելի Հայրենակցուհի
Վերջերս... տեղեկացանք Ձեր ազնիվ եւ հայրենասիրական մտադրութեան մասին՝ մեծատաղանդ Ձեր եղբոր՝ Արշիլ Գորկու (Ոստանիկ Աղոյանի) գործերից 44-ը նվիրաբերել Երեւանի պետական պատկերասրահին: Բացի այդ տեղեկացանք, որ մտադիր եք վերջնականապես բնակութիւն հաստատել մայր հայրենիքում: Ձեր մտադրութիւնը ողջունելի է...

Կոմիտեի նախագահի տեղակալ Վ.Դավթյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 231, թ. 54: Պատճեն: Մեքենագիր:

N 23

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԿԿ ԿԵՆՏՐԱԿԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՌԵԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ՝ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ ԱՄՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.07.1970թ.
Երևան

Դեռոյտի Հայ մշակութային միութիւնը, որը սերտորեն կապված է Սովետական Հայաստանի հետ... խնդրանք է ներկայացրել Սովետական Հայաստանի 50-ամյա Հոբելյանի առթիւ Դեռոյտում կազմակերպվող «Հայրենիքի փառատոն» հանդիսութեանը մասնակցելու եւ համապատասխան ղեկուցումով Հանդես դալու համար 1970թ. նոյեմբեր ամսին ԱՄՆ ուղարկել բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին... Սիլվա Կապուտիկյանը հնարավորութիւն կունենա մասնակցել ոչ միայն Դեռոյտի... այլեւ... ԱՄՆ-ի մի շարք հայաշատ քաղաքներում կազմակերպվող Հոբելյանական հանդիսութիւններին:

Խնդրում ենք Ձեր կարգադրութիւնը բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին այս տարվա նոյեմբեր ամսին մեկ ամսով ուղարկելու ԱՄՆ...

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 21, թ. 40: Պատճեն: Մեքենագիր:

N 24

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՍԵՆ ԵՎ ԱՐՄԱՆ
ՓՈՒՇՄԱՆՆԵՐԻՆ (ՆՅՈՒ ՅՈՐՔ) ՀՈՐ՝ ՀՈՎՍԵՓ ՓՈՒՇՄԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հուլիս 1970թ.
Երևան

Հարգելի բարեկամներ

Սիլվա Բաբայանի հետ մշակութային կապի կոմիտեն եւ Երևանի պետական պատկերասրահի անօրինութիւնը իրենց խորին շնորհակալութիւնն են հայտնում Ձեզ Ձեր գոհողութեան համար: Մեծատաղանդ Հովսեփ Փուշմանի՝ Ձեր նվիրարբերած երկու արժեքավոր գործերը... հանդիսավոր պայմաններում հանձնվեցին Երևանի պետական պատկերասրահին... Հիշյալ գործերը կղետեղվեն Երևանի պատկերասրահում՝ Հայ դասական նկարիչների գոծերի կողքին: Այժմ Երևանցիները եւս հնարավորութիւն ունեն հաղորդակից լինելու նրա մեծ արվեստին...

Կոմիտեի նախագահ Պատկերասրահի տնօրեն Վ. Համազասպյան Էդ. Խսարեկյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 236, թ. 35: Պատճեն: Մեքենագիր:

N 25

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀՈՒՀԱՏԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԱՏՄԱՔԱՆՆԵՐԻՆ

31.09.1970թ.
Քեմբրիջ (Մասսաչուսեթս)

Հայ ժողովրդի նոր պատմութեան (18-րդ դարը ներկայացնող) մասին, երկու օր տեւողությամբ կոնֆերանս է տեղի ունենալու այս աշնանը, ի մի հավաքելու նպատակով նրանց, որոնք ուղղակի ընդգրկված են Հայ ժողովրդի պատմութիւնը

ուսուցանելու, հետազոտելու կամ դիպլոմային աշխատանք գրելու եւ առիթ ստեղծել նրանց քննարկելու ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր, մտքերի փոխանակութիւն ունենայ: Օգնել նրանց Հայ ժողովրդի պատմութեան այս բնագավառի ու ժամանակաշրջանի ուսումնասիրութիւնը առաջ տանելու համար:

Հոկտեմբերի 29-ին եւ 30-ին, Քեմբրիջում կայանայիք կոնֆերանսը լինելու է առաջինը իր տեսակի մեջ, այս նյութի շուրջ, Արեւմտյան աշխարհում եւ նախորդելու է Հայկական ուսումնասիրութիւնների ու հետազոտութիւնների ազգային ընկերութեան (ՀՈՒՀԱՏ) 16-րդ ամենամյա ժողովին, որը կայանալու է հոկտեմբերի 31-ին: Կոնֆերանսը տեղի է ունենալու ՀՈՒՀԱՏ-ի նախաձեռնութեամբ Հարավային համալսարանի Մերձավոր Արեւելքի լեզուների ու գրականութեան բաժնի եւ Միջին Արեւելքի ուսումնասիրութիւնների կենտրոնում...

Կոնֆերանսի նախնական օրակարգը ընդգրկում է հետեւյալ բնագավառները. Հայ ժողովրդի նոր պատմութիւնը ու հետազոտական խնդիրներ, Հայկական ազգայնականութեան հատում, Հայերն ու նրա հարեւանները, Միջազգային դիվանագիտութիւնը եւ հայերը, Հայ Սփյուռքի մշակութային ինքնորոշումը ու վերապրումը...

Անկեղծորեն Ձերը՝ նախագահ դիրեկտորներին խորհրդի [ՀՈՒՀԱՏ] Մանուկ Յանգ

ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 237, թ. 4-5: Պատճեն: Մեքենագիր:

N 26

Մ.ԱՍՐՅԱՆԻ ՆԿԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԻՐԵԼՈՒ
Գ.ՅԱՆԻԿՅԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

14.10.1971թ.
Սանտա Բարբառա

Հարգելի պարոն Վ. Համազասպեան

... Ես եկել եմ մի որոշման, որը հայտնում եմ Ձեզ: Մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարեանի «Պարսկական Սենեակ» կոչւող նկարը, որը իմ սեփականութիւնն է, մոտ ապագայում պիտի նուիրուի Հայրենիքին - առանց մի որեէջ վճարումի նրա կողմից: Ես կամավոր կերպով ինձ վերայ եմ վերցնում այդ հարցի լուծումը - այստեղ տեղիս վերայ, օգտագործելով իմ հնարաորութիւնները եւ բարեկամները...

Ինչպէս եւ ուժ անունից կը կատարուի նուերը ... չգիտեմ... բայց խօսք եմ տալիս, որ կը կատարուի... նկարը ԵՐԵՒԱՆ կը հասնի:

Անկեղծ Հարգանքներով Գուրգէն Եանիկեան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 280, թ. 11: Պատճեն: Մեքենագիր:

N 27

ՌԻԶԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵ ԻՐ ՈՒՍԱՆՈՂ Ժ.ԼԻՊԱՐԻՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

01.05.1973թ.
Լոս Անջելես

Յարգելի Հայրենակից՝ Պարգեւ Մարտիրոսեան

...Ուսանողներէս մէկը՝ Ժիրայր Լիպարիտեանը լուրջ եւ ուշիմ, այս տարի պաշտօնի կոչուեցաւ Լոս Անջելես Ստայթ Գոլլեճը, որ կը գտնուի Մոնտեպելլոսի եւ Փասսատինայի միջև: Գիշային բաժնի մէջ կը դասաւանդէ Հայ ժողովուրդի պատմութիւնը եւ ունի բաւականաչափ ուսանողներ: Այնքան յաջող է, որ գալ տարի կանոնաւոր ցերեկային բաժնի մէջ կանցնի այս դասընթացը: Յուսանք մնալուս դասնայ...

Ձերմ բարեւներս Ձեր ազնիւ պաշտօնակիցներուն:

Յարգօք Ռիչարդ Յով Հաննէսեան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, ք. 291, թ. 48: Բնագիր: Մեքենագիր:

N 28

Թ.Ա.Լ.Թ.ՈՒՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՍՓՑՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ
ԵՐԳԻ ՈՒՊԱՐԻ ՀԱՄՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

03.12.1973թ.
Նյու-Յորք

Հայրենիքի մեր եղբայրների հետ միասին ողբում ենք մեր սիրելի ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Թաթևու Ալթունյանի մեծ կորուստը: Նրա աշխատանքները ներշնչանք են տվել Հայ ժողովրդական խմբերին, որտեղ էլ որ գտնվեն նրանք, եւ իր անձնագոհ ջանքերի շնորհիվ այսօր մենք կարողանում ենք պահպանել եւ շարունակել մեր մեծ մշակույթի ժառանգությունները:

Հիմնականում Նյու-Յորքի «Անդրանիկ», Դեմոկրատի «Վահագն», Ֆիլադելֆիայի «Արարատ», Լոս Անջելեսի «Արարատ», Բոստոնի «Տարսն»... երգի ու պարի համույթներ:

ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, ք. 302, թ. 8: Պատճեն: Մեքենագիր:

N 29

Ժ.Լ.Ի.ՊԱՐԻՏՅԱՆԻՆ «ԲԱՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ» ՀԱՆԳԵՍՆ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՍՓՑՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12.12.1974
Երևան

Հարգելի պրն. Ժիրայր Լիպարիտյան
Ստացանք նույն 15-ի Ձեր նամակը եւ բնագույնով խնդրանքին 1975թ. բաժանորդագրեցինք նաեւ «Բանբեր Հայաստանի արխիվներին» հանդեսին: Մախտերը հոգալու կարիք չկա, քանի որ թերթ ու ամսագիր մեր հայրենակիցներին ուղարկում ենք անվճար:

Հարգանքներով
Բաժնի վարիչի սեղակալ Խ.Ա.Վազյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, ք. 500, թ. 52: Պատճեն: Մեքենագիր:

N 30

Վ. ՀԱՄՄԱԶԱՍՊՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄ՝ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ
ԳԱՂԹՕՋԱԽԻ ՀԵՏ ԿԱՊԵՐՆ ԱՄՐԱՊՆ ԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.01.1975թ.
Երևան

Армянская колония Соединенных Штатов Америки самая многочисленная среди армянских зарубежных колоний. В крупнейших городах Соединенных Штатов, по неточным подсчетам, проживает 400-500 тысяч армян. Комитет в своей внешнеполитической деятельности всегда уделял большое внимание армянской колонии Соединенных Штатов как в деле пропаганды советской действительности, так и в укреплении связей с многочисленными культурными союзами, редакциями газет и журналов, отдельными деятелями науки и культуры, с прогрессивными молодежными организациями для усиления нашего влияния на них.

С целью расширения пропагандистских мероприятий на Соединенные Штаты Америки по обеспечению нашего курса на развитие советско-американских отношений, представляем на Ваше рассмотрение следующий план мероприятий:

1. В целях дальнейшего распространения нашего влияния на армянскую колонию и, в особенности, среди молодежи, не умеющих читать на армянском языке, издавать вкладыши к газете "Айреники Дзайн" на английском языке.

2. Совместно с Комитетом по телевидению и радиовещанию практиковать отправку специальных материалов (радиоочерки, радиопередачи, музыкальные очерки и другие материалы), для передачи по действующим армянским радиочасам в Нью-Йорке, Бостоне, Детройте, Лос-Анджелесе, Фрезно и других городах Соединенных Штатов Америки.

3. Организовать выставку "Достижения Советской Армении" или "Армения от Урарту до наших дней" (по примеру Франции) через Всеобщий Армянский Благотворительный Союз.

4. Совместно с Комитетом кинематографии организовать кинофестиваль художественных фильмов производства студии "Арменфильм" по приглашению дружественных организаций.

5. По приглашению армянских прогрессивных организаций направить в Соединенные Штаты художественные коллективы (Армянский эстрадный оркестр, Государственный ансамбль танца Армении), а также общественных деятелей, ученых, писателей для выступления с лекциями о достижениях Советского Союза и Армении перед армянской общиной.

6. Для газет и журналов, издающихся в Соединенных Штатах Америки отправлять специальные статьи, пропагандирующие советскую действительность с учетом обеспечения внешнеполитического курса нашей страны на развитие советско-американских отношений.

7. На страницах органов печати Комитета: газеты "Айреники Дзайн" и журнала "Советакан Айастан" уделить особое внимание печатанию специальных статей с учетом развития советско-американских отношений, а также специфики армянской колонии.

8. Совместно с Комитетом Молодежных Организаций усилить связи с молодежными организациями армянской колонии, а также практиковать организацию специальных курсов танца и песни для молодежных групп, приезжающих по туристическим путевкам.

9. Практиковать дальнейшее приглашение руководителей прогрессивных организаций, деятелей культуры и искусства, науки и техники, молодежных организаций, выставки отдельных художников.

10. В целях усиления нашего влияния на подрастающее поколение и их ознакомления с советской действительностью, возобновить приглашение детей для отдыха в пионерских лагерях республики.

11. Практиковать дальнейшую отправку школьных учебников, издающихся специально для зарубежных армянских школ, которые нашли широкое применение во всех действующих армянских школах Соединенных Штатов Америки.

12. Изыскать возможности об оказании финансовой помощи армянским патристическим газетам "Пайкар" и "Нор Ор".

13. Просить инстанции о направлении одного работника из Армянской ССР для работы в аппарате Генконсульства в Сан-Франциско, исходя из неоднократных обращений как руководства Генконсульства, так и армянских прогрессивных организаций.

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, ք. 15, թթ. 2-4: Պատճեն: Մեքենագիր:

№ 31
ՍՓՅՈՒՌ-ՔԱ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԿԿ ԿԵՆՏՐԱԿՈՄ՝
ԱՎԻՍԱ, ՀԱԿՑԱՆԻ ԾՆՆԴԻՑԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ
ԱՄԵՐԻԿԱ, ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ ԼԽՍ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21.04.1976
Երևան

31.03.1975թ.
Երևան

Ավ.Խաչակյանի ծննդյան 100-ամյա Հորելյանին մասնակցելու համար առաջարկում ենք հրավիրել հետևյալ սփյուռքահայ գրողներին.

ԱՄՆ
Վլյուսմ Սարոյան, Լևոն Զավեն Սուրմելյան, Վահե Հայի, Ալիսա Կիրակոսյան...

Խնդրում ենք Ձեր կարգադրությունը:
Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյան
Գրողներին միուլթյան առաջին քարտուղար Էդ. Թոփչյան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 12, թ. 3: Պատճեն: Մեքենագիր:

№ 32
ՀՈՒՎՈՒԴԻ ԱԼԵՔՍ ՓԻԼԻՊՈՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ, ՀԱՅԵՐԵՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ
ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

24.02.1976
Հյլիվուգ

Յարգելի պր. Համազասպյան
Ուրախ եմ Ձեզի յայտնելու, որ «Այրբենարան» եւ «Մայրենի Լեզու» ու «Հայ Գրականութիւն» շարքերը դարձած են մեր դպրոցի բոլոր դասարաններու հայերէնի դասագրքերը: Մեծապէս երախտագարտ ենք հայրենիքի մէջ մեզ մոտ մտահոգուողներուն համար: Մեր աշակերտները հաճոյքով կը գործածեն Ձեր պատրաստած դասագրքերը եւ դասատուները գոհ են անոնց բովանդակութենէն:

Այս տարի մեր վարժարանը ունի 402 աշակերտ եւ յառաջիկայ տարի կը ակնկալենք 450 աշակերտ մանկապարտէզէն ութերորդ դասարան: Առջի տարուայ Ձեր մեզի ուղարկած դասագրքերուն մեծ մասը սպասած են: Ստորեւ կը ներկայացնեմ մեր գալ տարուայ պէտքերը.

Այրբենարան, Ա տարի - կապոյտ բնաւ չունինք
Այրբենարան, Բ տարի - կարմիր բաւարար ունինք
Մայրենի Լեզու, Ա տարի բաւարար ունինք
Մայրենի Լեզու, Բ տարի բնաւ չունինք
Մայրենի Լեզու, Գ տարի բնաւ չունինք
Մայրենի Լեզու, Դ տարի բնաւ չունինք
Հայ Գրականութիւն, Ե տարի բնաւ չունինք
Հայ Գրականութիւն, Չ տարի բնաւ չունինք
Հայ Գրականութիւն, Է տարի բնաւ չունինք
Հայ Գրականութիւն, Ը տարի 20 օրինակ ունինք

Կը յուսանք, որ շուտով մեզ տեղեակ կը պահէք վերոյիշեալ դասագրքերուն մեզի զրկուելուն կարելիութեան եւ առաքման մասին, որպէսզի դասագրքերու կողմէն մենք գմեա ապահովուած գգանք, երբ կը նայինք գալ տարուայ:

Յարգանք Տնօրէն Յակոբ Յակոբեան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 525, թ. 7: Բնագիր: Մեքենագիր:

№ 33
ՍՓՅՈՒՌ-ՔԱ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԽՍ Հ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԱՄՆ-Ի ԱՐԽԻՎԻՍՏԵՐԻ
ՀԽՍՀ ՏԵՂԱՓՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

119

Ամերիկահայ առաջադիմական շրջանակին պատկանող, Սովետական Հայաստանի ջերմ բարեկամ, նկարչուհի Վալա ինչաատուրյանը, որը Սովետական Հայաստանին էր նվիրել իր հանգուցյալ ամուսնու, Հայ անվանի նկարիչ Սարգիս Խաչատուրյանի՝ իր մոտ գտնվող բոլոր գործերը, ինչպես նաև իր ստեղծագործություններից յավագույններն ու արխիվային արժեքավոր նյութեր, դիմել է մեր կոմիտեին՝ խնդրելով Փարիզում թաղված Սարգիս Խաչատուրյանի աճյունը փոխադրել Սովետական Հայաստան: Նկարչի այրին միաժամանակ տեղեկացնում է, որ Ֆրանսիական օրենքների համաձայն, թաղումից 30 տարի հետո գերեզմանները հողին են Հավասարեցվում եւ Ս.Խաչատուրյանի գերեզմանը անհետ կորստյան կենթարկվի:

Նկատի ունեալով, որ Վալա ինչաատուրյանը ինքն է լուծելու աճյունասափորի փոխադրութեան հետ կապված բոլոր հարցերը եւ հոգայու է համապատասխան ծախսերը, կոմիտեն նպատակահարմար է համարում բնդատալի Վալա ինչաատուրյանի խնդրանքին եւ նրա կողմից աճյունասափորը փոխադրելուց հետո այն ամփոփել Երեւանի քաղաքային գերեզմանատան պանթեոնում, հաշվի առնելով հայ գեղանկարչութեան բնագավառում Ս.Խաչատուրյանի ունեցած մեծ վաստակը:

Խնդրում ենք Ձեր համապատասխան կարգադրությունը:

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 24, թթ. 11-13: Պատճեն: Մեքենագիր:

№ 34
ՍՓՅՈՒՌ-ՔԱ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՈՂ ՎԱՀԵ
ՕՇԱԿԱՆԻՆ՝ ՈՒՂԱՐԿՎԵԼԻՔ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

16.07.1976թ.
Երևան

Հարգելի պրն. Օշական
Մերով կարգացրիք հունիսի 10-ի Ձեր նամակը: Դուք շնորհակալ աշխատանք եք կատարում՝ վարիչ լինելով Ֆիլադելֆիայի Համալսարանի Հայագիտական ամբիոնին: Մենք հնարավոր ամեն բան կանենք օգնելու Ձեր ամբիոնին, ուղարկելով այն ամենը, ինչ մեր հնարավորութեան սահմաններում է: Դուք շուտով կստանաք՝ «Գրական թերթ», «Սովետական արվեստ», «Գարուն», «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր մատենադարանի», «Սովետական Հայաստան» ամսագրերը եւ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: Ձեր հասցինք ուղարկում ենք նաև պատմական ու գեղարվեստական գրքեր:

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 519, թ. 139: Պատճեն: Մեքենագիր:

№ 35
ՍՓՅՈՒՌ-ՔԱ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄՆ-Ի ԱՐԽԻՎԻՍՏԵՐԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

09.11.1976թ.
Երևան

Սեծահարկ պրն. Մանուկյան
Հայաստանի արխիվային վարչության ու ԱՄՆ-ի Հայ մտավորականների ջանքերով հաստատված եւ կազմված է մի ցուցակ կարեւոր փաստաթղթերի, որոնք պահվում են Վաշինգտոնի ազգային արխիվում եւ վերաբերում են Հայ ժողովրդի պատմութեանը կամ սերտ առնչութեան ունեն նրա հետ: Այդ մասին քաջատեղյակ է պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը: 1975թ. ԱՄՆ-ի ազգային արխիվի գերեզմտոր,

120

գոկտոր Ձեյանս Թոուզոր եղել է Երեւանում, որպէս Հայաստանի արխիվային վարչութիւնի Հյուր: Վարչութիւնն պետ, պրոֆ. Աշոտ Հարութչեանին կողմից վարած բանակցութեանը շնորհիվ գոկտոր Թոուզոր Համաձայնել է ընդունված կարգի Համաձայն թույլ տալ այդ փաստաթղթերի միկրոֆիլմերը կամ պատճենները Հանել Երեւանի պետական արխիվի Համար... Պրոֆ. Հարութչեանը Վաչիկգոտնում Հանդիպել է Ձեր քարտուղար պրն. Ազատյանի Հետ, որին բացատրել է այդ Հարցի էութեանը եւ խնդրել Ձեզ Հարգելու մեր խնդրանքը՝ Այլք Մանուկյան մշակութային Հիմնադրամի միջոցներով վճարելու այդ միկրոֆիլմերի արժեքը: Մեր կողմից եւս խնդրում ենք օգնել այդ ազգագուտ գործին...

Կոմիտէի նախագահ Վ. Համազասպան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 513, թ. 45: Պատճեն: Մեքենագիր:

N 36
ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ-ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
1976թ. Երեւան

... 4. 1976թ. ամռանը Երեւան էր այցելել Հայկական բարեգործական ընդհանուր միութեան նախագահ Այլք Մանուկյանի անձնական քարտուղար Երվանդ Ազատյանը: Նա Հայտնեց, որ Մանուկյանը մտադրութեան ունի Հայրենասիրական մի օգտակար առաջարկութեան անել: Ուզում եմ մեծ գումար նվիրել Հայրենիքին երիտասարդական-մարզական կենտրոն կառուցելու Համար, որն ունենա նաեւ Հյուրանոց եւ այլ օժանդակ Հարմարութեաններ, որպէսզի Հնարավոր լինի ԱՄՆ-ի Հայկական գաղութից, ինչպէս նաեւ սփյուռքի այլ գաղթօջախներից ժամանող երիտասարդական խմբերին տեղավորել այդ կենտրոնում, անցկացնել դասընթացներ եւ այլ միջոցառումներ...

ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 17, թ. 4-5: Պատճեն: Մեքենագիր:

N 37
ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՏՐՈՅԹԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՇԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴԻՐԱՄԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆԸ՝ «ԱՇԵԱՐ ՀԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅՅԻՐԸ» ԳԻՐՔԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴԻՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ
17.01.1977թ. Երեւան

Հարգելի բարեկամներ
Ամերիկահայ մամուլից տեղեկացանք, որ Միացյալ Նահանգներում լույս է տեսել 1675 էջից բաղկացած «Աշխարհի նշանավոր Հայերը», սովորածավայ Հատորը: Խորապէս շնորհակալ կլինենք, եթէ մեր կոմիտէի Հասցեով ուղարկեք վերահիշյալ գրքից 1-2 օրինակ...

Կոմիտէի նախագահ Վ. Համազասպան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 70, թ. 8: Պատճեն: Մեքենագիր:

N 38
ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՏՐՈՅԹԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՇԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴԻՐԱՄԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆԸ՝ ԱՄՆ-

ՈՒՄ ՆԿԱՐԻՉ ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՍՏԵՂԵՍԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԼԲՈՐԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

28.01.1977թ. Երեւան

Հարգելի բարեկամներ
Ամերիկահայ նկարիչների միութեան նախագահ Հրաչ Թաշճյանը անցած տարվա աշնանը Երեւանում Հյուրընկալվելու ժամանակ մեզ տեղեկացրեց, որ մտադիր է Միացյալ Նահանգներում Հրատարակութեան պատրաստել Հայ անվանի նկարիչ Մինաս Ավետիսյանի ստեղծագործութեանների գունատիպ այլոմը: Մենք խորապէս բարձր ենք գնահատում նրա այն նախաձեռնութեանը, որը լավագույն միջոցներից մեկը կլինի Հայ տաղանդավոր նկարչին սփյուռքահայ եւ օտարազգի Հասարակութեանը ներկայացնելու Համար...

Կոմիտէի նախագահ Վ. Համազասպան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 70, թ. 46: Պատճեն: Մեքենագիր:
N 39

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆ՝ ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

23.02.1977թ. Երեւան

Այս տարի լրանում է «Ամերիկահայ առաջադիմական միութեան» 40 տարին... Հաշվի առնելով Ամերիկահայ առաջադիմական միութեան Հայրենասիրական գործունեութեանը... միութեան 40-ամյակի կապակցությամբ Սփյուռքահայութեան Հետ մշակութային կապի կոմիտեն նպատակահարմար է Համարում անցկացնել Հետևյալ միջոցառումներ.

1. Ամերիկահայ առաջադիմական միութեանը ներկայացնել ՀՄՀ Գերագույն սովետի պատվոգրի:
2. Հանրապետական թերթերում, ինչպէս նաեւ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում եւ «Սովետական Հայաստան» ամսագրում Հոգվածներ տպագրել միութեան գործունեութեան մասին:
3. Սփյուռքահայութեան Հետ մշակութային կապի կոմիտէի դահլիճում 1977թ. սեպտեմբերին կազմակերպել երեկո՝ ԱՄՆ-ից տուրիստական Հատուկ խմբով ժամանելիք Ամերիկահայ առաջադիմական միութեան ղեկավարների եւ ակտիվ անդամների մասնակցութեամբ:

Խնդրում ենք Ձեր կարգադրութեանը:

Կոմիտէի նախագահ Վ. Համազասպան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 10, թ. 3: Պատճեն: Մեքենագիր:

N 40
ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱՋԱՍՊԵԱՆԻ ՇՆՈՐ ՀԱՎՈՐԱՆՔԸ ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԵՋԻ ՏՆՕՐԵՆ ԵՂԻԱ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

28.03.1977թ. Երեւան

Հարգելի պրն. Պապիկյան
Մերով կարգադրեք փետրվարի 25-ի Ձեր նամակը: Ի սրտե շնորհավորում եմ ԱՄՆ-ում Հայկական առաջին կոլեջի բացումը եւ մաղթում Հաջողութեաններ: Ամերիկահայ թերթերից մենք արդեն տեղեկացել էինք կոլեջի բացման մասին եւ սկսել մեր առաքումները: Մեր Հնարավորութեան սահմաններում մենք պատրաստ ենք ցույց տալ անհրաժեշտ օգնութեան ուղարկելով թերթեր, ամսագրեր, Հայադիտական, գեղարվեստական, երաժշտական գրականութեան եւ այլն...

Կինդրեկներ մեր կոմիտեի Հասցեին պարբերաբար ուղարկել կոլեջի «Մաշ-տոց» թերթից 2-ական օրինակ...

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, ք. 74, թ. 85: Պատճեն: Մեքենագիր:

N 41
ՔԱՂՎԱԾՔ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

24-26.11.1980թ.
Երևան

ՆԱԽԱԳԱՀ [Վ. Համարձուժյան] -
Այսօր մենք մասնակցում ենք մի կարևոր եւ հուզումնալից իրադարձութ-
յան: Հայաստանի մայրաքաղաքում բացվում է բախտի դաժան բերուժով
աշխարհով մեկ ցրված, հայ ժողովրդի անբաժան համավաճը կազմող, սփյուռքահայ
աշխարհի մեր տարագիր եղբայրների ներկայացուցիչների անդրանիկ ժողովը հայ-
րենիքում՝ Հայաստանի Հասարակայնության ներկայացուցիչների մասնակցութ-
յամբ: Հայրենիք են եկել տարբեր մայր ցամաքների, բազմաթիվ երկրների, համար-
յա բոլոր գաղթօջախների ներկայացուցիչներ:

Ես ուրախ եմ հաղորդել, որ մեր ժողովին մասնակցում է հայ ժողովրդի
պանծայի գավախ, մեր սիրելի մարշալ Հովհաննես Բաղրամյանը...

Սովետական Հայաստանը իր ստեղծման առաջին իսկ օրից ուշադրութ-
յան կենտրոնում է պահել հայ գաղթաշխարհը: Ակտիվ 20-ական թթ. ներգաղթից եւ
մինչեւ այսօր նա իր դռները բաց է պահել իր տարագիր գավախների համար, ան-
ընդհատ լայնացրել եւ ամրացրել է հոգեւոր, մշակութային կապերը սփյուռքահայ-
ուժեղության հետ... Այսօր բացվող ժողովը դրա վառ արտահայտություններից եւ երաշ-
խիքներից մեկն է...

Սփյուռքահայութ-
յան եւ Հայաստանի Հասարակայնության ներկայացուցիչ-
ների անդրանիկ ժողովը հայրենիքում թույլ տվեք հայտարարել բացված...

ՀՐԱՋ ԽԹԻԿՅԱՆ - (ԱՄՆ, Հասարակական գործիչ)

Միտի հայրենակիցներ... Ես այ մեծ հաճությամբ կը մասնակցիմ «Վերածն-
ված հայրենիք եւ սփյուռք» նյութի շուրջ բացված այս մեծ համաժողովին եւ մեր
վերածնված Հայաստանի 60-ամյակի տոնակատարություններուն: Ես կուզեմ Ամե-
րիկայի Միացյալ Նահանգներեն եւ Ձեզի կրեթեմ Սովետական Հայաստանի ամենա-
հավատարիմ մեր կազմակերպության՝ ամերիկահայ հաջողական միութ-
յան կենտրոնական վարչութ-
յան... ողջունները...

Այս համաժողովի ուշադրութ-
յանը կուզեմ հայտնել քանի մը նկատումներս,
որ իմ կարծիքով կարևոր են: Առաջին - հարկ է մայր հայրենիք բարձրագույն
ուսման հետեւելու համար եկող ուսանողության թիվը ավելացնել... Երկրորդ - ...
Մենք կարիք ունենք Հայաստանի վերելքը ցուցադրող շարժանկարներու, որոնք
կրնանք ցուցադրել ազգային եւ եկեղեցական սրահներու մեջ: Երրորդ - Բոլորին
հայտնի է, թե որքան կարևոր են արտասահմանի հայ ուսուցչութ-
յան ամառային դասընթացները հայրենիքի մեջ, ինչպես եւ աշակերտութ-
յան հանգիստը Հայաս-
տանի պիտներական ճամբարներու մեջ: Որքան կարելի է պետք է ավելացվեն Հա-
յաստան հրավիրվողներու թիվը, մանավանդ Ամերիկայի Միացյալ Նահանգներեն...
ՔԵՇԻՇՅԱՆ ՕՇԻՆ - (ԱՄՆ)

... Խոսելով Սփյուռք-հայրենիք կապերուն մասին, վստահ եմ, որ բոլորս այ
համոզված ենք, որ այդ կապերը ամուր են եւ անբաբուխ...

Իբրեւ անդլիտատու շարժանկարի արտոնատեր եւ խմբագիր, ... թույլ տվեք,
որ ընեմ քանի թեկադրութ-
յաններ, միտքերու փոխանակման կարգով: Ա. Պետք է
այ ավելի զորացնել այն շաղխը, որ կը միաձուլե սփյուռքն ու հայրենիքը: Բ. Ան-
հրաժեշտ է, որ դասագիրքը պատրաստող անձերը անպայման այցելեն Ամերիկա՝
մտան ծանոթանալու համար առօրյա հարցերուն, մեթոդներուն, մտայնութ-
յան եւ
ըստ այնմ պատրաստեն գիրքերը, այլպես վատնված պիտի ըլլայ ճիշդ, աշխատան-
քը եւ գրամը: Գ. ... Պետք է ավելի մեծ թվով [Հայաստանցի] արվեստագետներ,

մտավորականներ ու գիտնականներ այցելեն գաղութները, որոնք կիմաստավորեն
մեր գոյութ-
յունը՝ այդ գաղութներուն մեջ: Դ. Անհրաժեշտ է օտար լեզուներու ի
մասնավորե անգլերենի թարգմանել ու հրատարակել հայրենի մշակութային գործ-
իչներու ու գիտնականներու լավագույն աշխատանքները...

ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, ք. 37, թ. 1,3,4,6,83,85-87,145,147-149: Պատճեն: Մեքենագիր:

N 42
«ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ
ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅ ՄԱՍՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

24-26.11.1980թ.
Երևան

45. Կիրակոսյան Ալիսյա - բանաստեղծուհի, 46. Թարակյան Լյուդվիգ -
«Լրարբեր»-ի խմբագիր, 47. Քեչիշյան Օշին - «Արմենիան Օրգերվեր»-ի խմբագիր,
48. Խթիկյան Հրաչ - բժիշկ, հաս. գործիչ, 49. Դեվլեթյան Ասատուր - «Նոր Օր»-ի
խմբագիր, 50. Անդրիկյան Ջոն - հաս. գործիչ, 51. Անդրիկյան Մերի - կինը, 52. Օր-
ջանյան Անահիտ - «Թեքեյան»-ի ատենապետուհի, 53. Խաչատուրյան Վալա -
նկարչուհի, 54. Քեչիշյան Լեւոն - լրագրող, հաս. գործիչ, 55. Արաքս Արամ - գրող,
հաս. գործիչ, 56. Արաքս Արփինե - կինը, 57. Պողոսյան Կարպիս - տուրիստական
ֆիրմայի տնօրեն, 58. Ավագյան Արա - հաս. գործիչ, 59. Իսպիրյան Օսկար - հաս.
գործիչ, 60. Հովսեփյան Մարջերի - պրոֆ. հաս. գործիչ, 61. Թաշճյան Հրաչ - նկար-
իչ:

ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, ք. 38, թ. 76-78: Պատճեն: Մեքենագիր:

N 43
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
ՀՐԱՎԻՐՎԱԾ ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

5-8.04.1981թ.
Երևան

Просим передать в соответствующее Совпосольство просьбу о выда-
че виз следующим лицам, приглашенным на съезд писателей Армении, ко-
торый состоится 5-8 мая 1981 года в г.ор.Ереване:

США

Андраник Андреасян, Левон Сурмелян, Бениамин Нурикян, Ваге Гайк,
Диана Тер- Ованесян, Вильям Сароян.

Зам. Зав. Отделом информации и зарубежных связей ЦК КП Армении Г. Лилюян

ՀԱԱ, ֆ.326, ց.3, ք.25, թ.1-2: Բնագիր: Մեքենագիր:

N 44
ՍՓՅՈՒՌՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԿ ԿԵՆՏՐՈՆ՝
ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅ ՈՐՈՇ ԳՐՈՂՆԵՐԻ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ
ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԾՆՈՐ ՀԵԼՈՒ ԱՆ ՀՐԱԺԵՏՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

09.11.1981թ.
Երևան

Հանրապետության գիրկետիվ մարմինների որոշման համաձայն սփյուռք-
հայ համայնքների առաջագեծ գործիչների համար հիմնված մրցանակների շնորհ-

ման Համար ՍիդուբաՀայության Հետ մշակութային կապի կոմիտեն ներկայաց-
նում է Հետեւյալ թեկնածուները:

- Վիլյամ Սարոյան - «Նաղաղության եւ Մայր Հայրենիքի Հետ կապերի
ամրապնդման օգտին ակտիվ գործունեության Համար»
մրցանակ...
- Սիրարփի Տեր-Ներսիսյան - Անանիա Շիրակացու անվ. մրցանակ՝ գիտության
բնագավառում
- Համբարձում Պերբերյան - Կոմիտասի անվան մրցանակ՝ երաժշտության բնա-
գավառում...
- Լիլի Չուգասոյանին - Պետրոս Ազամյանի անվան մրցանակ՝ կատարողա-
կան արվեստի բնագավառում

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, դ. 49, թ. 17: Պատճեն: Մեքենագիր:

N 45

ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԵՋՆՈՒՔԱՂԱՔԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ՝ ՎՍԱՐՈՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԱՍՒՓՈՐԸ ԵՐԵՎԱՆ
ՓՈՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.06.1982թ.
Երեւան

Հարգարժան պրն. Ուայթ Հոսթ

Հաճուքն ունեինք ստանալու Ձեր կողմից Հղված ուղերձը՝ գրված մեծ Ֆրե-
զնոցի եւ ժամանակի ականավոր գրող Վիլյամ Սարոյանի աճյունասփորը Երեւան
փոխադրելու կապակցութեամբ:

Ձերմ ողջուններն ու լավագույն ցանկությունները ընթերցվեցին աճյունա-
սփորը Հողին Հանձնելու արարողութեան ժամանակ, այն Հազարավոր մարդկանց,
որոնք եկել էին պանթեոն՝ իրենց Հարգանքի տուրքը մատուցելու եւ վերջին Հրա-
ժեշտը տալու մեր ժողովրդի մեծ գավակ Վիլյամ Սարոյանին: Փրեզնո քաղաքի
թատրոնը Սարոյանի անվամբ կոչելու լուրը ժողովրդն ընդունեց մեծ ոգևորութե-
ամբ եւ բարձր գնահատանքով:

Թող Ձեզ Հայտնի լինի, որ Վիլյամ Սարոյանի աճյունասփորը Հողին Հանձ-
նեցինք Համաձայն իր վերջին ցանկութեան: Այժմ, որ նրա աճյունները Հանդուս-
են Ամերիկայում եւ Հայաստանում, մենք կարող ենք մեզ Հանգիստ գգալ, որ մե-
ծագույն գրողի ցանկությունը պատվով ի կատար է ածված:

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպան
ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, դ. 72, թ. 37-38: Պատճեն: Մեքենագիր:

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԸ ԱՐԱՄ ԱՄԻՐՔԵԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ (ԾՆՆՅԱՆ 120-ԱՄԾԱԿԻ ԱՌԹԻՎ)

Հայաստանի ազգային արխիվի Հարուստ ֆոնդերից է Հայկական եւ
Վրացական իՍՀ ժողովրդական արտիստ Դորոի (Արտաշես) Ամիրբեկյանի
անձնական արխիվային ֆոնդը: Արտիստական իր ողջ տաղանդն Ամիրբեկյանն
անմնացող նվիրաբերել է մայրենի բեմարվեստին: Տաղանդի ուժով նրան չի դիջել
ավագ եղբայրը՝ Հայկական իՍՀ վաստակավոր արտիստ Արամ Ամիրբեկյանը: Դեռ
վաղ Հասակից Հանդես գալով Բաթումիի, Երեւանի, Թբիլիսիի թատրոնների
բեմերում, Հետագայում՝ Հայ կինոյի սկզբնավորման առաջին իսկ օրերից,
Ա.Ամիրբեկյանը մասնակցել է նրա աշխատանքներին, անվիճելի ավանդ ներդրելով
Հայկական կինեմատոգրաֆիայի ստեղծման գործում: Հայ Հանդիսատեսը նրան
հիշում է «Նամուս» (չինովինկ), «Շոր եւ Շորչոր» (Շոր), «Մեքսիկական
գիպլոմատներ» (Արամ), Համր ֆիլմերից: Սակայն Ա.Ամիրբեկյանի դերասանական
արվեստին չէ, որ ուզում ենք անդրադառնալ:

Կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական-Հասարակական գործիչ Ռոմանոս
Մելիքյանի մասին, 1959թ. մարտի 24-ի, եղբորը՝ Դորի Ամիրբեկյանին
Հասցեագրած իր նամակում, Արամ Ամիրբեկյանը գրում է՝ «...Հիմա ստացա
Ռոմանոսի մասին գրածդ նամակը: Հարցերիդ իհարկե կպատասխանեմ որքան
գիտեմ, բայց ես ունեմ գրած «Իմ հիշողությունները Ռոմանոս Մելիքյանի
մասին», որ Սարգիս Մելիքսեթյանի (թատերագետ, գրականագետ) առաջարկով
գրեցի եւ Հանձնեցի «Ռոմանոս Մելիքյանի անվան կարիներտին» ու թե նրանք ինչ
արին՝ օգտագործեցին թե չէ, չիմացա: Ես գրա սեւագրությունը ունեի (մի տեսրի
չափ), կգտնեմ կարտագրեմ եւ կուղարկեմ քեզ...»:

Այս տարվա աշնանը լրացավ կոմպոզիտորի ծննդյան 120-ամյակը: Թերեւս
այս Հանգամանքով էր պայմանավորված նրա մասին պատմող անկեղծ, ջերմ սիրով
գրած Հուշերը ընթերցողներին ներկայացնելու մեծ ցանկությունը:

Երիտասարդ մասնագետների լիարժեք կրթություն ստանալու Հարցում
նախանձախնդիր, նրանց թե՛ նյութապես եւ թե՛ բարոյապես օգնելու պատրաստ՝
առանց վերջիններիս ինքնասիրությունը վիրավորելու, նրբանկատ ու Հումորով
օժտված, այսպիսին էր Ռոմանոս Մելիքյանը:

Այսօր Հանրապետության Հնագույն եւ լավագույն երաժշտական
ուսումնական Հաստատություններից է երաժշտական ուսումնարանը, որը կրում է
Ռոմանոս Մելիքյանի անունը:

«Հուշերն» ընթերցողին ենք ներկայացնում մասնակի կրճատմաներով,
առանց խմբագրման:

Վարդիթեր Մանգասարյան
ՀԱԱ բաժնի վարիչ

Ես բախտ ունեցա ծանոթանալու Ռոմանոսի Հետ 1912 թվի ամառը Թիֆլիսի Գալանյան օրիորդաց դպրոցում: Այդ օրերին նա երգիչներ էր հավաքում Պետերբուրգի հայաց եկեղեցու բառաձայն երգեցիկ խումբ խմբի համար, որտեղ ինքը հրավիրվել էր որպես ռեգենտ: Նա որոշել էր այդ խմբի միջոցով հնարավորություն տալ գլխավորապես երաժշտությունը պարագուղ հայ երիտասարդներին բարձրագույն երաժշտական կրթություն ստանալ:

Այդ թվականներին նա ձեռնարկեց մի շատ բավականին լուրջ գործ՝ պատրաստել ժողովրդական երաժշտության դասատուների կարգեր: Հավաքել, գրի առնել ժողովրդից միաձայն երգերը եւ տալ նույն երգերը ժողովրդին բազմաձայն դարձրած իր աշակերտների միջոցով: Այս էր նրա նպատակը:

Նա առանձնապես նշանակություն էր տալիս ժայռական ավայաներին, բավական էր, որ դիմողը ունենար ցանկություն եւ ավայաներ երաժշտության դասատու դառնալու, նա ընդունում էր խմբում:

Նրա աշակերտներից ամենահարուստը Վարդ Կդարթմյանն էր (այժմ կոմպոզիտոր, Կիրավականի երաժշտական դպրոցի գիրեկտոր) եւ ես: Ստանում էինք ամսական 25 ռուբլի, սոլիստները 30 ռուբլի:

Առաջին տարին իմ ճանապարհածախսը՝ 7 ռուբլին վճարեց ինքը, որից 5 ռուբլին ես մնացի պարտք մինչեւ օրս:

Իմ եւ Կդարթմյանի համար ինքը Պետերբուրգում նախօրոք վարձել էր սենյակ ամսական 1Տո. եւ դաշնամուր 7ո.: Ապրում էինք երկուսով՝ ես եւ Կդարթմյանը: Մեզ ընդունել ավելց ժողովրդական կոնսերվատորիայում: Ետքովսան մի անգամ ինքը գալիս էր մեզ մոտ եւ անցնում մեզ Հետ երաժշտական մանկավարժություն, ստուգում անցածը կոնսերվատորիայում: Մեր խմբակում 4 հոգի էինք՝ Կդարթմյանը, ես, Թիֆլիսից, Վաչե Թումանյանը՝ Ստեփանավանից եւ Գուրգեն Մելիք-Ստեփանյանը Գանձակից: Վաչեն 1919 թվին վախճանվեց Հյուսիսային Կովկասում, որտեղ երաժշտության դասատու էր: Վաչեի մահվանը գուցե նպաստեց Ռոմանոսի վերին աստիճանի հիշաչարությունը, որի վրա կանգ չեմ առնում (պատմությունը մի քիչ երկար է եւ պետք է ճեռվից սկսել): Գուրգեն Մելիք-Ստեփանյանի մասին չգիտեմ ինչ եղավ: Ուսուցչի համար բավական չէ առարկան լավ իմանալ, տիրապետել. իր գիտցածը ուրիշին ավանդելն է կարելուր եւ այդ առանձնահատկությունը ուներ Ռոմանոսը: Ես շատ դասատուներ եմ ունեցել, բայց ոչ ոք այնպես պարզ, պատկերավոր չի ավանդել դասը ինչպես Ռոմանոսը: Որպես թանկարժեք հիշատակ պահում եմ, կարծիք թանաքով նրա նկատողություններով իմ շատերություն տեսրը:

Շատ ճիշտ բնութագրեց Ռոմանոսին Ազատ Մանուկյանը 1945 թվին Ռոմանոս Մելիքյանի հուշ երեկոյին, որ՝ «Ռոմանոսը մի տեսակ առեղծվածային մարդ էր» եւ ես յիովին համաձայն եմ նրա Հետ:

Շատ խոշոր մարդիկ ճեռվից անմատչելի են թվում, սակայն երբ մոտենում ես, դառնում են սովորական, հասարակ մարդ, մինչդեռ Ռոմանոսն այդպիսին չէր, որոնք նրան մոտենում էիր, այնքան ավելի էր բարձրանում նա իր մարդկային արժանիքներով: Նա յուրահասուկ էր բառիս ամենայայն իմաստով ու ամեն կողմով՝ քայլվածքով, ձիվազով, շարժումներով, բարեկրով, առակներով, որսի ժամանակ, դրսի շրջանում, թե ընտանիքում: Նա սիրում էր երեխաներին եւ նրանց հետ դառնում երեխա: Ռոմանոսը բնության սիրահար էր, սիրում էր որսորդությունը: Ես բախտ եմ ունեցել լինել Ռոմանոսի Հետ նաեւ որսի ժամանակ: Իր գեղեցիկ «Նեմ-նութ» շուներ առաջն առած, նա որս էր անում եւ շարունակ մեզմ սուրում որեւէ եղանակ, գուցե իր հորինելիք եղանակներ: Հրացանը պատրաստ, սուլելով, հանկարծ կանդ էր առնում մի որեւէ գեղեցիկ վայրի գողտրիկ ծաղիկ առաջ, կրանում, նայում եւ ասում էր՝ «Նայիր այս ծաղիկին որքան գողտրիկ է ու գեղեցիկ»:

Նա Հայաստանի որսմիություն պատվավոր անդամ էր: Ռոմանոսը կուլտուրական, սպորտմեն-որսորդ էր լայն իմաստով: Չեմ կարծում գտնվի մի որսորդ, որ գլծոգ լիներ Ռոմանոսի ընկերությունից, որը խոշոր գեր էր խաղում որսորդական կյանքում:

Ինչ Հիմնարկություն էլ մտներ, նրան ամենքն էլ հարգում էին սկսած ստորին աշխատակից դոնապանից մինչեւ գիրեկտորը, որովհետեւ նա գիտեր բոլորին հարգել եւ գնահատել:

Պետերբուրգում, նամակով, կամ եթե հանդիպում էինք, նախօրոք հայտնում էր, որ նյութը պատրաստենք այս ինչ օրվա համար: Կարծես հոգեբանորեն հասկանում էր մեր տեսնական վիճակը: Ես չեմ հիշում, որ նա գար մեզ մտադրապետ զատարկ ձեռքով: Փորձից հետո կանչում էր մեր խմբակին եւ ասում. «Հըր ոնց եք տղերք, դիմանում եք նեղ օրերին թե չէ: Դե Հիմա դանք ձեզ մոտ թեյ խմելու»: Ծանապահին կզներ բուլկիներ, շաքար, կարագ, պանիր եւ կասեր. «Ձեզ մի կով թեպ տանք, տեսնեք ինչ էր արել»:

Նման դեպքերում էր Հյուրը սկսում է գնումներ անել, մարդ սովորաբար աշխատում է նրան Հետ կասեցնել՝ «չի հարկավոր, ինչ կարիք կա եւ այլն»... Բայց Ռոմանոսին կարող էինք արդյոք նման ակնարկ անել. երբեք, այն աստիճան քաշվում էինք եւ ամոթխած էինք դեպի նա: Ես, որ այնքան մոտ եմ եղել Ռոմանոսին որպես նրա աշակերտը եւ հետագայում էլ շարունակ հանդիպել նրա Հետ Թիֆլիսում, Երեւանում մեր տանը, որսի ժամանակ, սակայն շարունակ ես ինձ այնպես էի զգում, կարծես գարձալ նրա աշակերտն եմ, չնայած կին, երեխա ունի ու չէի կարողանում նրան Ռոմանոս ասել առանց ընկեր բառի:

Նա առակախոս էր եւ սրախոս: Մի անգամ, ամառային արձակուրդից հետո, ուսումնական տարվա սկզբին, փորձի ժամանակ, երգչու Հիներից Տեր-Գարբիելյանը, սիալամամբ 1/4 նոտան պահեց ավել երկար քան հարկավոր էր. Ռոմանոսը պարախոտուրան ծածկեց, կամերտոնը գրեց ցած եւ շատ լուրջ կերպով դարձավ նրան. «Բարեբախտաբար այս բոլոր գրքերը եղել են ծածկված վիճակում, հետեւաբար չէր կարող պատահել, որ որեւէ նոտայի կողքին ճանձ նստեր եւ այդպիսով երկարացներ այդ նոտայի տեղությունը. ուստի չեմ հասկանում թե ինչու» էք բարոք նոտան երգում 3/8 տեղությունը»: (Նոտայի կողքին կետ դրվելով, նոտայի տեղությունը կրկնում է նոտայի կեսի ցավով):

Ռոմանոսը միջակություն էր սիրում. նա եթե մեկին հարգեր կհարգեր հարյուր տոկոսով, իսկ եթե ասեր, ասում էր ամբողջ հոգով եւ ամբողջ կյանքում, մինչեւ վերջ:

Նրա դրական առանձնահատկություններից մեկն էլ նրա առատաձեռնությունն էր ու Հյուրարկությունը: Ուսանող ժամանակ, երբ մենք կայում ունեինք նրանից եւ մեզ շարունակ զգում էինք նրա աշակերտի կերպում, նրա Հյուրարկությունը թերեւս հասկանալի էր. բայց բանն այն է, որ այդ Հյուրարկությունը շարունակվեց մինչեւ նրա վերջին օրերը: Գնացիք ճաշարան, թեխատուն, կամ մի այլ տեղ, երբեք չէր թողնում, որ մենք վճարենք եւ միշտ մնում էինք անհարմար վիճակում: Դե որքան էլ որ մարդ սպահով լինի, այնուամենայնիվ կուեննա որոշ շրջան կամ մոմենտներ, որ նյութապես կարիքի մեջ լինի, բայց այդ մարդուն եւ հանդիպում էի 1912 թվից եւ երբեք չտեսա նրան վճատված: Միշտ այն տպավորությունն եմ ստացել, որ կարծես նրա նյութական աղբյուրները անսպաս են: Թե ինչ էր ստանում նա Պետերբուրգում ռեգենտ եղած ժամանակ, որ մեզ կարողանում էր օգնել, չգիտեմ: Բացի նրանից, որ մեզ մոտ էր գալիս «թեյ խմելու» ամեն անգամ մթերքներով, օգնում էր նաեւ սպիտակեղենով, փողկապներով, օձիքներով եւ այլն: 1914 թվին նա Հայկ Տալյանին (Շառա Տալյանի եղբորը) նվիրեց մի լավ, իսկական կարակուլից վերարկու եւ իսկական կարակուլից գլխարկ, եւ որովհետեւ Հայկն համար Ռոմանոսի վերարկուն բավական մեծ էր, Հայկը վերարկուն եւ գլխարկը գրեց լոմբարդում 25 ռուբլով եւ այդ գումարով գնեց իր համար նոր վերարկու, իսկ Ռոմանոսինքն եւ 25 ռուբլին լոմբարդին վճարեցի եւ հագա երկար տարիներ:

Մի անգամ ծննդյան տոներին Ռոմանոսը գնացել էր Ռոստով: (Նրա բացակայության ժամանակ խումբը ղեկավարում էր խմբի երգիչ Արամ Տեր-Հովհաննիսյանը): Վերադարձին ստաց ինձ եւ Հայկին (այդ տարին ես ապրում էի Հայկի Հետ). «Այսօր անցեք ինձ մոտ, ձեզ համար նվեր եմ բերել Ռոստովից»: Թե ինչ նվեր, ոչինչ չասեց: Հայկը գնաց եւ նվերը մի ահագին, ամբողջ, չեմ հիշում մի գեր հեղուհու էր թեք սազ տապակած, որ մենք երազում էի չէինք տեսնի: Այդ օրը Հայկը մեր տանտիրուհու (ատամնարուժ) Հետ թատրոնից տուն վերադառնալիս, երբ տանտիրուհին նրան հրավիրել էր ընթերթի, Հայկը հրատարակել էր, ասելով թե՛ «ոչ,

յալ է տուն գնամ, այսօր Արամը իր Հետ բերեց մի ամբողջ տասպակած Հնդկահավ»։ Բժշկուհիին գարմացել էր եւ ասել. «մի թե նա այդպես Հարուստ է»։ Իսկ Հայկը Հո չէր սաի նրան թե Հարուստը Արամը չէ, այլ Խոմանտը։

Առաջին տարին, երբ ես մեկնեցի Պետերբուրգ, բնգամներ ունեի 2 ուռլի փող։ Առաջին տարվա 7 ուռլի ճանապարհածախսի պարտքի դիմաց վճարեցի 2 ուռլի, որոչեղով գոնե մաս-մաս վճարեմ. սակայն Հետագայում այն 5 ուռլիին ոչ մի կերպ չկարողացա վերադարձնել։ Ամեն անգամ, մի տեսակ հրամայական տոնով ասում էր. «մնա, կՀարստանաք, կտաք»։ Իսկ Հեղափոխությունից Հետո Թիֆլիսում կամ Երեւանում, երբ հիշեցնում էին նրան այն 5 ուռլու մասին, կտակով ասում էր. «Ձէ, ոսկով, ոսկով»։

Հետագայում էլ, 1926 թվին, երբ Երեւանում Հանդիպեցի եւ Հիշեցրի նրան 5 ուռլիին եւ ասացի. «Սա բան էր որ դուք արիք, ժամանակին չվերցրիք, Հիմա ես ինչ Հաշվով պիտի վճարեմ այն 5 ուռլիին», նա կրկին յուրահատուկ ծիծաղով ու կատակով ասաց.«Միջին, այն 5ո. տոկոսների Հաշվին վաղը մի լավ լորի եփի, գալու եմ ճաշին ձեզ մտո»։ Ի միջի այլոց, նրա ամենասիրած ճաշերից մեկը դա ձեթով լորին էր, թե սուպա եւ թե սոխով տասպակած (կիրկաշ)։ Ճաշում էր ու յուրահատուկ ծիծաղով կատակում. «գեռ ուր ես, այն 5 ուռլու տոկոսների Հաշվին այնքան լորի պիտի եփել ասում ձեզ, որ սեսք. «էս ինչ դալաթ արի 5 ուռլու պարտք արի» եւ պատմեց անբերես պարտաիրող առակը։ Նրա խումբը բաղկացած էր բացառապես ուսանողներից, որոնք գերակշիռ մասը կազմում էին երաժիշտները՝ Սարգիս Բարխուդարյանը (այժմ կոմպոզիտոր-դաշնակահար), Սուսաննա Մանվելյանը (այժմ Գայիկյան՝ կոմպոզիտոր-մանկավարժ), Կարթմյան Վարդը (այժմ կոմպոզիտոր, Կիրովականի երաժշտական դպրոցի դիրեկտոր), Գաբիկ Տեր-Գարբիելյանը՝ Գեղարիկ (երգիչ-երաժիշտ), Արամ Տեր-Հովհաննիսյանը (այժմ խորմեյստեր-դիրիժոր, գեղարվեստական դեկավար), Հայկ Տայլանը (երգիչ) եւ այլն։ Բոլորս էլ Հասուն, աշակերտական շրջանը վեջացրած երիտասարդներ էինք, սակայն այնուամենայնիվ շատ էինք հարգում Խոմանտին ու զգում էինք մեզ կրկին աշակերտի դերում։ Ձեմ Հիշում մի գեպը, որ որեւէ մեկը առանց լուրջ պատճառի ուշանար կամ բացակայեր փորձից։ Խոմանտը ընդունվեց մի դերասան՝ Տեր-Պետրոսյան Գրիգոր (Գրիգ)։ Սովորում էր (թե պիտի սովորեր) թատերական ինստիտուտում։ Վերին աստիճանի փառամոլ, ինքնահավան, ցուցամոլ, գոռոչ, էինք իր վրա սիրահարված, ֆաստոսիստ տղա էր, ըստ երեւութային Խոմանտին լավ չէր ճանաչում։ Գայիս էր աշխատանքի ուշացումներով, հաճախ բացակայում էր, սակայն ուժեղ ստանդալի առաջինն էր վազում։ Մի երկու անգամ նկատողություն արեց Խոմանտը։ Երբորդ անգամ չեմ հիշում, մեզ բանավոր կերպով Հանձնարարեց թե ավելի շուտ երկտող գրեց թերթիկի վրա. «պարոն Տեր-Պետրոսյան, խոնարհարար խնդրում եմ փորձի բարեհաճեք» եւ տվեց մեզ որ Հանձնենք Գրիգին եւ երբ այդ էլ չօգնեց եւ նա շարունակեց կրկին բացակայել. Խոմանտը նրան Հեռացրեց աշխատանքից, որի Հետեւանքով Գրիգն ընկավ խայտառակ դրուժյան մեջ. ծախեց ամեն ինչ, բոլոր սպիտակեղենը։ Մերկ մարմնի վրա Հազնում էր վերնազգեստը։ Սենյակի վարձը չվճարելու պատճառով վոնդեցին սենյակից։ Գիշերում էր փողոցներում, այդինների նստարանների վրա։ Ուլլուրվեց, դարձավ Համարյա Հոգեկան Հիվանդ։ Կերակրում էինք գլխավորապես ես եւ ընկերս՝ Վաչե Թումանյանը։ Այն տեղը Հասավ, որ սկսեց մեզանից արժեքավոր գրքեր գողանալ եւ ծախել բուկինիստներին։ Մի բանի ամիս այդպես թափառական կյանք վարելուց Հետո Գրիգը ոչ միայն չէր ուշանում, այլ միշտ 20-30 րոպե շուտ էր գալիս։ Այսպիսով օգնեց նրան Խոմանտի «խոնարհարար փորձի բարեհաճեք»։

Խոմանտը մեզ Հետ անցնում էր «երաժշտական մանկավարժություն» եւ թեորիս, իսկ դաշնամուր՝ Խոմանտի միջնորդությամբ պարապում էր դաշնակահար (այժմ կոմպոզիտոր) Սարգիս Բարխուդարյանը, որը այն ժամանակ ուսանում էր կոնսերվատորիայում եւ երգում էր Խոմանտի խմբում։ Հետագայում Բարխուդարյանը լարվեց Խոմանտի Հետ, Հեռացավ թե Հեռացրեց խմբից եւ այդ պատճառով դադարեցրեց մեզ Հետ պարապել որպես Խոմանտի աշակերտներ։

Խոմանտի դասավանդման մեթոդի գնահատելի կողմերից մեկն այն էր, որ նա սովորական դրուժյի ժամանակ աննկատելի կերպով քննում էր մեզ թե ինչ ենք անցել կոնսերվատորիայում, ինչպես ենք նվագում եւ այլն։ Նա դուրս էր գալիս մեր սենյակից ուչ գիշերին, առանց մեզ զգացնել տալու, որ այդ ամբողջ երեկուն

նա մեզ քննեց, ստուգեց մեր անցածը, կարդացածը, տեսածը եւ այլն։ Նրա գնայուց Հետո ընկերներս, Վաչե Թումանյանը կասեր. «Արամ, դու զգում ես թե ինչպես այդ մարդը կարողանում է քննել մեզ առանց մեզ զգացնել տալու այդ։ Նա շատ էր սիրում Չայկովսկուն եւ մեզ էլ շարունակ տրամադրում էր յսել եւ նվագել Չայկովսկի, սակով. «Չայկովսկին երիտասարդության Համար շատ բան ունի գրած»։

«Նա նրան մի անգամ տեսա լքված, դառնացած, այդ այն ժամանակն էր, երբ նա Հեռացվեց Երեւանի կոնսերվատորիայից, որի Հիմնադիրը ինքն էր, ու դառնացած վերադարձել էր Թիֆլիս։ Հանդիպեցինք Ռուսթավելու թատրոնի մոտ ու խոսեց շատ երկար։

Պետերբուրգում Խոմանտի խմբում երգել եմ 1912 թվից 1915 թիվը։ Առաջին Համաշխարհային պատերազմը խանգարեց ինձ այլուս դնալ Պետերբուրգ, շրտւնակել ուսումս։ 1916-17թթ. ուսումնական տարին Հրավիրվեցի Բաթում որպես երաժշտության դասատու եւ դերասան եւ մինչեւ օրս այդ երկուսը՝ բեմը եւ երաժշտությունը դուզեցին իմ մասնագիտության մեջ՝ մնացած անբաժան։

Բաթումից փոխարկվեցի Թիֆլիսի թատրոն։ Դիմեցի լուսարձանի՝ դպրոցներում դասեր վերցնելու Համար։ Այդ տարին լուսարձանը նշանակել էր երաժշտության բոլոր դասատուների փորձնական դաս եւ միայն դասավանդողները պիտի ստանային դասեր քաղաքի դպրոցներում։

Նյութը բաժանեցին մի շարաթի առաջ։ Ես կատեգորիկ կերպով Հրաժարվեցի մասնակցել Ռաժանպատմությանս կղավ. « Ես Խոմանտի աշակերտ լինեմ եւ ինձ չվստահեմ առանց փորձնական դասի, ավելի շուտ նորից կգնամ գավառ, քան կտանեմ այդ վիրավորանքը։ Ոչ կոմիսիայի անդամները, ոչ ընկերներս չկարողացան ինձ Համոզել։ Փորձնական դասին ներկա էին շրջանի եւ Թիֆլիսի բոլոր դասատուները։ Փորձնական դասը տեղի ունեցավ 3-րդ իրական դիմնադրայում։ Փորձնական դասին մասնակցող ուսուցիչներից մեկը, Արշալույս Ավագյանը, բացակա էր։ Ուսուցիչ-երաժշտական Հակոբ Հովհաննիսյանը, որը կոմիսիայի անդամ էր, մտտեցավ ինձ թե. «Արամ, արի էքսպրտմտոմ Ավագյանի նյութը Հանպատրաստից դու անցիր։ Ես անմիջապես Համաձայնվեցի, որովՀետեւ դա այլ էր, օժիվար Համաձայնվեցի եւ տարս Հաղթանակը։ Կոմիսիան կտվե՞ր ավանհավուր իմ դասը, որից Հետո 3-րդ դպրոցում ստացա երաժշտության դասերը։

Պետերբուրգից Հետո Խոմանտին առաջին անգամ Հանդիպեցի (Հեղափոխությունից Հետո) Թիֆլիսում, Ազատ Մանուկյաննեց տանը։ Այդքան երկար ընգմիջումից Հետո ինձ տեսնելուս պես երկու ձեռքը բարձրացրեց եւ ծիծաղելով ասաց. «Ներայր, ես քեզ տարս Պետերբուրգ, որ երաժիշտ դարձնեմ, դու եկել ես այստեղ դերասան ես դառել...»։ Ազատ Մանուկյանը անմիջապես ընդհատեց նրան ասելով. «Միտայում ես Խոմանտս, տղան 3-րդ դպրոցում շարաթական 75 դաս ունի, էլ ինչ ես պահանջում»։ «Հա, ուրեմն մի ձեռքով երկու ձեռքով ես բռնում Հր, գե եթե Հաջողվում է, բռնիր, բան չունեմ ասելու»։ (Այս խոսակցությունը «գերասան դառնալու» մասին լավ չեմ հիշում տեղի ունեցավ Ազատ Մանուկյաննեց տանը, թե Արտիստական թատրոնի կուլիսներում։ Այդ օրը ներկայացվում էր «Հո երթա» եւ խաղում էի Ուրտուսի գերը եւ Խոմանտը Ազատ Մանուկյանի Հետ եկավ կուլիսները ինձ տեսության)։ Նա անպայման եւ անպայման ուզում էր մեզինից երաժշտության, ժողովրդական ուսուցիչներ պատրաստել, եւ ջնայած որ ես այն ժամանակ խոշոր ձայնական տվյալներ ունեի եւ մի Հայտնի պրոֆեսոր (Պետերբուրգ) Հանձնե առավ Հենց Խոմանտի ներկայությամբ ինձ Հետ ձրի պարապել, խոստանալով Հաղող ապագա, այնուամենայնիվ Խոմանտը խորհուրդ չտվեց, իսկ այն ժամանակ մենք նրա խմբի երիտասարդներ տարված էինք Խոմանտյան Հովերով եւ նրա կարծիքը մեզ Համար օրենք էր։

Հայ բանաստեղծներից նա սիրում էր եւ մոտ էր Վահան Տերյանի Հետ։ Այն ժամանակ Պետերբուրգում կար (Օֆիցերակայա փողոցի վրա) «Հայ գեղարվեստա-սիրաց ընկերություն», որտեղ Հավաքվում էին շարաթը մեկ անգամ, ուրբաթ օրերը արվեստի բոլոր բնագավառներում աշխատող Հայերը, այն ժամանակվա բոլոր ակադեմիկոս Հասարակական գործիչները, որոնք դրսում էին իրենց Հետ ուսուստարազդի Հյուրերին։ Այդտեղ էլ Խոմանտը մեզ ծանոթացրեց Վահան Տերյանի եւ Տերյանի գեղեցկուհի կնոջ Հետ։ Թիֆլիսում մի օր, Խոմանտը խնդրեց անցնել

ինձ Հովհաննես Թումանյաննեց տուն (Վոլոնտերնոսկայա փողոց) եւ վերջնել աշխտեղից իր շունը ու պահել մեր տանը մինչեւ մեծանալը:

Ինչպես երեսնց Հովհաննես Թումանյանի խոսքերից, երբ ես գնացի վերջնել-լու (փոքր քրոջը՝ Օֆիլիի հետ) այդ շատ ձագը ուղղակի պատուհուս էր դարձել նրանց գլխին: Նա շատ ուրախացավ, որ վերջապես պիտի ազատվեր դրանից, սասց. «Ներայր դե Ռոմանոսն է էլի, ինչ կարող եմ անել: Առանց հաշվի առնելու թե տեղ ու Հարմարություն ունենք թե չէ, բերեց թողեց մեզ մոտ թե պահէք: Ապրում ենք 2-րդ հարկում, ոչ մի հարմարություն չունենք. դեռ չսովորեցրած փոքր շուն է, որ-տեղ ասես կեղտոտում է...»: (Ռոմանոսը այդ շան անունը դրեց «կետ»): Շատ գեղեցիկ ու վերին աստիճանի խելոք շուն էր, սեւ սետտեր էգ ձագ էր: Ռոմանոսին խոստացա նրա ձագը, իսկ կետը մնաց ինձ: Նրա մի ձագն էլ նվիրեցի դերասանուհի տիկին Համիկին:

Կետին դողացան Բաթում ֆրանսիական սպաները եւ հեռանալու ժամանակ նավով տարան Հետերը...

ՀԱԱ, Ֆ. Մ-170, ց. 1, գ. 156, թթ. 1-10:

ՄԻՐԻԱՆԱՅԵՐԻ ՆԵՐՊԱՂԹԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ (1960-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

1915 թվականի Հայերի զանգվածային բնաջնջումից ու ցեղասպանությունից հետո Թուրքիայից Սիրիայի Արաբական Հանրապետություն տեղափոխվեց Հայ գաղթականների մի մեծ զանգված: Նրանց մի մասը մշտական բնակություն հաստատեց Հայեպոլում եւ երկրի մյուս քաղաքներում, իսկ մյուսներն ցրվեցին աշխարհով մեկ:

Մինչեւ 1959 թվականը, Հայեպի Հայկական գաղութում հաշվվում էր մոտ 70 հազար մարդ: Սակայն վերջին տարիներին, քաղաքական եւ տնտեսական ոչ կայուն իրավիճակի, ինչպես նաեւ իրենց իրավունքների ոտնահարման պատճառով զգալի թվով ունեւոր Հայեր էին լքեցին ՍԱՀ՝ տեղափոխվելով Լիբանան, ԱՄՆ եւ Լատինական Ամերիկայի երկրներ: 1960-ական թվականներին, Հայեպոլում զգալիորեն աշխուժացավ Հայերի՝ Կանադա եւ Ավստրալիա տեղափոխվելու հարցերով զբաղվող Համապատասխան ներկայացուցչության աշխատանքը:

Արտագաղթի հիմնական պատճառներից էին 1958-1961 թվականներին Սիրիայում՝ Նասերի հաստատած ոստիկանական ռեժիմը եւ 1963 թվականի մարտի 8-ի հեղաշրջումը: Տնտեսական տեսանկյունից, Հայերի դժգոհությունը լիովին հիմնավոր էր եւ բացահայտ, քանի որ առկա տնտեսական ճգնաժամը ոտնահարում էր Հատկապես միջին եւ մանր արհեստավորների եւ վաճառականների շահերը: Շատ հայեր, փրկելու համար իրենց ունեցվածքը, մտադիր էին մեկնել Սիրիայից, սակայն Բասախտները՝ ուժը սահմանափակում էր Հայերի իրավունքները, որի պատճառով նրանք չէին կարողանում իրագործել իրենց մտադրությունը:

Սիրիայի Հայերի ճնշող մեծամասնությունը հավատարիմ էր Խորհրդային Հայաստանին, որը համարում էին իրենց հայրենիքը եւ իրենց ապագան, Հատկապես իրենց երեխաների ապագան, կապում էին նրա հետ:

ԽՍՀՄ գլխավոր Հյուպատոսարանին պարբերաբար գիմում էին բազմաթիվ տեղացի Հայեր, որոնք ցանկանում էին ստանալ Խորհրդային քաղաքացիություն եւ մշտական բնակություն հաստատել Խորհրդային Հայաստանում:

Հավաքական գիմումների կողքին, կային նաեւ ունեւոր Հայերի գիմումներ՝ իրենց միջոցներով Հայաստան տեղափոխվելու խնդրանքով: Նրանք նպատակ ունեին աշխտեղ կառուցել իրենց տները:

Այստեղ կարելի էր ենթադրել, որ որեւէ պաշտոնական հայտարարություն չէր եղել ՍԱՀ-ից Հայերի տեղափոխման մասին, որը զգալիորեն դժվարեցնում էր դեպքումստան աշխատանքը եւ հնարավորություն չէր տալիս Հայերի շրջանում համապատասխան բացատրական աշխատանք կատարելու համար:

Ընթերցողների ուշադրությունը ներկայացվող փաստաթղթերն ու նյութերն արտացոլում են Սիրիայի Արաբական Հանրապետության 1964-1965 թվականների որդեգրած քաղաքականությունն ու Հայաստանի նկատմամբ պահանջները՝ հայերին հայրենադարձության թույլտվության համար: Դրանք մեծ մասամբ պաշտոնական բնույթի փաստաթղթեր են, որոնք վկայում են ՍԱՀ-ի իշխանությունների կողմից՝ հայերի մեկնման փաստաթղթերի ձեւակերպմանը խոչընդոտող մի շարք սահմանափակումների մասին, որոնց պատճառով վերջիններիս զանգվածային հայրենադարձության իրագործումը ձգձգվեց: Դրանով են պայմանավորված այդ փաստաթղթերի էական նշանակությունն ու դրանց հրապարակման անհրաժեշտությունը:

Փաստաթղթերը թարգմանված են ռուսերենից: Թարգմանություն հեղինակներն են պատմական գիտությունների թեկնածու՝ Ռուբեն Սահակյանը եւ սիրիահայ բժշկուհի Մայտա Չալուշյանը:

Քննարկվող ժամանակահատվածում ողջ Հայիական գաղութն ապրեց հոգեբանական ու քաղաքական մեծ վերելք: Խորհրդային Միության հայրենադարձության վերաբերյալ որոշումը տեղի հայերը ընդունեցին մեծ ցնծությամբ ու խանդավառությամբ: Կոմիտեներն անմիջապես ձեռնամուխ եղան հայրենադարձության կազմակերպման նախապատրաստական աշխատանքներին: Ցուցակագրվեցին բանվորներ, գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ մտավորականներ: Հազարավոր ընտանիքներ միաժամանակ նրանց գիմեցին՝ առաջին հերթին ուղարկելու խնդրանքով: Ցուցակագրվելուց անմիջապես հետո գյուղական շրջանների Հայերը մեկնելու մեծ ակնկալքով սկսեցին վաճառել իրենց ունեցվածքը: Սակայն քարավանների մեկնումն ուշանում էր կամ էլ հետաձգվում, ինչի պատճառով նրանցից ոմանք՝ Հուսախաբված, լքում էին գյուղական միջավայրն ու տեղափոխվում քաղաք՝ այնտեղ բնակություն հաստատելու մտադրությամբ: Մնացյալը՝ հնարավորություն չունենալով, իրենց տեղերում սպասում էին:

Ինչ վերաբերում է Հայրենադարձվող Հայերի նկատմամբ տեղական իշխանությունների վերաբերմունքին, ապա նրանց կողմից բացահայտ արգելքներ չկային: Հայրենադարձվող Հայերի ցանկությունը նրանք գտնում էին բնական ու իրավացի, բայց մյուս կողմից՝ նրանց անհանգստացնում էր այն հանդամանքը, որ երկրից այդքան գործուՆյա ու ձեռներեց մարդկանց դուրս գալը կազդեր երկրի տնտեսական ու մշակութային կյանքի բնականոն ընթացքին:

Այնուամենայնիվ, հակառակ վերը նշված խոչընդոտներին՝ Սիրիայից մեծ թվով Հայեր տեղափոխվեցին Հայաստան:

Հայրենիքում գտնվելու հանդամանքն ուժ ու թե՛վ տվեց գաղթած Հայերին, նրանք սկսեցին կրթություն ստանալ, գտնել իրենց տեղը Հայրենի Հողի վրա՝ նպատակով հայրենիքի հզորացմանը, տնտեսական եւ մշակութային կյանքի բարելավմանը:

Անի Ֆիլեհիկճյան
(Սիրիա)

N 1
ՀԱԼԷՊՈՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻ ՓՈՒՆՅՈՒՊԱՏՈՍ
Բ.ՏԵՐՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ ՀԱՅ-ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱԼԷՊԻ
ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ, ՂԵՒՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵԲԵՅԱՆԻ ՄԻՋԵՎ
ԿԱՅԱՑԱՄ ՋՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

3 օգոստոսի 1964թ.
Հայեպ

Ըստ նախնական պայմանավորվածության, ՍԱՀ-ում հայկական ԽՍՀ նախարարների Խորհրդի Հայրենադարձության հարցերով ներկայացուցիչ ընկ.

¹ Բասա (վերածնունդ) Կուսակցությունը հիմնադրվել է 1943թ. Սիրիայում՝ Միշել Աֆլակի եւ Սալահ Էլ Դին Պիթարի նախաձեռնությամբ: Այն ձեւավորվեց եւ պաշտոնական քաղաքական սպարեղ դուրս եկավ 1947թ. ապրիլ 7-ին: 1945թ. Բասաին միացավ 1940թ. հիմնված սոցիալիստական կուսակցությունը, որի հիմնական կարգախոսն էր՝ «միասնություն, ազատություն, սոցիալիզմ»: ...1963թ. մարտի 8-ին Սիրիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում եւ իշխանությունը անցավ Բասաի սիրիական մասնաճյուղի ձեռքը:

Վ.Ն. Գասպարյանի հետ, այցելեցի արքեպիսկոպոս Ղևոնդին: Ձրույցի ընթացքում, արքեպիսկոպոսը հետաքրքրվեց Հայրենագարձուծության պայմաններով եւ իր խորին հավանությունը հայտնեց այդ առիթով: Չերեյանի խոսքերով, ՍԱՀ-ից խորհրդային Հայաստան Հայերի հայրենագարձուծությունը դրական արձագանք է գտել քաղաքի Հայկական գաղութի բոլոր խավերի մոտ:

Չերեյանի կարծիքով, միանգամայն դրական է այն փաստը, որ Հայրենիք Հայրենագարձուծելու ցանկացողների գրանցումը կատարվում է իՍՀՄ Գլխավոր Հյուպատոսարանում՝ անմիջականորեն խորհրդային ներկայացուցիչների կողմից: Ինչպես ցույց է տալիս, նախորդ տարիների փորձը, տեղացի Հայրենիք կազմված վերաբնակեցման հարցերով զբաղվող կոմիտեի կազմակերպումը ցանկալի արդյունք չտվեց եւ կոմիտեի որոշ անդամների կողմից չարաշահումների իրականացման հնարավորություն ստեղծեց:

Այնուհետեւ Չերեյանը պատմեց, որ սիրիական գործող օրենքների համաձայն, նա եւ Հայ կաթոլիկ ու բողոքական համայնքների ղեկավարները հանդիսանում են քաղաքի Հայկական գաղութի պաշտոնական առաջնորդները, տեղական իշխանությունների կողմից ճանաչված եւ բոլոր հարցերը, որոնք վերաբերում են գաղութի ազգային, եկեղեցական եւ մշակութային-ընկերակցական կյանքին, լուծվում են նրանց միջոցով: Դրա հետ կապված, քաղաքի Հայկական կրոնական համայնքների ղեկավարները, 4 ամիս առաջ, տեղական իշխանությունների կողմից տեղեկացվել են Հայրենիք սիրիահայերի նախատեսվող Հայրենագարձուծության մասին եւ դրա վերաբերյալ հարցվել է նրանց կարծիքը:

Հայեպում իՍՀՄ Գլխավոր Հյուպատոսարանի փոխհյուպատոս Բ.Տեր-Միքայելյան

ՀԱԱ, Ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 19: Բնագիր: Մեքենագիր:

N 2

ՀԱԼԵՊՈՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻ ՓՈԽ ՀՅՈՒՊԱՏՈՍ Բ.ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ «ՌՈՐԼԴ ԹՐԵԼԼԻՆԳ ԷՋԵՆՍԻ» ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱԼԵՊԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԾ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿԱՅՈՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

11 օգոստոսի 1964թ.

Հայեպ

Գլխավոր Հյուպատոսարանում ընդունեցի Ա.Ստեփանյանին: Ձրույցի ընթացքում նա պատմեց, որ իր մոտ զգալիորեն ավելացել է հաճախորդների թիվը՝ ի հաշիվ Հայկական իՍՀ ուսման մեկնող տեղացի Հայ ուսանողների, եւ նա հույս ունի, որ սուրիստական ընկերության մասնաճյուղի բացումը Հայեպում տնտեսապես իրեն կարգարացնի: Պատասխանեցի, որ այդ գործում շատ բան կախված է նրանից, թե ինչպե՞ս կկազմակերպի ընկերության մասնաճյուղն իր աշխատանքը եւ որ գործի ճիշտ կազմակերպման եւ համապատասխան նախաձեռնություն հանդես բերելու դեպքում, ընկերությունը կունենա որոշակի եկամուտ: Իր հերթին Գլխավոր Հյուպատոսությունը կաշխատի հնարավոր օգնություն ցույց տալ հաճախորդների ավելացման գործում:

Այնուհետեւ Ստեփանյանը, անդրադառնալով տեղացի Հայերի՝ Հայրենագարձուծության հայրենիք, Հայտարարեց, որ այդ միջոցառումը քաղաքի Հայկական գաղութի բոլոր խավերի կողմից ջերմ հավանության է արժանացել: Նա իր գաղափարը հայտնեց այն բանի առթիվ, որ վերջին ժամանակները ինքը ստիպված է եղել բախվել այնպիսի փաստերի հետ, երբ տեղացի Հայերը մշտական բնակություն են մեկնում Կանադա եւ Ավստրալիա: Մասնավորապես, սույն թվականի Հուլիսին նա ձեռակերպել է 36 Հայերի ուղեկորական փաստաթղթերը, որոնք մեկնել են Կանադա, ավելի սակավ թվով փաստաթղթեր են արվել Ավստրալիա մեկնելու համար:

Ստեփանյանի Հայտարարության համաձայն, տեղական իշխանությունները, մինչեւ վերջին ժամանակները, որեւէ արգելք չեն հարուցել տեղացի Հայ քաղաքացիներին, որոնք մշտական բնակություն են մեկնել Կանադա եւ

Ավստրալիա: Սակայն, բավականին բնութագրական է այն փաստը, որ երկու օր առաջ տեղական իշխանությունները մերժել են ելքի թույլտվություն տալ Կանադա մեկնող մի հայ բնասնիքի եւ նրանց ուղղակիորեն Հայտարարվել է, որ նրանք պետք է մշտական բնակության մեծան ՍԱՀ-ում, կամ էլ Հայրենագարձուծին խորհրդային Հայաստան:

Հայեպում իՍՀՄ Գլխավոր Հյուպատոսարանի փոխհյուպատոս Բ.Տեր-Միքայելյան

ՀԱԱ, Ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 21-22: Բնագիր: Մեքենագիր:

N 3

ՀԱԼԵՊՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻՄ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՎՂԹԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅՈՑՈՒՑԻՉ Ն.Գ.ԳԱՍՊԱՐՈՎԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒԼԻ ՈՒ ԴԵՇՈՒՌԱՐԻԱԹ ԳՑՈՒՂԵՐԻ ՄՈՒԽԹԱՐ (ԱՎԱԳ) ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆԻ ԶՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

21 սեպտեմբերի 1964թ. Հայեպ

Մուխթար (ավագ) Կարապետ Հակոբյանը, երեք գյուղացիների ուղեկցությամբ, այցելեց Հայեպում իՍՀՄ գլխավոր Հյուպատոսարան եւ ինձ հետ գրույցի ընթացքում հայտարարեց, որ ինքը՝ մուխթար Կ. Հակոբյանը, կանչվել է օստիկանական տեղամաս, որտեղից պահակախմբի հսկողության ներքո, տարվել է կայմակամի (տեղական իշխանության ղեկավարի) մոտ Ռաս-Ուլ-Այն: Վերջինս մեղադրել է մուխթարին նրանում, որ նա իբր թէ Գոլի, Դեշո եւ Ռարիաթ Հայկական գյուղերի գյուղացիներին հրահրում է մեկնել իՍՀՄ: Հարցաքննության ժամանակ կայմակամը հարցրել է մուխթարին. ո՞վ է գյուղացիներին ցուցակագրում. ինչպես է իՍՀՄ-ից ժամանած մարդու ազգանունը, որը հաշվառում է կատարում Հայրենագարձուծության համար: Կայմակամը խիտ ձայնով հարցրել է. միթե՞ դուք Սիրիայում վատ եք ապրում: Ինչո՞ւ եք ցանկանում մեկնել իՍՀՄ: Մուխթարը հայտարարել է կայմակամին, որ Հայկական իՍՀ ներկայացուցիչը Սիրիա է ժամանել սիրիական կառավարության համաձայնությամբ եւ վերջինիս համաձայնությամբ էլ կատարում է խորհրդային Միությունը Հայրենագարձուծվել ցանկացողների ցուցակագրումը: Մուխթարն ապա նրան հայտնել է, որ Գոլի, Դեշո եւ Ռարիաթ Հայկական գյուղերի գյուղացիները վատ չեն ապրում եւ Սիրիայում իրենց լավ են զգում, սակայն որպես Հայ, նրանք ցանկանում են ապրել եւ աշխատել իրենց Հայրենիքում՝ խորհրդային Հայաստանում, դրա համար էլ նրանք ցանկություն են հայտնել մեկնել Հայկական իՍՀ՝ մշտական բնակության: Գյուղացիներին ոչ ոք չի հրահրել իՍՀՄ մեկնել: Նրանք իրենք են կամավոր ցանկություն հայտնել մեկնել Հայրենիք՝ Հայաստան:

Ձրույցի ընթացքում մուխթարը հայտարարեց, որ տեղական արարները, ինչպես նաեւ որոշ քրիստոնյա կաթոլիկներ, սկսել են թշնամաբար վերաբերվել իրեն, եւ վախենալով վերջինների կողմից հետապնդումներից, նա իր երեխաներին տեղափոխել է Հայեպ: Այնուհետեւ մուխթարն ասաց, որ երկուսուրում է, որ տեղական իշխանությունները, որեւէ պատրվակի անվան տակ, կարող են ձեռքակալել իրեն եւ արդյոք այդ դեպքում նա կարող է դիմել գլխավոր Հյուպատոսարանի օգնությանը: Ես մուխթարին պատասխանեցի, որ նրա անհագրությունը վաղաժամ է եւ չեմ մտածում, որ նրան կարող են ձեռքակալել տեղական իշխանությունները: Միաժամանակ նրան խորհուրդ տվեցի կարուկ

չհակաճառել տեղական իշխանություններին (Մուխթարը բնավորությունը տաքարյուն մարդ էր):

Մանթապարություն. Մուխթար Կարապետ Հակոբյանը վերը նշված երեք գյուղերի գյուղացիների հետ ՄՍՀՄ մեկնելու կազմակերպիչներից ակտիվ նախաձեռնողներից մեկն է ու նրա մերձավոր ազգականները բնդգրկվել են 1964թ. Հայրենազարժության ցուցակների մեջ: Նա ինքը եւ գյուղացիների 5 ընտանիքներ, որոնք ունեն սեփականություն (տներ, հողամասեր, տրակտորներ եւ այլն) եւ Հնարավորություն չունեն այս տարի այդ ամենը վաճառել, մեր Հանձնարարականով իրենց մեկնումը Հետաձգել են մինչեւ 1965 թվական:

Սիրիայից Հայերի ներգաղթի Հարցերով
Հայկական հետազոտությունների խորհրդի
ներկայացուցիչ

Ն. Գասպարով

ՀԱԱ, Ֆ. 326, ց. 2, գ. 75, թթ. 23-24: Պատճեն: Մեքենագիր:

N 4

ՀԱԼԷՊԻ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆՈՒՄ ՍԻՐԻԱ ՀԱՅԵՐԻ
ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ
ՆԵՐԿԱՅՄԱՑՈՒՑԻՑ ԵՎ ՎԱՍՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ «ԲԱՐՈՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ
ՏՆՕՐԵՆ ՊՐՆ.ԳՐԻԳՈՐ ՄԱԶԼՈՒՄՅԱՆԻ ԶՐՈՒՑՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

29 սեպտեմբերի 1964թ.
Հալեպ

Պարոն Մազլումյանն ինձ հանդիպեց Հյուսիսային Հայաստանում եւ խնդրեց մի քանի բույսեր ընդունել նախկին պաշտոնատար անձ, պարոն Մախր Ռաեսին, ներկայիս մուհաբեզի (նահանգապետի) ազգականին: Ս.Ռաեսն ասաց, որ ինքն ինձ մոտ է եկել այս տարի Ազոյան ընտանիքի Հայկական խՍՀ Հայրենազարժվելու խնդրով: Նա նկատեց, որ այդ ընտանիքի Հայրենազարժվելու խնդրով մուհաբեզի անձամբ խոսել է Հայեպում իմՍՀՄ Գլխավոր Հյուպատոս պ. Ա.Մ.Զուբովի հետ, վերջին հանդիպման ժամանակ:

Ես նրան պատասխանեցի, որ Հայրենազարժվող Հայերի ցուցակները վաղուց հանձնվել են ՍԱՀ կառավարությանը եւ որ մի ընտանիքի համար աննպատակա-հարմար է դիմել Սիրիայի կառավարությանը: Ռաեսը պատասխանեց, որ Հայեպ քաղաքի Հայ Հայրենազարժների ցուցակները ներկայումս գտնվում են Հայեպյան մուհաբեզի խՍՀ-ում եւ, եթե մենք համաձայնվենք մտցնել այդ ընտանիքի ազգա-նունը տվյալ ցուցակներում, ապա նա կարող էր այդ ցուցակները բերել գլխավոր Հյուպատոսարան: Ես խնդրեցի Ռաեսին, որպեսզի մեզ մոտ ուղարկի Ազոյանին, եւ ասացի, քանի որ այդ ընտանիքի Հայրենազարժության համար միջոցառում է ան-ձամբ մուհաբեզը, ապա, առաջին իսկ հնարավորության դեպքում, մենք կփորձենք Հայրենազարժել այդ ընտանիքը իմՍՀՄ այս տարում: Միաժամանակ նկատեցի, որ մենք վաղուց սպասում ենք ՍԱՀ կառավարության պատասխանին՝ կապված Հայե-րի Հայրենազարժության հետ նրանց համաձայնությանը եւ խնդրեցի արագացնել այդ ցուցակների ուղարկումը Դամասկոս: Ռաեսը, հրաժեշտ տալով, խոստացավ ամեն հնարավոր բան անել, որպեսզի արագացնի այդ ցուցակների ուղարկումը Դա-մասկոս: Ռաեսի Հեռանալուց հետո պ. Մազլումյանը Հայաստան, որ արարները շատ են վիրավորված, որ Հայերը ցանկանում են լքել Սիրիան: Արար պաշտոնա-տար անձինք, ասաց նա, որոնք հաճախ են այցելում իրեն Հյուսիսային Հայաստան, դիմում են Հետեյայ Հարցով. Ինչո՞ւ են Հայերը Հեռանում Սիրիայից, միթե՞ նրանք այս-տեղ վատ են ապրում: Ապա Մազլումյանը նկատեց, որ ընդհանրապես լավ կլինի, եթե Հայերի Հայրենազարժությունն իրականացվեր անադմուս եւ ոչ մեծ խմբերով, ամիսը 10-ական ընտանիք, դա աննկատ կամար սիրիացիների կողմից: Հայերի Հայ-րենազարժությունը Սիրիայից որոշակի անհանգստություն է առաջացրել նմանա-պես արվմտյան զիվանագետների մոտ, որոնք հավատարմաբարված են Հայեպում: Վերջերս, ասաց նա, իրեն այցելել են Հայեպում ԱՄՆ-ի Գլխավոր Հյուպատոսը եւ

Անդրիայի Հյուպատոսը. գրույցի ընթացքում նրանք Հայաստանը են, որ շատ ան-հազուստացած են այն փաստով, որ Հայերը ցանկանում են Սիրիայից վերադառնալ իմՍՀՄ: Անդրիայան Հյուպատոսը, շարունակեց նա, գրույցի ընթացքում բնդգծեց, որ ավելի քան 10 հազար Հայեր արգեն ցանկություն են Հայաստան Հայրենազարժելու խորհրդային Միություն:

Նա խոսեց նաեւ մուհաբեզի եւ ոստիկանապետի փոխհարաբերությունների մասին: Մազլումյանը նշեց, որ նրանց հարաբերությունները շատ լարված են. իբր մուհաբեզը պաշտոններից ազատում է ոստիկանապետի բարեկամներին եւ այդ հողի վրա, նրանց հարաբերությունները կտրուկ վատացել են:

Ինչպես պարզվեց, Ազոյանի ազգականներն իրենց մասնագիտությամբ գերձակներ են: Նրանք հազուստներ են, կարում մուհաբեզի ընտանիքի եւ նրա ազգականների համար:

Սիրիայից Հայերի Հայրենազարժման
Հարցերով Հայկական հետազոտությունների
խորհրդի ներկայացուցիչ

Ն. Գասպարով

ՀԱԱ, Ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 25-26: Պատճեն: Մեքենագիր:

N 5

ՀԱԼԷՊԻՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ Ա.Մ.ԶՈՒՐՈՎԻ ԵՎ ՀԱԼԷՊԻ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՄԱՍԳՐՈՒՆԻ Հ.ԶԱՐԻԻ (ԶՈՒՐՈՒՄ.Ֆ.) ՄԻՋԵՎ ԿԱՅԱՑԱՄ
ԶՐՈՒՑՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

3 Հոկտեմբերի 1964թ.
Հալեպ

Այսօր, Հայկական խՍՀ արտաքին գործերի փոխնախարար ընկ. Ն.Վ. Գասպարովի հետ այցելեցի Հայեպի նահանգապետ Մամդուհ Զարին: Կայացած գրույցի ընթացքում, հաղորդեցինք Մ.Զարին, որ Դամասկոսում իմՍՀՄ ղեկավար Ա.Ա.Բարդուխյան, սույն թվականի հոկտեմբերին մեկին, գրույց է ունեցել ՍԱՀ նախարարների խորհրդի նախագահ Սալախ Բիտարի հետ՝ ՍԱՀ-ից Հայերի Հայկական խՍՀ Հայրենազարժվելու հարցի շուրջ: Այդ գրույցի ընթացքում Ա.Բիտարը Հայաստան, որ Սիրիայի կառավարությունը որեւէ առարկություն չունի այդ Հայրենազարժության դեմ: Հայրենազարժների ցուցակները ուղարկվել են միայն այն պատճառով, որպեսզի պարզվի, թե՞ նրանցից որեւէ մեկը պարտք է արդյոք պետությունը, չի գտնվում դատի տակ: Նման ստուգումները Դամասկոսի, Հոմսի եւ Լաթաքիայի մուհաբեզի խՍՀ-ում ավարտվել են եւ նրանք բոլորը կարող են Հայրենազարժվել: Եթե Հայեպի մուհաբեզի խՍՀ-ում այդ աշխատանքը դեռեւս չի ավարտվել, ապա արդեն հիմա, ասաց Բիտարը, կարելի է Հայրենազարժել բոլորին, ովքեր անցել են ստուգումը:

Ի պատասխան, Մամդուհ Զարին ասաց, որ ինքը տեղյակ է այդ հարցի մասին: Հայեպից խորհրդային Հայաստան մեկնելու ցանկություն Հայաստան անձանց ստուգումը, թե՞ նրանք պետությունը պարտքեր չունեն արդյոք եւ չեն գտնվում դատի տակ, գործնականում ավարտվել է եւ նրանք բոլորը կարող են Հայրենազարժվել: Մամդուհ Զարին ասաց նաեւ, որ ինքն անմիջապես ցուցում կտա մուհաբեզի ֆինանսների ղեկավարամեծին, որպեսզի նրանք չուշացնեն Հայրենազարժողներին տրվող տեղեկանքներն այն մասին, որ նրանք պարտքեր չունեն: Պատասխանելով մեր հարցին, Մամդուհ Զարին Հայաստան, որ իշխանությունների կողմից որեւէ արգելք չկա այս տարի Հայեպից խորհրդային Հայաստան Հայրենազարժվելու ցանկացող տեղացի Հայերի համար...

Հալեպում իմՍՀՄ գլխավոր Հյուպատոս

Ա. Զուբով

ՀԱԱ, Ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 27-28: Պատճեն: Մեքենագիր:

N 6

ՀԱՒԼԵՊՈՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ Ա.Մ.ՋՈՒԲՈՎԻ ԵՎ ՍԻՐԻԱՑԻ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄՈՎՍԵԹ (ՄՈՎՍԵՍ-Ա.Ֆ.) ՍԱԼԱԹՅԱՆԻ ԶՐՈՒՑՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

14 Հոկտեմբերի 1964թ.
Հալեպ

Գլխավոր Հյուպատոսարանում բնդունեցի Մովսեթ (Մովսես-Ա.Ֆ.) Սալաթյանին: Ջրույցի ընթացքում Սալաթյանը հայտնեց, որ ինքը եւ հայկական ԽՍՀ մեկնող տեղացի չորս հայեր, սույն թվականի Հոկտեմբերի 13-ին այցելել են Հալեպի նահանգապետ Մամուր Հաբիբի եւ բոլոր հայրենադարձների անունից խորին շնորհակալություն եւ երախտագիտություն են հայտնել Սիրիայից Խորհրդային Հայաստան նախապատրաստվող մեկնման համար ցուցաբերած աջակցության համար: Պատվիրակները նմանապես շնորհակալություն էին հայտնել Սիրիայի կառավարությանը եւ ժողովրդին, հայերի նկատմամբ ցուցաբերած լավ եւ բարեկամական վերաբերմունքի համար, եւ հավաստագրեցին նահանգապետին նրանում, որ հայերը, վերաբնակվելով Խորհրդային Հայաստանում, կպահպանեն ամենալավագույն հիշողությունները մի երկրի մասին, որ իրենց պատանան ավել եւ կաջակցեն սիրիական եւ Խորհրդային ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների գարգացմանը:

Սալաթյանի խոսքերով, նահանգապետը բավականին ուշադիր լսել է, իր՝ Սալաթյանի ճառը: Եւ նրա բովանդակության մասին խոստացել է տեղեկացնել կառավարությանը: Նահանգապետն իր հերթին հայտարարեց, որ սիրիական իշխանությունները եւ ինքն անձամբ, անչափ ցավում են, որ հայերը Սիրիայում երկար տարիներ բնակվելուց հետո թողնում են երկիրը: Բայց քանի որ հայերը մեկնում են իրենց հայրենիքը, իրենց ազգակից եղբայրների մոտ, սիրիական իշխանությունները հնարավոր ամեն ինչ կանեն, որպեսզի դուրսացնեն նրանց մեկնումը Հալեպից եւ Սիրիայի այլ վայրերից: Նահանգապետը դրա հետ մեկտեղ ցանկություն հայտնեց, որ Սիրիայից Խորհրդային Միություն վերաբնակվողները չմոռանան իրենց սիրիացի եղբայրներին, որոնց հետ երկար տարիներ միասին են ապրել, օգնեն սիրիացի ժողովրդին պաղեստինյան խնդրի լուծման հարցում աջակցեն սիրիացի եւ Խորհրդային ժողովրդների միջև բարեկամության ամրապնդմանը:

Հալեպում ԽՍՀՄ Գլխավոր Հյուպատոս Ա. Ջուբով

ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 75, թթ. 29-30: Բնագիր: Մեքենագիր:

N 7

ՀԱՒԼԵՊՈՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻ ՓՈԽ ՀՅՈՒՊԱՏՈՍ Բ.ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ ՀԱՅ-ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՒԵՊԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ, ՂԵՎՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵԲԵՑԱՆԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԶՐՈՒՑՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

17 Հոկտեմբերի 1964թ.
Հալեպ

«Նեոի Լիվա» ակումբում հանդիպեցի Պրեյսանի հետ եւ նրա հետ զրույց ունեցա, որի ընթացքում նա պատմեց իր սպավորությունները վերջերս Վազգեն Ա. կաթողիկոսի հրավերով Հայկական ԽՍՀ կատարած ուղեվորություն մասին: Պրեյսանը պատմեց, որ բավական գոհ է մնացել հանրապետության տնտեսական եւ մշակութային զարգացման աճի մակարդակով, ինչպես նաեւ իրեն ցույց տված ընդունելությունից: Պրեյսանը հայտարարեց, որ ինքը կիրակի օրերին քաղաքի հայկական եկեղեցիներում հանդես է գալիս քարոզներով եւ ծխականների պատմում Խորհրդային Հայաստան կատարած իր դրական սպավորությունների մասին:

137

Ապա խոսակցության ընթացքում Պրեյսանը շուտից տեղացի հայերի Հայաստան նախատեսվող հայրենադարձության հարցը եւ հետաքրքրվեց առաջին քարավանի ուղարկման ամսաթիվով: Պատասխանեցի, որ մինչեւ ամսվա վերջը հայրենադարձների առաջին քարավանն արդեն ճանապարհին կլինի: Պրեյսանն իր հավանությունը ավելց ալո առիթով եւ հայտարարեց, որ քաղաքի հայ բնակչության շրջանում լուր է տարածվել, թէ իբր տեղական իշխանությունները վճռել են հայերին թողնել չտալ դուրս գալ երկրի սահմաններից: Ապա Պրեյսանը պատմեց, որ վերջին մի քանի օրերի ընթացքում ինքը հանդիպումներ է ունեցել բարձրաստիճան պաշտոնյաների հետ եւ նրանցից ալո առիթով որեւէ հայտարարություն չի լսել: Պրեյսանի կարծիքով տեղական իշխանությունները լոյս է վերաբերում հայերի հայրենադարձության հարցին:

Ջրույցը տևեց 35 րոպե:

Հալեպում ԽՍՀՄ Գլխավոր Հյուպատոսարանի փոխհյուպատոս Բ.Տեր-Միքայելյան

ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 32: Բնագիր: Մեքենագիր:

N 8

ՀԱՒԼԵՊՈՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ Ա.Մ.ՋՈՒԲՈՎԻ ԵՎ ԼԱԹ-ԱՔԻԱՑԻ ՆԱԽԿԻՆ ԳԱՊԵՏ ՆԱՍԻՄ ՍԱՖԱՐԴՋԱԼԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԶՐՈՒՑՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

20 Հոկտեմբերի 1964թ.
Հալեպ

Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ ընկ. Ն.Վ. Գասպարովի հետ այցելեցինք Լաթաքիայի նահանգապետ Նասիմ Սամարջալին եւ նրա հետ զրույց ունեցանք՝ Խորհրդային Հայաստան Սիրիայից հայերի հայրենադարձության հարցերի շուրջ: Ն.Սամարջալինն ասացի, որ այսօր՝ առավոտյան, Լաթաքիա նավահանգիստ է ժամանել «Արմենիա» Խորհրդային ջերմանավը՝ Սիրիայից Խորհրդային Հայաստան հայրենադարձվող հայերի համար: Սակայն հայրենադարձներին ջերմանավ նստեցնելը չի կատարվում, քանի որ նավահանգստի ոստիկանական եւ մաքսային իշխանություններն այդ ուղղությամբ ոչ մի ցուցում չեն ստացել ո՛չ կենտրոնական իշխանություններից, ո՛չ էլ մուհամեդաթից: Մենք վկայակոչեցինք վերջերս Դամասկոսում ԽՍՀՄ դեսպան Բարկովիլու զրույցը ՍԱՀ նախարարների խորհրդի նախագահ Ա.Համեզի հետ Սիրիայից Խորհրդային Հայաստան հայերի հայրենադարձության մասին եւ ստացանք վերջինիս խոստումը այդ հայրենադարձության իրականացման ամեն տեսակի աջակցություն ցույց տալու համար:

Նասիմ Սամարջալին պատասխանեց, որ ինքն առայժմ հայրենադարձներին ուղարկելու մասին Դամասկոսից որեւէ կոնկրետ ցուցում չի ստացել, եւ որ իրենից 20-30 րոպե կպահանջվի, որպեսզի հեռախոսով կապվի ներքին գործերի նախարարության հետ, որից հետո կկարողանա պատասխանել մեր կողմից իրեն առաջադրված հարցերին:

Դամասկոսի հետ հեռախոսով խոսելուց հետո, Ն.Սամարջալին մեզ տեղեկացրեց, որ ստացել է անհրաժեշտ հավաստագրումներ հայրենադարձներին ուղարկելու հարցում: Եւ արդեն ցուցումներ է տվել նավահանգստի ոստիկանական իշխանություններին՝ սկսել հայրենադարձների նստեցումը ջերմանավով: Նասիմ Սամարջալին միաժամանակ իր դժգոհությունն արտահայտեց Սիրիայից հայերի Խորհրդային Հայաստան մեկնելու առիթով: Նա, մասնավորապես, ասաց, որ Սիրիայի հայերի մեկնումը Խորհրդային Միություն հավասարազոր է յուրաքանչյուր սիրիացու կենդանի մարմնից մի մաս պահելուն: Հայերը Սիրիայում ապրել են մոտ 50 տարի, նրանց ճնշող մեծամասնությունը ծնվել է այստեղ: Նրանք բոլորն էլ սիրիական քաղաքացիներ են, սիրիացիների եղբայրներն ու քույրերը:

Ն.Սամարջալին պատասխանեցինք, որ հայերի հայրենադարձությունը Սիրիայից Խորհրդային Հայաստան, իրականացվում է Սիրիայի կառավարության լիակատար համաձայնությամբ եւ իրենց՝ հայերի ցանկության համաձայն: Մենք

138

նմանապես ասացինք, որ Խորհրդային Հայաստան Հայրենադարձվելու ցանկութեան Հայտնած Հայերի ցուցակները վաղորդ Հանձնվել են Սիրիայի կառավարութեանը եւ վերջինս կողմից հաստատվել:

Զրույցին ներկա էր եւ թարգմանեց գլխավոր Հյուպատոսարանի քարտուղար Ընկ. Ի. Գ. Իվաչչենկոն:

Հայեպում գլխավոր Հյուպատոս Ա. Զուբով
ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 34-35: Բնագիր: Մեքենագիր:

N 9

ՀԱԼԵՊՈՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ Ա.Մ.ԶՈՒԲՈՎԻ ԵՎ ՀԱԼԵՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՄԱՍՄԴՆԻԻ (ԶՈՒՊԻ-Ա.Ֆ.) ՄԻՋԵՎ ԶՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄ

25 Հոկտեմբերի 1964թ.
Հայեպ

Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ընկ. Ն.Վ. Գասպարովի Հետ այցելեցի Հայեպի նահանգապետ Մամդուհ Ջարին եւ նրա Հետ գրուցեցի Հայեպից Հայերի Հայրենադարձութեան մասին:

Հայտնեցի Մամդուհ Ջարին, որ Համաձայն Դամասկոսում Խորհրդային դեսպանատան եւ սիրիական կառավարութեան միջև կայացած պայմանավորվածութեան՝ Սիրիայից Խորհրդային Միութեանը Հայրենադարձ Հայերով առաջին շոգենավը Լաթաքիա նավահանգստից մեկնել է սույն թվականի Հոկտեմբերի 21-ին, եւ որ մոտակա օրերին նախատեսվում է Հայրենադարձների եւս երկու շոգենավ ուղարկել: Հայրենադարձների Հետեւից երկրորդ շոգենավը Հավանաբար Լաթաքիա նավահանգիստ կժամանի Հոկտեմբերի 30-31-ին, իսկ այս տարվա վերջին՝ երրորդ շոգենավը կժամանի նոյեմբերի 9-11-ը:

Ենթահայտարկություն Հայտնեցի Մամդուհ Ջարին՝ Սիրիայից Հայերի առաջին խմբի՝ (մասնավորապես Հայեպից Հայկական ԽՍՀ) Հայրենադարձության իրականացման Հարցում նրա սիրալիր աջակցության համար, Հույս Հայտնելով նաեւ, որ Հետագայում եւս նրա կողմից աջակցություն կստանանք՝ Հայրենադարձության Հետ կապված Հարցերի լուծման համար:

Ապա ասացի, քանի որ սիրիական սահմանապահ իշխանությունները Հայրենադարձ Հայերին շոգենավ նստեցնելուց նրանցից վերցնում են ինքնությունը Հաստատող տեղական վկայականները, անհրաժեշտություն է առաջանում Հայրենադարձներին սալ խմբային անձնագիր, որտեղ կարելի կլինի գնել էլքի սիրիական թուղթովությունը: Հայեպից եւ Սիրիայի այլ քաղաքներից Հայրենադարձվողների համար, սիրիական սահմանապահ իշխանությունների կարծիքով խմբային անձնագրեր ավելի լավ կարող են պատրաստվել իշխանությունների կողմից՝ Հայրենադարձների ներկայիս բնակության վայրերում: Դրա Հետ կապված՝ Մամդուհ Ջարին խնդրեցի, որպեսզի նա Համապատասխան իշխանություններին անհրաժեշտ ցուցումներ տա Հայրենադարձ Հայերի համար խմբային անձնագրեր պատրաստելու կապակցությամբ:

Ի պատասխան, Մամդուհ Ջարին ասաց, որ նա պատրաստ է ցանկացած աջակցություն ցուցաբերել Հայեպից Խորհրդային Հայաստան Հայերի Հայրենադարձության համար: Դրա Հետ մեկտեղ, սակայն, նկատեց որ նշված խնդրի Հետ կապված, նա կենտրոնական իշխանությունների կողմից որեւէ ցուցում չունի, եւ Հայրենադարձների համար խմբային անձնագրերի Հարցը ավելի լավ է լուծել Մամասկոսում: Սակայն իմ այն գիտողությունից Հետո, թէ խմբային անձնագրերի Հարցը Հանդիսանում է դուռ տեխնիկական, եւ որ սովյալ ղեկավար խոսքը գնում է այն մասին, որպեսզի այդ գործով չգրադվեն Հայրենադարձներին շոգենավ նստեցնելու ժամանակ՝ այդպիսով խնայելով ժամանակը, Մամդուհ Ջարին հրավիրեց իր օգնականին եւ խնդրեց նրան նախապատրաստել Հեշտապես Հարցի վերաբերյալ Դամասկոս Հեռագրական Հարցում: Նա ասաց նաեւ, որ մենք այդ Հարցով գործ կունենանք իր օգնականի Հետ:

Ասացի Մամդուհ Ջարին, որ ներկայումս Հայեպում երկրորդ շոգենավով (Հոկտեմբերի 30-31-ին) Հայրենադարձվելու են սպասում Հասաչե (Հասիչե-Ա.Ֆ.) գավառից ժամանած մոտ 50 Հայկական գյուղացիական բնասնիքներ: Ես նկատեցի, որ ցանկայի է, որպեսզի այդ անձանց խմբային անձնագիրը ձեռնարկվի այստեղ՝ Հայեպում, քանի որ նրանք վերջնականապես մեկնել են Հասաչե գավառից:

Մամդուհ Ջարին ասաց, որ դա խմբային անձնագրերի մասին նույն Հարցն է: Դրա Հետ մեկտեղ նա, այստեղ ներկա գտնվող իր օգնականին Հանձնարարեց Հարցում անել Դամասկոս, պատասխանը ստանալուց Հետո կապվել Հասաչեի մուհամեդգասի Հետ եւ անել ամեն հնարավորը, որպեսզի խմբային անձնագրերը սրվեն այստեղ՝ Հայեպում:

Այնուհետեւ ես ասացի, որ Հայրենադարձների շոգենավ նստելիս շատ ժամանակ է ծախսվում նրանց ուղեբեռի մաքսային գնման վրա, Դրա Հետ կապված՝ նկատեցի ես, ցանկություն է Հայտնվում, որ Լաթաքիայի մաքսային իշխանությունները Հայեպից մեկնողների ուղեբեռի գնումը կատարեն Հայեպյան մաքսատանը եւ նրանց տրվեն Համապատասխան տեղեկանքներ:

Մամդուհ Ջարին ասաց, որ դա անմիջականորեն չի մտնում իր իրավասության մեջ: Բայց քանի որ մենք իրեն ենք դիմում նման խնդրանքով, նա կաշխատի մեզ աջակցել այդ Հարցի լուծման խնդրում: Տեղյուտեղը Մամդուհ Ջարին կապվեց Հեռախոսով Հայեպի մաքսատան պետի Հետ, ներկայացրեց նրան Հարցի էությունը եւ մեզ Հայտնեց, որ Հայրենադարձների ուղեբեռի գնումը կարող է կատարվել Հայեպյան մաքսատանը, սակայն դրա համար Հայրենադարձներից կպահանջվի վճարել անհրաժեշտ մաքսատուրքը:

Ենթահայտարկություն Հայտնեցի Մամդուհ Ջարին՝ Սիրիայից Խորհրդային Հայաստան Հայերի Հայրենադարձության Հարցում սիրալիր աջակցության համար:

Զրույցին ներկա էր եւ թարգմանում էր գլխավոր Հյուպատոսություն քարտուղար Ընկ. Ի. Գ. Իվաչչենկոն:

Հայեպում ԽՍՀՄ գլխավոր Հյուպատոս Ա. Զուբով

ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գործ 75, թ. 36-38: Բնագիր: Մեքենագիր:

N 10

ՀԱԼԵՊՈՒՄ ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ Ա.Մ.ԶՈՒԲՈՎԻ ԵՎ ՀԱԼԵՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՄԱՍՄԴՆԻԻ ԻՄԻՋԵՎ ԶՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

29 Հոկտեմբերի 1964թ.
Հայեպ

Թուրքական գլխավոր Հյուպատոսարանի կողմից Թուրքիայի ազգային տոնի կապակցությամբ կազմակերպված բնդունելության ժամանակ, Հայեպի նահանգապետ Մամդուհ Ջարին Հետ ունեցած գրույցի ժամանակ Հարցրեցի, թե արդյոք նա Դամասկոսից ստացել է անհրաժեշտ ցուցումներ՝ Սիրիայից Խորհրդային Հայաստան Հայրենադարձվող Հայերի համար կոյեկտիվ անձնագրեր պատրաստելու վերաբերյալ եւ որեւէ դժվարություն չի լինի Հոկտեմբերի 31-ին՝ Հայրենադարձներին Լաթաքիա նավահանգստից ուղարկելիս:

Ի պատասխան Մամդուհ Ջարին ասաց, որ սույն թվականի Հոկտեմբերի 25-ին իմ կողմից իր առջև գրված բոլոր Հարցերը՝ կապված Սիրիայից Հայերի Խորհրդային Հայաստան Հայրենադարձության Հետ, լուծվել են գրականորեն եւ Հայրենադարձների համար շոգենավ նստելու ժամանակ, որեւէ դժվարություն չի լինի: Նա նաեւ ավելացրեց, որ արդեն Լաթաքիայի սահմանապահ իշխանություններին այդ առիթով Համապատասխան ցուցումներ են տրվել:

Հայեպում ԽՍՀՄ գլխավոր Հյուպատոս Ա. Զուբով

¹ Սիրիայի Հյուսիս-արևելյան սահմանի վրա էր գտնվում ձեզիբեն: Պարփակում էր մեկից ավելի գավառներ՝ Արբո Բուշար, Այն Էլ Արուս, Գամըլլի եւ շրխալաթը, Տեբեթ, Տեբեպիս, Ինչպես նաև՝ Հասիչեն:

№ 11
ՍԻՐԻԱՅՈՒՄ ԽՍՀՄ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻ [ԱՇԽԱՍԱԿԻՑ]
Գ.Ա.ՓԵՂԵՎԱՆՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,
Ս.Ա.ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ՝ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԻ ՌԵՇԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

21 սեպտեմբերի 1965թ.
Հալեպ

Ինչպես ձեզ Հայտնի է, Հայերի Հայրենադարձության ցուցակները սիրիական իշխանություններին փոխանցվել են 1965թ. օգոստոս 14-ին: ԽՍՀՄ դեսպանի կողմից կրկնակի Հարցումից Հետո (29-ը օգոստոսի եւ 2-ը սեպտեմբերի) ցուցակները միայն սեպտեմբերի 14-ին են, փոխանցվել տեղական իշխանություններին ուսումնասիրելու եւ եզրակացություն անելու համար: Միայն այդ ժամանակ մեզ Հայտնի դարձավ, որ սիրիական իշխանությունները մի շարք պահանջներ ու սահմանափակումներ են ներկայացրել Հայրենադարձության թույլտվություն համար, որոնց մասին նախնական պայմանավորվածություն չի եղել:

Ի տարբերություն նախորդ տարվա՝ իշխանությունները պահանջել էին, որ յուրաքանչյուր Հայրենադարձ (ընտանիքի գլխավոր) Սիրիայի քաղաքացիությունից զուրկ գալու գրավոր դիմում տա եւ անձամբ ներկայանա դիմումը տալու:

Մեծ դժվարություններ են ստեղծվել նաեւ զորակոչի տարիք ունեցողների համար: Նրանցից պահանջում են պատկանելի գումարներ: Յուրաքանչյուրից 2000 սիրիական ֆունտ, զինվորական ծառայությունից ազատվելու համար:

Այս բոլորը եւ մի շարք այլ սահմանափակումներ հանգեցրեցին մեկնման փաստաթղթերի ձեւակերպման եւ գործնականում Հայրենադարձության իրագործման ուշացմանը:

Այս դրուժյունից զուրկ գալու համար ԽՍՀՄ դեսպանի խորհրդով, տեղացի ազդեցիկ Հայերից կազմվեց պատվիրակություն՝ ներկայացուցիչներ ունենալով Գամակոսից, Հալեպից եւ Գամըշիից (Գամիշլիից-Ա.Ֆ.), որոնք Պատրիարքի գլխավորությամբ այս տարվա սեպտեմբերի 20-ին այցելեցին ներքին գործերի նախարարին՝ սահմանափակումներ վերացնելու եւ ներգաղթի թույլտվությունն արագացնելու խնդրանքով: Նախարարը մի քանի Հարցերի դրական լուծում տվեց, բայց զի նապարտների հարցը տեղափոխեց մինչեւ այս տարվա սեպտեմբերի 23-24-ը:

Սեպտեմբերի 20-ին, ԽՍՀՄ դեսպանը հանդիպեց ներքին գործերի նախարարի Հետ, որն ասաց, թե բոլոր Հարցերը շուտով կլուծվեն, բայց չհրամայեց շոգենավ կանչել, մինչեւ վերջնական ցուցակները տեղ չհասնեն:

Այսպիսով, այս տարվա սեպտեմբերի 21-ին դեռեւս վճարված չէր տրանսպորտի միջոց կանչելու հարցը: Ենթադրվում է, որ այն կորոշվի ոչ շուտ, քան հոկտեմբերի 1-ը, եթե վերացվեն բոլոր առաջադրված սահմանափակումները:

Իմ կարծիքով, մինչ այդ ժամկետն, անհրաժեշտ է պայմանավորվածություն ձեռք բերել ունենալ շոգենավագնացական ձեռնարկության հետ, որպեսզի շոգենավերն ուղարկելու հեռագիրն ստանալուն պես առաջին հինգ օրերի ընթացքում, շոգենավը Հասնի Լաթաքիա:

Հայրենադարձվելու ենթակա ընտանիքները պատրաստ են մեկնելու: Վիճելի Հարցերը լուծելուց Հետո, նրանք կարող են մեկնել առաջին շոգենավով՝ 400 մարդ (ներառյալ փոքր տարիքի երեխաները), երկրորդով՝ 800, երրորդով՝ 800, չորրորդով՝ 500 մարդ: Շոգենավերը Լաթաքիա կհասնեն 5-7 օրվա հերթականությամբ: Շոգենավերի Լաթաքիայում գտնվելու օրերը, եւ այդ շոգենավերով փոխադրվող մարդկանց թվի մասին պետք է Հաղորդել ինձ, 5-7 օրվա ընթացքում, որպեսզի կարողանանք տեղեկացնել մարդկանց եւ կազմակերպել նրանց տեղափոխումը Լաթաքիա (պետք է Հաշվի առնել, որ Գամըշլիի բնակատեղիները Լաթաքիայից 900

կմ հեռավորության վրա են եւ ավտոտրանսպորտի հնարավորությունը խիստ սահմանափակ է:

Մարդկանց մեկնումի ձգձգումը անկասկած ազդում է նրանց ընդհանուր տրամադրության վրա: Կան հոգեկան խանգարման դեպքեր: Մեր կողմից տարվում է բացատրական աշխատանք: Նրանք, ովքեր առաջ վարանում էին, գալիս են իրենց ուղարկելու խնդրանքով (ըրացուցիչ ցուցակները կուղարկվեն առաջին քարավանի հետ):

Ինչ վերաբերում է երկրորդ հերթի Հայրենադարձվողներին՝ 1500 հոգի գյուղական բնակչությունից, ապա նրանք ընտրված են: Ցուցակները՝ պահուստային հաշվառումով, տպված են, բայց ԽՍՀՄ դեսպանի խորհրդով առայժմ չեն ներկայացվի սիրիական իշխանություններին, մինչեւ առաջին հերթի Հայրենադարձվողներին ներկայացված պայմանների վերջնական կարգավորումն ու առաջին քարավանի մեկնումը:

Գործնականորեն երկրորդ հերթին մեկնողների ուղևորությունը կարող է իրագործվել 1965թ. դեկտեմբերին եւ 1966թ. հունվարին, եթե Հանրապետությունը հնարավորություն ունենա ընդունելու նրանց, Սիրիայում իր ներկայացուցչի ներկայությամբ (ցանկալի է ընկ. Ս.Նանագուլյանը):

Ինչպես նախապես հաղորդվել էր, մեր կողմից մեծ աշխատանք է տարվել 1966թ. Հայերի Հայրենադարձության նախապատրաստման ուղղությամբ. առավելագույն չափով՝ 1500 քաղաքային եւ 1500 գյուղական բնակչություն: Այս դեպքում անհրաժեշտ է Հաշվի առնել, որ այս դասակարգի Հայրենադարձվելով՝ Սիրիայում Հայ գյուղացիական բնակչություն այլեւս չի մնա, իսկ քաղաքային բնակչությունը՝ վերը նշված թվով, որոշ նկատառումներով, ցանկալի է ժամանակավորապես ձեռնպահ մնան Հայրենադարձվելուց:

1966թ. Հայերի ներգաղթը (առանց հաշվառելու երկրորդ հերթի 1500 գյուղացիական բնակչության) կարելի է իրականացնել Հանրապետության պատվիրակի ներկայությամբ 1965-ի դեկտեմբերի 1-ից (1966թ. մարտ-մայիս ամիսների ընթացքում):

Ձեր հեռագրի մէջ նշված իմ կողմից ստացված հունիս, հուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսների գումարը՝ 1634 ուսուրի 12 կոպեկ, Հասնում եմ, որ չեմանալով արտաբերված արժեքը՝ չկարողացա ճատատես: Իմ կողմից նշված ժամանակում ձեզից ստացվել է, 15 դոլլար, իսկ մեկնումից առաջ սիրիական դեսպանատնից՝ 4919 սիրիական ֆունտ, Լիբանանի դեսպանատնից՝ 1707 լիբանանյան ֆունտ, (որը տեղական փոխարժեքով կազմում է 2134 սիրիական ֆունտ) եւ ընկ. Ա. Նանագուլյանից 412 սիր. ֆունտ: Խնդրում եմ շտապ կատարել վերահաշվարկ եւ արագացնել հոկտեմբեր ամսվա վճարի ուղարկումը:

Այն ընտանիքները, որոնք ձեր եւ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարության կողմից երաշխավորվել են Հայրենադարձվել այս տարի՝ առաջին հերթին, հնարավոր չէ: Նրանք պետք է ներառվեն երկրորդ հերթի ցուցակների մեջ, այսինքն՝ Հայրենադարձությունը ենթադրվում է եկող տարվա հունվար ամսին: Զեկուցելով վերահշիջալի մասին՝ խնդրում եմ ձեր ցուցումները:

Գ. Ա. Փահլեանյան

Հողվածներ

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱՎԿԵՑԻՆ ԵՎ 1830-1831ԹԹ. ԼԵՀԱՎԱՆ ԱՊՍՍԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԸ

XIX դարի լեհական ազգային-ազատագրական շարժումն ուղղված էր ընդդեմ 1815թ.-ի Վիեննայի վեհաժողովի եւ Արբազան դաշինքի որոշումների եւ նրանց սկզբունքները կենսագործող ռուսական, ավստրիական ու պրուսական միապետությունների: Ցարական Ռուսաստանի կազմում գտնվող Թագավորական Լեհաստանում Ալեքսանդր I-ը լեհ-հայաձագ քաղաքականություն էր վարում: 1820թ.-ից Հետո նա սկսեց մշտապես խախտել լեհական սահմանադրությունը եւ երկրով մեկ ոստիկանական ցանց ստեղծեց:

Նիկոլայ I-ը 1830թ. ցրեց լեհական սեյմը: Նա մտադիր էր լեհական բանակի ուղարկել Ֆրանսիա եւ Բելգիա՝ այնտեղ բռնկված Հեղափոխությունները ճնշելու նպատակով: Գրանից անհանգստացած լեհերը, 1830թ. նոյեմբերի 29-ին, Վարշավայում ապստամբություն բարձրացրեցին: Այս ապստամբությունը եվրոպական ազգային-ազատագրական շարժումների հիշարժան իրադարձություններից մեկն է, որն արձագանք է գտել նաև Հայ Հասարակական մտքում:

Լեհական ապստամբության տարիներին Հայ պարբերականներ լույս չէին տեսնում, իսկ Հետագա տարիների նրանց արձագանքները սակավադեպ են:

«Բազմավեպը», ներկայացնելով Նապոլեոն III-ի կենսագրությունը, պատմում է, որ 1831թ. լեհական ապստամբության ղեկավարներից Գնիարեւիչը եւ կոմս Բյազերը նրան առաջարկել են լեհական «բանակին առաջնորդությունը ... նաև խոստանալով իրեն ի վարձ ծառայություն, Լեհաստանի թագը»: Նա ընդունել էր այդ առաջարկությունը եւ պատրաստ էր ճանապարհ ընկնել Լեհաստան, երբ «Ռուսք տիրեցին Վարշավիտ եւ խափանեցին ամենայն ակնկալությունը»:¹

«Փարիզը»՝ ներկայացնելով Լեհաստանի Համառոտ պատմությունը, գրում է, որ 1830թ. նոյեմբերի 29-ին լեհ ժողովուրդը «Հեղափոխություն հանեց իր ազգային անկախությունը ձեռք բերելու նպատակով, սակայն չհաջողեցավ» եւ 1832թ. նրանց «ազգայնությունը վերջին մնացորդներն ալ վերացան»:²

¹ «Բազմավեպ», 1863, հունվար, էջ 20
² «Փարիզ», 1863, 8 մայիսի, թիվ 91:

Թերթը, թեև, լեհական ապստամբությունը սխալմամբ Հեղափոխություն է անվանում, բայց ճիշտ է ներկայացնում լեհերի պայքարի նպատակը եւ դրա հետևանքները: Ապստամբության ճնշումից Հետո, Նիկոլայ I-ը 1832թ. վերացնում է լեհերի սահմանադրությունը եւ դրա փոխարեն ընդունում «Օրգանիկ ստատուտ», որը նույնպես չի իրականացվում:

«Մասին» իրավափոխության գրում է, որ 1830թ. հուլիսին, Ֆրանսիայում բռնկված Հեղափոխության ազդեցություն տակ «Լեհացվոց ալ Հայրենասիրական եռանդն արժարձեցավ եւ նորեն ոտքի էլան իրենց ազգային անկախությունն ու ազատությունը ձեռք բերելու»:³ Թերթը ներկայացնում է ապստամբական գործողությունների ընթացքը եւ նշում, որ «լեհերը գլուցադնարար կոռուեցան տասնապատիկ ավելի զորքերի դեմ, բայց վերջապես ընկճեցան»:

Լեհերի պայքարի նկատմամբ իր համակրանքն է արտահայտել Մատթեոս Մամուրյանը: Նրա «Անկլիական նամականի» հերոսը՝ Հայազգի Ներսեսը, «իքնեակամ գացեր» էր Լեհաստանի «թշվառ, բայց ազատասեր որդվոց օգնության»: Մամուրյանն արգարացնում է լեհերի ապստամբությունը, բանի որ ամբողջ եվրոպան «ազատության համար ոտքի կելեր»: Այս պարագայում լեհերը չէին կարող «հանդարտ նստիլ», մանավանդ, որ Նիկոլայ I-ը նրանց «սահմանադրությունը ջնջել» ավելց:⁴

Նա լեհերի պայքարը գնահատում է «գլուցազնական» եւ Համոզմունք Հայտնում, որ նրանց պարտությունը վերջնական չէ, քանզի «ընկավ Լեհաստան շնչասպառ, այլ չճեռավ»:⁵

Լեհերի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ Հետաքրքրություն է դրսևորել «Մեսեոր» Հանդեսի խմբագիր Գրիգոր Մսերյանը: Նա «Արշալույս արարատյան» թերթում 1875թ. թարգմանաբար տպագրել է Ամենե Աշարի «Հեռավիճի երգումը», որը պատմում է լեհական 1830 թ. ապստամբության Հերոսներից Հովհան Զեյաքսիի եւ նրա դուստր Հեռավիճի մասին:

Լեհական 1830-1831 թթ. ապստամբությանը հանգամանորեն անդրադառնում է Վիեննայի Միխիթարյան միաբանության անդամ, լեզվաբան եւ բանասեր Լեւոնդ Հովնանյանը՝ «Պատմություն քաղաքականությունների և իրադական տերությունների ընդհանրապես» աշխատությունում (Վիեննա, 1860):

Արեւելահայ իրականության մեջ, լեհական ազատագրական պայքարի նկատմամբ, անտարբեր չի մնացել նաչատուր Արուստյանը: Նա «Դորպատյան օրագրում» գրում է պրոֆեսոր Ֆրիդրիխերի «Նա խոսի ընդ Պոլսակի միջ իվանովսկի» մասին եւ հիշատակում իր ունեցած գրույցը Շվաբի Հես՝ «Ջրույց վասն պատերազմին Պոլսո»:⁶

Մեսրոպ Թադիագյանը, թեև ողջունում էր ճնշվող ժողովուրդների ազատասենյությունը, սակայն վերապահում էր անում, երբ այդ պայքարն ուղղված էր Ռուսաստանի դեմ: Անդրադառնալով 1846թ. կրակովի դեպքերին, նա գրում է, որ ինչպես լեհերի 1830թ. ապստամբությունը, այնպես էլ այս ըմբոստությունը՝ «չարժե զարդար վրեժխնդրություն կայսեր ի պատուհաս անհանգիստ խելություն»:⁷

Արեւելահայ իրականության մեջ, Միքայել Նալբանդյանն այն եզակի դեմքն է, որն առանձնահատուկ կարեկցանքով ու ջերմությամբ գրել է լեհերի ազգային - ազատագրական պայքարի մասին: Նրա համոզմամբ ոչ մի ազգություն իրավունք չունի կուլ տալու եւ ոչնչացնելու մի ուրիշ ազգություն եւ 12 մլն լեհ ժողովրդի գոյությունը, նրա «Երեսնամյա բողոքը եւ արյունաթաթախ մարտիրոսությունը» ինքնին բավարար հանգամանք են, որպեսզի լեհերն անկախություն եւ ազատություն ունենան:⁸

Մ. Նալբանդյանը՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունում, պաշտպանում էր ցարական Ռուսաստանի ժողովրդներին

¹ «Մասին», 1863, 16 մարտի:
² Մ. Մամուրյան, Երկեր, Երևան, 1966, էջ 138:
³ Մ. Մամուրյան, Երկեր, Երևան, 1966, էջ 139:
⁴ Խ. Արուստյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ.6, Երևան, 1955, էջ 70,74:
⁵ «Ազգասեր» 1846, մայիս, թիվ 154
⁶ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ.4, Երևան, 1949, էջ 84

ագատագրական պայքարի միասնութունը եւ նրա մեջ տեսնում ազատութեան համար պայքարող ժողովուրդների հաջողութեան գրավականը:

Լեհական 1830-1831թթ. ապստամբութեան անդրադարձել է նաեւ Ներսես Աշտարակեցին, որն ապստամբութեան տարիներին Բեսարաբիայի Հայոց թեմի առաջնորդն էր: Լեհական սեյմը, 1831թ. հունվարի 25-ին, որոշում ընդունեց Նիկոլայ Ի-ին լեհական գահից զրկելու մասին: Այս որոշումն ուղեկցվեց զանգվածային հանրահավաքներով, որոնք անցան լեհ եւ ուս ժողովուրդների բարեկամութունը բնութագրող «Հանուն մեր եւ ձեր ազատութեան» կարգախոսով: Դրանից հետո, ցարիզմը գործնական քայլեր ձեռնարկեց լեհերի ապստամբութունը ճնշելու համար: Ռուսական զորքերը, գեներալ Դիրլեչի գլխավորությամբ, մտան Լեհաստան, իսկ ուս եկեղեցին՝ լեհերի «խոտովութունը» ճնշելու համար, ամենուրեք պատարագ մատուցեց: Այդ առիթով՝ Ներսես Աշտարակեցու կարգադրութեամբ, պատարագ տրվեց նաեւ Հայոց եկեղեցիներում: Սուրբեւ ներկայացնում ենք արքեպիսկոպոս Ն. Աշտարակեցու հրահանգն ամբողջութեամբ.

«Հոգեւոր կառավարութուն Հայոց Նոր-Նախիջևանի

Նորին կայսերական մեծութուն՝ ի մասին մանիֆեստի գրեցելու ի 25-ր Հունվարի հաղագս գնալու գորուց ուսաց վեհանդարտեցուցանելու գիտովարարն ի թագավորութուն Փոլշի կեհաց՝ բարեհաճալ է հրամայել, առնել սրբազան սինդոնի գկարգադրութուն գի ընթանոցն գմանիֆեստն յամ եկեղեցին կատարեսցի պաշտոնն մոլերնայի՝ սահմանեցալն վաս պատերազմուց ընդեմ թշնամիաց, այլ եկեղեցական պաշտամունս յուրաքանչյուր ավուրց ոչ վերականգնող գսահմանալ աղոթման վաս թշնամիաց, ըստ որում՝ շարժուին գորաց այժմ ոչ պատերազմուս ունի գգիտավորութուն, այլ կարճելոյ գիտովարարութուն:

Նորին գերագնացութուն մինիստրն հոգեւորական գործոց օտարացնից Դիմիտր Նիկոլայեւիչ Լուզովն ընկալիլ վաս այսորիկ՝ ի սրբազան սինդոնի պրոկուրորն գժմանութեան առաքելով առ մեզ գմի օրինակ մանիֆեստին ասպեցելոյ ի 29-ր Հունվարի գրութեամբ յորով համար 253, յառաջորդ կարգադրել ընդ ամենայն եկեղեցիս, մեզ հանգն եղիլ վիճակին վաս կատարմանց ըստ բարձրագույն հրամանայն:

Ըստ որում ոչ գոյ ի մեզ ըստ մերում լեզուի հարմարալ պաշտոն մոլերնային վաս պատերազմվեց, մենք ուրեմն առաքելով ընդ այսմ գորինակ մանիֆեստի, գրեմք հոգեւոր կառավարութեանդ ընդ ընկալնութ Հոսաջիկա կիրակին տալ ընթանուլ եկեղեցվո՞ ի քաղաքիդ եւ ի գյուղորացս գմանիֆեստն, եւ հավարտիլն տալ քարոզել սարկավագին, վասն խաղաղութուն ամբողջ աշխարհի եւ Հաստատութուն սուրբ եկեղեցվո գտեր աղաչեեսցուք:

Վաս յսելի լինելոյ տան սուրբ ձայնի աղաչանոց մերոց գտեր ողջ: Ողորմիաց մեզ տեր աստված մեր ըստ մեծի ողորմութեան, եւ քահանայ կցորդեսցե գաղթման ճաշու երրորդ ողորմիացի, անկալ առաջի քո բարերար եւ սրբազան ողորմութեան աստծուն:

Երբ այս ի ծունկս անկալ առհասարակ առիլ միաբան գշարական պաշտարարութեան գտաջին երեք տունն վաս ձայն հարցին: Սուրբ աստված հայր անկիգրն եւ Հավարտին՝ տեր ողորմիա ըստ կարգին սահմանեցելոյ հանդերձ հարմարավոր երգութն, եւ գկնի քարոզիցս սարկավագն:

Սուրբ Աստվածածինն եւ կամ սուրբ բարեխոս ստասցուք: Ընկալ տերն եւ Հայր մեր:

Արքեպիսկոպոս Հայոց Ներսես 1831թ. փետրվարի 13-ի Քիչնեւ»¹

Այս փաստաթղթից երևում է, որ ուսական զորքերի թագավորական Լեհաստան մտնելու եւ լեհ «խոտավարներին վերահանդարտացնելու» կապակցութ-

յամբ, սինդոն կարգադրել է բոլոր եկեղեցիներում մոլերնայի պատարագ մատուցել ընդգեմ թշնամիների:

Ուշագրավն այն է, որ ուսական զորքերի մուտքը Լեհաստան, ըստ սինդոնի կարգադրութեան, «ոչ թե պատերազմելու գիտավորութուն ունի, այլ խոտովութունը կարճելու»: Ներսես Աշտարակեցին այնուհետեւ Հայստում է, որ ուսաց կառավարութունում օտարագրիների հոգեւոր գործերով նախարար Լյուսովն ընդունվել է սրբազան սինդոնում: Դրանից հետո, նա հունվարի 29-ի գրութեամբ, առաջարկել է բոլոր եկեղեցիներում ընթերցել հունվարի 25-ի մանիֆեստը եւ մոլերնայի արարողութուն կատարել: Մեղանում, շարունակում է Ն. Աշտարակեցին, մեր լեզվով մոլերնային (մաղթանք-Ֆ. Մ.) համապատասխան արարողութուն չկա: Ուստի, նա իրեն վստահված թեմի եկեղեցիներին հրահանգում է բոլոր քաղաքներում եւ գյուղերում ընթերցել մանիֆեստը, որից հետո սարկավագին հորդորում հանդես գալ քարոզով՝ հանուն ամբողջ աշխարհում խաղաղութեան եւ սուրբ եկեղեցու կայունութեան: Ն. Աշտարակեցին, այնուհետեւ գրում է, թե ինչ կարգով եւ ինչպես պիտի ընթանա արարողակարգն ու ինչ է անելու սարկավագը, պատարագի ընթացքում:

Լեհական 1830-1831թթ. ապստամբութեան հետ առնչվող այս փաստաթուղթն, անշուշտ, չի կարող ամբողջական պատկերացում տալ լեհերի ագատագրական պայքարի վերաբերյալ Ներսես Աշտարակեցու դիրքորոշման մասին, առավել եւս, որ նրանում հիմնական խոսքը գնում է եկեղեցական արարողակարգի մասին: Այնուամենայնիվ, գրանից հետեւում է, որ ուսական եկեղեցին, ի պաշտպանութուն թագավորական Լեհաստանում ցարիզմի վարած քաղաքականութեան, կայսրութեան բոլոր մասերի եկեղեցիներում պատարագ էր մատուցում՝ «ընդգեմ թշնամյաց», ասել է թե՛ ընդգեմ լեհ ապստամբների եւ ի աջակցութուն ցարի:

Ներսես Աշտարակեցին, որպես Բեսարաբիայի Հայոց թեմի առաջնորդ, անառակելիորեն կատարում էր ուս սինդոնի կարգադրութունը եւ Հայոց եկեղեցիներին հրահանգում՝ լեհական ապստամբութեան ճնշման կապակցութեամբ նույնպես պատարագ մատուցել: Դրանով Ն. Աշտարակեցին իր համերաշխութունն էր արտահայտում ուսաց եկեղեցու հետ եւ գրեւորում իր համաձայնութունը լեհական ապստամբութեան ճնշման կապակցութեամբ ցարի վարած քաղաքականութեան առնչութեամբ:

Հատկանշական է, որ լեհական ապստամբութունը գատապարտում էր ոչ միայն ուսական ուղղափառ եկեղեցին, այլեւ Հռոմի Գրիգորի XVI պապը: Նա լեհ ապստամբներին անվանում էր «խոտավարներ», որոնք համարձակվել են ոտքի ելնել «օրինական իշխանութեան» դեմ:²

Անկախ այս ամենից, Ն. Աշտարակեցին, չէր կարող գրվատել լեհերի պայքարը, որն ուղղված էր Ռուսաստանի դեմ: Հայտնի է, որ նա հայ ինքնավարական բաղձանքների գաղափարակիցներից էր եւ այս Հենքի վրա՝ գոհ դարձավ Ի. Գալսեփեչի սաղաթներին ու ցարական իշխանութունների կողմից ուղարկվեց Բեսարաբիա: Սակայն դա չխանգարեց, որպեսզի նա առաջվա պես մնա ցարական Ռուսաստանի համակիրների թվում եւ ուսումնասիրողներում, երբ խոսքը գնում էր Ռուսաստանի դեմ բմբոստացած լեհերի պայքարի ճնշման մասին:

Ֆելիքս Մովսիսյան
պատմական գիտութունների թեկնածու

НЕРЕС АШТАРАКЕЦИ И ПОЛЬСКОЕ ВОССТАНИЕ 1830-1831ГГ.

РЕЗЮМЕ

Кульминацией польской национально-освободительной движения XIX века стало восстание в Варшаве 29 ноября 1830года. Отзывы этого

¹ Հայաստանի Ազգային արխիվ, ֆ.Պ-54, ց. 1, գ. 48, թ. 15:

¹ История южных и западных славян. Ответ ред. С.А. Никитин, М, 1957, стр.166

знаменательного события, позднее появились в страницах западноармянской периодической печати “Базмавен”, “Париж”, “Масис”. Свою симпатию к польской борьбе выразила как западноармянская (Матевос Мамурян, Григор Мсерян, Гевонд Овнанян), так и восточноармянская (Хачатур Абовян, Микаэл Налбандян) интеллигенция.

В годы польской вышеуказанной восстания, главой армянской епархии в Бесарабии был Нерсес Аштаракец. Беспрекословно исполняя все указания русского Синода, он осуждал польское восстание, тем самым выражая своё согласие с политикой царя.

Феликс Мовсисян
кандидат исторических наук

ՀԾ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ 1890-1895 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀԾԴաշնակցութիւնն արդէն իր ձեւավորման շրջանում Անդրկովկասի տարբեր նահանգներում ու գավառներում հիմնել է իր խմբերն ու կոմիտեները: Դրանց շարքում, 1890-ական թվականների սկզբներին, ամենից ավելի գործունյա եւ ակտիվ կառույցը Ալեքսանդրապոլի խումբն էր, որն անելով ու ծավալելով՝ հետագայում ձեռք բերեց կենտրոնական կոմիտեի կարգավիճակ:

Ալեքսանդրապոլում Ներկայումս՝ Գյումրի/ ՀԾԴաշնակցութիւյան արագ ընդարձակման եւ հզորացման գաղտնիքը թաքցնելով էր այդ ավանդապատ հայկական ուստանում տիրող հայրենասիրական մթնոլորտի ու արհեստավորական փոքր բաղաբրին բնորոշ՝ սոցիալական խոր բեւեռացման բացակայութիւյան մեջ: Բացի այդ, Ալեքսանդրապոլը լինելով Թիֆլիսից դեպի Արեւմտյան Հայաստան տանող մի քանի ճանապարհների խաչմերուկում, ամենահարմար վայրն էր ՀԾԴաշնակցութիւյան՝ Անդրկովկասում կուտակվող ուժերի համախմբման եւ Երկրի հետ կապող օդակ դառնալու տեսանկյունով: Ուստի պատահական չէ այն փաստը, որ մինչեւ ՀԾԴաշնակցութիւյան Հիմնադիր ժողովները ձեւավորված եւ ապագա կուտակցութիւյան միջուկը դարձած՝ «Դրոշակ» խմբի մասնաճյուղերը կազմելու եւ այդ ժամանակ Շիրակում գտնվող Սարգիս Կուկունյանի հետ կապ պահպանելու համար, Քրիստափոր Միքայելյանը, արդէն 1890թ. հուլիսին, այստեղ է ուղարկում իր մերձավոր զինակիցներից մեկին՝ ալեքսանդրապոլցի Մարտին Մարտիրոս/Շաթիրյանին: Վերջինս ձեւավորեց «Դրոշակ» խմբի մասնաճյուղը, որը կուտակցութիւյան հիմնադրումից հետո դարձավ Ալեքսանդրապոլի առաջին խումբը: Այդ խմբի գրեթե բոլոր անդամները հետագայում դարձան հայտնի գործիչներ՝ իրենց հարազատ քաղաքում ու գավառում, իսկ մի մասը նաեւ խոր հետք թողեց Հայ ազատամարտի պատմութիւյան մեջ: Ալեքսանդրապոլի առաջին խմբի անդամներն էին՝ Թադեոս Խղմայանը, Ավետիք Մալոյանը, Ալեքսանդր Պետրոսյանը/Պետո/, Ենովք Գյումրյանը, Վաղարշակ Ժամակոչյանը, Ավետիս Լարիրյանը/Պաղվայի Վաղ/ եւ Տեր-Նորեն Արզարյանը՝:

Ալեքսանդրապոլում այդ օրերին բուռն ոգևորութիւյան մթնոլորտ էր տիրում: Իզդրումի ընդհարման, Գում-Փափուի ցույցի մասին ստացվող խիստ չափազանցված տեղեկութիւնները տարածվում էին գյումրեցիների շրջանում ու

միահնչուովում ուռւ-թուրքական սահմանադրիսին՝ Մատարերի շրջանում հուլիսի /Հարություն Տեր-Մարտիրոսյան/ մղած կռիվների եւ վերջապես՝ Ալեքսանդրապոլ ժամանած Սարգիս Կուկունյանի կողմից նախապատրաստվող արշավանքի մասին առասպելականացված պատմութիւններով:

Միաժամանակ, ՀԾԴաշնակցութիւյան Ալեքսանդրապոլի առաջին խմբի անդամները մտածում էին անձամբ Երկիր անցնելու եւ Հայ ազատամարտին գործուն մասնակցութիւյուն ցուցաբերելու մասին: Նրանցից առաջինը կուտակցութիւյան հնագույն գործիչ Ալեքսանդր Պետրոսյանն էր, որը 1890-ի վերջերին անցնելով Իրան, իսկ այնտեղից էլ քիչ անց՝ թափանցելով Վան, դարձավ ՀԾԴաշնակցութիւյան ներկայացուցիչը Վասպուրականում եւ Վանի 1896թ. հունիսյան ինքնապաշտպանութիւնից հետո նահատակվեց նահանջի ճանապարհին՝ Կարահիսար լեռան լանջին:

Խմբի մյուս անդամը՝ Ալեքսանդրապոլի գավառում ՀԾԴաշնակցութիւյան կառույցները ձեւավորող Ավետիք Մալոյանն էր. «Մոդեռանդ գաղափարական ուսուցիչ եւ գերվիշ մը իր էութեամբ», որը չկարողացավ գիմանել Երկրից շարունակարար ստացվող տեղեկութիւնների ցավին ու դառնութիւյանը եւ ձմռան ցրտերին մեկնելով այնտեղ, գոհվեց լեռներում՝ ձյան հյուսիս տակ:

Ալեքսանդրապոլի առաջին խումբը, իր մեջ ներառել էր նաեւ արհեստավորներից ու մանր առևտրականներից բաղկացած բավականին ուժեղ կամքի տեր ու գործունյա անհատներին: Այդ նվիրյալ գործիչների շարքում առանձնահատուկ տեղ էր գրավում Ավետիս Լարիրյանը՝ Պաղվայի Վաղոս, գնեքի ու գինամթերքի հայթայթման, հայրուկներին թաքցնելու, ցարական ժողաբարմներին իր «պաղվայում» համապատասխան «կոնֆիցիոսի» հասցնելով՝ բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները նրանց գլխից դուրս բաշխու անդուգական վարդեաբը: Պաղվայի Վաղոսին բազմիցս փորձում էին մեղադրանքներ ներկայացնել ցարական իշխանութիւնները, բայց ամեն անգամ ստիպված էին լինում կարճել իրենց իսկ սկսած հետաքննութիւնները, քանի որ Ավետիս Լարիրյանը միշտ դուրս էր պրծնում նրանց հյուսած ցանցերից: Մի այդպիսի Ալեքսանդր գործ էլ կազմվեց 1891 թվականի փետրվարին հուլիս Ալեքսանդր Արթուրի կատարած մատնութիւյան եւ ապա Ալեքսանդրապոլում նույն թվականի մարտի 25-ին տեղի ունեցած ձերբակալութիւնների ու խուզարկութիւնների արդյունքում: Սակայն Պաղվայի Վաղոս կարողացավ այնպես դասավորել վկաների ցուցմունքները, որ ցարական ոստիկաններին համոզեց, թե իր սրճարանում հայտնաբերված գինամթերքը հենց իր մրցակից՝ հուլիս առևտրական Ալեքսանդր Արարամովին է պատկանում: Նույն ձերբակալութիւնների արդյունքում, թեև ոստիկանների ձեռքն ընկան մինչ այդ Կ.Պոլիս ուղարկված ՀԾԴաշնակցութիւյան անդամներ Մարտիրոս Մարգարյանը /Մաֆո/ ու Մկրտիչ Լազարյանը եւ անգամ «Կենտրոնի» անդամ Լեւոն Սարգսյանի կողմից 1891թ. մարտի 5-ին նրանց ուղարկված գաղտնագիր նամակը, բայց հիմնական փաստաթղթերը հաղողեց ոչնչացնել³: Ձերբակալութիւններից հետո ոստիկանութիւյան մոտ ստիկ կապիտաններ առաջացան Ալեքսանդրապոլում եւ Թիֆլիսում գործող առանձին անհատների նկատմամբ, բայց ահա Ալեքսանդրապոլի կազմակերպութիւյուն ոչ միայն չառուցեց, այլեւ էլ ավելի ընդարձակվեց ու հզորացավ: Անդամագրվեց ոչ միայն նրա ղեկավար միջուկը՝ համայնվելով Վահան Փափազյանի, Լեւոն Գյումրույանի եւ այլ գործիչների կողմից, այլեւ ընդլայնվեց գեներլ ու գինամթերքի հայթայթումով ու տեղափոխմամբ գրավող հայրուկներին ու կազմակերպիչներին շրջանակը:

Միաժամանակ, Ալեքսանդրապոլից ՀԾԴաշնակցութիւնը սկսեց տարածվել եւ իր կազմակերպական ցանցը ձեւավորել նաեւ գավառի առանձին գյուղերում: Աշխատանքները տարվում էին շրջիկ քարոզիչների միջոցով, որոնց շարքում իր լուրջ դերակատարութիւյուն ունեցավ նաեւ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը /Պուսան/: Հենց շնորհիվ Ալեքսանդրապոլում ու նրա շրջակա

¹ Տե՛ս Մ. Ե-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առւա՝ Ն.Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, թիվ 5, էջ 37:

¹ Վահան Փափազյան, Իմ յուշերը, հատ. առաջին, Պոսթըն, «Հայրենիք»-ի տպարան, 1950, էջ 25:

² Տե՛ս Ռուսաստանի Դաշնութիւյան պետական արխիվ, Ոստիկանութիւյան ղեկավարամենտ, 7-րդ գործավարութիւյուն, 1891, Գ.60, թ.19-22:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 20:

գլուղերում ձեռնարկված ՀՅԴաշնակցության կառույցի, հնարավոր եղավ 1895-ի ամռանը Շիրակում ձեռնարկել երկիր անցնող Աբրահամյան Աղբյուրի /Ալարզանյան/ եւ Հրաչյուրի /Արմենակ Գազարյան/ խմբերը: Համագործակցելով Կարսի կենտրոնական կոմիտեի հետ, Ալեքսանդրապոլի կենտրոնական կոմիտեն իր վրա վերցրեց այդ խմբերին եւ՝ գեներ, եւ՝ մարդուժ, եւ՝ ուղեկիցներ մատակարարելու գործի կարեւոր մասը: 1890-ականների կեսերին այստեղ գործող ՀՅԴաշնակցության կազմակերպական կառույցի ամրապնդմանը մեծապես նպաստեց Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կողմից հայ ազատամարտի նվիրյալ-հոգեւորական Բագրատ վարդապետ Թավադարյանին Ալեքսանդրապոլի առաջնորդ նշանակելու փաստը: Իր կարճատեւ պաշտոնավարման շրջանում, որն ընդհատվեց՝ ցարական ոստիկանության ձեռնարկած Հայածանքների եւ դրան հաջորդած՝ Բագրատ վարդապետին ելիզավետպոլ տեղափոխելու մասին Մ.Խրիմյանի 1896թ. փետրվարի 6-ի հրամանի պատճառով, վերջինս կարողացավ ձեռնարկել կուսակցության ընդհատակյա կառույցի յուրահատուկ «վերնաշենքը»՝ Սովետյոց մասնաժողովի տեսքով: Նման «տանիքների» միջոցով գործելու մարտավարությունը հետագայում լայնորեն կիրառվեց ՀՅԴաշնակցության կողմից նաեւ այլ վայրերում:

Այսպիսով, արդեն 1890-ական թվականների կեսերին ՀՅԴաշնակցու-թյունն Ալեքսանդրապոլում հասել էր կազմակերպական ու քաղաքական հասունացման այն աստիճանի, որ ի վիճակի էր գործել միանգամից երեք հար-թույթյունների վրա.

ա/ գեների հայթայթումը եւ մարտական խմբերի ձեռնարկումն ու ուղարկումը,

բ/ այդ գործը սպասարկող, բայց ժողովրդի հետ ավելի լայնորեն շփվող կազմակերպական կառույցի ընդարձակումը,

գ/ «տանիքների» ձեռնարկումը՝ ՀՅԴաշնակցության կողմից անկատ կերպով վերահսկվող բարեգործական, մշակութային եւ այլ կազմակերպությունների միջոցով:

Ավարտելով, կարող ենք առանց դուլզն ինչ չափազանցության պնդել, որ ՀՅԴաշնակցության պատմության մեջ փաստորեն հենց Ալեքսանդրապոլի /ուսակցական անվանումը՝ Քար կամ Քարոտ/ կենտրոնական կոմիտեությունն է հանդիսացել նման բազմաշերտ ու բազմաճյուղ գործունեության իրականացման առաջին օրինակը: Դրա մասին է վկայում մեր կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող փաստաթուղթը (հավելված 1), որը երեւանի ժանդարմական վարչության պետի օգնական ռոտմիստր Կոնոպցեւի մանրամասն՝ երեք հատորից բաղկացած հաշվետվության սեղմ ամփոփագիրն է, «Հարկական հուշումներին» եւ նրանց մասնակցող գործիչների վերաբերյալ: Առավել կարեւոր ու հետաքրքրական է հաշվետվության երկրորդ հատորը, որի ամփոփագիրը ներկայացնում ենք ամբողջովին:

Գեներալ Խուզիչյան
պատմական գիտությունների թեկնածու

**ДЕЯТЕЛЬНОСТЬ А.Р.Ф. ДАШНАКЦУТЮН В
АЛЕКСАНДРАПОЛЕ В 1890-1895гг.**

РЕЗЮМЕ

Александропольская группа /хумб/, а впоследствии и центральный комитет А.Р.Ф. Дашнакцутюн являлись наиболее сильной и активной организацией этой партии в Закавказье на протяжении 90-ых годов 19-го столетия. Александропольская организация занималась вопросами доставки оружия, формирования боевых групп, и их отправки в Западную Армению. Для решения этих задач организация опиралась на поддержку интеллигенции, духовенства, торговцев, ремесленников и крестьянства всего уезда. Именно в Александрополе А.Р.Ф. Дашнакцутюн впервые сочетал нелегальную

деятельность с созданием сети различных благотворительных организаций, - занимающихся оказанием помощи беженцам из Западной Армении.

Геворг Худинян
кандидат исторических наук

Հավելված 1

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ՌՈՏՄԻՍՏՐ ԿՈՆՈՎՑԵՎԻ ԳԱՂՏՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՐԱՍԱՄԵՆՏԻՆ

N 21 30 հունվարի 1893թ.
Ալեքսանդրապոլ

На основании пункта 7 циркуляра Департамента Полиции 1887 года за N 1850, имею честь донести Департаманету, что находящееся у меня в производстве, в порядке 1035ст. Уст. Угол. судопроизв., дознание о тайном армянском сообществе, имеющем целью поднять вооруженное восстание против правительства, в пределах Турецкой Империи, ныне производством окончено и представлено в установленном порядке. Дознание это представляет из себя 3 отдельные части /тома/, с особым приложением административного производства в порядке охраны о степени участия армян Александропольского уезда в армянском движении, выразившемся первоначально в нападении вооруженными шайками в некоторых пунктах. Русско-Турецкой границы на Турецко-подданных курдов, и о выяснении действительной цели этого брожения, при чем каждая из них может быть вполне обособлена и, хотя все они имеют одно содержание-тайная агитация к возманию армян, однако, не могут составить одного, так сказать, цельного, не разрывного и неделимого организма. Обстоятельство это обуславливается тем, что каждая часть имеет своим предметом ту или другую сторону агитации...

...Во вторую часть/том/ включены все акты дознания, а также и документы, относящиеся до исследования виновности в принадлежности к тайному сообществу армян: Микирчича Казарянца, Мартироса Маркарянца и бывших учителей Александропольского армянского училища Еновка Генджанца, Вагаршака Жамокочанца и Татевоса Хзмалянца и жителей: гор. Тифлиса, сына губернского секретаря Николая Матинянца и гор. Карса Варшана Тертадова.

В общем, дело о первых двух из поименованных лиц, представляется в следующем:

25 марта 1891 года вследствие телеграммы Казахского Уездного Начальника о задержании и высылке этапом, выехавших ночью 24-го того же марта из гор. Казаха в Турцию без паспортов, Елисаветпольских жителей Саркиса Мокиева и Павла Каграманова были задержаны в гор. Александрополе местною полициею того марта 25 житель гор. Ахалкалака Мартирос Маркарянц и учитель Микирчич Казарянц, при чем у последнего вовсе не оказалось паспорта, а у первого заграничный, выданный Тифлиским Губернатором 7-го ноября 1890 года за N 260 и указывающий на прожительство его, Маркарянца, в Константинополе с 19 ноября 1890 по 12 февраля 1891г и кроме того при обыске у него были отобраны записная книжка и письмо на армянском языке от 5 марта 1891 года с подписью,

дознанием не установленного лица “Саркисянц”,* заключающая себя шифрованные записи, которые в связи с сообщением названного Уездного Начальника, и послужили, собственно, мотивами к привлечению Маркарянца к дознанию в качестве обвиняемого, но выяснить значение сих записей, как и цель его поездки в Турцию, дознанием не представилось возможным. По словам же самого обвиняемого шифры эти суть безмыслица, явившаяся результатом его досужьяго времени и начертаны им для вящей таинственности. Прямых же улик против Казарянца, как участника в так называемом армянском движении, дознанием не добыто и в приписываемом ему преступлении он был заподозрен, во 1-х, фактом уничтожения им во время своего ареста каких то бумаг и фотографических карточек и, во 2-х, еще тем обстоятельством, что данное им объяснение об оказавшихся у него при аресте 200 рублях, с ссылкой на Елисаветпольского епископа Григора Агванянца, последним подтверждено не было, не смотря на посланные ему Казарянцем 2 телеграммы предупредительного содержания. Что-же касается обвинения Генджанца, Жамокочанца и Хзмалянца, то никаких фактических данных дознанием также не добыто и самое обвинение построено лишь на показаниях обвинителей: Помощника Полицейского пристава Мельянца и городского Ходакова и сведениях, добытых агентурным путем, коими выяснилось, что эти 3 лица, не задолго до арестования Маркарянца и Казарянца, входили с последними в сношения и известны за лиц, сочувствующих идеи освобождения армян из под ига Турецкого; тем не менее, однако, в свое оправдание ничего заслуживающего внимания не представили, не признав себя к тому же виновными в предявленном им обвинении. Почти одновременно с привлечением вышепоименованных лиц, был привлечен к дознанию Николай Матинянц, а на основании данных, добытых Тифлисскою полициею агентурным путем, указывающих между прочим на его сношения с обвиняемыми Маркарянцем, Казарянцем и заподозренным в политической неблагонадежности, состоящим под негласным надзором, бывшим студентом Петровской академии Степаном Абрамянцем** в бытность последних в Тифлисе в 1891г и, главным образом, на активное его участие в агитации армян к борьбе против Турции, выразившееся, во-первых, распространением печатных прокламаций революционного содержания, один экземпляр коих приобщен к делу в качестве вещественных доказательств и начинается: “Армяне! Армянский вопрос ныне входит в новый фазис.... и оканчивается... армяне, соберемся вместе и храбро подвинем вперед Св. Дело-освобождения Отечества!” с подписью “Армянский революционный союз”,*** и во-вторых, письменными сношениями с Елисаветпольским учителем Микиртичем Тер-Мартirosянцем и неким Геворком Арутюновым — личность последнего не установлена,- принимавшими также участие в названном движении, как видно из приложенных к делу переводов писем Матинянца к первому из них, от 12 марта 1891г “о имении 2-х надежных человека для “дела”, стоющего миллион”и к второму от 8 мая того же 1891г о том, что армяне должны быть или армянами, или уничтожены.

Преступная деятельность последнего из указанных выше лиц, Вартана Тертадова, выразилась в вербовке в гор. Александрополь в 1890 г. волонтеров из армянской молодежи и в агитации к восстанию местных армян против Турции, в чем он изобличается свидетельским показанием некоего Авака

* Неименный человек, в записях названный “Саркисянц”, в записях названного Уездного Начальника, и послужили, собственно, мотивами к привлечению Маркарянца к дознанию в качестве обвиняемого, но выяснить значение сих записей, как и цель его поездки в Турцию, дознанием не представилось возможным.

** Упоминается в Армянском движении, в записях названного Уездного Начальника, и послужили, собственно, мотивами к привлечению Маркарянца к дознанию в качестве обвиняемого, но выяснить значение сих записей, как и цель его поездки в Турцию, дознанием не представилось возможным.

*** Источником является Армянский революционный союз, в записях названного Уездного Начальника, и послужили, собственно, мотивами к привлечению Маркарянца к дознанию в качестве обвиняемого, но выяснить значение сих записей, как и цель его поездки в Турцию, дознанием не представилось возможным.

Маркарова, но лица, содействовавшие Варшаму?, как и сами волонтеры, дознанием не установлены.

Ռուսաստանի Դաշնութիւնի պետական արխիւի, Ռատիկանութեան դեպարտամենտ, 7-րդ գործադարութիւն, 1891թ., ֆ.102, գ.60, Թ.18-22: Ձեռագիր:

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՊԱՇԵՆՈՒՄԸ ԵՎ ԿՐԴՈՂԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՆՈՒՄ ԸՍՏ 1897Թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ

XIX դարի վերջին Ռուսաստանում տեղի ունեցող հիմնարար փոփոխություններն առաջ բերեցին համընդհանուր մարդահամար անցկացնելու անհրաժեշտություն՝ երկրի սոցիալ-տնտեսական և մշակութային մակարդակը բնութագրելու, և «որոշ տեղերում գոնե մթերային հարցին ճիշտ լուծում տալու» համար: Չնայած որոշ աչքի ընկնող թերություններին, 1897թ. մարդահամարը ավելի այդ հնարավորությունը, քանի որ դրանում պարունակվող տվյալներն ավելի ստույգ էին, քան «այն ենթագրությունները, որոնցով դրանից առաջ սնվում էին գիտությունը և հրապարակախոսությունը»: Այն հատուկ նշանակություն ձեռք բերեց մասնավորապես հայ ժողովրդի համար, քանի որ պարսկական և թուրքական աշխարհագրերն ու հաշվեգրումներն իրենց այլևս սպառել էին, իսկ ուսուսական ուսումնական թերի էին: Բացի այդ, մարդահամարի տվյալների շնորհիվ, հնարավոր եղավ ցույց տալ հայ էթնոսի տեսակարար կշիռը Ռուսական կայսրությունում, նրա մասնակցությունը երկրի սոցիալ-տնտեսական կյանքին և ցարիզմի ներքին քաղաքականության ազդեցությունը հայ ժողովրդի ընդհանուր զարգացման վրա XIX դարի երկրորդ կեսին:

Եվրոպական Ռուսաստանում հայերը բնակություն էին հաստատել դեռևս Կիևյան Ռուսիայի ժամանակաշրջանում: X-XI դարերում Կիևում¹, իսկ XII-XIII դարերում Մոսկվայում² հիմնվել էին փոքրիկ գաղթօջախներ, որոնք գործունե մասնակցություն ունեին փոխադարձ առևտրա-տնտեսական հարաբերություններում: Ավելի վաղ ժամանակաշրջանում հայ բնակչությունը հաստատվել էր Ղրիմում /VIII- / և Մերձվոլգյան շրջանում /VIII-IXդդ./: Հետագա ժամանակահատվածում հայ բնակչությունն այս տարածաշրջանում աստիճանաբար աճեց թե՛ բուն Հայաստանից և թե՛ կայսրության այլ նահանգներից տեղափոխվածների հաշիվին: Ընդ որում տարածաշրջանի համար բնորոշ էր ոչ միայն հայ, այլև կայսրության այլ ժողովուրդների միգրացիան: Եվ XVIII-XIXդդ. առաջին կեսին այս տարածաշրջանը համարվում էր Ռուսական կայսրության ամենախիտ բնակեցված շրջաններից մեկը. 1719-1857թթ. ընթացքում միայն Մերձվոլգյան շրջանի բնակչությունը 52220-ից հասավ

¹ Котельников А. История производства и разработки Первой всеобщей переписи населения Российской империи 1897 года. СПб, 1909, с.9

² Кадошцев Б.П. Профессиональный состав населения Европейской России по данным переписи 1897 года. СПб, 1909, с.52.

³ Արքահամայն Ա.Գ. Համառոտ ուղղագծեր հայ գաղթավայրերի պատմության, ՀԱ. Եր., 1964, էջ.118.

⁴ Карамзин, История государства Российского.

1355528-ի՝ Այս շրջանը նաև Հայկական ամենահին գաղթավայրերից է եղել, քանի որ Հայերը Վոլգայի գետալիս ճանաչել են այդ ուղիով առևտրական կապեր էին հաստատել Հարեանների Հետ դեռևս VIII-IX դարերում: Այստեղ էր հաստատվել սելջուկների հետապնդումներից եւ կործանվող Անիի թագավորութունից հեռացած Հայությունը: XVI-XVIII դարերում Կազանի գրավումից հետո Հայ գաղթօջախները համալրվեցին նոր բնակիչներով, իսկ ճանապարհը նույնիսկ ստացավ «АРМЯНСКАЯ ДОРОГА» անվանումը:¹ Աստրախանում բնակվող Հայերի թիվը 1730-1740-ական թթ. Հասել է 1512 մարդու, իսկ 18-րդ դարի վերջին գրանցված է եղել արդեն 1200 տուն բնակիչ: Սակայն թիվաբարակ Հայաժամայրների հետեանը մեծ թվով Հայ ազգաբնակչություն ստիպված է եղել հեռանալ այս վայրերից եւ համարել Ղրիմի Հայկական գաղթօջախը: Ղրիմի կամ Տավրիկայի նահանգում Հայերը բնակություն էին հաստատել դեռևս միջնադարում՝ հեռեկեղծ Հայ գորմասերին եւ առևտրականներին: Հայ գաղթօջախներ էին հիմնվել Թեոդոսիայում /Կաֆա/, Խերսոնեսոսում եւ այլուր, որոնք 14-րդ դարում ստվարացել էին մեծաթիվ Հայ նոր գաղթականներով, որոնք սակայն որոշ ժամանակ անց ստիպված էին բնակություն նոր վայր բնարել:² Ղրիմից գաղթած Հայերը սկզբում բնակություն էին հաստատել Ազովում, որտեղ դեռ վաղնջական ժամանակներից ապրելիս է եղել 63 Հայ եւ Հույն ընտանիք: Սակայն, չգիրձանալով ծանր տնտեսական պայամաններին, Հայերը նոր բնակության վայր են պահանջում ուսական կառավարությունից՝ 1779թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով, Եկատերինա II-ը Հայերին իրավունք է տալիս բնակվելու «Հույների հարեանությունում Ազովի եւ Սբ.Դմիտրի ամրոցի միջև, Չալդր գետի հոսանքի ի վայր» եւ հատկացնում «նրանց 12 000 դեսյատին հող»:³ Հայերն այստեղ հիմնում են Նոր-Նախիջևան քաղաքը եւ 5 գյուղ:⁴ Չալդր, Մեծ Սալա, Փոքր Սալա, Թոփեի եւ Նիսեսա /19-րդ դարի վերջին սրանք մասնում էին Դոնի մարզի կազմի մեջ/: Ըստ Արդուսթյանի տվյալների, 1781թ. նոր Նախիջևանում եւ նրա շրջակայքում ապրելիս է եղել շուրջ 3000 տուն 12 000 շունչ բնակչությամբ:⁵ XVIII դ. Գնեստր գետի հովտում Հայերի կողմից հիմնվել էին նաև Գրիգորիսպոլիս Հայկական քաղաքը եւ նրա շրջակայքի հայաբնակ գյուղերը /Բեսարաբիայի նահանգ/: XVII-XVIIIդդ. փոքրաթիվ Հայ բնակչություն է ապրել նաև Ուկրաինայում՝ Լվովում, Կամենեց-Պոդոլսկում, Մոզիլյովում, Կիևում եւ այլուր:⁶ Այստեղ բնակություն էին հաստատել Տրանսիլվանիայից, Ղրիմից⁷ եւ այլ վայրերից եկած Հայերը: Նրանք հիմնականում զբաղվել են առևտրով, 1761թ. միայն Ուկրաինայում 12 խոշոր վաճառականից 4-ը Հայ էր: 1812թ. տեղեկություններում ասվում էր, որ Հայերն ապրում էին հիմնականում քաղաքներում եւ տեղամասերում, ինչպես նաև գյուղերում, գրագիտում էին

արհեստներով եւ առևտրով, իսկ գյուղական բնակիչները՝ Հողագործությամբ եւ այգեգործությամբ:¹

Ռուսաստանի Հնագույն Հայկական գաղթօջախներից էին նաև Մոսկվան եւ Սանկտ-Պետերբուրգը: Չնայած Հայերի թվին այստեղ մեծ չի եղել /1754թ. Մոսկվայում ապրելիս են եղել ընդամենը 22 տուն՝ 150 շունչ բնակչությամբ/, այնուամենայնիվ նրանք զգալի դեր են կատարել Հայ-ուսական հարաբերությունների կայացման եւ զարգացման գործում:

1897թ. մարդահամարի տվյալներով, Եվրոպական Ռուսաստանի 50 նահանգում, որոնք զբաղեցնում էին 4 230 526,6 վերստ՝ տարածք՝ 125 640 021 մարդ բնակչությամբ, պահպանվել եւ նույնիսկ քանակապես ավելացել էր Հայ բնակչությունը: XIX դ. վերջին այստեղ ապրում էր 49329 Հայ /որից 26903-ը՝ արական, 22426-ը՝ իգական սեռի/, որոնք հիմնականում բնակվում էին Դոնի մարզում՝ 27234 մարդ /որից 13971-ը՝ արական, 13263-ը՝ իգական սեռի/, Տավրիկյան նահանգում՝ 8938 մարդ /որից 5094-ը՝ արական, 3844-ը՝ իգական սեռի/: 2080 Հայ /որից 1034-ը՝ արական, 1046-ը՝ իգական սեռի/ բնակություն էր հաստատել Բեսարաբիայում, եւս 4270-ը՝ 2087-ը՝ արական, 2183-ը՝ իգական սեռի/, Աստրախանի նահանգում: Հայերի քանակը փոփոխության էր ենթարկվել նաև Մոսկվայում՝ հասնելով 1604-ի /որից 1177-ը՝ արական, 427-ը՝ իգական սեռի/, Օդեսայում բնակվում էր 1401 մարդ /որից 931-ը՝ արական, 470-ը՝ իգական սեռի/ եւ Սանկտ-Պետերբուրգում՝ 753 մարդ /որից 527-ը՝ արական, 226-ը՝ իգական սեռի/: Մնացած բնակավայրերում նրանց բնակություն տառանվում էր 1-500-ի սահմաններում եւ աննշան տոկոս էր կազմում: Ընդհանուր առմամբ Հայ բնակչությունը կազմում էր Եվրոպական Ռուսաստանի նահանգների բնակչության 0,05%-ը կամ ամբողջ Հայ բնակչության 4,20%-ը: Հայերի ճնշող մեծամասնությունը պատկանում էր Հայ առաքելական եկեղեցուն՝ 44160 մարդ /որից 23476-ը՝ արական, 20684-ը՝ իգական սեռի/ կամ Հայ բնակչության 89,52%-ը: Որչափ թիվ էին կազմում նաև կաթոլիկ՝ 1439 մարդ /որից 821-ը՝ արական, 618-ը՝ իգական սեռի/ կամ Հայ բնակչության 2,91%-ը, եւ ուղղափառ՝ 622 մարդ /որից 401-ը՝ արական, 221-ը՝ իգական սեռի/ կամ Հայ բնակչության 1,26%-ը, Հայերը: Տարածաշրջանում չնչին տոկոս էին կազմում մահմեդական Հայերը՝ 23 մարդ, որից 18-ը՝ արական, 5-ը՝ իգական սեռի: Ի դեպ, այստեղ եւս, մասնավորապես Խերսոնի նահանգում, հանդիպում ենք հուլդայականության հետեւող Հայերի՝ 2 տասնորդ էւ 1 կին, որոնք, հավանաբար, մայրենի լեզուն Հայերենը ցույց տված հերեան էին: Ընդհանրապես հարկ է նշել, որ 1897թ. մարդահամարի տվյալներով շատ դեպքերում հնարավոր չէ ստույգ որոշել տվյալ ազգության ներկայացուցիչների կոնկրետ թիվը, քանի որ լեզուների վիճակագրական տվյալները միշտ չէ, որ համընկնում են ազգությունների վիճակագրության, ինչպես նաև լեզուների տեղաբաշխումն ազգությունների տեղաբաշխման հետ: Բացի այդ, այն բնակավայրերում, ուր տվյալ ազգության /այդ թվում եւ Հայերի/ քանակությունը չէր գերազանցել 500-ը, նրա մասին առանձին նշում չէր կատարվել: Այդ իսկ պատճառով, հնարավոր չէրզավ ճշտել Հայերի անտեսությունների, ինքնուրույն գրագիտներով ապահովվածների ճշգրիտ թիվը, դասային պատկանելությունը: Նշված թերությունների պատճառով, հաշվառումից դուրս է մնում 2559 մարդ կամ Հայ բնակչության 5,18%: Այնուամենայնիվ, հետազոտությունն իր արժեքը չի կորցնում, քանզի մենք հնարավորություն ունենք ուսումնասիրելու Հայ բնակչության ճնշող մեծամասնության՝ 94,81%-ի /46770 մարդ/ տեղաբաշխման առանձնահատկությունները վերը նշված նահանգներում եւ մարզերում:

Ըստ 1897թ. մարդահամարի տվյալների Եվրոպական Ռուսաստանի Հայ բնակչության 35,76%-ը կամ 17643 մարդ ապահովված էր ինքնուրույն

¹ Кабузан В.М. Изменения в размещении населения России в XVIII -первой половине XIX вв./По материалам ревизий/. М.,1971, с.37.

² Արբաշանյան Ա.Գ. Նշված աշխատությունը, էջ 161:

³ Տե՛ս նույնը, էջ 157, 160, 167:

⁴ Տե՛ս նույնը, էջ 374-375:

⁵ Ռուսաստանի Դաշնության պետական կենտրոնական արխիվ, ֆ.109, ց.3ա, գ.1166, թ.17:

⁶ Արբաշանյան Ա.Գ. Նշված աշխատությունը, էջ 376:

⁷ Линниченко И, Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси, “Чтения в историческом обществе Нестора-летописца”, 1895, кн.9, К., стр. 140-147; “Труды комитета для историко-статистического описания Подольской епархии”, т.2, Каменец-Подольский, 1878-1879; Орловский М, Историческое описание уездного города Могилева Подольской губернии, “Подольские епархиальные ведомости”, Каменец-Подольский, 1864; Павловский А, Местечко Жванец, Каменец-Подольского уезда Подольской епархии, 1869, Яворский Н.,Историко-статистическое описание м.Жванца, его церкви и прихода /Каменецкого уезда/, 1876, Симашкевич М.,Римское католичество и его иерархия в Подолии, Каменец-Подольский, 1872, Закревский Н., Описание Киева, т.1, М.,1868 и др.

⁸ Крипякевич И.П. К вопросу о начале армянской колонии во Львове//Исторические связи и дружба украинского и армянского народов, Киев, 1965, стр.124

¹ Шульга И.Г., Из истории связей Закарпатья с Арменией //Исторические связи и дружба украинского и армянского народов, стр. 77

² Արբաշանյան Ա.Գ. Նշված աշխատությունը, էջ 380

³ Ցավոք այն նահանգներում, որտեղ Հայերը 500-ից քիչ էին, նրանց դավանական պատկանելությունն արտահայտված չէ թիվ 14 աղյուսակում եւ այսուհետ տվյալները բերվում են միայն ըստ 8 նահանգի տվյալների, որտեղ թիվ 14 աղյուսակում Հայ բնակչության քանակը հստակ նված է, դրանք են Աստրախանի, Բեսարաբիայի, Դոնի, Եկատերինոպոլսյան, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Տավրիկայի, Խերսոնի:

գրադմունքով¹, ինչը խոսում է այն մասին, որ Հայերին կենտրոնական նահանգներ էր բերել աշխատանք ձեռք բերելու եւ ապրուստի միջոց Հայթայթելու ցանկությունը: Բացի այդ, նրանց Հիմնական մասը՝ 60,73%-ը կամ 29960 մարդ, բնակություն էր Հաստատել քաղաքներում, որտեղ աշխատանք ձեռք բերելու համար նպաստավոր պայմաններ կային: Ընդհանրապես, եվրոպական Ռուսաստանի կենտրոնական նահանգները տնտեսապես ավելի զարգացած էին, ընդլայնված էր տրանսպորտային ցանցը, որը ստեղծում էր նպաստավոր պայմաններ առևտրի, ապրանքի արտահանման եւ դրամի շրջանառության համար: Բազմաթիվ ֆարրիկաներն ու գործարաններն արդյունաբերության մեջ էին ներգրավում մեծ քանակությամբ աշխատուժեւ վերջինիս սպառման Հիմնական շուկան էին: Բացի այս, տարածաշրջանում էին գտնվում ամբողջ Ռուսական կայսրության վարչա-քաղաքական կենտրոն, այսպես կոչված «երկու մայրաքաղաքները»՝ Մոսկվան եւ Սանկտ-Պետերբուրգը, ինչպես նաև նահանգական կենտրոնների մեծագույն մասը /ամբողջ Կովկասը, Միջին Ասիան եւ Միբրբը միասին կազմում էին ընդամենը 29 նահանգ իրենց համապատասխան նահանգական վարչական կենտրոններով/: Մյուս երկրամասերի համեմատությամբ մեծ էր նաև քաղաքների թիվը. այստեղ էր գտնվում կայսրության քաղաքների 65,98%-ը:

Այդուհանդերձ պարզվում է, որ Հայ բնակչության 33,74%-ի եկամտի Հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն էր. այս ոլորտում զբաղված էր 3139 մարդ, որ կերակրում էր ընտանիքի 13505 անդամի, իսկ արդյունաբերության ոլորտում էր ներգրավված Հայերի 3,33%-ը կամ 830 մարդ, որ կերակրում էր ընտանիքի 816 անդամներին: Եվրոպական Ռուսաստանի նահանգներում առևտրով զբաղվում էր 26,77%-ը կամ 5203 մարդ, որ կերակրում էր ընտանիքի 8004 անդամների, իսկ արհեստով՝ 3,98%-ը կամ 874 մարդ, որ կերակրում էր ընտանիքի 1090 անդամներին: Զբաղվածությունը վերաբերող տվյալներն արտահայտում են Հայ բնակչության դասային կազմը. գյուղացիների դասին էր պատկանում 15235 մարդ կամ Եվրոպական Ռուսաստանի Հայ բնակչության 30,88%-ը: Բավական մեծ տոկոս էին կազմում քաղաքները՝ 43,44% կամ 21430 մարդ, որոնք զբաղվում էին մասնավոր ծառայությամբ, առևտրով, Հասարակական ծառայությամբ եւ այլն: Տարածաշրջանում բնակվում էին մեծ թվով օտարահպատակներ՝ 5084 մարդ կամ Եվրոպական Ռուսաստանի Հայ բնակչության 10,30%-ը, որոնք նույնպես համարել էին կենտրոնական շրջանների պրոլետարիատի եւ ժամանակավոր բնակվողների շարքերը: Մնացած դասերի ներկայացուցիչները խիստ սակավ էին՝ 2,25%-ն ազնվական էր, 1,98 %-ը՝ պատվավոր քաղաքացի, 1,08%-ը՝ Հոգեւորական: Կային նույնիսկ կազակների դասին պատկանող Հայեր՝ 27 մարդ, որից 23-ը բնակվում էին Դոնի կազակային մարզում: Վաճառականներն ընդամենը 4,37% էին կազմում /2160 մարդ/, ինչը հավաստում է, որ առևտուրը բնավ էլ Հայ բնակչության Հիմնական զբաղմունքը չէր: Լինելով գրագետ եւ տիրապետելով ուսուցիչներին եւ այլ լեզուներին, Հայերն ընդգրկվում էին նաև ագրինիստրացիայում՝ 215 մարդ /որ կերակրում էր ընտանիքի 331 անդամների/, համարելով պետական ծառայողների շարքերը: Եվրոպական Ռուսաստանի նահանգներում ապրող Հայերից գրագետ էր 34,95%-ը կամ 17244 մարդ, որից գրագետ էր ուսուցիչներով 22,84%-ը կամ 11269 մարդ /որից 7623-ը՝ արական, 3646-ը՝ իգական սեռի/, այլ լեզուներով՝ 4,64%-ը կամ 2290 մարդ /որից 1688-ը՝ արական, 602-ը՝ իգական սեռի/, տարրականից բարձր կրթություն ունեւ 7,47%-ը կամ 3685 մարդ /որից 2269-ը՝ արական, 1416-ը՝ իգական սեռի/: Ինչպես տեսնում ենք գրագիտության մակարդակը ավելի բարձր էր արական սեռի ներկայացուցիչների մոտ՝ 43,04% կամ 11580 մարդ, իսկ գրագետ կանայք ընդամենը 5664-ն էին կամ Եվրոպական Ռուսաստանի Հայ բնակչության 25,25%-ը, որը սակայն

Համակայսերական մասշտաբով ուսաներից եւ մերձբալթյան ժողովուրդներից Հետո, երկրորդ ցուցանիշն էր:

Այսպիսով, 1897թ. մարդահամարի նյութերը Հնարավորություն են տալիս հանգեցնել այն հետևույթյան, որ Հայերը, ներկայացված լինելով տարածաշրջանի բոլոր նահանգներում եւ մարզերում, ակտիվ դեր էին խաղում տեղի սոցիալ-տնտեսական Հարաբերություններում, քանզի աչքի էին ընկնում պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, աշխատասիրությամբ եւ գրագիտությամբ, ինչպես նաև ընդգրկված էին Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Մարդահամարի տվյալները Հնարավորություն են տալիս նաև ամբողջական պատկերացում կազմելու Եվրոպական Ռուսաստանի Հայ բնակչության սոցիալ-տնտեսական կացության, զբաղվածության եւ կենցաղի մասին եւ Հարուստ նյութ են Հետագա քաղաքագիտմանի ուսումնասիրության համար: Բացի այդ մարդահամարը մարդկային եւ տնտեսական ռեսուրսների Հաշվառման առաջնային հավաստի եւ ճշգրիտ եղանակն էր: Այն տեղեկություններ էր պարունակում բնակչության տեղաբաշխման, քանակի, զբաղմունքի, գրագիտության մակարդակի, ինչպես նաև ազգագրական եւ դամանարանական պատկերի մասին: Այս առումով 1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարը բացառիկ նշանակություն ունեցավ եւ մեղ համար միակ քիչ թե շատ հավաստի աղբյուրն է XIXր. վերջին այս տարածաշրջանում բնակվող Հայ ազգաբնակչության զարգացման ընթացքի, ինչպես նաև ուսական իրականության մեջ կատարած ներդրումների ու դերի ուսումնասիրման համար կայսրության վարած քաղաքականության ֆոնի վրա:

Լիբել Ասոյան

РАСПРЕДЕЛЕНИЕ АРМЯН В ЕВРОПЕЙСКОЙ РОССИИ ПО МАТЕРИАЛАМ ПЕРЕПИСИ 1897 ГОДА.

РЕЗЮМЕ

В статье дан обций обзор армянского населения Европейской России на основе материалов Первой всеобщей переписи населения 1897 года с предшествующим историческим очерком. Армяне принадлежали к наиболее культурным слоям общества и были представлены во всех губерниях и областях региона. Они играли существенную роль в социаль-экономической жизни Европейской России, так как отличались профессионализмом, высокой степенью грамотности, трудолюбием, предприимчивостью и были представлены во всех сферах общественной деятельности. На фоне общего распределения населения рассматривается распределение армянского населения по вероисповеданиям, родному языку, занятости, грамотности и т.д.

Лилит Асоян

¹ Սակայն այս տվյալները նույնպես չի կարելի սպառիչ համարել, քանզի բնակչության բաշխումը ինքնուրույն աշխատողների եւ նրանց ընտանիքների անդամների ցույց է տալիս ոչ թե զբաղվածության կամ արդյունաբերության տվյալ ոլորտում զբաղվողների իրական քանակն, այլ ընդամենը առանձնացնում է բնակչության այն մասին, որը որպես եկամտի Հիմնական աղբյուր է նշել տվյալ զբաղմունքը: Տե՛ս «ПВПНРИ, т.12. Область войска Донского, СПб, 1905, с. XI»:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԹԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԹԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԹՈՒՆԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱԳԵՏՈՒԹԹԱՆ ԵՐԶԱՆՈՒՄ

1915թ. մայիսի 4-ին ավարտվում է Վան քաղաքի հայության մոտ մեկ ամս-յա գոյամարտը: Ռուսական Բայազետի ջոկատի հրամանատար գեներալ Նիկոլաևի հրամանով Վանի եւ շրջանի ժամանակավոր նահանգապետ է նշանակվում Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, Այգեւստանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից եւ դեկավորներից մեկը՝ Արամ Մանուկյանը (Սարգիս Հարությունյան): Նրա նշանակումը հաստատվում է բանկային կորպուսի շտաբի¹ իսկ մայիսի 18-ին՝ Կովկասյան բանակի հրամանատարության կողմից²:

Արգեն մայիսի 8-ին կազմակերպվում են ազատագրված նահանգի կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը, նահանգային վարչութիւններ, կրթական տեսչութիւնը, երկրագործական եւ առողջապահական մարմինները, ոստիկանական տեսչութիւնը, դատական կազմը, գավառային վարչութիւնը, գավառապետութիւնը³:

Այս իշխանական մարմիններում ընդգրկվում են Վանի մտավորկանության յավազւոյն ներկայացուցիչները, որոնց մեծ մասը կրթութիւն էր ստացել Գեւորգյան ճեմարանում, ինչպես նաեւ արտասահմանում: Նրանց թվում էին՝ Համազասպ Բաղեշյանը, Արտակ Դարբինյանը, Միհրան Թերլեմեզյանը, Վարազդատ Տերոյանը, Արմենակ Մաքսապետյանը եւ ուրիշներ: Նահանգապետարանում եւ գավառներում պաշտոնավարելու համար հրավիրվում են արեւելահայ մտավորականութիւն մի շարք ներկայացուցիչներ⁴:

¹ 1915թ. մայիսի 16-ի հեռագրում 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկին Բայազետի ջոկատի հրամանատար Նիկոլաևին հրահանգում է. «Հրամանատարը (Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Ն.Ն.Յուզեֆիչը - Ռ.Ա.) հաստեց Արամի նշանակումը Վանում, սակայն, որպեսզի նա ենթարկվի զինվորական իշխանության, հատկապես կայսրորի պետին, որը կնշանակվի, եւ որպեսզի Արամի միջոցով հարողովն զինվորական իշխանության կարգադրութիւնները»: Տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ.Պ - 242, ց.1, գ.19, թ.44 (այսուհետեւ՝ ՀԱԱ):

² ՀԱԱ, ֆ.Պ - 242, ց.1, գ.19, թ.44 (հսկ.):

³ Ա.-Դո, Մեծ դեպքեր Վասպուրականու 1914-1915 թվականներին, Ե., 1917, էջ 444-450: Վան-Վասպուրականի Հերոսամարտը -75: Ժողովածու: Կազմող՝ Հ.Դ.Փափազյան, Ե., 1990, էջ 98:

⁴ Ա.-Դո, նշվաշխ., էջ 450-460: 1915թ. հուլիսի 2-ի գեկուցագրում ուղղված գեներալ Նիկոլաևին Արամը հայտնում է, որ 2-րդ հայկական կամավորական դրուժինայի համհարզ Պարուչը Զիվանու Լեւոնյանը (աշուղ Զիվանու որդին) մայիսի 10-ից հանդեսանում է

Ոստիկանական տեսչութանը հանձնարարված էր Վան քաղաքում իրականացնել օրինականության պահպանումը: Ոստիկանապետ է նշանակվում Դավիթ Փափազյանը, իսկ նրա օգնական՝ Դեւոնդ Խանջյանը (Աղասի Խանջյանի հայրը), ռուսական բաժնի օգնական՝ Հովսեփ Քարտաշյանը¹:

Քաղաքը բաժանվում էր հինգ ոստիկանական շրջանների կամ տեղամասերի: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր շրջանապետը, օգնականը եւ քարտուղարը: Այսպես, Կենտրոնական թաղում կամ Խաչ փողոցի թաղում շրջանապետ է նշանակվում Գրիգոր Ճոնյանը: Նորաչեն թաղում՝ Արմենակ Դեղձուկյանը, Մեծ Քյանդրջիում՝ Արմենակ Տեր-Թովմասյանը, Արարբում՝ Մկրտիչ Գարսեֆերյանը, Քաղաքում կամ Քաղաքամեջում՝ Ռուբեն Առեղյանը²: Ոստիկանությանն էր ենթարկվում քաղաքային բանտը: Վանում կային 12 հեծյալ եւ 60 հետեակ ոստիկաններ³:

Վանի նահանգը բաժանվում է 4 գավառի եւ 12 գավառակի⁴: Այստեղ եւս նշանակվում են ոստիկանապետեր: Այսպես, 1915թ. մայիսի 20-ին տրված վկայականի համաձայն, Արճեշ գավառի ոստիկանապետն էր Այգեւստանի ինքնապաշտպանական մարտերում աչքի ընկած Նշան Ժամագործյանը⁵: Շատախում ոստիկանապետն էր Տիգրան Բաղդասարյանը⁶, Բերկրի գավառակինը՝ Հայկ Գրիգորյանը⁷, Ուշտուչյանց կամ Ոստանինը՝ Բուրթեյ Թառումյանը⁸, ապա Գրիգոր Բաղդկյանը⁹, Արտամետի գավառակինը՝ Վահան Կարապետյանը¹⁰, Նորդուզի գավառակինը՝ Հովհաննես (Հովհան) Ամիրյանը¹¹, Եզդի խանե կողմող շրջանի պետ եւ ոստիկանապետ՝ Խատույի որդի Զհանդիրը: Նրա օգնականն էր Արբաշամ Շաքարյանը¹²:

Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, ոստիկանական ծառայութիւնյան առավել ծանր եւ պատասխանատու տեղամասը գավառն էր: Այստեղ մշտապես զգացվում էր ոստիկանների պակաս: Դա պայմանավորված էր 1914թ. աշնանից մինչեւ 1915թ. մայիս Վանի նահանգի հայ բնակչության զանգվածային ջարդերով¹³:

Այսպես օրինակ, Արճեշ գավառի 9000 բնակչութիւնից զրհվել էր մոտ 3000 հոգի: Թայանվիլ եւ ավերվել էր հայկական բնակավայրերի ողջ ունեցվածքը: 1915թ. հուլիսի 3-ի տվյալներով ողջ գավառում մնացել էր միայն 250 աշխատունակ տղամարդ, որոնք զբաղված էին հողագործութեամբ¹⁴: Ուստի, ոչ միայն Արճեշի, այլեւ նահանգի գավառապետների ճնշող մեծամասնութիւնը իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում տեղերում ոստիկանության թվակազմն անհրաժեշտ թվով մարզկանցով համարելու համար:

Վանի օկուզի փոխահանգապետ: ՀԱԱ, ֆ. Պ - 242, ց.1, գ.14, թ.138: Մեկ այլ փաստաթղթում, թվագրված 1915թ. մայիսի 6-ին, նշում է, որ Պ.Լեւոնյանը վարել է նահանգապետի գրասենյակի քարտուղարի պաշտոնը: Տես ՀԱԱ, ֆ. Պ - 242, ց.1, գ.9, թ.2: Իսկ ըստ Օնիկ Մխիթարյանի՝ եղել է նահանգապետի օգնականը: Տես Վան-Վասպուրականի Հերոսամարտը, էջ 98: Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլյան Հերոսամարտի տասնհինգամյակին աթթիվ, 1915-1930, Վենետիկ - Ս.Վաղար, 1930, էջ 80:

¹ Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 446: Վան-Վասպուրականի Հերոսամարտը, էջ 100:

² Նույն տեղում: Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլյան Հերոսամարտի, էջ 82:

³ Նույն տեղում, էջ 457:

⁴ Ա.-Դո, նշվաշխ., էջ 448:

⁵ ՀԱԱ, ֆ. Պ - 242, ց.1, գ.6, թ.21: Որոշ ժամանակ անց Ն.Ժամագործյանը նշանակվում է Արճեշի գավառապետ:

⁶ Նույն տեղում, ց.1, գ.12, թ.87, 97:

⁷ Նույն տեղում, գ.26, թ.18: Նույն գավառակի Գործոթի շրջանի ոստիկանապետն էր Վահան Հացագործյանը: Տես ՀԱԱ, ֆ. Պ - 242, ց.1, գ.17, թ.3:

⁸ Նույն տեղում, գ.12, թ.95:

⁹ Նույն տեղում, գ.15, թ.4:

¹⁰ Նույն տեղում, գ.15, թ.19:

¹¹ Նույն տեղում, գ.23, թ.3:

¹² Նույն տեղում, գ.6, թ.131: Որոշ ժամանակ անց, շրջանի ոստիկանապետ է նշանակվում Միհրան Խառանյանը: Տես ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.12, թ.71 (հսկ.):

¹³ Նույն տեղում, ց. 1, գ.109, թ.99:

¹⁴ Նույն տեղում, գ.23, թ.1-14: Տես նաեւ Ռ.Օ.Սահակյան, 1915թ. Վանի Հերոսամարտը օտար աղբյուրներում: Լրաբեր Հասարակական գիտութիւնների, N 8, 1989, էջ 55:

1915թ. Հունիսի 24-ի գրությամբ Բերկրի գավառական կար 8, իսկ անհրաժեշտ էր 40 ոստիկան: Չէին բավականացնում նաև գեներն ու զինամթերքը: Ոստիկանները զինված էին 4 հրացանով, որոնցից միայն մեկն էր արդիական:¹⁵ Եւ զա այն զեպքում, երբ շրջակայքում վխտում էին քրդական հրոսակախմբեր եւ ջախջախված օսմանյան զորքի մնացորդներ: Նրանք հարմար առիթի գեպքում հարձակվում էին իրենց այլբլված բնակավայրեր վերականգնող եւ գյուղատնտեսական աշխատանքներ կատարող հայ բնակչության վրա:¹

Ձանթիկի (Թիմարի) գավառական ոստիկանները թվով յոթն էին: Նրանք պետք է իրականացնեին 20-ից ավելի հայկական գյուղերի պաշտպանությունը:² Իսկ 1915թ. Հունիսի 23-ի գրությամբ Արտամեսի գավառական ուններ 15 ոստիկան,³ որոնցից միայն երկուսն էին Հեծյալ:⁴

1915թ. Հունիսի 23-ին Արճակի գավառական Ա.Եկարյանի կողմից կատարած տեսչական ստուգումը ցույց տվեց, որ տեղի ոստիկանության թվաքանակը խիստ անբավարար է, քանի որ առկա է քրդական ավարառուական հարձակումների վտանգը: Ուստի, նա առաջարկում էր գավառական ոստիկանների թիվը հասցնել 50-ի:⁵

Վանի նահանգի այն շրջանները, որոնք ապրիլ-մայիս ամիսներին կարողացել էին դիմադրվել թշնամուն, եւ համեմատաբար քիչ կորուստներ էր կրել, ոստիկանների թվաքանակը բավարար էր ծառայություն կատարելու համար: Նման վայրերից էր Շատախը: Հունիսի 23-ի գրությամբ այստեղ կար 90 ոստիկան:⁶

Ըստ Ա.-Դոն. «գավառական ոստիկանությունը իր ամբողջ կազմով բաղկացած էր 360 ոստիկաններից եւ 40 տասնապետներից, որոնցից կես մասը հետեւակ էր, իսկ կես մասը Հեծյալ»:⁷

Նորդուզի գավառապետ Գ.Պետրոսյանը 1915թ. Հուլիսի 4-ի զեկուցաբերում հայտնում է. «Ներկա ոստիկանության կազմով Նորդուզի (Նորդուզի) կառավարելը անհնար է, որովհետեւ [բնակչությունը] ցրված են, ամեն մի գյուղ պաշտպանելը դժվար է: Ավելի հարմար է ոստիկանության կազմը գտնել առժամանակյա կերպով բարձրացնել...»⁸ Գավառապետը խնդրում է իր գավառակի ոստիկանության կազմը համալրել ի հաշիվ շատախցիների, որը հնարավորություն կտա Նորդուզում ունենալ 50 ոստիկան:⁹

1915թ. Հուլիսի 1-ին Կարճկանի գավառակի գավառապետ Մանուկ Պետրոսյանը եւ ոստիկանապետ Մանուկ Մինասյանը ահազանգում էին ոստիկանների պակասի մասին: Նրանք հայտնում էին, որ գավառակում տարածված զանազան վարակիչ հիվանդությունների մասին, որի հետեւանքով «առողջ մարդ չի գտնվում գավառում: Իսկ առանց ոստիկանների այ դժվար է գործ անել: Մի քանի հոգի նշանակած ենք, [սակայն] նրանց ձեռքումն այ գեներ չկա...»¹⁰ Գավառապետն ու ոստիկանապետը հայտնում են, որ իրենք զենք ստանալու համար բանակցել են Արարատյան ջոկատի հրամանատար Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) հետ: Նրա ջոկատի զինապահեստում կան ռազմավարային հրացաններ: Վարդանը պատրաստակամություն է հայտնել աջակցել ոստիկանությանը, սալ զենք, եթե նահանգապետ Ա.Մանուկյանը համաձայնվի:¹¹

Համանման բովանդակությամբ դիմում է Հղում նահանգապետարանին Բերկրի փոքրգավառապետը 1915թ. մայիսի 17-ին:¹²

Վանի նահանգական իշխանությունները խորապես գիտակցում էին, թե որքան կարևոր էր գավառներում հայ բնակչության անվտանգության ապահովումը եւ հնարավորության դեպքում աշխատում էին ոստիկանությանը ապահովել զենքով եւ զինամթերքով: Այսպես, Եզգի խանի շրջանի ոստիկանների համար ուղարկվել է 4 «Բերդան» սխտեմի հրացան, 400 փամփուշտ եւ 200 ուռլի աշխատավարձ:¹³

Վանի Հայկական ոստիկանության ոչ լիարժեք գործունեության պատճառներից մեկն էլ այն էր, որ ոստիկանները չունեին համազգեստ: Այդ պատճառով էր, որ քաղաքում, եւ հատկապես գավառում տեղակայված ռուսական բանակի զինվորներն ու սպաները չէին կարողանում զանազան ոստիկանին քաղաքացուց եւ գյուղացուց: Դրա հետեւանքով առաջանում էին ցավալի թյուրեմացություններ:

Վերը նշված բացը լրացնելու համար, նահանգապետարանը ոստիկանների համար սահմանում է տարբերիչ նշաններ՝ թեւակապներ: Վան քաղաքում ծառայություն կատարող ոստիկանները ձախ թեւեր կրում էին սպիտակ կոտրի վրա կարմիր գույնի հայերեն տառերով գրված «Ոստիկան» մակարկաթյա թեւակապ:¹⁴

Գավառական ոստիկանների համար պատրաստվում են ուսերեն «В.Д.» («Ванская Дружина») մակագրությամբ թեւակապներ:¹⁵ Վերջինս արված էր նահանգում տեղակայված ռուսական զորքերի համար, որպեսզի նրանք կարողանան զանազան իր ծառայողական պարտականությունը կատարող հայ ոստիկանին զինված քրդից:

Նահանգապետարանը 1915թ. մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն, իր ութամսյա գործունեության համար նախատեսում է 178340 ուռլի:¹⁶ Այդ գումարից ոստիկանության էր տրամադրվելու 77040ո.¹⁷ Վան քաղաքի ոստիկանության բյուջեն սահմանվում է 20600ո.¹⁸ Որոշվեց նաև ոստիկանների աշխատավարձը: Այն տարբերակված էր, եւ հավանաբար կախված էր գավառի մեծությունից: Այսպես, 1915թ. Հունիսի 23-ին ներկայացված տեղեկագրից պարզվում է, որ Շատախի ոստիկանապետի աշխատավարձը սահմանվել է 100, նրա օբնակներիը՝ 70, երկու քարտուղարներիը՝ 30-ական, չորս քանհիցապետներիը՝ 35-ական, տասնապետներիը՝ 25-ական, չարքային ոստիկաններիը՝ 24 ուռլի:¹⁹ Իսկ Ոստանի (Բերկրի) գավառակի ոստիկանների համար որոշվել էր հետեւյալ աշխատավարձը՝ ոստիկանապետինը՝ 50, Հեծյալ ոստիկաններիը՝ 30 եւ հետախն ոստիկաններիը՝ 20 ուռլի:²⁰

Վան քաղաքի ոստիկանության համար սահմանվում է աշխատավարձի հետեւյալ չափը՝ ոստիկանապետինը՝ 100, օբնական-թարգմանչինը՝ 60, Հեծյալ տասնապետինը՝ 30, Հեծյալ ոստիկանինը՝ 25, հետեւակ ոստիկանինը՝ 35:²¹

Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, մինչև Հուլիսի 1-ը գործել էր գաղտնի ոստիկանություն:²² Նրա աշխատանքների համար նահանգապետարանի բյուջեում նախատեսվել է 2000 ուռլի:²³

Ա.-Դոն հետեւյալ կերպ է հիմնավորում այս ծառայությունից հրաժարվելը. «Միթե՞ մանուկ կառավարությունը կարիք ունեն գաղտնի ոստիկանության,

¹⁵ Նույն տեղում, գ.14, թ.127:

¹ ՀԱԱ, ֆ. Պ- 242, ց.1, գ.14, էջ 127:

² Նույն տեղում, թ. 127-128:

³ Նույն տեղում, գ.15, թ.9:

⁴ Նույն տեղում, թ.25:

⁵ Նույն տեղում, թ.127:

⁶ Նույն տեղում, գ.12, թ. 97:

⁷ Ա.-Դո, նշվ.աշխ., էջ 451:

⁸ ՀԱԱ, ֆ. Պ- 242, ց.1, գ.23, թ.10:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, գ.27, թ.1:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, գ.15, թ.5:

¹ ՀԱԱ, ֆ. Պ- 242, ց.1, գ.12, թ.71 (Հակ.):

² Ա.-Դո, նշվ.աշխ., էջ 462:

³ Ա.-Դո, նշվ.աշխ., էջ 462: ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.15, թ.18:

⁴ Վան-Վասպուրական, էջ 102:

⁵ Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 460:

⁶ Նույն տեղում, էջ 456-457:

⁷ ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.12, թ.87:

⁸ Նույն տեղում, թ.69:

⁹ Ա.-Դո, նշվ.աշխ., էջ 460: Հավանաբար հետեւակ եւ Հեծյալ ոստիկանի աշխատավարձի չափի խնդրում սխալ է սպրդվել, քանի որ շարքային ոստիկանի աշխատավարձը չէր կարող տասնապետից ավելին լինել: Բացի այդ, Հեծյալ ոստիկանի աշխատավարձն ավել էր հետեւակ զործընկերը շից, որովհետեւ ձիու պահպանման եւ խնամքի համար նախատեսվում էր լրացուցիչ գումար:

¹⁰ ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.14, թ.175:

¹¹ Ա.-Դո, նշվ.աշխ., էջ 456:

միթե՞ ամբողջ աշխարհի կողմից արհամարհված այդ ինստիտուտը դեր ունի կատարելու նոր սկզբնական կառավարության մեջ, իհարկե ոչ: Բայց նա ընդունել էր մյուս մարմինների շարքում նաև այդ մարմնի գոյությունը, անշուշտ, անիրատվորեն, առանց խորը մտածելու»:¹

Ոստիկանության ութամսյա աշխատանքի համար նախատեսված 77040 ուղղի զգալի կլինի, եթե նահանգը ենթարկված չլինի համատարած կողոպուտի, պիբաժուսթյունների եւ զրկված չլինի աշխատող ձեռքերից: Գավառը խիստ կարիք ուներ յավ կազմակերպված եւ հանդերձարկված ոստիկանության: Այդ էր պատճառը, որ գավառայեները մի շարք դիմումներ եւ զեկուցարքեր էին ներկայացնում Ա.Մանուկյանին, խնդրելով բարձրացնել ոստիկանների աշխատավարձը, որպեսզի մարդիկ չհեռանան ոստիկանությունը:

Այսպես, Ջանիկի գավառայե Արգար Սեմերճյանը 1915թ. Հուլիսի 6-ին նահանգայեներին ուղղված զեկուցագրում խնդրում է Վանի օրինակով իրենց գավառակում եւս հեծյալ ոստիկանների աշխատավարձը բարձրացնել 40 ուղղու, «որպեսզի ցարզ հազիվ կազմակերպել կրցած քանի մը ոստիկաններեն այ չգրկվեն եւ շատ կարեւոր գործեր անգործադրելի եւ երեսի վրա մնան»:²

1915թ. Հունիսի 26-ին Բերկրի գավառայե Գազել Թոնմախյանը նահանգայեներին է հայտնում, որ իր ութ ոստիկանների աշխատավարձը չի վճարվել: Այդ բանը լրացնելու համար ստիպված են եղել վաճառել լքայ տների գերանները: Վաճառքից ստացած գումարը, սակայն, չի բավականացնում աշխատավարձի պարտքը փակելու համար: Գավառայետը խնդրում է Վանից ուղարկել 100 ուղղի, որպես կանխավճար, ոստիկաններին վճարելու համար:³

Փրնասական միջոցներն անբավարար էին նաև Վանի գատախազության կանոնավոր գործունեության համար: 1915թ. մայիսի 27-ի զեկուցագրում հայտնվում է, որ «Պատարանի գործերը խիստ շատացած ըլլալով անհրաժեշտ պետք ունենք.

2 քարտուղարի

1 կոչնակի նաև

2 ձիավոր կոչնակներու

...կը խնդրվի անմիջական կարգադրություն, մասնավորապես ձիավորներու, որովհետև գյուղական խնդիրներ զիջված են:

Բոլոր պաշտոնյաներու ոռոնիկը եթե չորոշվի մինչև ամսվա վերջ եւ վճարում ալ չըլլա, կը հայտնեմ, որ ստիպված պիտի ըլլամ հրաժարվելու»:⁴

Նահանգայեներանք եւ անձամբ Ա.Մանուկյանը մտահոգված էին հայկական ոստիկանության վերջնական ձեւավորմամբ եւ լիարժեք ծառայության իրականացմամբ: Ինչպես վերը նշեցինք, ոստիկանությունը գավառում փաստորեն կատարում էր ներքին գործերի ֆունկցիաներ: Հավանաբար Արամը հետագայում ցանկանում էր ոստիկանական ուժերի հենքի վրա ստեղծել նաև կանոնավոր բանակի ստորաբաժանումներ: Բանն այն է, որ նահանգի լեռնային շրջաններում շարունակվում էին մնալ ջախջախված օսմանյան բանակի մնացորդները եւ քրդական ջոկատները: Այս ուժերը ժամանակ առ ժամանակ հարձակումներ էին գործում ոչ միայն հայ կամ ասորի բնակչության, այլևս ուսական զորամիավորումների վրա: Այսպես, 1915թ. Հունիսի 20-ին, Արճեջի մոտ քրդերը հարձակվել էին ուսական գումակի վրա եւ տարել էին բոլոր ձիերը:⁵

Ժիշա է, ուսական հրամանատարությունը կազմակերպում էր պատժիչ արշավախմբեր, սակայն բավական էր, որ գորքը հեռանար, հակառակորդ վերսկսում էր իր գործողությունները: Հավանաբար հաշվի առնելով վերը նշվածը, Արամը նախընտրում էր տեղերում ունենալ փոքրաթիվ, բայց մշտական եւ յավ սպառազինված ու պատրաստված ոստիկանական ուժեր, որոնց ներկայությունը եւ պատասխան համարապատասխան ոստիկանական ուժեր, որոնց ներկայությունը եւ պատասխան համարապատասխան ոստիկանական ուժերը գսպող նշանակություն կարող էին ունենալ գանազան քրդական հրոսակախմբերի համար:

Ուստի, նահանգայեներանքի հանձնարարությունը կատարվում են քաղաքային եւ գավառական ոստիկանությունների տեսչական ստուգում: Անհրաժեշտ է նշել, որ բացի Վան քաղաքի մի քանի ոստիկաններից, որոնք նախկինում ծառայել էին թուրքական ոստիկանությունում, մյուսներն իրավապահ մարմինների հետ որեւէ առնչություն չեն ունեցել: Ոստիկանների ճնշող մեծամասնությունը նախկին հողագործներ եւ արհեստավորներ էին, ուստի դրանով է պայմանավորված նրանց ծառայության մեջ տեղ գտած թերություններն ու բացթողումները:

1915թ. Հունիսի 23-30 գավառային ոստիկանության տեսչական ստուգումը կատարում է հայ ազգային ազատագրական շարժման հայտնի գործիչ, ապրիլ-մայիս ամիսներին Ալյեեստանի ինքնապաշտպանության ռազմական ղեկավար Արմենակ Եկարյանը: Ստուգումն ավարտելուց հետո նա ներկայացնում է «Տեղեկագիր Վանի շրջանային գավառներու ոստիկանության կազմի մասին» հաշվետվությունը:⁶ Միաժամանակ Ա.Եկարյանը ներկայացրել է համառոտ եւ բավականին խիստ հաշվետվություն: Նա արձանագրել է ոստիկանության ստորյալում տեղ գտած բազմաթիվ թերությունները: Առավել արժեքավոր են Ա.Եկարյանի կողմից կատարված առաջարկությունները, որոնց օգնությամբ կարելի է շտկել եւ բարելավել ոստիկանության ծառայությունը:⁷

Վան քաղաքի ոստիկանության տեսչական ստուգումը կատարում է Իսահակ Տեր-Ղազարյանը:⁸

Գավառներից առավել ծանր էր Նորդուզի գավառակի դրությունը: Բանն այն է, որ այստեղ հաճախակի էին դարձել քրդական ավազակախմբերի հետ ընդհարումները: Գավառայե Գ.Պետրոսյանը, տեսնելով, որ սակավաթիվ ոստիկանական ուժերով հնարավոր չէ ապահովել բնակչության անվտանգությունը, կազմում է կամավորական ջոկատ եւ որդեգրում է հարձակողական մարտավարություն: 1915թ. Հունիսի 25-ի զեկուցագրում հայտնում է, որ գավառակի բնակիչներից եւ ոստիկաններից կազմել է միացյալ ջոկատ, թվով 60 հոգի, որից 40 զինված եւ 20 անզին: Նույն օրը հայերը բախում են ունենում 20 հոգուց բաղկացած քրդական հրոսակախմբի հետ: Մեկ ժամ տեսած մարտից հետո, հակառակորդը երկու սպանված տալով, փախուստի է դիմում: Ապա Նորդուզի ջոկատը առաջանալով, Ռաշ կոչվող լեռան մոտ մարտի է բռնվում քրդական 30 հոգուց բաղկացած հեծելախմբի հետ: Կարճատև կռիվից հետո երկուզաններ մեկ սպանված եւ մեկ վիրավոր տալով ճողոպրում են: Հայերը սկսում են հետապնդել երուզակներին: Վերջիններս համալրում ստանալով, անցնում են հարձակման: Չկարողանալով դիմադրել թշնամու գերազանց ուժին, մոտ 250 հոգի, Նորդուզի ջոկատը հարկադրված է լինում նահանջել: Մարտի ընթացքում գոհվում է ազգությունը ասորի, ոստիկան Գասրեհնը:⁹

Իր զեկուցագրում Նորդուզի գավառայետը հայտնում է, որ գավառակի արեւելյան եւ հարավային մասերում կենտրոնացված են 20000-ի հասնող քրդեր եւ թուրքեր, որոնց մեջ մեծ թիվ են կազմում օսմանյան բանակի զինվորները եւ համիդեականները: Գավառայե Գ.Պետրոսյանի համոզմամբ, այդ ուժերն իրենցից յուրջ սպառնալիք են ներկայացնում, որը կարելի է վերացնել միայն ուսական բանակի օգնությամբ: Նա խնդրում է Արամին, որպեսզի վերջինս միջնորդի ուսական հրամանատարության առջև, որպեսզի գավառակի կանոնավոր զորք ուղարկվի:⁵

1915թ. Հունիսի 27-ի զեկուցագրում Գ.Պետրոսյանը հայտնում է, որ իրենց հաջողվել է ջախջախել քրդական ավազակախմբի եւ նրանցից հետ վերցնել հայերից իլված 1 կով եւ 11 եղ: Նա տեղեկացնում է, որ վերը նշված գործողությունների ընթացքում ջոկատը սպառել է 301 փամփուշտ: Գավառայետը խնդրում է զինամթերքը լրացնելու համար ուղարկել 300 հատ «Մաուզերի» եւ «500 հատ «Բերդան» սիստեմի հրացանների փամփուշտներ:⁶

¹ ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.14, թ.127-128:

² Նույն տեղում, գ.14, թ.129-130:

³ Նույն տեղում, թ. 174-176:

⁴ Նույն տեղում, գ.23, թ.6-7:

⁵ Նույն տեղում, թ.7:

⁶ Նույն տեղում, թ.8:

¹ Ա.-Դո, նշվ.աշխ., էջ 460-461:

² ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.17, թ.27:

³ Նույն տեղում, գ.1, թ.7:

⁴ Նույն տեղում, գ.19, թ.29:

⁵ Նույն տեղում, գ.23, թ.14: Տես նաև ՀԱԱ, ֆ.43, ց.1, գ.83, թ.43 (Հակ.):

Նորդուզդի գավառապետը իր զեկուցադրում միաժամանակ նշում է, որ քրդական մեծաքանակ ուժերի ներկայությունը եւ պարբերաբար կատարվող հարձակումները բնակչության շրջանում խուճապ է առաջացրել: Այդ պատճառով հնարավոր չէ ձեռնամուխ լինել կանոնավոր գյուղատնտեսական աշխատանքների, իսկ վերջինիս ձախողման դեպքում գավառակի հայությունը սով է սպառնում:¹

Գրգական սպանալիքի պատճառով դրուժյունը լարված էր նաեւ Հայոց ձորի հայկական գյուղերում: Գավառակի Հիրճ գյուղի բնակիչները 1915թ. մայիսի 16-ին Արամին ուղղված նամակում հայտնում են, որ չեն համարձակվում գյուղերում բնակություն հաստատել «որովհետեւ քրդեր սարերու վրա են եւ մինչեւ անգամ անցյալ օր Անկշտանց գյուղի մեջ մի քանի հայ սպանված են: 150-ի մոտ կին եւ երեխա անդի՛ր եւ անճար»:²

Համանման իրադրություն էր Արճեշ գավառում: Այստեղ քրդերը կենտրոնացված էին Արճեշից 2-3 ժամ հեռավորություն վրա գտնվող Ջիրանի ձոր կոչված վայրում: Նրանց թիվը հասնում էր մի քանի հազարի, որոնցից մոտ 700-800 գրինված էին: 1915թ. հունիսի 19-ից մինչեւ հուլիսի 3-ը Արճեշի գավառում նահանգապետարանի հանձնարարությունը ուսումնասիրություններ կատարած Հ.Տեր-Հակոբյանը. «Արճեշից դեպի Հյուսիս գտնված ամբողջ շրջանը, արեւմուտքից արեւելք, իր մեջ պարունակած բազմաթիվ հայկական գյուղերով այդ քրդերի [Ջիրանի ձորում գտնվող - Ռ.Ա.] իշխանություն եւ երկյուղի ներքո են գտնվում»:³

Հայկական ոստիկանություն կողմից հետաքննվում է 1915թ. հունիսի 20-ին ինչպե՛ս գավառակի Կասր գյուղի մոտ 4 ասորիների վրա քրդերի կատարած ավաղակալին հարձակման դեպքը: Հաղորդելով այս մասին նահանգապետին, գավառապետ Արմենակ Տեր-Պողոսյանը զեկուցում է, որ ելուզակներին հետապնդելու եւ պատժելու համար ուղարկվել է ոստիկանական ջրկատ:⁴

Միաժամանակ ոստիկանությունը հետաքննություն է անցկացնում 1915թ. հունիսի 15-ին բուրջ ցեղապետ Արդուլ Ռզայի (կամ Ռիզակի) եւ նրա 200 հոգուց բաղկացած ջրկատի կողմից եզգի խանն շրջանի Ջիրուխու գյուղում եզգի բնակչության նկատմամբ կատարված բռնություններն ու կողոպուտը:⁵ Գրան մասնակից են եղել ցեղապետին ուղեկցող 46 հոգուց բաղկացած կազակական ջրկատը: Քրդերը եզգիներից խլել են մոտ 2000 ոչխար եւ 500 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ:⁶ Ձերբակալվել է եզգի խանն շրջանի պետ ՋՀանգիր եղբայր իր երեք համագյուղացիների հետ:⁷ Ձերբակալությունը կատարվել է գեներալ Չեռնոգուբովի հրամանով:⁸ Կայանվածներին 10 օրյա անդժի բանտարկությունից եւ ծեծից հետո տարել են Արտամեն:⁹

Նման անօրինական գործողություններ էին կատարվում նաեւ Հայ բնակչության նկատմամբ: Հատկապես աջքի էին բնկնում կազակները: Նրանք ոչ միայն ազգելում էին հայ գյուղացիներին քրդերից հետ վերցնել իրենց թալանված գույքն ու անասունները, այլեւ բռնագրավում էին գրանք: 1915թ. մայիսի 25-ին նման մի դեպքի մասին են հաղորդում Գործոթից: Կազակները Հայերից խլել էին 3000-ից ավելի խոշոր եւ մանր եղջերավոր անասուններ:¹⁰

Մայիսի 18-ին Ալյուրի գավառապետ Հարությունը Հյուսիսյանը հետեւյալն է հաղորդում. «Թուռ կազակներու շահարկությունները օրի վրա կշատանա... գեներալ խուզարկության պատրվակով կողոպտեն իրանց զեմ՛ ելնող անհատներին...»:¹¹

Վերը նշված հիմնահարցի լուծմանն էր ուղղված 1915թ. մայիսի 26-ի Ա.Մանուկյանի նամակը Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ Սամսոն Հարությունյանին: Նահանգապետը ներկայացնելով Վասպուրականի ծանր տնտեսական վիճակը եւ բնակչության աղետալի դրությունը, աջակցություն էր խնդրում: Միաժամանակ Արամը խնդրում է Ա.Հարությունյանին, որպեսզի վերջինս միջամտի եւ օգտագործի իր հնարավորությունները Կովկասի փոխարքայությունում «որպեսզի վերջ տրվի պաշտոնապես եւ անպաշտոն կերպով այս կամ այն կողակի ձեռքով Հայ գյուղերու կողոպտման եւ զինաթափման գործին: Հանձնա ուղղակի կմտնեն գյուղեր, ամբողջ Հացը, տավար, ոչխար, մայ եւ այլն կքշեն կտանեն: Լավագույն դեպքին, երբ կարեհանձնն բացատրություն տալ կառարկեն, որ «հայերը այդպես թալանված էին արդեն, անոնք որտեղե՞ն ձեռք բերին, այդ բոլորը քրդերու մայն է: Այս բոլոր մեզի կպատկանեն»: Չենք կարող հասկացնել այս մարդոց, որ հայերու մայերու մի մասը չի թալանված, թե հայերն իրենց ապարքներն է, որ ետ են խլած կովով՝ քրդերեն: Այս շարժումը աղետներու պատճառ կբառնա: Շուտափույթ կերպով առաջն հարուստ ջանքեր չպետք է խնայել: Նույնիսկ չեն խնայել վանքերու տավարները: Անցյալ օրը քջեցին տարան Վարազի վանքի նախիրը...»:¹

Բանը հասավ նաեւ նրան, որ մահապատժի ենթարկվեցին 3 հայեր, որոնք կրակ էին բացել սարից իջնող քրդերի վրա, որոնց հետ գտնվել էին 5 կամ 6 կազակ: Վերջիններս հայերը չէին նկատել քրդերի խմբի մեջ: Չնայած այն հանդգամանքին, որ սուլթանը չէր եղել, այնուամենայնիվ վաշտի հրամանատար Գեգեհորթի հրամանով գյուղացիները մահապատժի ենթարկվեցին:²

Վանի հայկական իշխանությունը գերծ չէր թիրություններից, ամեն ինչ չէ, որ հարկ էր ընթանում: Ինչպես նշում էր Ա.Դոն, ուներ «նույնիսկ խոշոր թերություններ, որից եւ առաջացել էր դժգոհություն նրա դեմ»:³ Այնուամենայնիվ, այդ իշխանությունը «իբ թամբ երիտասարդական կազմով, իր ձգտումներով կարճ օրերի մեջ ներշնչեց մի Հայաստ, այլեց գրավական, որ Հայ ժողովուրդը բնագունակ է իր ինքնուրույն կյանքն ունենալու, իր բախար անօրինելու»:⁴

Վանի ոստիկանությունը պաշտպանում էր ոչ միայն Հայ, ասորի կամ եզգի, այլեւ թուրք եւ քուրդ խաղաղ բնակչության անձը, գույքը եւ քաղաքացիական իրավունքները: Երբ 1915թ. մայիսի սկզբին թուրքական զորքը եւ քրդական իրավանքներ հազճեպ գաղաթեցրին Վանի պաշարումը եւ նահանջեցին, քաղաքի մամձեղական թաղամասում նրանց կողմից լքվեցին իրենց կանանց ու երեխաների մի մասը: Օսմանյան դաժան տիրապետության տակ դարեր տառապած եւ ջարդերից փրկված հայերը հակառակորդի քաղաքացիական բնակչության նկատմամբ որեւէ բռնություն չգործադրեցին: Ավելին, Հայ մարտիկները նրանց բոլորին, թվով 2000 հոգի, հավաքեցին եւ հանձնեցին Վանում գտնվող ամերիկյան եւ շվեյցարական (գերմանական) միսիոներներին:⁵

Միաժամանակ, մարտերի ընթացքում ուռաներին էին հանձնվել մեծ թվով քրդեր: Թուրքական հրամանատարությունը տեսնելով վանեցիների մարդկային վերաբերմունքը հակառակորդի կանանց ու երեխաների նկատմամբ, որոշում է գերի քրդերին ազատել եւ ուղարկել իրենց բնակավայրերը: 1915թ. մայիսի 22-ին Բայազետի ջրկատի հրամանատար, գեներալ Նիկողայանը նահանգապետ Ա.Մանուկյանին ուղղված N 34 հրամանում հայտնում է ընդունված որոշման մասին: Գեներալը Արամից պահանջում է Հայ բնակչությանը տեղեկացնել ռազմագերիների ազատ արձակման մասին: Հրամանում թվարկվում են բնակավայրերը, որտեղ պետք է բնակվեն քրդերը: Գեներալ Նիկողայանը Հայտնում է, որ քրդերը խստագույնս նախագգուշացվել են, որ ցանկացած հակաօրինական ելույթի դեպքում իրանց պատանդները մահապատժի կենթարկվեն, իսկ բնակավայրերը կոչնչացվեն: Վերը նշված անձանց կյանքի եւ գույքի

¹ ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1.գ.23, թ.9:

² Նույն տեղում, գ.5, թ.81:

³ Նույն տեղում, գ.23, թ.14:

⁴ Նույն տեղում, գ.5, թ.150:

⁵ Նույն տեղում, գ.14, թ.120-121:

⁶ Նույն տեղում, թ.120:

⁷ Նույն տեղում, գ.6, թ.157:

⁸ Նույն տեղում, գ.14, թ.145:

⁹ Նույն տեղում, թ.120: Իր հուշերում գեներալ Նազարբեկովը վկայաբեղում է մի շարք փաստեր, որոնք վկայում են, որ Արդուլ-Ռիզակը հանդիսացել է թուրքական լրտես: Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ - 45, ց.1, գ.2, թ.33 (մեքենագիր օրինակ):

¹⁰ ՀԱԱ, ֆ. Պ - 242, ց.1, գ.12, թ.3:

¹¹ ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.23, թ.1:

¹ Նույն տեղում, ֆ.28, ց.1, գ.384, թ.105:

² Նույն տեղում, ֆ. Պ-43, ց.1, գ.83, թ.48:

³ Ա.Դոն, նշվ.աշխ., էջ 460-461:

⁴ Նույն տեղում, էջ 461:

⁵ Տես Ռ.Օ.Սահակյան, Վասպուրականի հայության գոյամարտը 1915 թվականին, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 1995, էջ 28-29:

ПОЛИЦИИ В ГОРОДЕ ВАНЕ В ПЕРИОД ГУБЕРНАТОРСТВА

РЕЗЮМЕ

В конце 1914г., и особенно в начале 1915г. правители Османской Турции организовали геноцид армянского населения империи. В некоторых местах армянам удалось организовать самооборону. Одним из таких мест, где армянское население организовало сопротивление турецким и курдским погромщикам, был город Ван. Бои самообороны здесь начались с 7-го апреля, и продолжались до 4-го мая 1915г. После того, как в город вошли русские войска, по приказу начальника Баязетского отряда, генерала Николаева, один из руководителей ванского сопротивления Арам Манукян 7-го мая был назначен временным ванским губернатором. Уже 8-ого мая были организованы органы управления губернии, в том числе полиция.

Перед полицией были поставлены несколько задач. Она должна была обеспечить не только правопорядок в городе и в уездах, но и охранять армянских, ассирийских и езидских деревни от укрывавшихся в горах курдских и турецких банд. Ванская полиция защищала также оставшихся в г.Ване около 2000 турецких и курдских женщин и детей.

Г.Ван был разделен на пять полицейских участков, каждый из которых имел своего начальника полиции. В гор. Ване было 12 конных и 60 пеших полицейских. Во всех уездах также были организованы полицейские силы и назначены начальники полиции. Общее число полицейских в уездах было 400. Но это количество было недостаточно, чтобы обеспечить безопасность населения. В составе ванской полиции были не только армяне, но и ассирийцы и езиды.

К сожалению ванское губернаторство просуществовало 70 дней. Неожиданно русская армия отступила. Ванские армяне лишены средств сопротивления, вынуждены были следовать за русскими.

Однако, опыт накопленный во время Ванского армянского губернаторства, не пришёл даром. Этот опыт был использован Арамом Манукяном, когда он в конце 1917 года возглавил Ереванский Армянский Национальный Совет, а с 24 июля 1918 года возглавил Министерство Внутренних Дел Республики Армения.

Рубен Саакян

кандидат исторических наук

անվտանգությունը պահպանումը դրվում է Վանի նահանգապետի վրա: Գեներալ Նիկոլաևը հայտնում է, որ հունիսի 23-ից թուլլատրվելու է միսիոներների մոտ ապստաման թուրք եւ քուրդ կանանց վերադառնալու իրենց տները:¹

Բայագետի ջոկատի հրամանատարի հրամանը միանշանակ չի ընդունվում Արամի կողմից: 1915թ. հունիսի 25-ին նա պաշտոնապես դիմում է Կովասյան բանակի հրամանատար Ն.Ն.Յուզենիչին, Կովասյան 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկուն եւ Բայագետի ջոկատի հրամանատար Նիկոլաևին: Ակրունցորդին նահանգապետը դեմ չէր քաղաքացիական բնակչության ազատ արձակման, սակայն ուսանելի ուշադրություն էր հրավիրում մի քանի կարևոր փաստերի վրա: Դրանցից հիմնականներն էին՝

1. Թաղմուկների քրդերի թվում կան այնպիսիները, որոնք մասնակցել են նահանգի հայ բնակչության կոտորածներին:

2. Մասնակցել են ուսական բանակի դեմ թուրքական ուժերի մղած մարտերին:

3. Հանձնվել են, որովհետեւ պարենի խիստ կարիք ունեն:

4. Սպառազեն տղամարդկանց ճնշող մեծամասնությունը շարունակում է մնալ լեռներում:

5. Թուսներին են հանձնել հին եւ անարք հրացաններ:

Նամակում Արամը ուսական հրամանատարությունն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ քրդերին թուլլատրելով բնակվել թիկունքում, ուսանելու վտանգում են Վան-Ջուլֆա եւ Վան-Իգդիր ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհները եւ այլն:²

Այնուամենայնիվ նահանգապետը ստիպված է լինում եմթարկվել: 1915թ. հունիսի 25-ին նա Վանի ոստիկանությունն է հայտնում գեներալ Նիկոլաևի հրամանի բովանդակությունը, եւ ազատ արձակված մահճակալական բնակչության անվտանգության ապահովության պատասխանատվությունը դնում է ոստիկանության վրա: Հրամանում մասնավորապես ասված էր. «Վան քաղաքի շրջանապատների վրա եմ դնում պատասխանատվությունը այս կանանց (միսիոներական հաստատություններում ապաստանած - Ռ.Ա.) ապահովության եւ իրենց գույքը, հողերն ու ցանքերը ազատ տիրապետելու համար»:³

1915թ. հունիսի 27-ին Վանի ոստիկանապետությունը հատուկ կոչով դիմում է քաղաքի հայ բնակչությանը, որը տեղեկացվում է գեներալ Նիկոլաևի հունիսի 22-ի հրամանի մասին եւ հորդորում է հայրենակիցներին մարդասիրական վերաբերմունք ցուցաբերել մահճակալական քաղաքացիական բնակչության նկատմամբ:⁴

Ցավոք, Վանի նահանգապետությունը եւ այդ թվում հայրական ոստիկանությունը հասցրեց ամբողջությամբ ծավալվել եւ գործել իր ողջ կարողությամբ: Այն գործեց ընդամենը 70 օր: Թուսական բանակի անսպասելիորեն նահանջեց: Երկարատեւ պայքարի միջոցներից գործի վաստուրականցիները հարկադրված էին բռնել գաղթի ճանապարհը:

Այնուամենայնիվ, Վանի հայրական իշխանությունը, եւ մասնավորապես հայրական ոստիկանության կուսակաժ փորձն ապարդյուն չանցավ: Այն օգտագործվեց Արամ Մանուկյանի կողմից, երբ նա 1917թ. վերջից գլխավորեց Երևանի Հայոց ազգային խորհուրդը եւ 1918թ. հուլիսի 24-ից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը:

Ռուբեն Սահակյան
պատմական գիտությունների
թեկնածու

ОРГАНИЗАЦИЯ И ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОЙ

¹ ՀԱԱ, ֆ. Պ-242, ց.1, գ.3, թ.153:

² Նույն տեղում, ֆ.43, ց.1, գ.83, թ.43:

³ Նույն տեղում, Պ-242, ց.1, գ.3, թ.163:

⁴ Նույն տեղում, գ.10, թ.75:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԶԻՆՎԱԾ ՌԻՃԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ
(1918թ. Հունիս-նոյեմբեր)**

Հայաստանի Հանրապետության գոյություն երկուս ու կես տարիների ընթացքում Հայ-ուսական Հարաբերություններն ընթացան Հակասություններով լի, իրարամերձ վիթխարի դժվարությունների Հաղթահարման ճանապարհով, դժվարություններ, որոնք պայմանավորված էին ինչպես պատմական բարդ ժամանակաշրջանով, այնպես էլ թե՛ Հայաստանում եւ թե՛ Ռուսաստանում ընթացող լուրջ քաղաքական գործընթացներով: Հայ-ուսական Հարաբերությունները պայմանավորված էին ոչ միայն Հեռավոր անցյալից սկիզբ առած երկու ժողովուրդների դարավոր կապերով ու բարեկամություններով, այլև քաղաքական, անտեսական եւ այլ փոխադարձ շահերով:

Հայաստանի անկախության առաջին ամիսներին երկրի Համար ստեղծված ներքին եւ արտաքին ծայր ասիտան աննպաստ պայմաններում Հայ քաղաքական վերնախավի, Հասարակական լայն շրջանների միջավայրում գերակայում էր Ռուսաստանի Հետ բարեկամական, բնականոն գիվանագիտական Հարաբերություններ Հաստատելու մտայնությունը, անկախ նրա պետական քաղաքական կառուցվածքից:

Հայաստանը ամբողջովին մեկուսացված էր արտաքին աշխարհից, վտանգված էր Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Այդ իրավիճակում որեւէ Համաձայնություն թուրք-թաթար Հարեւանների Հետ անհնարին էր. «... որովհետեւ այդ ուժը չէր կամենում կամ չէր կարող Հաշտվել ոչ միայն Հայ ազգի քաղաքական, այլև ֆիզիկական գոյություն հետ: Հայությունը ստիպւած էր անընդհատ եւ անհաշտ կռիւ մղել թրքութեան դեմ, այլապէս նրան սպասում էր բնաջնջումն»:

Իր սեփական ուժերով միայն նա կարող էր ապահովել իր գոյությունը, այնքան անհասար էր կռիւր:

Այդպիսի պայմաններում նա բնազդօրէն պիտի կտռէր ամէն մի արտաքին ուժից, որ կարող էր օգնել նրան կասեցնելու Համար թուրք-թաթարական վտանգը:

Թուրքին զսպողը պատմականորեն եղել է ուսուր: Եւ շատ բնական է, որ թուրքի դեմ մղուող իր օրհասական պայքարի մէջ Հայը շարունակէր օգնութեան որոշ յոյսեր տածել ուսուրի Հանդեպ, չնայելով, որ վերջինս հետու էր»:¹ Հայ ժողովրդի ինքնապաշտպանության բնազդը տանում էր դեպի Ռուսաստան: Ռուսաստանի Հարավի գինված ուժերի գլխավոր Հրամանատար, գեներալ Ա. Ի. Դենիկինը տվյալ իրադարձություններին վերաբերող իր հուշերում գրում է, «Այդ պայմաններում Հայոց Ազգային խորհրդի եւ կառավարության ... բոլոր շանքերը ուղղված էին Հայ ժողովրդի բնկորների ֆիզիկական գոյության պահպանմանը»:

¹ Դարբինեան Ռ., Ռուսական վտանգը, Երևան, 1991, էջ 75:

... Կառավարությունը (Հայաստանի. - Գ.Պ.) ամենուր ՀուսաՀատ դիմումներ էր ուղարկում եւ փրկարար «կողմնորոշում» որոնում: ... Այդ պահին իշխում էր Ռուսաստանի Հետ միջպետական կապեր Հաստատելու անհրաժեշտություն գիտակցությունը: Կարեւոր չէր Ռուսաստանի քաղաքական կարգը, անգամ եթե այն լիներ խորհրդային, միայն թե նա ուժեղ լիներ եւ կարողանար փրկել Հայ ժողովրդին: Բայց այդպիսի Ռուսաստան այն ժամանակ գոյություն չուներ»:²

Հանրապետության նրակազմ կառավարության շրջանակներում հնչում էր նույնիսկ Հայաստանը Ռուսաստանի Հետ վերամիավորման պահանջ: Այդ մասին է վկայում 1918 թ. Հոկտեմբերի 24-ի Ռուսաստանի Հարավի գինված ուժերի գլխավոր Հրամանատարության կից «Հատուկ խորհրդակցության» քարոզչական բաժնի N 28 ամփոփագիրը, որում ասվում է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի օգնական Գեւորգ Մելիք - Կարակողովր Հայտարարել է. «Հայաստանի քաղաքականությունը բարենպաստ է Ռուսաստանի Հանդեպ: Այն Հնարավոր է դարձնում մինչեւ անգամ Ռուսաստանի Հետ Հայաստանի վերամիավորումը: Եթե անգամ այս կամ այն արտաքին գործուներր ազդեցություն տակ Հայաստանի կառավարությունը ստիպված լինի այլ բնույթի պաշտոնական Հայտարարություններ անել, ապա ... դրանք պետք է գիտել որպես Հարկադրված քայլեր»:³

... Տեր Կարապետովի՝ կարծիքով, - նշվում է նույն ամփոփագրում, - Հայաստանի վերամիավորումը Հնարավոր կդառնա այդ ուղղությամբ ուսական պետական իշխանությունների ակտիվ եւ իրական քայլեր ձեռնարկելու դեպքում: Հայաստանը զրկված է այդ ուղիով ինքնուրույն քայլեր կատարելու Հնարավորությունից»:⁴

Վրաստանում Հայաստանի Հանրապետության գործերի Հավատարմատար Ա. Զամայանը 1918 թ. օգոստոսի 8-ի N 286 նամակում՝ ուղղված Մոսկվայի Հայոց Ազգային կոմիտեին եւ Հայաստանի Ապահովության խորհրդին գրում է. «Ռուսներն ընդհանրապես դեպի մեզ բարեկամաբար են տրամադրւած, բայց նրանք քաղաքական կշիռ չունեն Անդրկովկասում: Մեր ու նրանց մեջ տարաձայնություններ չեն եղել եւ չկան»:⁵ Քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում Ռուսաստանը Անդրկովկասում ակտիվ գիվանագիտական գործունեություն չէր վարում. «Ռուսաստանի Համար, - գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը, - այնքան էլ արժեք չէր Հայաստանը, որ մտածեր իւր փրկութեան Համար: Նա զբաղված էր իւր ներքին գործերով»:⁶ Երկրի այդպիսի բարդ քաղաքական պայմաններում Դաշնակցության պաշտոնական «Զանգ» թերթը 1918 թ. դեկտեմբերի 8-ի «Ռուսաստանն ու Հայաստանը» խմբագրականում իր վերաբերմունքն է արտահայտում Հայ - ուսական Հարաբերությունների նկատմամբ. «Արդ, ի՞նչ է լինելու մեր դիրքը վերածնվող Ռուսաստանի Հանդեպ, մեր, որ «Մրկիււ եւր գառւած»:⁷ Իւրաքանչիւր քաղաքացի պարտական է ունենալ այս Հարցի պատասխանը»:

Մեր յարաբերությունը դեպի Ռուսաստանը պայմանաւորւում է քաղաքական այն կացութեամբ, որ առաջ եկավ մեզից անկախ եւ մեր կամքին Հակառակ: Մենք չէինք ուզում բաժանել Ռուսաստանից, բայց մեզ բաժանեցին: Մենք նպատակ

¹ Государственный архив Российской Федерации (այսուհետև՝ ԴԱ ՐԲ), ֆ.5827, օպ.1, Ժ.241, Լ.6, Դենիկին Ա.Ի., Ծերկի ռուսկոյ սմուտի, Մոսկա, 1991, Ե.140 - 141, Դենիկին Ա.Ի., Ծերկի ռուսկոյ սմուտի: Բելոե ծաւառնե Եւ Բորբա ծաւառնե Կոսովոյ արմի, Մայ-օկտաբր, 1918 (Վոսփոմինանիա, Մեմուարի).- Ե.85,,Վոփրոս Իստորիի”, N 3, 1992, Ե.94 - 95.

² Նկատի ունի 1918թ. Հունիսի 3-ի Բաթումում Հայաստանի Հանրապետության խաղաղարար պատվիրակության նախագահ Ա.Մատիսյանի ստորագրած պարտավորագիրը, - Գ.Պ.:

³ Կղզետական կուսակցության Անդրկովկասյան կոմիտեի ներկայացուցիչ է. - Գ.Պ.:

⁴ ԴԱ ՐԲ, ֆ.446, օպ.2, Ժ.132, Լ.86, Դենիկին Ա.Ի., Ծերկի ռուսկոյ սմուտի, Մոսկա, 1991, Ե.146, Դենիկին Ա.Ի., Ծերկի ռուսկոյ սմուտի: Բելոե ծաւառնե Եւ Բորբա ծաւառնե Կոսովոյ արմի, Մայ-օկտաբր, 1918 (Վոսփոմինանիա, Մեմուարի).-Ե.91-92.

⁵ ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, Գ.22, Թ.7, Գ.37, Թ.19:

⁶ Ռուբեն, Հայ յեղափոխանի մը յիշատակները, Հատոր է, Թեհրան, 1982, էջ 137:

չունէինք անկախութիւն յայտարարելու, բայց մեզ ստիպեցին: Դողալով մեր ժողովրդի ֆիզիկական գոյութեան վրայ՝ մենք արինք այնպիսի քայլեր, որ ուրիշ դեպքում չէինք անի: Ամենից քիչ սուբյեկտիւ հանգամանքները դեր կատարեցին Հայաստանի Հանրապետութիւնն ստեղծելիս: Եւ նոյն դրութիւնը, գծաթառարար, մնում է եւ այսօր: Մեր աշխարհագրական դիրքը, քաղաքական պայմանները վճարական նշանակութիւն ունեն մեր ընթացքը որոշելիս: Ոչ թե մենք պիտի վճռենք մեր քաղաքական ճակատագիրը, այլ մեզնից դուրս գտնուող եւ մեր կամեցողութեանը չենթարկուող ուժերը:

Հայաստանն այսօր անկախ է, բայց անկախութիւնը մեզ համար իդեալ չէ, ինչպես իդեալ չէ եւ ուրիշ որեւէ քաղաքական ձեւ: Մեր գերագույն նպատակն է ապահովել Հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը եւ նրա սոցիալ-տնտեսական ու կուլտուրական զարգացման հնարաւորութիւնների մաքսիմումը: Եւ այս տեսակետից կարող են լինել պայմաններ, ինչպես պատահեց Բրեստ-Լիտուսկից յետոյ, որ մենք ստիպված լինենք առնել այն ինչ որ մեզ տան կամ ինչ որ թելադրեն օրյեկտիվ Հանգամանքները: Կարող է պատահել, որ Հայաստանը ճանաչվի իբրեւ անկախ պետութիւն, կարող է լինել եւ հակառակը, այսինքն՝ նա մտցւի Թեղեքատի Խուսափանի շտապների մեջ: Երկու դէպքում էլ Հայ գեմմորատիան կուլտուրական անիղելի կապերով կապւած կմնայ ռուսական մեծ գեմմորատիայի հետ:

Կլինի Հայաստանն անկախ, թե նա կլինի ռուսական մի շտատ, Հայ գեմմորատիան երբէք չի մոռանայ քաղաքակրթական այն բարձր աւանդները, որ նա ստացել է Ռուսաստանի ազատասեր մասից: Վերջին մի դարի հայոց պատմութիւնը եւ ներկայ յեղափոխական շարժման ընթացքին Հայ գեմմորատիայի բունած ընթացքը մի բան միայն կարող են վկայել, որ մեծ Ռուսաստանն ու փոքրիկ Հայաստանը կապւած են իրար հետ շատ ամուր կապերով եւ աշխարհի բախտը որոշող ուժերին կմնայ վճռել, թէ այսուհետեւ որոնք են լինելու այդ կապեր՝ միայն կուլտուրական, թէ եւ քաղաքական պետական»:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան պաշտոնական դիրքորոշումը Հայ - ռուսական հարաբերութիւնների վերաբերյալ ներկայացված է Հ. Քաջազնունու կազմած ժամանակավոր կառավարութեան հայտարարում. «Ռուսաստանի հեռանալը Անդրկովկասից ուղղակի գծաթառութիւն է Հայաստանի համար: Դա մեզ համար ցանկալի չէր եւ եթե Ռուսաստանը երբեւէ վերադառնա Անդրկովկաս, կտանա մեր աջակցութիւնը: Սակայն մեր ընթացիկ քաղաքականութիւնը չի կարող կառուցվել ռուսական կողմնորոշման վրա:

Ներկա պահին Ռուսաստանը մեզ ոչնչով օգնել չի կարող (սոսքը գնում է տեղում իրական օգնութեան եւ ոչ թե կոտանդնուպոլսի խորհրդածողովում դիվանագիտական աջակցութեան մասին):

Այդ պատճառով ես կարծում եմ, որ Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել:

Դա կուժեղացնի թուրքերի կասկածամտութիւնը եւ նրանք չեն վարանի դիմելու համապատասխան միջոցների Ռուսաստանի հետ մեր համագործակցութիւնը խափանելու համար: ... Ռուսական կողմնորոշումը քաղաքական ուղղութիւն է, որը կարող է անհրաժեշտ լինել ապագայում, սակայն այժմ այն կարող է հանգեցնել նոր բարդացումների...» (ընդգումը մերն է, - Գ.Պ.):

Հայաստանի ժամանակավոր կառավարութեան հայտարարը Հ. Քաջազնունին եղբարձարում է. «Այսպիսին է քաղաքականութիւնը, որը ես մտադիր եմ վարելու: Այն թելադրված է այսօրվա իրավիճակից: Եթե իրավիճակը փոխվի, իսկ դա մեր օրերում կարող է պատահել ամեն ինչ, եւ քաղաքական ուղու կտրուկ շրջադարձի կարիք զգացվի, այդժամ ես իմ տեղը կզիջեմ այլոց, որոնք ավելի լավ կգնահատեն ստեղծված իրադրութիւնը եւ երկիրը կտանեն նոր ճանապարհով...»:

Ի՞նչ է ի նկատի ունեն Հ. Քաջազնունին, հայտարարում չեղեցիով, թե «Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել»:

1918 թ. օգոստոսի 3-ին, Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում Հ. Քաջազնունին ներկայացրեց կառավարութեան հայտագիրը երկրի ներքին եւ արտաքին քաղաքական դրութեան մասին, սակայն կառավարութեան պաշտոնական դիրքորոշումը Հայ - ռուսական հարաբերութիւնների վերաբերյալ չհրատարակեց, մի հանգամանք որը գծգոհութիւն հարուցեց խորհրդարականներ Ա. Խոնդկարյանի, Ա. Մելիքյանի եւ Ս. Մամիկոնյանի կողմից: Բանն այն է, որ Հայաստանի Խորհրդում Հայ-ռուսական հարաբերութիւնների մասին կառավարութեան հայտագրի հրատարակումը հղի էր անկանխատեսելի հետեւանքներով: Այն կարող էր աւելի տալ Թուրքիային նոր ռազմական գործողութիւններ սկսել Հայաստանի դեմ: Դեռեւս 1918թ. Հունիսի 3-ին Բաթումում Հայաստանի խաղաղարար պատվիրակութեան ղեկավար Ա.Պատիւյանը Թուրքիայի ճնշման ներքո ստորագրել էր մի փաստաթուղթ եւ ստանձնել որոշակի պարտավորութիւն՝ «Հայաստանի Հաշտարար պատվիրակութիւնը, հաշվի առնելով Ձեր գերազանցութեան հետ ունեցած բանակցութիւնները, Օսմանյան կայսրութեան եւ Հայաստանի միջեւ հաշտութեան եւ բարեկամութեան մասին պայմանագրի կնքման առիթով պատիվ ունի հավաստիացնելու հետեւյալը.

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պարտավորվում է պատերազմի ամբողջ ընթացքում չպահպանել եւ ոչ մի դիվանագիտական կապեր այն պետութիւնների հետ, որոնք գտնվում են պատերազմական վիճակում Օսմանյան կայսրութեան հետ» (ընդգումը մերն է, - Գ.Պ.):

Ինչպես երեւում էր հունիսի 3-ի փաստաթղթից Հայաստանը պարտավորվում էր մի կողմից պատերազմի ողջ ընթացքում կապեր չունենալ Համաձայնութեան երկրների, այդ թվում նաեւ Ռուսաստանի հետ, մյուս կողմից հանրային կարծիքին ներկայացնել այդ փաստաթուղթը, ինչը նշանակում էր փորձութեան ենթարկել Հայաստանի կառավարութեան վարկը, որովհետեւ «Ռուսահայերը, - գրում է Ա. Ջամալյանը, - երազում էին ռուսական տիրապետութեան վերադարձի մասին»:

Իսկ ինչ է ի նկատի ունեն Հ. Քաջազնունին, երբ հայտարարում նշում էր, թե «ներկա պահին Ռուսաստանը մեզ ոչնչով օգնել չի կարող»: Բանն այն է, որ Ռուսաստանը սովյալ պահին գտնվում էր քաղաքացիական պատերազմի հորձանուտի մեջ եւ երեք՝ խորհրդային, կառավարական եւ Կոչակի հակամարտ ուժերից որեւէ մեկի վերջնական հաղթանակը դեռեւս առկում էր: Հլուսիսային Կողմիս եւ Դոնի Հանրապետութեան Հայ գիւմրականների կոմիսար Սիբաք Գրիգորյանը 1918թ. հուլիսի 21-ին Թիֆլիսի Հայոց Ազգային (Կենտրոնական) խորհրդին ուղղված նամակում գրում է. «...այժմ ամբողջ Ռուսաստանը ներկայացնում է մի հսկայական քաղաքացիական կռիվ վայր, ուր առաջ են եկել բազմաթիվ ֆրոնտներ եւ ազգաբնակչութիւնը բաժանված գանազան խմբերի՝ իրար կոտորում են: Թե այս ընդհանուր բոսոսից ինչպիսի իշխանութիւն առաջ կգա, կպարզվի շատ մոտ ապագայում»:

Իրականում Ռուսաստանն էլ դեռեւս կազմակերպված պետութիւն չէր եւ քաղաքական կշիռ չունէր Անդրկովկասում: Արտաքին աշխարհից ամբողջովին մեկուսացված Հայաստանի Հանրապետութիւնը հարկադրաբար խախտելով Բաթումի 1918թ. հունիսի 3-ին խաղաղարար պատվիրակութեան ստորագրած պարտագրագիրը եւ հունիսի 4-ի պայմանագրի սահմանված պայմանները խիստ զգուշորեն, զազտին փորձում էր ուղիներ որոնել կապեր հաստատելու համար Ռուսաստանի թե՛ խորհրդային եւ թե՛ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ անտեսելով այդ երկրում ընթացող արյունալի քաղաքացիական պատերազմը: Ռուսաստանի հետ կապերի հաստատման մի շարք լուրջ գրգայատճառները եւ կուսակցված բազմաթիվ անհավաղ լուծում պահանջող խնդիրները երկրի անկախացման առաջին միտններին ծանրակշիռ ու բազմազան էին, այնպես որ չէին կարող անուշադրութեան կամ անտարբերութեան մատնվել Հայաստանի խորհրդի եւ

¹ Տես «ՎԷԽ» ամսագիր, 1934, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 92 - 93, 96,98:

² Մինչեւ վերջերս Հայտնի չէր Հայ պատմագիտութեանը,- Գ.Պ.:

³ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.32, թ.6, (գործավարական թարգմանութեան ֆրանսերենից):

⁴ Հայրենիք» ամսագիր, Բոստոն, հունիս, 1924, էջ 78:

⁵ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.158, թ.51:

¹ «Ջանդ» թիւթ, 8 դեկտեմբերի, 1918թ., ՀԱԱ, ֆ.Կ-1022, ց.4, գ.48, թ.1 - 4:

² ՀԱԱ, ֆ.Պ-199, ց.1, գ.10, թ.12:

³ Նույն տեղում, թ.15:

կառավարութեան կողմից: Կարելոր էր այն, որ ապովինելով Ռուսաստանի բարյացկամ վերաբերմունքին, Հայաստանի նորակազմ կառավարութիւնը փորձում էր Ռուսաստանի տարբեր քաղաքական վարչաձեւերի ձգտող պետական կազմավորումների կողմից ճանաչել տայու սեփական պետութեան անկախութիւնը եւ ապահովելու երկու երկրների բարեկամական հարաբերութիւնները: Հուլիսի էին տաժու, թե՛ Ռուսաստանը որեւէ կերպ կթեթեւացնի Ազրբեջանի ու Վրաստանի մշտական ճնշումներն ու թշնամանքը, կհեզգրացնի Թուրքիայի կողմից Հայաստանին մշտապես սպառնացող վտանգը: Արտաքին աշխարհից բրդորովին կտրված Հայաստանը ակնկալում էր, որ Ռուսաստանից կհերկրի հացահատիկ, գինք, դիւնամիթերք եւ այլ կենսականորեն անհրաժեշտ ապրանքներ՝:

Հայաստանի կառավարութիւնը մտահոգված էր՝ ուղիներ որոնելու առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանի հարավում կուտակված, արեւմտյան ուղղմամբ հարմարեցված, գերմանական ու ավստրո-հունգարական գերութիւններից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաներին ու զինվորներին հայրենիք տեղափոխելու խնդրով: Կարելորվում էր օժանդակել Ռուսաստանի Հարավի Դոնի, Կուբանի, Թերեքի եւ Հյուսիսային Կովկասի հայ համայնքների կազմակերպմանը եւ օգտագործելու նրանց մտավոր ուժը եւ նյութական միջոցները հայրենիքին օգնելու համար: Հայաստանի Հանրապետութեան եւ Կուբանի երկրամասի, կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցութեան» միջեւ ապրանքափոխանակութիւն իրականացնելը անհապաղ լուծում պահանջող խնդիրներից էր: Հայաստանի կառավարութիւնը նախատեսում էր Եկատերինոգար ուղարկել հայկական կոնյակ, սպիրտ, բամբակ, կաշի եւ այլ ապրանքներ, իսկ Եկատերինոգարից ստանալ հաց, սննդամթերք, գինք եւ այլ անհրաժեշտ ապրանքներ:

Ռուսաստանի հետ կապերի հաստատման կարելոր պատճառներից մեկը, անշուշտ հրատապ եւ հիմնավոր լուծում պահանջող գաղթականութեան խնդիրն էր:

Առաջին աշխարհամարտի տարիներին, հայոց ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովրդի մի հատվածը հարկազրկված թողել էր իր հայրենիքը եւ հաստատվել մերձակա ու հեռավոր երկրներում, այդ թվում նաեւ Ռուսաստանում: Միայն Ռուսաստանի Հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի երկրամասերի եւ Հյուսիսային Կովկասի մի շարք բնակավայրերում պատերազմի ընթացքում հանգրվանել էին շուրջ 200 հազար հայ գաղթականներ ու մոտ 5 հազար ուղղմագրիներ, որոնք գտնվում էին միանգամայն ծանր ու անօգնական վիճակում: Այդ ողբերգական իրադարձութիւնների ակնատեսն Ռուբեն Դարբինյանը իր հուշերում գրում է՝ թե՛ Արեւմտյան Հայաստանից առաջին աշխարհամարտի տարիներին հարավային Ռուսաստան եւ Հյուսիսային Կովկաս գաղթած հայերը այնքան շատ էին, որ ամենուր լսվում էր մայրենի լեզուն. «որ երբէմն կթվեր, թէ կը գտնուէիր ոչ թէ Ռուսաստանի, այլ Հայաստանի մեջ»¹: Եթե 1917 թվականին Հյուսիսային Կովկասում հայ գաղթականների թիվը հասել էր 70 հազարի², ապա 1919թ. հունվարին այն կազմեց շուրջ 100 հազար³:

«Հորիզոն» պարբերականն անդրադառնալով գաղթականութեան ծանր ու ողբերգական վիճակին՝ տեղեկացնում է, որ միայն Եկատերինոգարում ապաստանած շուրջ 8 հազար, Վլադիկավկասում՝ 10 հազար եւ Արմավիրում՝ 18 հազար հայ գաղթականներ անօթեւան են եւ անօգնական, մնացել են ամբողջովին

բաց երկնքի տակ եւ ամեն օր սովից ու հիվանդութիւններից մահանում է տանյակից ավել մարդ⁴: Դոնի եւ Հյուսիսային Կովկասի հայ զինվորականների կամիսար Ս.Գրիգորյանը եւ Կիեւից Ուկրաինայում Հայաստանի Հանրապետութեան զինանագիրական մեխիայի ներկայացուցիչ Գ.Չամոյանը՝ եւ այդ շրջանների հայ ազգային կազմակերպութիւնների մի շարք ներկայացուցիչներ տազնապով դիմում են Թիֆլիսի Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդին, Հայաստանի կառավարութեանը խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել գաղթականներին, ուղղմագրիներին օգնելու եւ նրանց հայրենիք վերադառնալու համար: Ս.Գրիգորյանը 1918թ. հունիսի 28-ին Թիֆլիսի Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդին ուղղված նամակում տեղեկացնում է, որ. «Չափից դուրս վատ վիճակի մէջ են գտնուում գաղթականները: Շէնքերի բացակայութեւն, հացի, ջրի պակասը, լաւ կազմակերպողներ չլինելը եւ մանաւանդ տեղական իշխանութիւնների եւ ուսւ ժողովրդի անբարեհաճ վերաբերմունքը ստեղծում են սոսկալի ծանր վիճակ հայ գաղթականներին համար: Շատ յաճախ հազարաւոր մարդիկ թափւած են մնում որեւէ երկրագրական կայսրանում, ուր ոչ հաց է գտնուում, ոչ ջուր եւ տեղական իշխանութիւնը չի թողնում նրանց գնալու իրենց նշանակւած տեղը: ...կան սովամահուցեթեան դէպքեր: Դրանց մի մասը մինչեւ օրս թափւած են մնում... կայսրաններում»:

Սոսկալի պրօվոկացիա է սկսված գաղթականների դեմ: Հայաժոււււ են, անւանելով նրանց աւտօնօմիտսներ եւ ուսւներին Կովկասում թալանողներ, կոտորուղիներ են նրանց այնտեղից դուրս վտնողողներ:

Տեղական հայ կոմիտեները անկարող են գաղթականական գործը կառավարել, չուեն լաւ ոյժեր եւ կազմակերպողներ:

Հարկաւոր է միջոցներ ձեռք առնել, քանի ուշ էլ»⁵:

Մանր էր ու աղետալի հայ գաղթականների ու ուղղմագրիների վիճակը հատկապես այն վայրերում, որտեղ չկային ազգային կազմակերպութիւններ կամ զինանագիրական եւ հյուպատոսական ներկայացուցչութիւններ:

Բերված բազմաթիւ վավերագրերը լույս են սփռում Հայաստանի Հանրապետութեան գոյութեան առաջին ամիսներին Հայոց Ազգային (կենտրոնական) խորհրդի եւ կառավարութեան Ռուսաստանի Հանրեպ տարվող պալատի ու գոլուշավոր քաղաքականութեան վրա, անկախ Ռուսաստանում սակա պետական կազմավորումների քաղաքական ուղղվածութիւնից, մի Կանգամանք, որը պայմանավորված էր Հայաստանի համար կենսական անհրաժեշտութեան ունեցող քաղաքական ու անտեսական խնդիրների լուծմամբ:

Երկրի անկախացման սկընական շրջանում Ռուսաստանի խորհրդային եւ ոչ խորհրդային երկրամասեր ու քաղաքներ հայկական տարբեր կիսապաշտոնական պատվիրակութիւններ, սուբհանդակներ էին գաղտնի գործուղվում Հայաստանի աննշվող բազմաթիւ խնդիրներ լուծելու նպատակով:

Հայաստանի անկախացման առաջին օրերից Մոսկվայում էին գտնվում Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլիպարյան), Սարգիս Հակոբյանը (Արապիտ Նազարյան) եւ բժիշկ Հակոբ Չավրիեւր (Մոսկվայում էր գեւեւս 1918թ. մայիսի 27-ից), որոնք փորձում էին կանոնավոր հարաբերութիւններ հաստատել խորհրդային Ռուսաստանի հետ, իրավաբանորեն՝ դե յուրե ճանաչել տալ Հայաստանի Հանրապետութեան իրրեւ անկախ պետութիւն եւ օգտագործել նրա հնարավորութիւնները բազմաշարքար հայ ժողովրդին օգնելու համար: Ասկայն Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնների հետ անմիջական կապերը հաստատելու հնարավորութիւնները սահմանափակ էին եւ բանակցութիւնները շուրափելի դրական արդուււնք չուղեցին:

Այդ կապակցութեամբ պատվիրակութեան անդամ Ս. Հակոբյանը (Լ. Նազարյան) գրում է. «Թուրքերը մեկ կողմէն երկաթէ օղակի մէջ կառնէին Հայաստանը, իսկ միւս կողմէն զարհուրելի հարւած մը կը պարարասէին Բազուի

¹ Տես Ռուբեն, Հայ յեղափոխականի մը լիւշտակները, Է հատոր, էջ 256-257:

² Տես Архив внешней политики Российской Федерации (այսու հետ՝ АВП РФ), փ.148, օп. 3, номер папки 2, д.14, л.3, 4, 5, ՀԱԱ, ֆ. Պ-200, ց.1, գ.73, մաս I, թ.129, ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.12, թ.5, ՀԱԱ, ֆ.Պ-205, ց.1, գ.555, մաս I, թ.144, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.498, թ.23, «Աշխատավոր», 20 մայիսի, 1919թ., Թիֆլիս, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, թիվ 10, օգոստոս, էջ 79, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, թիվ 11, սեպտեմբեր, էջ 133:

³ Տես Հակոբյան Հ., Տարագիր հայութեան հայրենիք վերադառնալու պահանջի պատմական եւ իրավական հիմքերը, Երեւան, 2002, էջ 213-216, 256, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1947, թիվ 4, հուլիս-օգոստոս, էջ 82:

⁴ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1960, թիվ 8, օգոստոս, էջ 25-26:

⁵ Տես ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.498, թ.23:

⁶ Տես Հակոբյան Հ., Տարագիր հայութեան հայրենիք վերադառնալու պահանջի պատմական եւ իրավական հիմքերը, Երեւան, 2002, էջ 214:

¹ Տես «Հորիզոն», 21, 25 օգոստոսի, 1918թ., Թիֆլիս, «Հորիզոն», 4, 13, 24, 29 սեպտեմբերի, 1918թ. Թիֆլիս:

² Տես ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.73, մաս I, թ.128-129, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.210, թ.8, «Աշխատավոր», 20 մայիսի, 1919թ., Թիֆլիս:

³ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.158, թ.40-42, 48-49, «Հորիզոն», 21 օգոստոսի, 1918թ., Թիֆլիս:

գեմ: Հայաստանը դուրսէն օգնութիւն ստանալու ոչ մէկ յոյս ունէր, մինչ գիշատչի գրաքննները իր ծեսուած մարմինը անդամատելու ծրագիրներ կործակին:

Այս պայմաններու մէջ նայաւձքը ակամայ պիտի ուղղուէր նորէն դեպի Մոսկովա:

Խորհրդային իշխանութեան Հետ կանոնաւոր յարաբերութիւններ մշակելու մեր առաջին փորձին ճախողումը չլուսահատեցուց: Նկատի ունենալով, որ Հայ ազգեցիկ կոմունիստներէն Մահակ Տէր-Փարբիէլեան իր շատ մը կուսակիցներու պէս անտարբեր էր Հայութեան սպառնացող վտանգին Հանդէպ ու, միեւնոյն ատեն, բաւական մօտ էր Լենինին, խնդրեցինք, որ ջանայ յաջողեցնել մեր այնքան փափազած խորհրդակցութիւնը: Տէր-Փարբիէլեանի գիմումին վրա Լենին կը Հուսանի կազմել երկու կուսակցութեանց ներկայացուցիչներէն յանձնարումը մը եւ ինքը կանաւնէ անոր երեք բոլշեւիկ անդամները, այն է՝ Կամենեւ (իրբեւ յանձնարումը նախագահ), Աւանեսով եւ Տէր-Փարբիէլեան: Դաշնակցութեան կողմէն ընտրեցան՝ Ջուրեան, Ջիլիկարեան եւ ես (Լիպարիտ Նազարյան, - Գ.Պ.):

Առաջին նիստը նշանակած էր օգոստոսի 27-ին Աւանեսովի մօտ: Որոշուած ժամին մենք երեք գնացինք Հոն, երկար սպասեցինք, բայց բոլշեւիկներէն ոչ ոք չեկաւ: Նոյն գիշերը Ջուրեան եւ ես ձերբակալեցանք ... Ամիսներ յետո, երբ արդէն ելած էի քանտէն, կարեւոր բոլշեւիկ մը վրդովումով կը պատմէր ինձի, թէ Աւանեսովը եւ իր արբանեակները յաջողած էին ոչ միայն անգամ մը եւս վիճեցնել խորհրդակցութիւնը, այլ եւ մեզ ձերբակալելու արտօնութիւնը ստանալ:

Մեր գեմ գործ դրւած այս բացատիկ միջոցի ձեւական առիթը Հետեւեալն էր. երբ անգլիացիները 1918-ի ամառը Բագուի մէջ ձերբակալեցին Ա.Շահումեանը եւ իր ընկերները, Մոսկովայի մէջ կարգ մը բոլշեւիկներ պահանջեցին իրբեւ պատանդ առնել Հոն գտնուող ծանօթ մենչեւիկները, էսերները եւ դաշնակցականները, վասնզի այդ կուսակցութեանց ներկայացուցիչներէն կազմուած Բագուի կառավարութիւնը կը նպատակէր եղեր անգլիացիներուն: Այս պահանջը փութաց կատարել միայն «Հայկական կոմիտարիատը» ու ձերբակալել տուաւ դաշնակցականները:

Մենք մնացինք բանտը մինչեւ 1919 թ. մարտ ամիսը, միշտ գնդակահարման սպանդախիթի սակ: Ապա մէկ ամբողջ տարի ալ պահեցին մեզ Մոսկուայի մէջ ու միայն 1920-ի գարնան իրաւունք տւին մեկնելու արտասահման: Դժբախտաբար այդ իրաւունքէն կարողացայ օգտուել միայն ես, իսկ Հէք Ջուրեանը, որը կաշխատը Հիւանդանոցի մը մէջ, վարակվեցաւ բժաւոր տիֆէ ու մեռաւ (1920 թ. փետրվարի 20-ին, - Գ.Պ.):»:

Խորհրդային իշխանութեան ներկայացուցիչների եւ Հայաստանի Հանրապետութեան պատվիրակների միջեւ բանակցութիւններ էին ընթանում նաեւ Բեռլինում: 1918թ. օգոստոսի 19-ին Հայոց Ազգային (Կենտրոնական) Խորհրդին եւ կառավարութեանը ուղղված նամակում Հայկական պատվիրակութեան ղեկավար Հ.Օհանջանյանը գրում է, որ «...անկախութեանը (Հայաստանի Հանրապետութեան.- Գ.Պ.) հակառակ է Ռուսաստանը»: Նույն խնդրով 1918 թ. հոկտեմբերի 1-ին Հ.Օհանջանյանը եւ Գ.Չամոյանը Բեռլինում Հանդիպում ունեցան խորհրդային դիվանագետ Ադոլֆ Իոֆֆեի Հետ*, որը նույնպէս ավարտվեց անարդյունք. «... Մենք Ձեզ Հայերիդ, - ասում է Իոֆֆեին, - փրկում ենք կոտորածից եւ ոչնչանալուց եւ Հիմա սպասում ենք, որ դուք խոսք չեք բարձրացնի անկախութեան մասին, վոչ էլ գանազան գրամներ կպահանջեք մեզից, իրբեւ մի առանձին մարմին: Երբ ես նրան ասացի, - գրում է Հ.Օհանջանյանը, - որ ստացել եմ առաջարկութիւն արտաքին գործոց նախարարութիւնից բողոքելու այն բանի դեմ, որ Ռուսաստանը՝ մեր անկախութիւնը չի ընդունում - ուղղակի կատարեց եւ փրփուրը բերանին սկսեց ճառախոսել, որ մենք իրենց օգնելու փոխարեն՝ Հայաստանը փրկել ստճելների կոտորածից, մտածում ենք անկախութեան մասին եւ մտածում ենք մեր

դասակարգային մանր բուրժուական շահերը սպահովել Հայ բանվորութեան եւ աշխատավոր՝ գյուղացիութեան Հանդեպ եւ այլն եւ այլն: Ավսից երկուս եւ կես ժամվա տար վիճարանութիւն, որից կարելի է գալ այն եզրակացութեան, որ այդ Հաստագրութիւններն ոչինչ չի կարելի Հասկացնել եւ նրանք անկախութեան ընդունելու մասին, առանց գրախ ազգեցութեան, չեն էլ մտածի երբեք: ... Դուրս եկանք ոչինչ չը ստացած եւ նույնիսկ մի բան էլ մենք պարտք մնացինք, որ խանդաւորւմ ենք Իոֆֆեիներին փրկել Հայաստանը Տանկաստանի ճանկերից»:

Հայաստանի կառավարութիւնը լուրջ ջանքեր գործադրեց Կուրանի Հակարուշեւիկյան երկրամասային կառավարութեան եւ Ռուսաստանի Հարավի զինված ուժերի Հրամանատարութեան Հետ սերտ կապեր Հաստատելու նպատակով, ակնկալելով նրանց աջակցութիւնը Հայ ռազմագերիներին եւ դաղթականներին Հայրենիք տեղափոխելու, Հացի, սննդամթերքի, ռազմական Հագերձանքի եւ այլ խնդիրների լուծման գործում:

Հարկ է նշել, որ Կամավորական բանակը մինչեւ 1918 թ. նոյեմբեր ամիսը ամուր կազմակերպված պետական կազմավորում էր եւ Անդրկովկասում քաղաքական վարկ չուներ:

Իեւեւս 1917թ. նոյեմբերի Հեղաշրջման օրերին Պետրոգրադից Նովոչերկասկ փախուստի դիմած գեներալ Միխայիլ Ալեքսեևը* անմիջապէս կազմակերպեց Հակարուշեւիկյան ուղղվածութեամբ զինված ուժեր, որը պաշտոնապէս անվանվեց Կամավորական բանակ եւ որին ակնվորեն աջակցեց Դոնի զինվորական կառավարութեան ղեկավար, ատաման Կայդիներ, միասնական ուժերով բոլշեւիկներին Հարվածելու Համար: Կամավորական բանակը բոլշեւիկ մի գեմ միասնական պաշարի Հավաքատեղի բնարեց Դոնը, որտեղից Հարվածելու էր Կուրանի խորհրդային իշխանութեանը: 1918թ. հունիսին Կուրանի գեմ սկսված Կամավորական բանակի Հորդ արշավանքը ավարտվեց Հաղթանակով. օգոստոսի 3-ին գրավվեց Եկատերինոգրաբը, որը դարձավ Հակարուշեւիկյան Կամավորական բանակի Հրամանատարութեանը կից «Հատուկ խորհրդակցութեան» մայրաքաղաքը³: Այնուհետեւ եկատերինոգրաբը դարձավ Կամավորական բանակի քաղաքական, տնտեսական, ռազմական ու դիվանագիտական գործունեութեան կենտրոնը: Օգոստոսի 18-ին Վ.Շուլցիներ՝ կողմից կազմած «Հատուկ խորհրդակցութեան» կանոնադրութիւնը Հաստատվեց գեներալ Մ. Ալեքսեևի կողմից:

«Հատուկ խորհրդակցութեան» նպատակն էր ամբողջութեամբ վերականգնել Ռուսաստանից անջատված անկախ պետական կազմավորումները, պետական կառավարումը եւ տեղական մարմինների գործունեութիւնը ենթարկել Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցութեանը»⁴: «Հատուկ խորհրդակցութեան» նախագահ՝ նշանակվեց գեներալ Մ. Ալեքսեևը, տեղակալներ՝ գեներալներ Ա.Դենիկինը, Ա.Դրագոմիրովը,⁵ Ա. Լուկոմսկին:⁶ Փաստորեն Ռուսաստանը

¹ ՀԱԱ, ֆ. Պ-200, ց.2, գ.11, թ.73, Տե՛ս նաեւ 1918թ. հոկտեմբերի 13-ին Կիւիւց Գ.Չամոյանի նամակը ուղղված Թիֆլիս՝ Արշակ Չամալյանին, ֆ.Պ-200, ց.1, գ.73, մաս 1, թ.68:

² Ալեքսեև Միխայիլ Վասիլևիչ (1857-1918), ցարական բանակի զորավար, գեներալ-ալյուստանտ (1915), գրադցրեւ է մի շարք բարձր զինվորական պաշտոններ, Գերագույն Գլխավոր Հրամանատար (1917 մարտ-մայիս), Հոկտեմբերյան Հեղաշրոււմից Հետո անցել է Ռուսաստանի Հարավ, Կամավորական բանակի կազմակերպիչ, 1918թ. օգոստոսից Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցութեան» նախագահ:

³ Տե՛ս Դրուկան Գ.Ա., Антисоциалистическое правительство России, Москва, 2000, с.124.

⁴ Տե՛ս Դրուկան Գ.Ա., Антисоциалистическое правительство России, Москва, 2000, с.124.

⁵ Տե՛ս Դրուկան Գ.Ա., Антисоциалистическое правительство России, Москва, 2000, с.124.

⁶ Տե՛ս Դրուկան Գ.Ա., Антисоциалистическое правительство России, Москва, 2000, с.124.

¹ «Դրոշակ» ամսագիր, N 8-9, 1928, օգոստոս-սեպտեմբեր, էջ 233:

² ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.2, գ.135, թ.6:

* Իոֆֆե Ադոլֆ Արքամովիչ (1883 - 1927), խորհրդային պետական, կուսակցական գործիչ, Բրեստի բանակցութիւններում խորհրդային պատվիրակութեան անգամ, Բեռլինում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ է:

տանի Հարավում ստեղծվեց երկիրչխանութուն՝ Կամավորական բանակի Հրամանատարութիւնը եւ «Հատուկ խորհրդակցութիւնը»՝ որպէս նրա քաղաքական մարմին: Վերջինս փաստորեն կատարում էր կառավարութեան գործառնութիւնը, իր մեջ ներառելով արտաքին եւ ներքին գործերի, արդարադատութեան, ֆինանսների, ճանապարհահիմնութեան, առևտրի եւ արդյունաբերութեան եւ այլ նախարարութիւններ: 1918 թ. սեպտեմբերի 25-ին գեներալ Մ. Ալեքսանի մահաց շնորհիւ գեներալ Ա. Դենիկինը սեպտեմբերի 28-ին Կամավորական բանակը վերակազմավորեց եւ հռչակեց իրրեւ Ռուսաստանի Հարավի գինոված ուժերի եւ գլխավոր Հրամանատարութեանը կից՝ «Հատուկ խորհրդակցութիւնը»: «Հատուկ խորհրդակցութեան» նախագահ նշանակեց, գեներալ Ա. Դրագոմիրովը, որը ենթարկվեց գլխավոր Հրամանատար գեներալ Ա. Դենիկինին: Ռուսաստանի Հարավի գինոված ուժերի գլխավոր Հրամանատարութեան կից «Հատուկ խորհրդակցութեան» գլխավոր նպատակը Հակաբոլշևիկյան ուժերի միավորումն էր, իսկ քաղաքական կարգադրութիւնը՝ «Անբաժանելի միացյալ Ռուսաստանի» վերականգնումը մինչեւ 1914թ. օգոստոսի 1-ի սահմանները:

Գեներալ Ա. Դրագոմիրովը ներկայացնում է «Հատուկ խորհրդակցութեան» գործունեութեան ծրագիրը.

1. Կամավորական բանակի ազդեցութեան տակ գտնվող տարածքներում մշակել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեութեան վերականգնմանը վերաբերող հարցերը:

2. Ընդունել վերոհիշյալ տարածքների կառավարմանն ու Ռուսական կայսրութեան վերականգնմանն օժանդակող ժամանակավոր օրենքներ:

3. Գնահատելով նախկին Ռուսական կայսրութեան բոլոր նահանգներում տիրող իրավիճակը եւ նրանց կառավարութիւններին ու քաղաքական կուսակցութիւններին Հետ Հարաբերութիւններ Հաստատելով՝ կազմակերպել Մեծ Ռուսաստանի վերականգնմանն ուղղված Համատեղ աշխատանքներ:

4. Հարաբերութիւններ Հաստատել Համաձայնութեան երկրների ներկայացուցիչների հետ եւ Կամավորական բանակի Հիմնական նպատակների իրագործմանը նպաստող գործողութիւնների ծրագիր մշակել:

5. Հայտնի պետական գործիչներին, տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացուցիչներին, առևտրի, արդյունաբերութեան եւ ֆինանսների ոլորտների գործիչներին ներգրավել պետութեան կառուցման գործընթացի մեջ»:

«Հատուկ խորհրդակցութեան» կազմում որպէս բաժնի պետեր ընդգրկվեցին. նախկին ռուսական կայսրութեան արտաքին գործերի նախարար Մ. Սազոնովը՝ գրիվանադիտական, Օ. Հէյմանը՝ ֆինանսական, Վ. Լեբեդեւը՝ առևտրի, արդյունաբերութեան եւ մատակարարման, Է. Շուբերսկին՝ ճանապարհների եւ Հաղորդակցութեան, գեներալ Ա. Մախարեևին՝ արդարադատութեան, գեներալ Ա. Լուկոմսկին՝ ուղղափառության, Վ. Ստեպանովը՝ պետական վերահսկողութեան: Հրավիրվեցին նաեւ պետական քաղաքական մի շարք անվանի նախկին գործիչներ՝ Վ. Մալխոլովը (Լոնդոնում ժամանակավոր կառավարութեան նախկին գեներալ), Ա. Իզվոլսկին՝ (նախկին գեսպան Փարիզում), Ա. Նեստորովը, Վ. Շուլցին, Մ. Վիլնովը, Ն. Աստրովը, Պ. Նովոգորոցեւը, Գ. Տրուբեցկոյը, Պ. Միլյուկովը եւ շատ ուրիշներ:

1918 թ. նոյեմբերին, երբ Անտանտը սկսեց Հովանավորել գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակին, այն լուրջ սպառնալիք դարձավ բոլշևիկների համար⁴:

Կուբանի Երկրամասի կառավարութեան եւ Կամավորական բանակի գլխավոր Հրամանատարութեան կից «Հատուկ խորհրդակցութեան» միջև գոյութեւն ունեին ներքին տարաձայնութիւններ: Չնայած Կուբանի Երկրամասի գինոված ուժերը գտնվում էին գեներալ Ա. Դենիկինի ընդհանուր Հրամանատարութեան տակ եւ Համատեղ պայքարում էին բոլշևիկների դեմ, սակայն Կուբանի Երկրամասի կառավարութիւնը ձգտում էր անկախութեան: Այդ առիթով ճիշտ է դիտարկել Ռուբեն Դարբինյանը գրելով, թե. «Կուբանցիք «ուկրայնական օրինաւոր» ունեին եւ կը ձգտեն անկախութեան: Չոր. Դենիկինը, որ ռուս կայսրապաշտ մըն է եւ իրական մեջ կը ձգտեր վերակազմել ցարական Ռուսաստանը ամբողջութեամբ, անհաշտ թշնամի էր Կուբանի նախագահի անկախութեան գաղափարին, բնականաբար: Ու թէլեւ Կուբանի գործը ենթակա էր Չոր. Դենիկինի ընդհանուր Հրամանատարութեան եւ Կամավորական բանակի հետ միասին կկովեր բոլշևիկներուն դեմ, բայց խուլ հակամարտութիւն կար Կուբանի եւ Չոր. Դենիկինի միջև: Կուբանը, թէլեւ առերես բարեկամ էր անոր, բայց փաստորեն սպառնալիք կենթարկեր անոր բոլոր ձեռնարկները»:

Կուբանի Երկրամասի կառավարութիւնը եւ Ռուսաստանի Հարավի գինոված ուժերի գլխավոր Հրամանատարութեան կից «Հատուկ խորհրդակցութեան» վերաբերմունքը Անդրկովկասի անկախ Հանրապետութիւնների նկատմամբ միանշանակ չէր: Առաջինը կանգնած էր Ֆեդերատիվ Ռուսաստանի տեսակետին եւ իր մերձավոր խնդիրն էր համարում Կովկասի բոլոր պետութիւնների միութիւնը, այդ թվում «Նաեւ Ազրբեջանի (Ա.Լ. Բիչի արտահայտութիւնը)»՝ բոլշևիկների դեմ միասնական ճակատի ստեղծման համար: Մինչդեռ Կամավորական բանակը դեմ էր Ռուսաստանի մասնատմանը եւ նպատակ ուներ միավորել նրա բոլոր անջատված մասերը: Կամավորական բանակի Հրամանատարութիւնը Ռուսաստանի բոլոր նոր պետական կազմավորումները դիտարկում էր միայն միացյալ Ռուսաստանի գաղափարի նկատմամբ նրա բարեկամական կամ թշնամակ վերաբերմունքից եւ ռուսական պետութեան միավորմանը ստատրիւլ Հնարավորութիւններից ու կարողութիւններից ելնելով: 1918թ. նոյեմբերի 29-ին Կուբանի Երկրամասում Հայաստանի Հանրապետութեան ինֆորմացիոն բյուրոյի պետ Ա. Մալխոլովը գեներալին նշում է. «Այդ տեսակետից Հայաստանը դիտարկվում է որպէս անկախ թափանցանակ կազմավորում, որն առաջին իսկ ներառվորութեան դեպքում կզնա գեպի վերամիավորում, Վրաստանը, ի դեմս նրա կառավարութեան, համարվում է անկախ, թշնամակ կազմավորում, իսկ Ազրբեջանը պետական միավոր չի համարվում, հաշվի առնելով պետական կազմավորման համար պատմական եւ ազգագրական Հիմնավորման բացակայութիւնը, եւ այն համարվում է ավելի եկեղեցական, քան թե քաղաքական միասնութիւն»:

Կամավորական բանակի վերաբերմունքն Անդրկովկասի նորաստեղծ անկախ Հանրապետութիւնների նկատմամբ հստակ արտահայտվեց 1918թ. նոյեմբերի 1-ին գեներալ Ա. Դենիկինի ճառում, որը նա արտասանեց Կուբանի Երկրամասային Ռազայի Հանդիսավոր նիստում:

Ինչպէս վերը նշվեց, Կամավորական բանակը չէր ընդունում ռուսական նախկին կայսրութեան կազմից անջատված անկախ պետութիւնների գոյութիւնը: Այդ խնդրի վերաբերյալ Գ. Չալխուշյանը վկայում է. «Կամավորական բանակը չէր ճանաչում սկզբունքով Հայաստանի Հանրապետութիւնը, դա պարզ էր բոլորիս համար: «Միասնական եւ անբաժանելի Ռուսաստանի» գաղափարը չէր կարող մարտել փոքր անկախ Հանրապետութիւնների երկրի նախկին սահմաններում: ... Չկար ոչ մի տարակուսանք, որ Կամավորական բանակը ցանկանում էր կենդանացնել Հին, մեռած ցարական ռեժիմը եւ նրա կողմից չէին կարող բանել, ապրել, զարգանալ մի նոր թոյլ, երիտասարդ Հանրապետութեան ծիրերը»:⁵ 1918 թ. հուլիսի սկզբին Դոնում «Դոնական Ռեչ» թերթում Հայաստանի

⁴ Լուկոմսկի Ալեքսանդր Սերգեևիչ (1868-1939), ցարական բանակի զորավար, գեներալ լեյտենանտ (1916թ.), վարել է բարձր գինավորական պաշտոններ: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո փախել է մայրաքաղաքից, գործուն մասնակցութիւն է ունեցել Կամավորական բանակի կազմավորմանը, եղել է «Հատուկ խորհրդակցութեան» նախագահի տեղակալ (1918թ. օգոստոս - հոկտեմբեր), Ռազմական վարչութեան պետ (1918թ. հոկտեմբեր - 1919թ. մարտ), մինչեւ Ռուսաստանից գնալը՝ «Հատուկ խորհրդակցութեան» կառավարութեան նախագահ (1918թ. սեպտեմբեր - 1920թ. մարտ):

¹ Вопросы истории, N 6, 1993, с.123, Трукан Г.А., указ.раб., с. 134.

² ГА РФ, ф.446, оп.2, д.33, л.198.

³ Там же.

⁴ Трукан Г.А., указ.раб., с. 138.

¹ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1960, հուլիս, էջ 37 - 38:

² ՀԱԱ, ֆ. Դ-276, ց.1, գ.12, թ.16, ֆ. Դ-200, ց.1, գ.143, թ.203:

³ Նույն տեղում:

⁴ Отдельный оттиск изъ N 63 газеты “Россия”.

⁵ ՀԱԱ, ֆ.4-4033, ց.6, գ.295, թ.30:

Հանրապետության անկախության մասին Ռուբեն Բերբերյանի* Հրապարակված հոդվածներն անբարյացկամորեն ընդունվեց Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցություն» կողմից: Ռ. Բերբերյանը հետագայում այդ իրողությունները վերաբերյալ գրում է հետևյալը. «Մի օր խմբագրատուն է գալիս գորավար Դենիկինի աշխատակից, գինիորական դատախազ գորավար Ռոմանովսկին եւ երկար խոսակցություն է ունենում խմբագրի եւ Բերբերյանի հետ: Ռուս գորավարը հայտնում է նրանց, որ Կամավորական բանակի գլխավոր նշանաբանն է՝ «Մէկ, մեծ եւ անբաժան Ռուսաստան» եւ յանձնարարում է զգուշ լինել եւ թերթի մեջ չառն մեծ տեղ չտալ անկախությունների յայտարարման, օրինակ, ինչպես վերջերս եղած է, Հայաստանի վերաբերյալ»: Այնուհետեւ Ռ. Բերբերյանը բացատրում է, որ թերթը պարտավոր է արձագանքել կատարված պատմական փաստերին: Հայաստանի անկախությունը մի այդպիսի փաստ է: Ինչպես կարող է խմբագրությունը չտեղեկացնել այդ մասին տեղի հայրենիքը: Մանավանդ, որ այդ պատմությունը ձեռք է բերել հերոսական պայքարից հետո: Հետաքրքրական է գեներալ Ռոմանովսկու պատասխանը. «Իմ մեջ կայ եւ գինուորականը եւ օրենքի մարդը: Իբրեւ գինուորական՝ ես ամենամանրամասն տեղեկություններ ունեմ, թե ինչպիսի եղակի թաղութիւն է ցոյց տուել հայ կամավորական զորքը: Արտադրապատ եւ Լարաբրիխէ կոչուած վարիերում: Արտակարգ ոգեւորութեամբ, անտեսելով գոհողութիւնները՝ ջարդել ու յաղթել են գերազանցօրէն իրենցից շատ լավ գինուած թուրք զօրքերին ... Իմ մեջ գինուորականը ասում է. ով իր թաղութեամբ եւ արիւնով ձեռք բերեց իր ազգի յաղթությունը, նա իրաւունք ունի իր ազգի անկախութեան»:

«Ասել է մեր միջեւ տարակարծութիւն չկայ», - Հարցնում է Բերբերյանը: «Իրրեւ գինուորականի հետ չկայ, - պատասխանում է գորավարը, - բայց իրրեւ օրենքի մարդ, պետք ասեմ, որ առանց ուռւ պետութեան հետ համաձայնութեան գալու, դուք չէք կարող միակողմանի որոշումներ տալ»:

Ուսակցութեան վերջին, գորավար խնդրում է, որ այլազգիների անկախութեան հարցում, թերթը այսուհետեւ գործածէ հանդիսատես լեզու եւ չգալթակցեցնող շեշտ ու դիրք»: Հարկ չկա ապացուցելու, որ Կամավորական բանակը չէր ընդունում ուսական նախկին կայսրության կողմից անջատված անկախ պետությունների գոյությունը, չէր ճանաչում նաեւ Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այնուամենայնիվ, արտաքին աշխարհից ամբողջովին մեկուսացված նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը փորձում էր ուղիներ որոնել Ռուսաստանի հետ կապեր հաստատելու առանց հաշվի առնելու նրա տարբեր քաղաքական վարչաձեւերը:

Հ.3. Դաշնակցության բյուրոյի եռանդուն գործիչ Սիմոն Վրացյանը 1918 թ. հունիսի վերջին Հատուկ առաքելությամբ Թիֆլիսից մեկնում է Ռուսաստանի տարբեր շրջաններ եւ մինչեւ հոկտեմբերի վերջը լայն գործունեություն է ծավալում Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի հետ կապ ստեղծելու ուղղությամբ, որը «...կարող էր անմիջական օգնություն հասցնել Հայաստանին», - գրում է Ս. Վրացյանը¹: Նա բազմաթիվ հանդիպումներ է ունենում Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի հրամանատարական կազմի հետ, եւ առանձնապես ջերմ ընդունելություն է արժանանում գեներալ Մ. Ալեքսե-ի կողմից, որի «վերաբերմունքը եղել է դեպի հայերը չափազանց բարեկամական»²: Սակայն Կամավորական բանակի հետ կապերի հաստատումը պայմանավորված էր բազմաթիվ դժվարությունների հաղթահարման հետ: 1919 թ. հոկտեմբերի 19-ին Հ.3. Դաշնակցության Կենտրոնական կոմիտեին գրած նամակում Ս. Վրացյանը գրում է. «Ազգային նորհրդի որոշումով գնացել էի Կամավորական Բանակի մօտ: Եղայ Առջի, Եկատերինոգրաբ, Ռոստով, նոր

* Ռ. Բերբերյանը Դոնի Հ.3 դաշնակցական կոմիտեի համանախագահ էր Հ.Տերտեբյանի հետ: ¹ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, հոկտեմբեր, էջ 87, նույնը, 1952, դեկտեմբեր, էջ 15: ² «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, հոկտեմբեր, էջ 87, նույնը, 1952, դեկտեմբեր, էջ 15: ³ Նույն տեղում: ⁴ Վրացյան Ս., Կեանքի ուղիներով, Դեպքեր, Դեմքեր, Ապրումներ, Ե Հատոր, Բեյրութ, 1966, էջ 14: ⁵ ՀԱԱ, ֆ. Պ-223, ց.1, գ.113, թ.21:

Նախիջևան: Ամէն տեղ ընդունելությունը շատ լաւ էր, Կամավորական բանակի մէջ ջերմ հետաքրքրություն կայ դեպի Հայաստանն ու հայերը եւ գործնական հնարաւորութիւններ չկան: Նախ՝ Հայաստանի եւ Կամավորական բանակի միջեւ ընկած է թշնամի Վրաստանը, որ թող չի տար իր հողի վրայով որեւէ օգնություն հասցնել Հայաստանին: Երկրորդ՝ Կամավորական բանակը ինքն այ այնքան կամավորագրուած եւ ուժեղ չէ, որ ընդունակ լինի իր կամքը պարտադրելու: Բուն Կամավորական բանակի եւ կազակներու յարաբերութիւններն այ շատ լաւ չեն: Երկուսի վերաբերումն էլ մեր հանդեպ շատ լաւ է: Կամավորական բանակին խոստացան մեզ հասցնել որոշ քանակութեամբ փամփուշտ: Կազակներն էլ կըստանանք այդիւր, եթե փոխադրութեան միջոց ապահովենք, որ անկախութեան չափ դժուար է»:

Կամավորական բանակի հրամանատար գեներալ Մ. Ալեքսեևը խոստացավ Կուբանից Հայաստան ուղարկել մեկ միլիոն ուսերու հաց, Ուկրաինայից մեկ միլիոնից 100 հազար ուսերու շաքար «... այն պայմանով, եթե հայերը մի ֆունտ անգամ չառն գրանցից վրացիներին: Վրացիները թույլ չէին տալիս այդ ապրանքները Հայաստան տեղափոխել»²: Այնուամենայնիվ Հայաստանը որոշ օգնություն ստացավ Կամավորական բանակից:

Ինչպես փաստում են արխիվային նյութերը Ռուսաստանի Հարավից հաց, սննդամթերք եւ այլ անհրաժեշտ ապրանքներ Հայաստան առաքելու համար նախաժեշտ էր հաղթահարել որոշակի լուրջ խոչընդոտներ: Գ. Չալխուշյանը, որին Հայաստանի կառավարությունը կողմից հանձնարարված էր Կուբանում հացահատիկ գնելու գործը, գրում է. «Հայաստանին պետք էր հաց: Մենք ցանկանում էինք գնել դրամով: Հացի պահեստը պատկանում էր Ղուբանի (Կուբանի, - Գ.Պ.) կառավարությունը, փոխադրական միջոցները եւ արտահանելու իրավունքը կախված էին Կամավորական բանակից: Ղուբանի կառավարությունը մեզ ասում էր. «Հայերը վրացիների թշնամիներն եք, իսկ վրացիները մեր բարեկամներն են, եթե մի մասը կհանձնենք Վրաստանին, մենք Ձեզ կվաճառենք հաց» իսկ զորավար Դրագոմիրովը մեզ ասում էր՝ «Վրացիները Կամավորական բանակի թշնամիներն են, մենք վախենում ենք, որ դուք հացի մի մասը կհանձնենք նրանց: ... կառավարությունը (Հայաստանի, - Գ.Պ.) ուղարկեց հատուկ պատգամավորություն, որը կորցրեց իր ժամանակը, Հայաստանի դրամը եւ հանդուրժեց չունեցավ»³: Այդ գործընթացին խանգարեց նաեւ ուռւ-վրացական հարաբերությունների սրումը, որի հետեւանքով Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցությունը» արգելեց հացի եւ այլ ապրանքների առքնումը Վրաստան, որից տուժեց նաեւ Հայաստանի Հանրապետությունը⁴: Բայց եւ այնպես Կամավորական բանակը հաց էր վաճառում Հայաստանին, իսկ Վրաստանը պահանջում էր իր մասը. հսկասակ դեպքում բաց չէր թողնում⁵:

1918թ. սեպտեմբերի 13-ին Եկատերինոգրաբում տեղի ունեցավ հանդիպում Կուբանի Երկրամասի կառավարության, Կամավորական բանակի ու Վրաստանի կառավարության արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորիի գլխավորած պատվիրակության միջև: Բանակցություններն ընթանում էին լարված մթնոլորտում⁶: Գեներալ Մ. Ալեքսեևը վրաց պատվիրակությունից վերջնազորով պահանջեց, որ վրացական զորքերն անհապաղ դուրս բերվեն ուսական Սեւծովյան ափերից: Այնուհետեւ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը կից «Հատուկ խորհրդակցությունը» Վրաստանին հայտարարեց մաքսային եւ պարենային պատերազմ⁷:

¹ Վրացյան Ս., Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962, էջ 266: ² ՀԱԱ, ֆ. Կ-223, ց.1, գ.113, թ.21: ³ Տես Վրացյան Ս., Կեանքի ուղիներով, Դեպքեր, Դեմքեր, Ապրումներ, Ե Հատոր, Բեյրութ, 1966, էջ 24: ⁴ ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց.6, գ.295, թ.18.30: ⁵ Տես ԳԱ ՐԲ, ֆ.446, օպ.2, Ժ.33, և.12. ⁶ ՀԱԱ, ֆ.223, ց.1, գ.113, թ.27: ⁷ Տես „Борьба“ газета, Тифлис, 11 октября 1918г. ⁸ РГ ВА, ֆ.39720, օп.1, Ժ.44, և.13, ԳԱ ՐԲ, ֆ.446, օп.2, Ժ.33, և.186, Архив русской революции, т. 5-6, Москва, 1991, с.104.

**СВЯЗИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С ВЕРХОВНЫМ
ГЛАВНОКОМАНДОВАНИЕМ ВОЙСК ЮГА РОССИИ
(июнь-ноябрь 1918г.)**

РЕЗЮМЕ

Работа посвящена изучению неисследованных в армянской историографии связей Армянской Республики с несоветскими государственными образованиями юга России. Анализируются сложная внутренняя и внешняя политическая ситуация в начальный период существования Армянской Республики и различные причины, побудившие к установлению связей со структурами юга России вне зависимости от форм правления.

Исследуется процесс установления связей с Россией, который отмечен наличием многих противоречий, преодолением огромного количества взаимоключающих подходов, которые, как в Армении, так и в России были предопределены как сложным историческим периодом, так и серьезнейшими политическими процессами в этих странах.

Армяно-русские отношения были обусловлены не только многовековой историей связей и дружбы двух народов, но и политическими, экономическими и другими интересами.

Гегам Петросян
кандидат исторических наук

Հայաստանի կառավարությունը, ինչն էլ, որոշ հույսեր էր կապում գեներալ Ա. Դենիկինի հետ: Երբ սեպտեմբերի վերջին նա ստանձնեց Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը, Եկատերինոգար ժամանեցին Հայկական պատվիրակություններ, սուբհանգակներ՝ Ուկրաինայից, Վրաստանից եւ այլ վայրերից՝ սովյալ Հայաստանին հաց, սննդամթերք եւ այլ ապրանքներ առաքելու խնդրով: Այդ նպատակով Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության գլխավորապես միտալի ներկայացուցիչ Գ. Չամոյանը եւս Կիևից Եկատերինոգար գործուղեց Ա. Սիրինին, գնդապետ Կորիտինին եւ կապիտան Ա. Տոնյանցին: Ա. Ջամայանի հանձնարարականով Թիֆլիսից Եկատերինոգար մեկնեցին Հայկական միտալի խորհրդական Լ. Թումանովը, Ա. Բարակոզյանը եւ Ա. Մալխազովը: Ա. Ջամայանի խնդրանքով Եկատերինոգար ժամանեցին նաև Անդրկովկասյան ուսական Ազգային խորհրդի ներկայացուցիչները Մ. Ավդիևի գլխավորությամբ, նպատակ ունենալով միջնորդ հանդիսանալու Կուբանի Երկրամասի կառավարության եւ Կամավորական բանակի ու Հայաստանի միջև ապրանքափոխանակություն իրագործելու համար: Եկատերինոգար հասած Հայկական պատվիրակությունները տեղի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Նիկոլայ Սաթուրյանի առաջարկով ստեղծեցին ժամանակավոր կոլեգիալ մարմին Հայաստանին հաց, սննդամթերք եւ այլ անհրաժեշտ ապրանքներ առաքելու նպատակով: Ն. Սաթուրյանի առաջարկով Ա. Մալխազովը եւ Ա. Սիրինը 1918 թ. նոյեմբերի 4-ին այդ մասին գրավոր տեղեկացրին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Քաջազնունու. «Արշակ Մալխազովը եւ ես (Ա. Սիրին, - Գ. Պ.) դիմում ենք Ձեզ տեղեկացնելու, որ Եկատերինոգարում ստեղծվել է ժամանակավոր կոլեգիալ մարմին Հայաստանի բնակչությանը հացով մատակարարելու խնդրով: Կուբանի Երկրամասի կառավարությունը եւ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը Հայաստանին հաց տալու խնդրանքին վերաբերվել են բարյացակամորեն եւ սկզբունքորեն պատրաստակամությամբ են հայտնել թույլտրել նրա արտահանումը: Սակայն Կամավորական բանակի ղեկավարները, որոնցից կախված էր արտահանման թույլտվությունը, որպես պարտադիր պայման դնում են երաշխիքների ստացումը Վրաստանից, գերմանացիներից եւ թուրքերից, որ հացը այլ պետքերի համար չի օգտագործվի, բացի Հայաստանի պահանջներից»: Պայմանավորվածությունն ձեռք բերվեց նաև Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցություն» եւ Հայաստանի միջև ապրանքափոխանակության սկսելու մասին: Այդ կապակցությամբ ղեկուցադրում նշվում է, որ. «Մենք նպատակահարմար ենք գտնում անմիջապես սկսել ապրանքափոխանակումից եւ դրանով իսկ ճանապարհ Հարթել հետագա պարենային գործարքների համար: Դրա համար անհրաժեշտ է էրիվանից Եկատերինոգար ուղարկել բամբակ, կաշի, սպիրտ, կոնյակ եւ այլն: Ապրանքափոխանակության իրականացման գործում մեծ է Անդրկովկասյան Ռուսական Ազգային խորհրդի միջնորդական առաքելությունը»²: Սակայն Հայաստան էր հասնում հացի, սննդամթերքի եւ այլ ապրանքների փոքր խմբաքանակ Վրաստանի հարուցած խոչընդոտների պատճառով: Վրաստանը Կուբանից առաքած ապրանքի մի մասը վերցնում կամ ամբողջովին բռնագրավում էր, թույլ չտալով Հայաստան մտնելու:

Այսպիսով, արիւմիվային բազմաթիվ վավերագրերը հաստատում են, որ անկախացման առաջին ամիսներին, մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ կրում էր կիսապաշտոնական, գաղտնի բնույթ: Բերված բոլոր փաստերը հավաստում են, որ Հայաստանի կառավարությունը մի շարք յուրը գրգապատճառներից ելնելով մի կողմից ձգտում էր կապեր հաստատել Ռուսաստանի Հարավի գինոված ուժերի գլխավոր հրամանատարության ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, իսկ մյուս կողմից նրանց նկատմամբ գրսեւորում էր խիստ զգուշավորություն, որի հետևանքով Հայ-ռուսական հարաբերությունները ինչ-որ տեղ կրում էին սահմանափակ բնույթ:

¹ ՀԱԱ, ֆ. Պ-43, ց. 1, գ. 100, թ. 16:
² Նույն տեղում, թ. 17:

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայաստանի առաջին Հանրապետությունը ստեղծվեց բացառիկ ծանր պայմաններում՝ պտտերագմ, սով, գաղթականներ, շրջափակում: Նման իրավիճակում կյանքի կոչվեց առաջին կառավարությունը, որ թեև ձևավորվել էր անհաստական սկզբունքով, բայց, բատ էություն, Դաշնակցության կառավարությունն էր: Հայաստանի Խորհրդում ներկայացված քաղաքական ուժերը՝ սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ-հեղափոխականներ, ժողովրդականներ, ոչ միայն հրաժարվել էին բնագրիկ կառավարության կազմում, այլև առիթը բաց չէին թողնում նրան քննադատելու համար: Այսպես. 1918թ. օգոստոսի 6-ին խորհրդարանում կառավարության Հայտագրի քննարկման ժամանակ սոցիալիստ-հեղափոխական Ա. Խոնդկարյան առաջինում էր՝ այն համարելով տարրական եւ ալքրենական¹, իսկ սոցիալ-դեմոկրատ Հ.Ազատյանի կարծիքով «կառավարության Հայտարարությունը հիշեցնում է Ստոլիպինին, որ ստում էր՝ «նախ խաղաղություն, ապա ուժգործներ»²: Եվ միայն չԺԿ խմբակցությունն աջակցությունը (23 կողմ, 11 ձեռնպահ) էր հաջողվել վստահություն հայտնել կառավարության Հայտագրին³, չնայած որին ժողովրդականները շարունակում էին մնալ բնագրիմադիր դաշտում: ՉԺԿ Կենտրոնական Կոմիտեի պաշտոնավերթ «Ժողովրդի Ձայնը» խմբագրականներից մեկում գրել էր. «Վաղապես կառավարությունը, որը իրապես ներկայացնում է Արամի դիկտատուրան, աղբյուր դառավ մեր երկրի ծայր անիշխանությունը»⁴:

Փաստորեն, հենց սկզբից ստեղծվել էր մի կացություն, որը ձեռնառու չէր ինչպես կառավարող կուսակցությանը՝ Դաշնակցությանը, որը չէր կարողանում հաստատուն պահել կառավարության դիրքերը, այնպես էլ ընդդիմությունը, որի գործունեությունը սովորական քննադատությունից այն կողմ չէր անցնում: Անցնում էին շարաթներ, իսկ երկրի կացությունը շարունակում էր մնալ անմիտիթար: Ներքին կյանքում կուտակված, հիմնականում օբյեկտիվ բարդությունները, աճող հակասությունները Վրաստանի հետ սասանել էին Հ.Վաղապետու կառավարության առանց այն էլ թույլ դիրքերը. չկար ստեղծագործ աշխատանք ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմիններում: Արդեն հոկտեմբերի սկզբին վարչապետ Հ.Վաղապետին խորհրդարանի Ավագների խորհրդում Հայտնել էր, որ ստեղծված պայմաններում հնարավոր չի գտնում պահել կառավարության ղեկը եւ առաջարկել էր կազմել կոալիցիոն կառավարություն: Հնարավոր էր արդյոք միջկուսակցական համագործակցությունը, եւ ի՞նչ դիրքորոշում ունեին խորհրդարանական կուսակցությունները կոալիցիայի հարցում:

¹ «Աշխատավոր», Թիֆլիս, 22 օգոստոսի 1919թ:

² Նույն տողում:

³ «Ձանգ», Երևան, 17 օգոստոսի 1918թ:

⁴ «Ժողովրդի Ձայն», Թիֆլիս, 24 հոկտեմբերի 1918թ:

⁵ Նույն տեղում, 9 հոկտեմբերի 1918թ:

Կառավարող եւ խորհրդարանում համեմատաբար զորեղ խմբակցություն ունեցող ՀՀԴ կուսակցության պաշտոնավերթերից «Ձանգը» իր խմբագրականներից մեկում այն կարծիքն էր հայտնում, թե «թվական այն փոխհարաբերությունը, որ ներկայացնում են տարբեր կուսակցությունները Հայաստանի խորհրդարանում, չի կարող ապահովել ոչ՝ միատար եւ ոչ էլ պիտանալ ձեւով ընտրված մինիստրությունը(կառավարությունը-Վ.Բ.): Ամեն րուպե արհեստականորեն գրություններ կարող են ստեղծվել, որոնք առիթ կարող են դառնալ անվստահության դեպի այս կամ այն մինիստրությունը, անախ նրա գործունեությունից եւ կարողությունից: Այս տարօրինակ կացությունը վերջ ապուս միակ էլքը մնում է կոալիցիոն մինիստրություն ստեղծելը»:

Պետք է նշել, որ խորհրդարանի «ձախ» խմբակցությունները՝ սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները (էսէնները) առանձնապես ոգեւորված չէին անկախ պետականությունը: Դեռեւս 1918թ. սեպտեմբերի 26-ին սոցիալ-դեմոկրատական խմբակցության նիստում որոշում էր ընդունվել չընդգրկվել կոալիցիոն կառավարության կազմում⁵: Ինչ վերաբերում է էսէններին, ապա նրանց խմբակցության անունից պատգամավոր Մուշեղյանը խորհրդարանի սեպտեմբերի 1-ի նիստում հայտնել էր, որ «իրենց կուսակցությունը կանոնաձե գործունական Սոցիալիստ-հեղափոխական Հին Սուսասանները»⁶: Հայաստանի խորհրդարանի միակ բուշեւիկ պատգամավորի՝ Արշավիր Մելիք-յանի կարծիքով «ստանց բանվորական մասսայի բուն երկրում նրանք (կոմունիստները-Վ.Բ.) կտրված կմնան մայր հողից եւ կոալիցիոն մինիստրության մեջ կենթարկվեն ուրիշի արբանյակը լինելու ոչ նախանձելի վտանգին»:

Ավելի կառուցողական դիրքորոշում էին որդեգրել ժողովրդականները: 1918թ. օգոստոսի 18-22-ը Թիֆլիսում կայացած չԺԿ 2-րդ համախորհրդակցությունը, նկատի առնելով Հայաստանի ներքին եւ արտաքին դրությունը, անհրաժեշտ էր համարել, որ կառավարությունը կազմվի կոալիցիոն սկզբունքով: Ավելի ուշ, սեպտեմբերի 5-ին չԺԿ Կենտրոնական Կոմիտեն, քննարկելով Հայաստանի մեջ գործունեություն ուժեղացման խնդիրը, որոշել էր կարող ուժեր ուղարկել Հայաստան, «քանզի Երևանը կարիք ունի ավելի շատ եւ ավելի շնուկ ինտելիգենտ ուժերի»⁷: Առհասարակ ժողովրդականները մամուլը այդ օրերին հեղեղված էր խմբագրականներով, որոնցում ստեղծված կացությունից դուրս գալու միակ էլքը համարվում էր կոալիցիոն կառավարություն ստեղծումը: Ըստ «Ժողովրդի ձայն» թերթի՝ «Մի կառավարություն, որ ունի պաղպղեմունք միայն 18 ձայն 46 ձայնից, իհարկե չի կարող հարատև գոյություն ունենալ: Ամեն մի փոքրիկ հարց կարող է նրա տապալման առիթ դառնալ... Հայտնի է, թե ինչպիսի թշնամությունը են վերաբերվում մեր հարեւան ազգերի ղեկավար կուսակցությունները դեպի Դաշնակցությունը, կոալիցիոն կառավարություն կազմելը ցույց կտա նրանց, որ Հայ ժողովուրդը փոխում է իր քաղաքականությունը»:

1918թ. հոկտեմբերի սկզբներից ավելի հաճախակի էին լսվում կարծիքներ միջկուսակցական համագործակցություն եւ կոալիցիոն կառավարություն ստեղծման մասին: Դրանում, անշուշտ, իրենց ազդեցությունը ունեցան միջազգային կարեւորագույն անցքերը՝ Անտանտի երկրների Հաղթանակը եւ Թուրքիայի մտադուրս պարտություն մասին տեղեկությունները, որոնց ազդեցության տակ Հայ քաղաքական ուժերը դարձան ավելի լավատես՝ Հավատարմով սեփական երկրի սպառալիս: Փաստորեն, 1918թ. աշունը պիտի համարել քաղաքական կուսակցությունների դիրքորոշման եւ վարքագծի հստակեցման ժամանակաշրջան:

Հայաստանի Խորհրդի հոկտեմբերի 18-ի նիստը պաշտոնապես տվեց (անպաշտոն բանակցությունները սկսել էին ավելի շուտ) կոալիցիոն կառավարության ձևավորման ձեւավորման ուղղությունը՝ միջկուսակցական բանակցությունների մեկնարկը՝ ձայների մեծամասնությունը ընդունելով սոցիալ-

¹ «Ձանգ», Երևան, 2 հոկտեմբերի 1918թ:

² Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ.Պ - 404, ց.1, գ.2, թ.1:

³ «Կառավարության լրաբեր», 6 սեպտեմբերի 1918թ:

⁴ «Խոսք», 29 սեպտեմբերի 1918թ:

⁵ «Ժողովրդի Ձայն», Թիֆլիս, 1 սեպտեմբերի 1918թ:

⁶ Նույն տեղում, 7 սեպտեմբերի 1918թ:

⁷ Նույն տեղում, 18 սեպտեմբերի 1918թ:

գեմնկրատները Հետեւյալ բանաձեւը. «նորհուրդը անհրաժեշտ է համարում իր մտաւոր գործունեութեան համար գծել պատճառներ, որի շուրջ խորհելն բոլոր պաշտօնատեղիները գեմնկրատական (ընդգծումը-Վ.Բ.) ֆրակցիաները՝ կազմելու կողմնակից կառավարութիւն. նորհուրդն առաջարկում է ավագների խորհրդին ամենակարճ ժամանակամիջոցում գծել պատճառման ու բերել պաշտօնան»¹: Կողմնակից կառավարութեան ձեւափոխումը հնարավոր էր մի քանի արարելակներով՝ բոլոր կուսակցութիւնների մասնակցութեամբ եւ գլուս ընկերակարական (սոցիալիստական) կառավարութիւն: Սակայն բանակցութիւնների ընթացքը երկու տարբերակներն էլ բացառեց: Սոցիալ-գեմնկրատները պահանջում էին երկու նախարարութիւնն՝ ներքին եւ արտաքին գործերի²: Սոցիալիստ-հեղափոխականները իրենց համար որոշակի պահանջներ էլէին դնում, բայց դեմ էին, որ արտաքին գործերի նախարարութիւնը արդի ժողովրդականներին, իսկ ներքին գործերինը՝ սոցիալ-գեմնկրատներին³:

Բուն բանակցութիւնները պիտի սկսեին կուսակցութիւնների ներկայացուցիչների՝ երեւան ժամանելուց հետո, (ինչը, ցավոք, ցուց է ապրիս, որ Հայ քաղաքական մտքի ծանրութեան կենտրոնը շարունակում էր մնալ Թիֆլիսը): Այդ կապակցութեամբ շժԿ պաշտոնավերթ «ժողովուրդը» գրում է. «Կենտրոնական Կոմիտեն սկզբունքով որոշել է մտնել կողմնակից կառավարութեան մեջ: Ամսի 16-ին Թիֆլիսից գալու են Մ.Բերբերյանը, Գ.Մուկիբ-Ղարալյալյանը⁴: Սակայն Թիֆլիսից ժամանող գնացքը, որով գալու էին կուսակցութիւնները ներկայացուցիչները, երեւան հասավ միայն Հոկտեմբերի 30-ին (Հայ-վրացական Հարաբերութիւնների լարվածութեան պատճառով Հոկտեմբերի 19-ից Վրաստանը փակել էր երկաթգիծը): Նոյեմբերի 1-ին խորհրդարանի նախագահի սենյակում կայացավ ժողով, որին մասնակցում էին բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները⁵: Սոցիալ-գեմնկրատները շարունակում էին պնդել, որ իրենց արվի արտաքին գործերի նախարարութիւնը: Ըստ սոցիալ-գեմնկրատ Ա. Ջոհրաբյանի՝ Դաշնակցութիւնը արտաքին աշխարհում կենտրոնացնել էր իր վարկը, միանգամայն առելի էր դարձել թե՛ զբաղեցնող եւ թե՛ եվրոպական պետութիւններին: Ի նկատի ունենալով, որ աշխարհում քաղաքական կայանք անցնում է սոցիալիստներին, նա պնդում էր, որ արտաքին գործերի նախարարը անպայման լինի սոցիալ-գեմնկրատ⁶: Ի ղեպ, սոցիալ-գեմնկրատները պնդում էին, որ մինչեւ Հոկտեմբերի 31-ը շժԴ-ն համաձայն է եղել գիջելու արտաքին գործերի նախարարի պորտֆելը, բայց վերջին պահին հրաժարվել են, իբր, Թիֆլիսից ստացած կարգադրութեամբ⁷: «Ջանգ» թերթը իր ընդազդականներին մեկում ընդհանրապես բացառում էր այդպիսի համաձայնութիւնը սոցիալ-գեմնկրատների հետ, քանզի «նման սկսով Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը փաստորեն կանցներ ժողովրդականների եւ Մերթթիկների ձեռքը⁸: Էսէձները մերժեցին մտնել կողմնակից մեջ, եթե նրա մեջ մասնակցութիւն ունենան ժողովրդականները, իսկ Ա. Սոնդկարյանը վերջին խոսքով Հայաստանը, թե՛ առհասարակ հրաժարվում են Դաշնակցութեան հետ որեւէ բանակցութիւններ վարելուց⁹: Ամբողջ բանակցութիւնների ընթացքում էսէձները այդպես էլ իրենց համար որոշակի պահանջներ չգրին: Ի ղեպ, «Աշխատավոր», մեկնաբանելով էսէձների նման վարքագծի պատճառները, գրում է. «Չմտան ոչ թե՛ սկզբունքային տեսակետով ղեկավարվելով, այլ՝ մեզ թիմում է՝ մարդ չունենալու պատճառով: Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ սոցիալիստ-հեղափոխականները երբեք էսէձների նման մեծ պահանջներով չեն մտնեցել խնդրին: Նրանց պահանջները շատ համեստ են եղել. նրանք երբեք չեն պահանջել քաղաքական նշանակութիւն ունեցող պաշտոններից

ոչ մինը. նրանք պահանջել են միայն մի պոստ, այն էլ տեխնիկական նշանակութիւն ունեցող պոստ - արդարագատութեան մինիստրութիւնը, բայց որը վերցնել չկարողացան՝մեր կարծիքով եւ հարմար թեկնածու չունենալու պատճառով¹⁰»:

Այն բանից հետո, երբ սոցիալ-գեմնկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները հրաժարվեցին մասնակցել բանակցութիւններին, մնացին շժԴ եւ շժԵ կուսակցութիւնները: Բանակցութիւնների ընթացքում ժողովրդականները պնդում էին, որ իրենց արվի արտաքին, ֆինանսների, դատական եւ հանրային կրթութեան նախարարութիւնները, իսկ գիմնկրատական նախարարը լինի անընտանցական¹¹: Բացի այդ նրանք առաջարկում էին Արամ Մանուկյանի եւ Ալ. Սատիսյանի կառավարութեան մեջ ընդգրկվելուն: Ի վերջո, արտաքին գործերի նախարարի խնդրում ժողովրդականները գիջեցին այն պայմանով, որ նախարարի օգնականը լինի շժԿ անդամ, իսկ ներքին գործերի նախարարի խնդրում նկատի առնվեց Դաշնակցութեան Հայաստանութիւնը, որ ներկա պայմաններում միայն Արամ Մանուկյանն է, որ կարող է կարգ պահել երկրում: Իբրեւ փոխհաստացում այս խնդրում արված գիջման, ժողովրդականները պահանջեցին եւ ստացան արդարագատութեան նախարարութիւնը¹²: շժԴ-ՇժԿ բանակցութիւններում ձեռք բերված նախնական պայմանավորվածութիւնը կայանք կոչվեց Հայաստանի նորհրդի 31-րդ նիստում, 1918թ. նոյեմբերի 4-ին: Նորհրդի նախագահը կարգապէս վարչապետից ստացված գրութիւնը կառավարութեան հրաժարականի մասին, որից հետո դաշնակցական խմբակցութեան անունից պատգամավոր Թորոսյանը առաջարկեց հանձնարարել Քաջաղնուտուն կազմել նոր կառավարութիւն¹³: Առաջարկութեանը դեմ հանդես եկավ սոցիալ-գեմնկրատ Շ.Աղասյանը, որի կարծիքով պաշտօնատեղիները երկրներում այնպիսի կարգ չկա, որ Հրաժարված մինիստրին հանձնարարվի նոր կարիքն կազմել, հին կարիքները չի կարողացել գործել, օգտակար աշխատանք կատարել, ուրեմն նրա մի անդամին չի կարելի հանձնել կարիքների կազմումը¹⁴: Նույն կարծիքին էին նաեւ Էսէձները, իսկ խորհրդարանի միակ բողջեւիկ պատգամավորը՝ Արամյիկ Մելիքյանը նշեց, որ «որտ ֆրակցիաներ զուր են բողջում այն բանի դեմ, որ Քաջաղնուտուն հանձնվի նախագահութիւնը: Այդ հարցը կուլիսներում լուծված վերջացած է եւ այդ գործին մասնակից են եղել Հենց նույն ֆրակցիաները, որոնք այսօր բողջում են. բողջում են միայն այն պատճառով, որ իրենց համար ցանկալի արդյունք չի ստացվել¹⁵: Ի վերջո, 25 կողմ, 14 դեմ, 1 ձեռնպահ ձայնատվութեամբ Քաջաղնուտուն հանձնարարվեց կազմել նոր կառավարութիւն¹⁶, որը ունեցած Հետեւյալ կազմը. վարչապետ՝ Շ. Քաջաղնուտ, նախարարներ՝ արտաքին գործերի՝ Ս.Տեղարյան, ներքին գործերի՝ Ա. Մանուկյան, գիմնկրատական՝ Շ. Հախովրդյան, ֆինանսների՝ Ա. Էնֆիալյան, արդարագատութեան՝ Ս. Հարութիւնյան, կրթութեան՝ Ս.Միքայելյան, պարենավորման՝ Լ. Դուլյան, խնամատարութեան՝ Ռ. Կարճիկյան¹⁷:

Նույն նիստում 26 կողմ, 11 դեմ, 2 ձեռնպահ ձայնատվութեամբ պետական վերահսկիչ ընտրվեց շժԿ անդամ Մ.Բերբերյանը, որին դեմ էին սոցիալ-գեմնկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները, պատճառարանելով, որ այդ տեղը պիտի պատկանի ընդդիմութեանը, այլ ոչ թե՛ կառավարող կուսակցութիւններին¹⁸:

Փաստորեն, նորաստեղծ կառավարութիւնում առանցքային պաշտոնները՝ վարչապետի, ներքին եւ արտաքին գործերի, ինչպես նաեւ խնամատարութեան նախարարների պորտֆելները զբաղեցրեց Դաշնակցութիւնը՝ ժողովրդական կուսակցութեան թողնելով ֆինանսատնտեսական ոլորտի գերատեսչութիւնները: Այս կապակցութեամբ հարց է առաջանում. որո՞նք էին շժԴ-ՇժԿ մերձեցման հիմնական պատճառները: Կարծում ենք, որ քաղաքական

¹ «Աշխատավոր», Թիֆլիս, 13 նոյեմբերի 1918թ:

² Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երևան, 1993, էջ 205:

³ Նույն տեղում:

⁴ «ժողովուրդ», 13 Հոկտեմբերի 1918թ:

⁵ Նույն տեղում, 6 նոյեմբերի 1918թ:

⁶ Նույն տեղում, 10 նոյեմբերի 1918թ:

⁷ «Վայժ», Երևան, 14 նոյեմբերի 1918թ:

⁸ «Ջանգ», 10 նոյեմբերի 1918թ:

⁹ «ժողովուրդ», 6 նոյեմբերի 1918թ:

¹ «Աշխատավոր», Թիֆլիս, 10 նոյեմբերի 1918թ:

² Ս. Վրացյան, նշվ աշխ., Երևան 1993, էջ 205-206:

³ «ժողովուրդ», 17 նոյեմբերի 1918թ:

⁴ Բանբեր Հայաստանի արխիվների, 1991(3), էջ 47:

⁵ «Ջանգ», 10 նոյեմբերի 1918թ:

⁶ Նույն տեղում:

⁷ Բանբեր Հայաստանի արխիվների, 1991(3), էջ 48:

⁸ R. Hovannissian, «The Republic of Armenia», Berkley, Los Angeles, London, 1971, vol 1, p. 64:

⁹ «Վայժ», 14 նոյեմբերի 1918թ:

գաշինըր այս ուժերի միջև կայացավ նախեւսուաջ փոխադարձ ընդունելի պայմանների պատճառով: Դաշնակցութիւնը կարողացավ իր ձեռքում պահել ներքին եւ արտաքին գործերի երակետային նախարարութիւնները, ժողովրդականներին զիջեց արտաքին գործերի փոխնախարար եւ արգարադատութեան նախարարի պաշտոնները, բայց «աշխատանքով չկարողացավ ապահովել» Ալ.Խատիսյանին, որի թեկնածութեանը բանակցութիւնների ընթացքում զեմ էր ՀԺԿ-ն: Համաձայնութեան հիմքում ընկած էին նաեւ նախարարութիւնների թվի ավելացումը եւ կառավարութեան մեջ երկու կուսակցութիւնների անդամների միջև պաշտոնների Հավասարաչափ բաշխումը: Եթէ նախորդ կառավարութիւնը ուներ 6 նախարարական պորտֆել (վարչապետ եւ 5 նախարար), ապա կոալիցիոն կառավարութիւնում ավելացել էին պարենավորման, խնամատարութեան եւ կրթութեան նախարարութիւնները, ընդ որում զինվորական նախարարի անկուսակցական լինելու հանգամանքով կողմնորոշումը ունեին 4-ական նախարարական պորտֆել: Այդ առիթով ՀԺԿ անդամ Հ.Ստեփանյանը Արեքանդրապոլում ունեցած դասախոսութեան ժամանակ նշել էր. թե «Հայ ժողովրդական կուսակցութիւնը այնքան էլ ուժեղացել, որ գաշնակցականների չափ ներկայացուցիչներ ունի հալիական կառավարութեան կազմի մեջ»¹: Երկու կուսակցութիւնների մերձեցման գործում մեծ դեր խաղացին տնտեսական եւ արտաքին քաղաքական գործոնները: Տնտեսական հողի վրա ընդունելի ենք Համարում այն տեսակետը, թե ժողովրդականների հետ մերձենալով Դաշնակցութիւնը, որի ծրագրեր ընկերվարական էր, ակնկալում էր ոչ միայն Անդրկովկասի Հայ դրամատերերի, այլեւ արեւմտյան կապիտալիստական երկրների աջակցութիւնը: Արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում երկու կուսակցութիւններն էլ հակված էին դեպի Արեւմուտք, իսկ Միացյալ Հայաստանի խնդրում ժողովրդականները ավելի արմատական պահանջներ էին առաջ քաշում, քան ՀԺԿ-ն:

Ինչպիսի՞ արձագանք գտավ կոալիցիան նրանում ներկայացված կուսակցութիւնների մեջ: Չնայ կարծում, թե ժողովրդականները բավարարված էին ձեռքբերումով: Ըստ «Ժողովրդի ձայնի»՝ նախարարութիւնների բաշխումը չէր կարող Համարվել գոհացուցիչ, բայց հաշվի առնելով պատմական պահճի լրջութիւնը, թեթեւ ողջունեց կոալիցիոն կառավարութեան ստեղծումը²:

1918թ. նոյեմբերի 3-4-ը կայացավ Երեւանի գաշնակցականների ընդհանուր ժողովը, որտեղ խորհրդարանական խմբակցութեան կողմից բժիշկ Ղազարյանը զեկուցեց այն բանակցութիւնների մասին, որ Դաշնակցութիւնը վարել է ձախ եւ աջ ֆրակցիաների հետ՝ շեշտելով հատկապես ձախերի հետ տարած աշխատանքը: Ընդհանրապես ժողովականների վերաբերմունքը դեպի ժողովրդական կուսակցութիւնը արած զիջումները նպաստավոր չեն եղել³: Ավելի կարուկ քննադատութեամբ հանդես եկավ ՀՀԴ Վրաստանի Կոմիտեն, որի պաշտոնավեժքը «Աշխատավոր» իր խմբազարկաններից մեկում խորհրդարանին կոչ էր անում անվստահութեան քվե տալով Քաջազունու կառավարութիւնից անհապաղ հեռացնել բոլոր կադետական տարրերին⁴: Մեկ այլ հրապարակման մեջ թերթը ժողովրդական կուսակցութեանը կոչում էր «ազրուկների ու սպեկուլյանտների ոճմակ, որը ճոճոսան անվան տակ քողարկում է իր մութ գործերը»⁵: Այնուհանդերձ, կոալիցիան արդեն իրողութիւն էր: Համաձայնութեան եկած քաղաքական ուժերը՝ ՀՀԴ եւ ՀԺԿ կուսակցութիւնները իրականացրին ձախ ուժերի՝ սոցիալ-դեմոկրատները եւ սոցիալիստ-հեղափոխականների «չեզոքացում», որով վերջիններին ազդեցութիւնը հանրապետութեան կյանքում զգալիորեն նվազեց: Ընդգրկմանը ուժերը հաճախ կառավարութեան զեմ հանդես էին գալիս միասնական ճակատով: Այսպես, 1918թ. դեկտեմբերին սոցիալ-դեմոկրատները, էսէւները եւ անկախ սոցիալիստները համատեղ կոչում նշվում էր. «Դաշնակցական կնազներ(կնյազները-Վ.Բ.) ու շեհները շարունակեցին բազմել բռնութեամբ գրավված միլիտարական աթոռները, իսկ Հայ ժողովրդական ջրջերը

չափազանց թանկ էին համարում իրենց նկատմամբ ցույց տրված շնորհը, որպեսզի համաձայնութիւն ունենան սեփական կարծիք արտահայտել, չկոծկել նրանց արարքները եւ դազարել իշխանավոր տղերանց պոչն ու փորձավորները լինելուց»⁶: Կառավարութիւնը ամբողջ կազմով գործի անցավ ձեւավորումից մոտ երկու շաբաթ հետո, երբ արդեն կորցրել էր խնամատարութեան նախարար Խ. Կարճեկյանին⁷, որից հետո այդ պաշտոնում նշանակվեց Ալ.Խատիսյանը: Նա Երեւան ժամանեց նոյեմբերի 20-ին, ՀԺԿ նորանշանակ նախարարների հետ⁸: 1919թ. հունվարի վերջին Արամ Մանուկյանի մահվանից հետո Ստախոյանին տրվեց նաեւ ներքին գործերի նախարարութիւնը: 1919թ. փետրվարի 4-ին Հայաստանի Խորհուրդը որոշում ընդունեց վարչապետ Քաջազունու գլխավորութեամբ պատվիրակութիւնն ուղարկել Եվրոպա եւ ԱՄՆ⁹, որից հետո վարչապետի պաշտոնակատար դարձավ Խատիսյանը: Թեեւ նման բարձր մակարդակով պատվիրակութեան ուղարկումը Արեւմուտք կապված էր Հայաստանի ծանր տնտեսական կացութեամբ, բայց պետք է նաեւ արձանագրել, որ Դաշնակցութեան մեջ քիչ չէին այն գործիչները, որոնք դժգոհ էին Քաջազունու գործունեութիւնից: Ըստ Խուրեն Տեր-Մինասյանի՝ «Քաջազունուին ձգտում էր կզիջացնել Դաշնակցութիւնը»¹⁰: Քաջազունու համար ծանր հարված եղավ Արամի մահը, որից հետոյստ Խուրենի, «Մահացավ նաեւ Քաջազունու կառավարութիւնը»¹¹: Զգալի փոփոխութիւններ տեղի ունեցան նաեւ ժողովրդական նախարարների կազմում: Եռտուր թիֆլիս մեկնեց պարենավորման նախարար Լ. Ղուլյանը, որի պաշտոնը ստանձնեց Ս. Հարութիւնյանը, իսկ վերջինիս մեկնելուց հետո պաշտոնակատար դարձավ Գ. Մելիք-Ղարաբաղյանը: Ստեղծվել էր մի կազմութիւն, «երբ Հայաստանը ուներ երեք պարենավորման նախարար եւ ո՛չ մի պարենավորում»¹²: Կարծում ենք, որ սովի պայմաններում նման երեւոյթը ինքնին բացասական էր: Միայն 1919թ. փետրվարի 13-ի նիստում ՀԺԿ կենտրոնական Կոմիտեն լսեց Լ. Ղուլյանի հրատարակած եւ միաձայն որոշեց նրա փոխարեն Հայաստանի կառավարութեանը, իրբեւ պարենավորման նախարարի, ստաջարկել Ք.Վերմիշյանին¹³: Դրանից ավելի չուտ, 1918թ. դեկտեմբերի 4-ին տկարութեան պատճառով հրաժարական տված Մ.Աթաբեկյանի փոխարեն Հանրային կրթութեան նախարար դարձավ Գ.Միլիք-Ղարաբաղյանը, ազատվելով արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնից¹⁴: Հաճախ կոալիցիայի ներսում կարելի էր լսել փոխադարձ մեղադրանքներ, Այսպես, իր վերջիններից մեկում արգարադատութեան նախարար Ս. Հարութիւնյանը նշել էր, թե «Հայաստանում սոցիալիստական տենդենցները չպիտի լինեն, որովհետեւ այդ անբերկացիներին հաճելի կարող է չլինել եւ որ գրոսի Հայ հարուստները իրենց կապիտալը Հայաստան չեն փոխադրի»¹⁵: Դրա փոխարեն ՀՀԴ-ն քննադատում էր Ք. Վերմիշյանին, որ իրեն հանձնված պարենավորման նախարարութիւնը դարձրել է ուսական¹⁶: 1919թ. հունվարյան նմանակներից մեկում վարչապետ Հ.Քաջազունուին կոալիցիան համարում էր մեքենայական մեծամասնութիւն, որը չկարողացավ վերացնել անվստահութիւնը, անտագոնիզմը եւ նույնիսկ փոխադարձ ատելութիւնը¹⁷: Կառավարութիւնը չգարձավ համերաշխ կոլեկտիվ, նախարարութիւնները գործում էին անջատ-անջատ եւ, որ կրեւոր է, այդպես էլ չքննարկվեց նրա Հայտագիրը: Թեեւ վարչապետը մնացել էր նույնը, բայց փոխվել էր նախարարական կազմի զգալի մասը: Փոխվել էին նաեւ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական բազմաթիվ հիմնախնդիրներ, ուստի Հայտագրի ներկայացումը կառավարութեան կողմից կլիներ տեղին: Մեր կարծիքով դա չկատարվեց մի քանի պատճառով: Նախ, դժվար էր սոցիալ-տնտեսական տարբեր Հայեցակարգեր ունեցող կուսակցութիւններին (սոցիալիստ գաշնակցականներ եւ

¹ «Չանդ», 7 փետրվարի 1919թ:
² «Ժողովրդի Ձայն», Թիֆլիս, 10 նոյեմբերի 1918թ:
³ «Չանդ», 10 նոյեմբերի 1918թ:
⁴ «Աշխատավոր», Թիֆլիս, 26 նոյեմբերի 1918թ:
⁵ Նույն տեղում, 8 մայիսի 1919թ:

¹ ՀԱԱ, ֆ. Կ - 4041, ց.1, գ.67, թ.1-2:
² Խ. Կարճեկյանը սպանվեց 1918թ. նոյեմբերի 14-ին դաշնակցական եզրը Տեր-Մինասյանի կողմից:
³ Ալ. Խատիսյան, «ՀՀ ծագումն ու զարգացումը», Բելյութ 1968, էջ 115:
⁴ ՀԱԱ, ֆ. Պ - 199, ց.1, գ. 27, թ.57:
⁵ Խուրեն, «Հայ լեզվափոխականի մը լիչատակները», Թեհրան 1982, էջ 313:
⁶ Նույն տեղում, էջ 278:
⁷ Ս. Վրացյան, նշվ. աշխ., Երեւան 1993, էջ 207:
⁸ Նույն տեղում:
⁹ «Ժողովրդի Ձայն», Թիֆլիս, 15 փետրվարի 1919թ:
¹⁰ ՀԱԱ, ֆ. Պ - 199, ց.1, գ.11, թ.19:
¹¹ «Հայաստանի աշխատավոր», 13 ապրիլի 1919թ:
¹² Նույն տեղում:
¹³ «Նշխարներ, Գարգիին Նժդեհ, Հովհաննես Քաջազունի», Երեւան 2002, էջ 38:

ուսմիավոր ժողովրդականներ) մեկտեղ ներկայացնել գործունեության միասնական ծրագիր: Օրվեկտրիվորեն խանգարեցին նաև ահավոր սովը, հայ-վրացական հակամարտությունը եւ վարչապետի գործուղումը արտասահման, ինչը, ոչ մի կերպ չի արդարացնում կառավարության նման գործելակերպը: Այնուհանդերձ, գործունեության ավելի քան յոթ ամիսների ընթացքում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմիններում դաշնակցականներն ու ժողովրդականները ցուցաբերեցին համագործակցության բազմաթիվ օրինակներ: Այսպես, երբ օրակարգի հարց էր լիազորության վեհաժողով մեկնող պատվիրակության ձևավորումը, երկու կուսակցությունների համաձայնությունը հարցը լուծվեց կառավարության միավորակով: 1918թ. դեկտեմբերի 5-ին պատվիրակության անդամներ նշանակվեցին դաշնակցականներ Ա.Ա.Հարոնյանն ու Հ.Օշանյանը եւ ժողովրդական Մ.Պապազյանը՝ որով էլ ի չէր դարձվեցին խորհրդարանի ձախ ընդդիմության նկատառումները: Խորհրդարանական համագործակցության շրջանակներում նշելի է 1919թ. ապրիլի 27-ի նիստը, երբ դաշնակցական եւ ժողովրդական խմբակցությունների միասնական օրինադրով խորհրդարանը ուղարկվեց մեկամյա արձակուրդի-իսկ օրենսդիր մարմնի լիազորությունները անցան կոալիցիոն կառավարությանը՝ Իսկ ահա կառավարությունը իր միանձնյա իշխանավարման ավելի քան մեկամյա շրջանում (1919թ. ապրիլի 27-հունիսի 4-ը) հասցրեց հաստատել 99 օրինագիծ, որից 96-ը միաձայն, ինչը նույնպես վկայում է որչափ համերաշխության մասին: Կոալիցիոն կառավարությունը գոյատևեց մինչև 1919թ. հունիս, երբ չընդունելով կառավարության մեծամասնության կողմից հաստատված «Միացյալ եւ Անկախ Հայաստանի անկախության մասին» եւ «Հայաստանի Խորհրդի համալրման մասին» օրենքները, ՀԺԿ անդամ նախարարները ազատվեցին կառավարության կազմից:

Ջգերազնահատելով Հայաստանի առաջին կոալիցիոն կառավարության դերը մեր պետականության կյանքում, հատկապես կարեւորում ենք նշել նրա ունեցած ներդրումը հայ քաղաքական մտքի ծանրության կենտրոնը երեւան տեղափոխելու հարցում:

Իր թիրուցյուններով հանդերձ, այնուամենայնիվ, այն հանդիսանում է Հայաստանի առաջին կոալիցիոն կառավարությունը, պետական եւ կառավարական հոդի վրա կատարված առաջին միջկուսակցական գործակցությունը:

Վանիկ Բաբաջանյան

**ПАРТИИ В КОАЛИЦИОННОМ ПРАВИТЕЛЬСТВЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ**

РЕЗЮМЕ

После провозглашения независимости, в июле 1918 года было создано первое правительство, в котором большинство министерских постов заняли представители партии Дашнакцутюн. Премьер-министром был назначен О.Качазнунци. Остальные политические силы (Армянская Народная партия, социал-демократы, и эсэры) не вошли в правительство и в парламенте составили твердую оппозицию.

Уже в начале октября Качазнунци не имея поддержки большинства парламента, в Совете Старейшин заявил о необходимости создания коалиционного правительства. В конце октября начались межпартийные переговоры. Социал-демократы обязательно хотели получить посты министров иностранных и внутренних дел. Эсэры не выдвинули никаких требований, а Народную партию заинтересовало количество министерских постов. 4-ого ноября на заседании парламента было создано коалиционное правительство. Четыре члена партии Дашнакцутюн заняли посты премьер-

¹ ՀԱԱ, ֆ.Պ -199, ց.1, գ.11, թ.2:

² Նույն տեղում, ֆ.Պ - 404, ց.1, գ.63, թ.3:

³ «Ժողովուրդ», 11 հունիսի 1919թ:

⁴ «Կառավարության լրագրեր» 3 հունիսի 1919թ:

министра, министров иностранных, внутренних дел и призрения. Остальные министерства (юстиции, финансов, продовольствия и образования) заняли члены Армянской Народной партии.

Это правительство было первым коалиционным, первым межпартийным сотрудничеством.

Ваник Бабаджанян

**ԱՐ ՀԵՍԱՍԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայաստանի Առաջին Հանրապետությունը ստեղծվեց ներքին ու արտաքին չափազանց ծանր պայմաններում: Ինքնուրույն պետականության կորստից շուրջ 600 տարի անց իր պատմական հայրենիքի 1/10 մասում, 12000 քառ.կմ տարածությունը ընդգրկող հողակտորը՝ Հայաստանի Հանրապետությունը, մեկուսացված էր աշխարհից, գուրկ հաղորդակցման միջոցներից, չըջապատված թշնամի հարեաններով, որի տարածքում հիմնական բնակիչներից բացի, ապաստան էին գտել թուրքական սպանդից փրկված ավելի քան 200.000 արեւմտահայ գաղթականներ: Նորաստեղծ Հանրապետության կառավարության առաջ կանգնած էին բազմաթիվ անհետաձգելի լուծուժ պահանջող խնդիրներ, որոնցից ամենակարեւորը ժողովրդի ֆիզիկական գոյությունը ապահովումն էր:

ՀՀ մայրաքաղաք Երեւանը, որը նաև նախկին Երեւանի նահանգի վարչական կենտրոնն էր, տնտեսական նշանակություն ունեցող, զարգացած արդյունաբերությունը քաղաք էր: Եստրոնակվող ուսու - թուրքական պատերազմի ամբողջովին կազմալուծել էր քաղաքի, ինչպես նաև ողջ նահանգի տնտեսական կյանքը, ծայր աստիճան բացասաբար անդադառնալով հատկապես աշխատավոր ժողովրդի կենսամակարդակի վրա:

«Մյուս կողմից անդադար ընթանում է դեռևս պահպանված մասնավոր եւ հասարակական ձեռնարկությունների լուծարումը: Ինձ մոտ խմբերով եւ մենակ գալիս են բանվորներ ու ծառայողներ զանազան գործարանների, կոոպերատիվների, առևտրական ձեռնարկությունների, հասարակական հաստատությունների եւ այլն, աշխատանքից ազատված եւ բավարարություն չստացած», - ասվում է Անդրկովկասի կառավարության Աշխատանքի նախարարին հասցեագրված մի նամակում¹:

Տնտեսության կազմալուծման, քայքայման հետ միասին կազմալուծվել էին նաև բանվոր - ծառայողների արհեստակցական միություններն ու դրանց հարող հասարակական կազմակերպությունները: «Համընդհանուր մորելիքացիան եւ անիշխանությունը թուլացրել են Երեւանի բանվորական կազմակերպությունները: Բազմաթիվ արհմիություններում տիրում է կատարյալ փլուզում, առավել գործունյա տարրերի զինվորական ծառայության անցնելու պատճառով: Երեկոյան 9-ից հետո կյանքը քաղաքում կանգ է առնում, ժողով հրավիրելը դարձել է անհնարին»², այսպես է բնութագրվում ՀՀ հռչակման նախօրյակին տնտեսական ու արհեստակցական միությունների գործունեությունն ու ընդհանուր վիճակը:

Արհեստակցական միությունների կազմավորումը սերտորեն առնչվում էր բանվորական շարժման հետ եւ հետեւանք էր կապիտալիստական արտադրական հարաբերությունների Անդրկովկաս ներթափանցման: Բուսական կայսրության ծայրամաս հանդիսացող Արեւելյան Հայաստանում գործում էին վերամշակող, գինեգործական, կոնյակի արտադրության, մետաղագործական,

¹ Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ.Պ - 220, ց.1, գ.1, թ.14:

² ՀԱԱ, ֆ.Պ - 220, ց.1, գ.1, թ.14:

մետաքսագործական ձեռնարկություններ, որոնցում բանվորների քանակը մեծաթիվ էջր¹:

Արեւելյան Հայաստանում առաջին արհեստակցական միությունների առաջացումը վերաբերում է 1905 - 1907թթ. ժամանակաշրջանին և պայմանավորված էր Ռուսական առաջին Հեղափոխություն, Ռուսաստանում ծավալված բանվորական շարժման և նրա կազմակերպիչ արհեստակցական միություն նշանակալից ազդեցությունը: Այս ժամանակաշրջանում, Հայաստանում կազմավորվել և գործել են. Երեւանի տնային աշխատողների (1905թ.), Երեւանի կաշեգործների (1906թ.), երկաթուղային բանվորների (Ալեքսանդրապոլ, Կարս, 1906թ.), պղնձագործների (Ալյանբրդի, 1906թ.), սպազորիչների, հացթուխների արհմիությունները (1906թ.): 1905 - 1907թթ. ձեւավորված արհմիությունների կազմակերպման գործում զգալի էր սոցիալ-դեմոկրատական գաղափարների ազդեցությունը: Հետագա տարիներին նշված արհմիությունների գործունեությունը սահմանափակվեց երկրում մոլեզնդ ունեցիկի պատճառով: Սակայն 1910-ական թվականներին արհմիությունական գործընթացը կրկին որոշակիորեն աշխուժացավ:

Արհմիությունական շարժումը հատկապես վերելք ապրեց 1917թ. փետրվարյան Հեղափոխությունից հետո. ծնունդ առան նոր միություններ, ընդլայնվեցին նրանց իրավասույթյան շրջանակները²: Նոր կազմակերպված արհմիություններից էին Երեւանի ուսանողների միությունը, Երեւանի քաղաքային հասարակական ինքնավարության ծառայողների միությունը և այլն: Իսկ Աշխատանքի հատուկ նախարարության ստեղծումն Անդրկովկասի կառավարության կազմում, ինքնին երեւութ էր:

Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության տարիներին շարունակում էին գործել սակավին 1905-1907թթ. և 1910-1916թթ. ստեղծված, կազմավորված տնային աշխատողների, կաշեգործների, երկաթուղային բանվորների, սպազորիչների, փոստ - հեռագրատան ծառայողների, պղնձագործների, Կովկասի Հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների արհեստակցական միությունները: Դրանց հետ միասին ձեւավորվեցին ու ավելի ամրապնդվեցին նոր միություններ, որոնք ծնունդ էին տվել փետրվարյան Հեղափոխության ընձեռած դեմոկրատական ազատությունների շնորհիվ: Երեւանի ընդհանուր բանվորների, Ալեքսանդրապոլի, Երեւանի քաղաքային ինքնավարության աշխատողների, առեւտրա-արդյունաբերական ձեռնարկությունների, Երեւանի մասնավոր վարկային հաստատությունների ծառայողների, Մաղկունք գյուղի (Նոր - Բայազետի գավառ) երիտասարդաց, Երեւանի ուսանողների, դերձակների, Ալեքսանդրապոլի երիտասարդ բանվորների, Շիրակի գյուղացիական և այլ միությունները: Գործող, արդեն ամրապնդված արհմիությունները փորձում էին իրենց շարքերը գարձնել ավելի բազմամարդ տեղական կազմակերպություններ ստեղծելու միջոցով: Այդ ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեություն էր ծավալել Պետական ծառայողների միությունը³: 1918-1920թթ. ավելի արագ էր ընթանում ճյուղային ու մասնագիտական տարբեր արհեստակցական միությունների միավորման, խոշորացման գործընթացը: Այդ առումով աչքի էր ընկնում Պետական ծառայողների արհմիությունների միությունը: Նշված ժամանակամիջոցում ընդլայնվեցին նրա իրավասույթյան շրջանակներն, աճեց միության անդամների թիվը: Կազմակերպվեց միությունների միասնական ժամանակավոր բյուրո, որը ներկայացնում էր մի շարք միությունների իրավունքները: Փորձեր էին արվում արհմիությունները միավորելու տարածքային սկզբունքով, ինչպես օրինակ Ալեքսանդրապոլի բոլոր արհմիությունների միությունը, որի կանոնադրություն նախագիծը մշակվել էր ու ներկայացվել համապատասխան մարմիններին⁴:

¹ Ադոնց Մ., Արեւելյան Հայաստանի տնտեսական զարգացումը, Երեւան, 1957, էջ 525:

² Հայկական Սովետական Հանրապետության, հ.2, Երեւան, 1976, Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ.1, Երեւան, 1990, էջ 386:

³ Նույն տեղում:

⁴ ՀԱԱ, ֆ.Պ - 7, գ.82, թթ.1 - 6:

⁵ Նույն տեղում, ֆ.Պ - 216, ց.1, գ.24, թ.15, ֆ.Պ - 203, ց.1, գ.78, թ.5:

⁶ ՀԱԱ, ֆ.Պ - 201, ց.1, գ.38, մաս 1, թ.89 և շրջ.:

Արհմիությունների շահերի և իրավունքների պաշտպանությամբ հանդես են եկել ճյուղային և ընդհանուր ներկայացուցչական ժողովները. Երեւանի ընդհանուր բանվորների ներկայացուցիչների ժողովը, փոստ - հեռագրատան ծառայողների պատվիրակների համագումարը և այլն: Գոյությունը պահպանած ու գործող որոշ արհմիություններ իրենց կանոնադրությունները համապատասխանեցնում էին ՀՀ օրենսդրության, ինչպես օրինակ Երեւանի ուսանողների միությունը, Պետական ծառայողների միությունը⁵:

Քննիչով ժամանակամիջոցում, արհմիություններն, ուժերը ներածին չափ, իրենց անդամներին օգնություն հասցնելու նպատակով, ստեղծում էին հարսից կազմակերպություններ կոոպերատիվներ, փոխազարձ օգնության գրամարկեր, ֆոնդեր: Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության աշխատողների արհմիությունը կազմակերպել էր փոխազարձ օգնության իր գրամարկը: 1919թ. Հունիսին Պետական ծառայողների արհմիությունը ստեղծեց իր կոոպերատիվը⁶: Արհմիություններին կից գործող բոլոր կազմակերպություններն առաջնորդվում էին տվյալ միության կանոնադրությամբ, թեև ինքնուրույն էին, ունեին սեփական կանոնադրություն ու կնիք:

Առաջին Հանրապետության գոյության երկուսուկես տարվա ընթացքում արհմիությունների գործունեությունը կրել է գերազանցապես տնտեսական բնույթ⁷: Համաձայն կանոնադրության առաջին կետի, որը փոքր տարբերություններով ընդհանուր էր բոլոր արհմիությունների համար. «...իր անդամների շահերի պաշտպանությունը և նրանց իրավական, նյութական ու կուլտուրական գրությունները բարելավում»⁸: Իրենց նպատակին հասնելու համար, արհեստակցական միությունները դիմել են տարբեր քայլերի ու միջոցների: Առանձին ուշադրություն է գարձվել միությունների մեջ ավելի մեծաթիվ աշխատավորներ ներգրավելուն: Մեր ձեռքի տակ այդ ժամանակաշրջանում միությունների անդամների թվի վերաբերյալ տվյալներ չկան, սակայն մի շարք միությունների սուկայությունը կրողները գրա անժողովի վկայությունն է:

Հայաստանի Առաջին Հանրապետության թիվ մեկ խնդիրը եղել է ժողովրդի ֆիզիկական գոյատևման ապահովումը: Երկրում թաղավորում էր սովը: Կառավարությունը իր տնօրինության ներքո գտնվող հացի, պարենի ու այլ ապրանքների պաշարները բնակչությանը հասցնելու գործում հանդիպել է դժվարությունների: Այս խնդրում, այսինքն սակա պաշարները բնակչության բոլոր խավերին, հատկապես աշխատավորությանը որոշակի չափաբաժին հատկացնելու, արդար բաժանելու գործում, որոշակի դեր են խաղացել արհմիությունների տեղական կազմակերպությունները: Այդ նպատակով միությունների վարչությունների ցուցումներով կազմվել են միությունների անդամների, վերջիններիս բնանիքների չաչխատող անդամների անվանացուցակներ, խիստ հսկողություն է սահմանվել ցուցակները կազմելու ճշգրտության վրա: Հացը և պարենը բաշխվել են նաև արհեստակցական միությունների կազմակերպած կոոպերատիվների միջոցով⁹:

1918 - 1920թթ. ՀՀ տարածքում գործող արհմիություններն օգտվելով ընձեռած դեմոկրատական ազատություններից, կառավարությանը ներկայացրել են աշխատողների աշխատավարձին ու աշխատանքային պայմաններին վերաբերող մի շարք առաջարկություններ ու պահանջներ: 1919թ. Հունիսի 4-ին Երեւանի բանվորական ներկայացուցչական ժողովը, կառավարությանը ներկայացրել է առաջարկություն, ըստ որի քաղաքի աշխատավորների ամսեկան աշխատավարձը նախատեսվում էր սահմանել հետևյալ կերպ. առաջին խմբին՝ մասնագետներին՝ 1200 ուրբ., երկրորդ խմբին՝ լիուսթ բանվորներին՝ 800 ուրբ. և անչափահասներին՝ ներկա աշխատավարձի կրկնակի չափով, բացի այդ աշխատողին ու բնանիքի յուրաքանչյուրի անդամին՝ կես ֆունտ հաց¹⁰: Աշխատավարձը բարձրացնելու, տոների առնչությամբ նպաստներ, ահաբեկ չափերի

¹ Նույն տեղում, մաս II, թ.89, գ.104, թ.28:

² Նույն տեղում, գ.66, թ.5:

³ Նույն տեղում, գ.128, թթ.10,12:

⁴ Նույն տեղում, գ.78, թ.8, ֆ.Պ - 216, ց.1, գ.24, թ.11 և այլն:

⁵ Նույն տեղում, 203, ց.1, գ.78, թ.1, 4, 11, գ.128, թ.13, ֆ.Պ - 199, ց.1, գ.234, թ.10 և այլն:

⁶ ՀԱԱ, ֆ.Պ - 205, ց.1, գ.119, թ.57 - 58:

Հասնող թանկութեամբ պայմանավորված հավելումներ հատկացնելու պահանջներ են առաջադրել փոստ - Հեռագրատան ծառայողների, պետական ծառայողների եւ այլ արհմիութիւնների կողմից: Ուշագրավ է Հետեւյալ Հանգամանքը: Եթէ կառավարութիւնը այս կամ այն չափով, որոշ սահմաններում բավարարել է արհմիութիւնների պահանջներն, ապա մասնավոր գործատերերն այդ քայլին գնացել են ոչ միշտ: Այնքանադրապոլի տպագրական գործի բավորների արհմիութիւնը քաղաքում բողոքող երեք տպարանատերերին ներկայացրել է աշխատավարձի բարձրացման տախտակ, որը նախատեսում էր աշխատավարձի բարձրացումով այլ ոլորտի մասնագետների՝ գրաշարների, տպագրիչների, ակեղեղնատների, կազմարարների եւ ցրիչների տարբերակված աշխատավարձերը սառնակապարձի: Սակայն երեք տպարանատերերից մեկն է համաձայնվել ընդունված տարբերակին¹: Այնուհետեւ փոստ - Հեռագրատան ծառայողների արհմիութիւնն պահանջները քանիցս կրկնվել են եւ վերջնականորեն ներկայացվել են իրեն վերջնադիր, որի պահանջները չկատարելու դեպքում, ծառայողները սպառնացել են գործադուլով: Գրութիւնը հասցեագրված է եղել ՀՀ պառլամենտին ու կառավարութեանը: Վերջնադիր ժամկետը նշանակվել է 1919թ. նոյեմբերի 14-ի ժամը 14:00-ը: Աշխատավարձերի բարձրացման ու ժամանակին վճարելու պահանջները վերջնադիր են առաջադրվել Իջևանից, Կարսից, Ալեքսանդրապոլից, Սարիգամիշից, Դիլիջանից, նույն փոստ-հեռագրատան ծառայողների արհմիութեանական տեղական կազմակերպութիւնների կողմից՝ 1920թ. սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին²: Եվ այդ պահանջները միանգամայն հիմնավորված էին ու պատճառաբանված: Երկրի ներքին ու արտաքին գրութիւնն աղետալի էր, ժողովրդի նյութական վիճակը՝ ճգնաժամային:

Փոստ-հեռագրատան աշխատողների արհմիութիւնը պահանջել է սահմանել 6-ամսյա աշխատանքային օր (ընդ որում այս պահանջը եւս առաջադրվել է քանիցս), ինչպէս նաեւ այդ բաժնի դուրս բերումը ներքին գործերի նախարարութեան գլխավոր ինժեներային վարչութեան կառուցվածքից:

ՀՀ կարճատեւ՝ գոյութեան ընթացքում տեղի են ունեցել գործադուլներ: Գործադուլների մասին նախապէս Հայտարարվել է, համաձայնեցվել արհմիութեանական կազմակերպութեան ղեկավարութեան հետ: Այսպէս, գործադուլ են արել Երեւանի արհեստանոցի բանվորները՝ Հացի բաժնի չստանալու պատճառով³: Նույնը եւ՝ Արաքս, եւ՝ Ուլուխանյու կայարանների աշխատողները⁴, Ալեքսանդրապոլի տպարանի աշխատողները եւ այլն:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր վերջնադիրներն են ավարտվել գործադուլով: Եղել են դեպքեր, երբ արհմիութեանական ընդհանուր ղեկավարութիւնը տեղակ չի եղել կայանալիք գործադուլի մասին⁵, կամ ոչ միայն համաձայնութիւն չի տվել, այլու այն համարել է անժամանակ ելնելով երկրում տիրող ծանր ու աղետալի վիճակից⁶: Այդ տեսակետն է արտահայտել պետական ծառայողների արհմիութեան կենտրոնական վարչութիւնը Հանրապետութեան կառավարութեանն ուղղված 1919թ. դեկտեմբերի 19-ի իր նամակում: Արհմիութիւնների ղեկավարութիւնը երբեմն հանդես է եկել հաշտարարի, համաձայնեցնողի դերում: Միութիւնների միութեան ժամանակավոր բյուրոն 1919թ. դեկտեմբերի 14-ի նամակով Հայտնել է, որ փոստ-հեռագրատան ծառայողները նշանակված գործադուլը հետաձգում են մինչեւ դեկտեմբերի 25-ը, որպէսզի կառավարութեանը հնարավորութիւն տան միջոցներ հայթայթելու⁷:

Հացի, պարենի պակասութիւնը բնակչութեանը մղել է ծայրահեղ քայլերի, սակայն իր պատիվ արհմիութեան բազմաթիվ անգամների, նրանց չի լքել

քաղաքացիական պարտքի ու ազգային արժանապատվութեան դիտակցութիւնը¹: Կարսի փոստ-հեռագրատան ծառայողների արհմիութեանական տեղական կոմիտեի հղած մի շարք պահանջ-հեռագրերից մեկում, 1919թ. հոկտեմբերի 25-ին, շեշտվում են այն անկանելի պայմանները, որ Հարկադրում են դիմել անցանկալի քայլերի: Համեմատելով իրենց վարձատրութեան ու աշխատանքային պայմաններն այլ բնագավառների իրավիճակի հետ, նրանք գրում են. «գիտակցելով երեսուսարդ Հայաստանի կառավարչական գրութիւնն ուղ լրլութիւնն ու կարիքները եւ գործարարելով ամեն ջանք, ցայսօր խուսափել ենք Հանրապետութեան դեմ իրական կուլթիւնից եւ կիսաբազց շարունակել ենք մեր տեղծագործ աշխատանքը, բայց հիմա մեր համբերութիւնը սպառվել է ...»²: Եվ այնուամենայնիվ նրանք, 1919թ. դեկտեմբերի 14-ին, հայտնում են, որ «կընդունվեն Հանրապետութեան գործի համար նախատեսված օպերատիվ եւ պարենային բնութիւն հեռագրերը»³:

1918 - 1920թթ. արհմիութիւնների գործունեութեան ընթացքը քննելիս, որոշ տարածայնութիւններ եւ հակասութիւններ են դիտվում սկզբնական եւ վերագա կազմակերպութիւնների միջեւ: Հատկապէս այդ իրողութիւնն ակնառու է բացահայտվել 1920 թ. Մայիսյան պատմաբանութեան հաջորդ օրերին: Արհմիութեան անգամների մի մասը մասամբ դժգոհ գոյութիւն ունեցող կյանքի ծանրագույն պայմաններից, մասամբ էլ ծավալվող բոլշևիկյան քարոզչութեան ազդեցութեամբ մասնակցեց պատմաբանութեանը, գործադուլներին: Ապստամբութեան ճնշելուց եւ գործադուլների դադարելուց հետո, գործադուլեցի պատժամիջոցներ: Արհմիութեանական որոշ ղեկավար օղակների անգամներ, մասնակցութիւն ունեցան մեղավորներին Հայտնաբերելու գործում, բնականաբար պաշտպանելով պետութեան շահերը: Ալեքսանդրապոլի տեղական արհմիութեանական կոմիտեները (Ուսանողական միութեան վարչութեան, երիտասարդ բանվորների միութեան, Շիրակի գյուղացիական միութեան վարչութեան) կառավարութեան քայլերը համարեցին հակադեմոկրատական, արհմիութեան կանոններից արտառութիւնների վերաբերյալ կետին հակասող ու դատապարտելի⁴:

Հայ Հեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան 1917թ. ընդունած ծրագրի «Կուսակցութիւնը եւ արհմիութիւնը» բաժնում գրված է. «Արհմիութիւնները պետք է լինեն անկուսակցական: Մտցնել Համամասնական ինտրութիւնների սկզբունքը»⁵: ՀՀԴ-ն դիտել է արհմիութիւնն իբրեւ անկախ, բնութաբան, քաղաքական գաղափարախոսութիւնից հրեմ կազմակերպութիւն: Առաջին Հանրապետութեան կառավարութեան, գործունեութեան քաղաքական ուղղվածութեան հիմքում ընկած էր ՀՀԴ գաղափարախոսութիւնը:

Առաջին Հանրապետութեան կառավարութիւնն, իր գործունեութեան հենց սկզբից, քայլեր ձեռնարկեց աշխատավորների արհմիութիւնների, հասարակական կազմակերպութիւնների դերի բարձրացման, նրանց իրավունքների ընդլայնման ու պաշտպանութեան ուղղութեամբ: Հանրապետութեան երկրորդ վարչապետ Ա. Խատիսյանը, խոսելով Հանրապետութեան պետական շինարարութեան առաջին շրջանի մասին եւ թվարկելով Աշխատանքի բաժնումների եւ հետազայում՝ Աշխատանքի նախարարութեան ձեռնարկած միջոցառումները, ի թիվս 8-ամսյա աշխատանքային օրվա սահմանման, պետական ու մասնավոր հիմնարկութիւնների պաշտոնյաներին լիկվիդացիոն վճարելու օրենքի ընդունման վերաբերյալ, գրում է. «Միջոցներ ձեռք առնվեցան նպաստելու Համար Հայաստանի արհեստակցական միութիւններու կազմակերպութեան: Նախապարաստական միջոցառումներու դիմվեցան արհեստակցական

¹ Առաջին մասսայական - Հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան պատմաբանութիւնը), Նյութեր եւ ուսումնասիրութիւններ, կազմ. Կ.Կազարյան, Մ.Ներսիսյան, Երևան, 1932, էջ 94 - 95:

² ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց.1, գ.13, թ.79:

³ Նույն տեղում, ֆ.Պ - 201, ց.1, գ.261, թ.117, 123:

⁴ Նույն տեղում, ֆ.Պ - 205, ց.1, գ.35, թ.33:

⁵ Նույն տեղում, ֆ.Պ - 199, ց.1, գ.234, թ.14:

⁶ Նույն տեղում, ֆ.Պ - 205, ց.1, գ.123, թ.87:

⁷ Նույն տեղում, ֆ.Պ - 199, ց.1, գ.227, թ.5:

⁸ ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց.1, գ.227, թ.4, ֆ.Պ - 205, ց.1, գ.562, թ.293:

¹ Նույն տեղում, 201, ց.1, գ.261, թ.119:

² Նույն տեղում, 199, ց.1, գ.13, թ.79:

³ Նույն տեղում:

⁴ Առաջին մասսայական - Հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան պատմաբանութիւնը), Նյութեր եւ ուսումնասիրութիւններ, կազմ. Կ.Կազարյան, Մ.Ներսիսյան, Երևան, 1932, էջ 74 - 75:

⁵ Դաշնակցայութեան ծրագրերը, 1917, էջ 22:

միություններու համագումար հրավիրելու համար: Ստեղծվեցավ աշխատանքի կոմիտարներու պաշտոններություն¹:

Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքային գործունեության բոլոր բնագավառներին վերաբերող խնդիրներում գործում էր Ռուսական կայսրություն, ժամանակավոր կառավարության ու Անդրկովկասյան Սեյմի ընդունած օրենսդրությունը՝ Հանրապետության պաշտամենտի փոփոխություններով²: Աշխատանքի Հետ կապված հարցերը կարգավորվում էին Խնամատարության եւ աշխատանքի նախարարության կառուցվածքում աշխատանքի բաժնում, որը 1920թ. օգոստոսի 8-ի օրենքով վերակառուցվեց նախարարության³: Այն ուներ աշխատանքի կոմիտարների ինստիտուտ, որի պաշտոնյաներն աշխատում էին տեղերում:

Արհմիությունները, 1918-1920թթ. ժամանակամիջոցում, ազատություն էին վայելում իրենց գործունեության բոլոր բնագավառներում՝ իրենց կանոնադրությունները հաստատված սահմաններում. խոսքի ազատության, գանազան հավաքների, ցույցեր, գործադուլներ կազմակերպելու, անտեսական բնույթի պահանջներ, առաջարկություններ ներկայացնելու եւ այդ կապակցությամբ կառավարության Հետ բանակցություններ վարելու եւ այլ իրավունքներ, երբեմն նաեւ չհամաձայնվելով կառավարության ընդունած որոշումներին⁴: Այսպես, օրինակ, նախարարների Խորհուրդը մշակել էր աշխատավորների գասակարման տախտակ, որից արհմիությունները դժգոհ էին մնացել, պատճառաբանելով իրենց դիտողություններն ու կարծիքները հաշվի չառնելու հանգամանք⁵:

Հանրապետության կառավարությունը, չնայած ֆինանսական սուղ միջոցներին, ջանքեր էր արձակել արհմիություններին՝ օրենսդրական ակտերի, որոշումների, հրահանգների միջոցով աշխուժացնել վերջիններիս գործունեությունը: Արհմիութենական կազմակերպություններին, նրանց կից կոոպերատիվներին, փոխադարձ օգնության գանձարկղերին արամադրվում էին անհատույց վարկեր, փոխարինարար արվում նաեւ անտոկոս եւ ցածր տոկոսով խոշոր գումարներ, ֆինանսավորվում էին այս կամ այն միջոցառումները (փոստ-հեռագրատան աշխատողների, երկաթուղու աշխատողների համագումարները)⁶:

Ուշագրավ է 1920թ. հունիսի 22-ի օրենքով հասկացված անհատույց վարկի ուղղվածությունը. «Վարկ բանալ աշխատանքի նախարարության անունով հինգ հարյուր Հոգարվ Հոգարի ուրբի նույն նախարարության կոմիտարիտաների, արհեստակցական միությունների (ընդգծումը՝ հեղինակի) գործունեությունը կանոնավորելու նպատակով անհրաժեշտ ծախսեր հոգալու համար»⁷: 1919թ. հոկտեմբերի 31-ին պառլամենտն օրենք է ընդունել երկաթուղային պաշտոնյաների, արհեստավորների եւ բանվորների արհեստակցական միությունը 1.000.000 ուրբ. փոխարինարար, 1 տարի ժամանակով անտոկոս վարկ արամադրելու մասին⁸: Պետական ծառայողների կոոպերատիվին 1919թ. հունիսի 30-ի օրենքով 300.000 ուրբ. վարկ է արվել փոխարինարար⁹, վարկ է արամադրվել երկաթուղային ծառայողների եւ բանվորների կոոպերատիվին եւ այլն:

Հանրապետությունն իր գոյության ծանրագույն ժամանակներում հոգացել է ժողովրդի կուլտուրական, կրթական մակարդակի բարձրացման մասին: Հարկ է նշել, որ մի շարք միությունների կանոնադրությունները ավյալ բնագավառին վերաբերող դրույթ ուներին¹⁰: Անտարակույս ուշագրավ է 1920թ. մայիսի 11-ի օրենքը քաղաքներում եւ գավառներում աշխատանքի կոմիտարիտաներին կից աշխատավորական գրադարաններ եւ ընթերցարաններ

բանալու եւ հրատարակությունների համար 1.000.000 ուրբ. վարկ հատկացնելու օրենքը¹, ինչպես նաեւ 1920թ. հունվարի 5-ի օրենքը՝ գրագիտական եւ գրավար-ժական դասընթացներ եւ ժողովրդական համալսարաններ ստեղծելու մասին:

ՀՀ նախարարների Խորհուրդը մեկուկես տարվա ընթացքում տասնմեկ անգամ քննարկել եւ հնարավորինս լուծում է ավել արհմիությունների հարուցած, մեծ մասամբ նյութական բնույթի հարցերին:

Դիտակցելով նախարարների Խորհրդի եւ պառլամենտի՝ արհմիության վերաբերյալ գործունեությունը, եզրակացնում ենք, որ պետական բարձր մարմիններն օպերատիվ կերպով են արձագանքել արհմիությունների կողմից առաջադրվող պահանջներին, իրենց կարողություն սահմաններում սատարել ու աջակցել նրանց: Այդ կապակցությամբ նշենք մի փաստ: Փոստ-հեռագրատան աշխատողների միությունը, 1919թ. հոկտեմբերի 21-ի վերջնադրով, պահանջում էր Հանել փոստ-հեռագրատան բաժինը Գլխավոր ինժեներային վարչության կազմից: 1920թ. հունվարի 8-ի օրենքով ավյալ բաժինը, վարչության կարգավիճակով, մտցվում է Հաղորդակցության նախարարության կառուցվածքի մեջ²:

Այսպիսով, չնայած արտակարգ ծանր ու լարված ներքին ու արտաքին պայմաններին, նյութական ծալրահեղ աղքատ միջոցներին, Առաջին Հանրապետության օրերին արհմիությունները գործել են ու հասել որոշակի արդյունքների աշխատավորների շահերը պաշտպանելու գործում:

Կարինե Թախիջանովա

ПРОФЕССИОНАЛЬНЫЕ СОЮЗЫ В ГОДЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

Первая Республика Армении создалась в чрезвычайно тяжелых политических и экономических условиях.

Экономика и административная жизнь Восточной Армении в начале 1918 года была окончательно разорена. Рабочие организации, профессиональные союзы были на грани полного развала.

Программа независимого правительства Армении основывалась на идеологии партии Дашнакцутюн, которая была направлена на укрепление и расширение профсоюзного движения, как одного из способов улучшения экономического и правового положения трудящихся.

В первые же месяцы существования Республики, возобновили свою деятельность ранее существовавшие профессиональные союзы (печатников, почты и телеграфа, железнодорожных служащих и т.д.), организовались новые (рабочих Ереванской ткацкой мастерской, молодых рабочих Александрополя, служащих потребкооперации и т. д.). Происходил процесс централизации по профессиональному и географическому признаку.

Профессиональные союзы за указанные годы пользовались демократическими свободами. Практиковалось выдвигание требований в целях повышения зарплат, улучшения условий труда, сокращения рабочего времени.

Часто профсоюзы выступали в качестве руководителей и организаторов забастовок.

Правительство РА по мере возможности удовлетворяло требование профсоюзов. В свою очередь оказывало помощь в виде финансовых безвозвратных субсидий, безпроцентных и низкопроцентных ссуд.

Карине Шахиджанова

¹ Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բելյուս, 1968, էջ 146 - 147:

² ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց.1, գ.86, թ.15:

³ Նույն տեղում, գ.490, թ.6 եւ շրջ:

⁴ Նույն տեղում, ֆ.Պ - 202, ց.1, գ.66, թ.7:

⁵ Նույն տեղում, ֆ.Պ - 201, ց.1, գ.261, թ.94, գ.45, մաս II, թ.450:

⁶ Նույն տեղում, ֆ.Պ - 199, ց.1, գ.168, թ.4:

⁷ Նույն տեղում, գ.66, թ.91:

⁸ Նույն տեղում, գ.56, թ.57:

⁹ Նույն տեղում, գ.161, թ.121:

¹⁰ ՀԱԱ, ֆ.Պ - 203, ց.1, գ.78, թ.8, ֆ.Պ-201, ց.1, գ.38, թ.89 եւ այլն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԵՎՏՐԱԱՐԴԹՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ**

Առևտրաարդյունաբերական պլանների խնդիրն է պետության, գործարարների ու սպառողների շահերն օրինական ճանապարհով համադրելու միջոցով զարկ տալ երկրի տնտեսության զարգացմանը:

Հայաստանի առաջին հանրապետությունն՝ ի տարբերություն Հարավային Կովկասի երկու հարեւան նորանկախ հանրապետությունների, Վրաստանի եւ Ադրբեջանի, ժառանգեց թալանված, ավերված ու քայքայված տնտեսությամբ, հաղորդակցության ուղիներից զուրկ, մեկուսացված, աղքատ, սովի ու հիվանդության ճիրաններում տառապող բնակչությամբ մի երկիր:

Հանրապետության կառավարությունը, վարչապետ Հ. Քաջազնունու գլխավորությամբ, քաջ գիտակցում էր երկրի տնտեսությունը զարգացնելու, բնականոն առևտրական գործունեությունը զարկ տալու, ճանապարհները բացելու, վերականգնելու բացառիկ կարևորությունը եւ ջանքեր էր գործադրում այդ ուղղությամբ: Այդ ասպարեզներում կառավարության եւ անհատ արդյունաբերողների ու առևտրականների գործողությունները համադրելու, երկրորդների նախաձեռնություններին նպաստելու, սատարելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր գոյության առաջին իսկ ամիսներին քննարկում է Հայաստանում առևտրաարդյունաբերական պլան ստեղծելու հարցը:

1918թ. գեկեմեթների 21-ին, ֆինանսների նախարարության հատուկ նիստում, նախարարի, պետական վերահսկիչների, մի շարք պետական պատասխանատու պաշտոնյաների ու առևտրաարդյունաբերական դասի 12 ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկվում է առևտրաարդյունաբերական պլանը /այսուհետեւ՝ ԱԱՊ/ ստեղծելու հարցը: Քննարկման մասնակիցները հավանություն են տալիս ԱԱՊ հիմնադրելու առաջարկությանը: Ծանոթանալով ժամանակավոր կառավարության կողմից 1917թ. հոկտեմբերի 6-ին հաստատված Ռուսաստանի ԱԱՊ կանոնադրությանը, նիստի մասնակիցները գտնում են, որ առայժմ ԱԱՊ պետք է հիմնադրել միայն Երեւան քաղաքում, նկատի ունենալով Հայաստանի տնտեսության եւ մարզերի միջև կանոնավոր ճանապարհների բացակայությունը: Կազմակերպչական խնդիրները լուծելու, կանոնադրություն մշակելու նպատակով, ընտրվում է 5 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ Գեւորդյի գլխավորությամբ:¹ Հետագա ամիսներին ԱԱՊ ստեղծելու խնդիրը քանիցս քննարկվում է ֆինանսների նախարարության նիստերում, խորհրդակցություններում:²

1919թ. հուլիսի 4-ին, ՀՀ ֆինանսների նախարարը, հարցը նախապես քննարկելուց հետո, գրությունը դիմում է նախարարների խորհրդին՝ ԱԱՊ-ի կանոնադրությամբ նախատեսված 5% հօդուտ ԱԱՊ-ի գանձելու վերաբերյալ կետը հաստատելու խնդրանքով: Ֆինանսների նախարարությունը հայտնում է, որ նման հարց լուծելու իրավասու չէ, այն կարող է լուծվել միայն օրենսդրական կարգով: Գրության մեջ նշվում է, որ Վրաստանի գործող ԱԱՊ-ի կանոնադրության, ինչպես եւ ժամանակավոր կառավարության 1917թ. հոկտեմբերի 6-ին հաստատված կանոնադրության մեջ, նման կետ գոյություն ունի:³

¹ Հայաստանի Ազգային արխիվ /այնուհետեւ ՀԱԱ, ֆ. Պ-209, ց.1, գ. 1, թ.4-5:

² ՀԱԱ, ֆ. Պ-209, ց.1, գ.1, թ.19-26:

³ Նույն տեղում, թ.28:

Ավելի քան մեկ տարի տեւած քննարկումներից հետո 1920թ. փետրվարի 15-ին, Երեւանում հիմնադրվում է Առևտրաարդյունաբերական պլան, որի մասին ազգարարվում է:⁴ Պայտի հիմնադիր-անդամները հանդես են գալիս պայտի գործունեությունը բնութագրող ուշագրավ հայտարարությամբ, որում ասվում էր.

«Ա.Ինքնավարության սկզբունքներով միացնել Հայաստանի այն անձանց եւ հիմնարկություններին, որոնք պարապում են առևտրաարդյունաբերական գործունեությամբ մեր երկրում, տեղական առևտրի եւ արդյունաբերության ընդհանուր շահերը ներկայացնելու, պաշտպանելու, ուսումնասիրելու եւ զարգացնելու համար, հետազոտելով եւ լավացնելով արդյունաբերության եւ աշխատանքի պայմանները, որոնք համապատասխանում են Պետության եւ Հանրային բարօրությանը»:

Բ. Կառավարության լայն աջակցություն կազմակերպելու, պահպանելու եւ նպաստելու առևտրի եւ արդյունաբերության հանրօգուտ հիմնարկությունների գործում:

Գ. Աջակցել Հայաստանի եւ բոլոր մյուս երկրների տնտեսական մերձեցմանը առևտրաարդյունաբերության շահերի հոյի վրա»:⁵

ՀՀ Առևտրաարդյունաբերական պլանը կիսապետական, կիսահասարակական կազմակերպություն էր: Այն գործել է ֆինանսների նախարարության կառուցվածքում, բայց ունեցել է ներքին ինքնավարություն, ղեկավարվել է պետության կողմից հաստատված կանոնադրությամբ:⁶

ԱԱՊ-ի անդամ կարող էր լինել 21 տարին լրացած յուրաքանչյուր անձ, ով ուներ իր գործունեության բնույթը հաստատող համապատասխան փաստաթուղթ, ներկայացնում էր գրավոր դիմում եւ վճարում մուսքի վճար ու անդամավճար: ԱԱՊ-ը բաղկացած էր իսկական, պատվավոր ու թղթակից-անդամներից: Վերջիններս ունեին խորհրդակցական ձայնի իրավունք: ԱԱՊ իսկական անդամները, ովքեր չէին գրառվում առևտրաարդյունաբերական գործունեությամբ, տարեկան անդամավճար էին մուծում 200ռ. չափով, իսկ գրառվողները՝ 100ռ. չափով: Պայտի կազմից դուրս գալու դեպքում անդամավճարը չէր վերադարձվում:

ԱԱ Պայտն իր գործունեությունն իրականացնում էր ընդհանուր ժողովի, կոմիտեի եւ վերատուգիչ հանձնաժողովի միջոցով: Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող էին ստեղծվել առանձին հանձնաժողովներ՝ տնտեսական բնույթի հարցեր քննարկելու նպատակով: Ընդհանուր ժողովը հրավիրվում էր տարին մեկ անգամ:⁷ ԱԱՊ-ի ընթացիկ գործունեությունն իրականացվում է ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ տարով ընտրված կոմիտեի միջոցով, որը բաղկացած էր նախագահից, նրա տեղակալից, 8 անդամներից: Կոմիտեն էլ իր կազմից ընտրում էր վարչություն՝ կոմիտեի նախագահ, տեղակալ եւ մեկ անգամ կազմով: Վերջինս վարում էր ԱԱՊ-ի գործերը, որի համար կարող էր վարձատրվել՝ ընդհանուր ժողովի որոշումով: ԱԱՊ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու, ընդհանուր ժողով գումարելու հարցերը որոշվում էր անդամների 2/3-ի ներկայության պարագայում:

Հայաստանի առաջին հանրապետության ԱԱՊ-ի գործունեությունը վերահսկվել է ֆինանսների նախարարության կողմից՝ պայտի վերահսկիչ հանձնաժողովի միջոցով:⁸

Հայաստանի կառավարությունը կարևորում էր ԱԱՊ-ի հիմնադրման խնդիրը, որի մասին վկայում է հետեւյալ փաստը. 1920թ. փետրվարի 17-ին,

¹ ՀԱԱ, ֆ. Պ-209, ց.1, գ.2, թ.3:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, գ.1, թ.33-36: (Այժմ գործող ՀՀ ԱԱՊ ինքնուրույն կազմակերպություն է:- Վ.Ց.):

⁴ Այսօրվա գործող ԱԱՊ կանոնադրությունը անդամավճարների չափը չի նախատեսում- Վ.Ց.:

⁵ Գործող ԱԱՊ նախատեսվում է 3 տարին մեկ անգամ-Վ.Ց.:

⁶ Գործող ԱԱՊ նախագահությունը ստուգումների համար ինքն է ընտրում աուղիտական ծառայություն-Վ.Ց.:

Նախարարների խորհուրդը՝ լսելով ֆինանսների նախարարի զեկույցը, որոշել է ԱԱՊ-ին փոխարինարար 50000n. Հատկացնել:¹

Հայաստանի առաջին Հանրապետության ԱԱՊ-ն իր կարճատև, մոտ 10 ամիս, գոյություն ընթացքում, կարողացավ որոշակի դրական գործունեություն ծավալել երկրի տնտեսական կյանքն աշխուժացնելու ուղղությամբ: Իրավական տեսակետից ու փաստորեն իր գոյությունը երեւանում Հաստատելուց Հետո, Պալատը ձգտում էր ընդլայնել իր աշխարհագրական ընդգրկման սահմանները, ուղիներ փնտրելով՝ նոր անդամներ ներգրավելու Համար: Այսպես՝ Պալատի վարչությունը դիմել է Արեքսանդրապոլի բնակիչ Մ.Ամիրջանյանին, որպեսզի նա ստանձնի նրա ներկայացուցչի պարտականությունները Արեքսանդրապոլ ու Կարս քաղաքներում:² Պալատի վարչությունը դիմել է նաև Կովկասյան բանկին, բանկի պալանդատուներին անդամագրելու նպատակով:³ Կապ եւ գրագրություն է Հաստատել Վրաստանի ԱԱՊ-ի Հետ, նրանից ստացել է առևտրարդյունաբերական բյուլետեն,⁴ ինքը նույնպես ուղարկել է իր բյուլետենը:⁵ Պալատը լրագոր-ներկայացուցիչներ է ունեցել Թիֆլիսում եւ Բաթումում:⁶ որոնց Հետ մշտական գրագրություն է վարել:⁶ Թիֆլիսի լրագոր ներկայացուցչին Պալատի վարչությունը Հանձնարարել է իր շրջագրությունները ընթացքում Հանդամանորեն ծանոթանալ Վրաստանի եւ Ազրեյջանի ԱԱՊ-ների գործունեությանը, փորձել կապեր Հաստատել նրանց Հետ եւ ընդլայնել եղածը:⁷

Կովկասյան բանկի երաշխավորությունը, Բաթումում Պալատի լրագոր-ներկայացուցչի է նշանակվել նույն բանկի պատասխանատու պաշտոնյա Արշակ Եգորի Սուլիյանը /Սուլիեւր/: Բաթումի նավահանգիստը կարելուր նշանակություն ուներ Հայաստանի Համար: Եվրոպայից եւ ԱՄՆ-ից Հանրապետություն առաքվող բեռները ստացվում էին այդ նավահանգստով, բացի այդ, Բաթումում կըրվում էին առևտրական գործարքներ: Հանրապետության իշխանությունները պետք է տեղյակ լինեին Բաթումի ապրանքների ու դրամի շուկայում տիրող իրադրություն մասին: Ա.Սուլիյանը իր նամակներով պարբերաբար տեղեկություններ էր հղում Երևան՝ շուկայի գնների, արժույթի փոխանակության, կանխատեսվող ներմուծումների եւ այլ երկրների /օրինակ Չեխոսլովակիայի/ Հյուպատոսների Հետ իր վարած առևտրի Հարցերով բանակցությունների վերաբերյալ:⁸ Իր վերջին նամակներից մեկում, Սուլիյանը հարցրել է, որ վրացական իշխանությունները, Բաթումում փակել են արժույթի փոխանակման կետերը, որի պատճառով ապրանքների ներհնք չի սպասվում:⁹ ԱԱՊը, 1920թ. կեսերին, փորձում է բաժանումները հիմնել երկրի տարբեր քաղաքներում /Կարս, Արեքսանդրապոլ/, եւ այդ նպատակով հրահանգ է ուղարկում:¹⁰ ԱԱՊ-ի ներկայացուցիչները հրավիրվել եւ մասնակցել են գների, տուրքերի, առևտրական գործարքներ կնքելու վերաբերյալ պետական հիմնարկների նիստերին,¹ ընդունված որոշումների մասին տեղեկացվել եւ առաջարկվել էր Պալատի կարծիքը:²

ԱԱՊ-ն իր Հերթին, Հանդես է եկել առաջարկություններով, նաև իր տեսակետներն է արտահայտել կառավարության տնտեսական բնույթի օրենսգծերի վերաբերյալ: 1920թ. մարտին, պալատի վարչությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ փոխանակման կարգով արտահանվող Հում նյութից գանձվող գրավականի դուժմարը վերացնելու առաջարկությամբ: Վարչությունը գտնում էր,

որ գրավականը մշտապես վնասում է տեղական վաճառականների գործունեությանը, պակասեցնում է շրջանառու միջոցները՝ եւ դրանով իսկ նվազեցնելով ներմուծվող ապրանքների ծավալը, իսկ երկիրը դրանց Հատկապես կենսամթերքների սուր կարիքն ուներ:³ Այդ հարկի կապակցությամբ ընդարձակ զեկույցումով, Հանդես է գալիս վարչության նախագահ Միլիքյանը: Նա Հանդամանալից կերպով լուսարանում է ապրանքափոխանակությամբ զբաղվող ներմուծողների եւ արտահանողների դերը Հայաստանի տնտեսության մեջ, նրանց վերաբերյալ առկա օրենքներն ու կարգավիճակը: Եվ այդ առաջարկում է վերակազմել ապրանքափոխանակության կոմիտեն, որը ներկա դրությամբ երբեմն կայացնում է որոշումներ, որոնք չեն նպաստում երկրի առևտրական ու արդյունաբերական ձեռնարկությունների զարգացմանը: Պալատը գտնում է, որ ապրանքափոխանակության կոմիտեն պետք է ունենա Հետեւյալ կազմը:

Ֆինանսների մինիստր - ապրանքափոխանակության կոմիտեի նախագահ,
Ֆինանսների մինիստրության առևտրարդյունաբերական բաժնի ներկայացուցիչ,

Ձինվորական մինիստրության ներկայացուցիչ,
Խնամատարության մինիստրության ներկայացուցիչ,
Քաղաքային ինքնավարության ներկայացուցիչ,
Առևտրարդյունաբերական պալատի ներկայացուցիչ,
Արդյունաբերողների ներկայացուցիչ,
Մեծածախների ներկայացուցիչ,
Մանրավաճառների ներկայացուցիչ,

Արհեստավորների ներկայացուցիչ, ընդամենը 11 Հոդի:⁴ Պալատը, 1920թ. Հունիսի 4-ի նիստում, ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի վերաբերյալ առաջարկություն է մշակում եւ ներկայացնում Հանրապետության ֆինանսների նախարարությանը: Պալատի վարչությունը առաջարկում էր կենսամթերքների ներմուծումից տուրքը վերացնել, իսկ Հում նաթի եւ մաշուկից գանձվող մեկ փթի համար 10n. փոխարեն գանձել 20n.:⁵ Օգոստոսի 21-ի նիստում, պալատի խորհուրդը քննարկել է Երևան քաղաքի Համար նշանակված Հարկի, մուրհակային եւ Հասարակ գործմանիշալիս տուրքերի եւ մասնավոր արդյունաբերական սեփականությունների ազգայնացման Հարցերը: Երեք Հարցերի վերաբերյալ վարչությունը Հայտնել է իր բացասական վերաբերմունքը, առաջին երկուսը Համարելով չափազանց բարձր, իսկ ազգայնացումը՝ ժամանակի պայմաններում անընդունելի եւ վնասակար:⁶

Պալատը սխալ է Համարել նաև սակագներ սահմանելու կառավարության որոշումը: «Ապրանքների վրա սակագներ նշանակելու առիթով» առաջարկության մեջ պալատի ներկայացուցիչը՝ վերլուծելով Հայաստանում ստեղծված տնտեսական իրավիճակը, գտնում է, որ կառավարությունը սակագներ սահմանելով չի կարող Հասնել իր նպատակին, այն է՝ պաշարել սպեկուլյացիայի դեմ: Առաջարկվում են տնտեսական բնույթի միջոցառումներ, որոնց իրագործումը կհանգեցնի երկրում գների նվազեցմանը: Ի դեպ, այդ առաջարկությունները չեն կորցրել իրենց նշանակություն ու հրատապությունը նաև մեր օրերում: Պալատը գտնում էր, որ անհրաժեշտ է. «Պահպանել Հայկական չեկի արժեքը նորմայի մեջ, ստեղծել արժանական փոխանակության միջոցներ արտասահմանի Հետ, սալ դրույթություններ առևտրականությունը ներմուծելու մեր երկրի Համար, մասնավոր գյուղացուն, անհրաժեշտ ապրանքներ», խիստ Հակոդություն սահմանել մաքսատներում, մասնավոր վրացական փրացական սահմանադիրին մոտ վալբերում, որպեսզի Հայաստանից ոչ մի կենսամթերք չարտահանվի, ապահովել Հայաստանի երկաթուղիներում ապրանքների տեղափոխության կարծք. Հայրենի առևտրի եւ արդյունաբերությանը վերապահել ազատ մրցության պայմաններ:⁷

Երևանի որոշ ընկերություններ, միջնորդելու ինդրանքով, դիմել են Պալատի Հեղինակավոր միջամտությանը: 1920թ. մարտին «Հքսիմպորտ»

¹ ՀԱԱ, ֆ. Պ-209, ց. 1, գ.1, թ. 60:

² Նույն տեղում, գ. 3, թ. 149:

³ Նույն տեղում, գ. 1, թ. 64-66:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, գ. 2, թ. 61 գ. 3, թ. 6:

⁶ Նույն տեղում, գ. 2, թ. 89:

⁷ Նույն տեղում, գ. 3, թ. 6:

⁸ Նույն տեղում, գ. 2, թ. 89, 114, 87:

⁹ Նույն տեղում, թ. 176:

¹⁰ Նույն տեղում, գ. 10, թ. 1ա-2:

¹ ՀԱԱ, ֆ. Պ-209, ց. 1, գ. 2, թ. 124, գ. 3, թ. 163, ֆ. Պ-200, ց. 1, գ. 560, թ. 211:

² Նույն տեղում, թ. 154 եւ այլն:

³ Նույն տեղում, գ. 3, թ. 37-38, գ. 14, թ. 8-10:

⁴ Նույն տեղում, գ. 14, թ. 8-10:

⁵ Նույն տեղում, գ. 3, թ. 82-83:

⁶ Նույն տեղում, թ. 233-234:

⁷ Նույն տեղում, գ. 14, թ. 24-25:

ակցիոներական ընկերությունն առաջարկել է պայատին՝ վերացնել արտահանվող հում նյութից գանձվող սուբսիդ, որով կմեծանալին շրջանառու միջոցները, հետևաբար նաև ներմուծվող ապրանքների ծավալը:¹

Այս առաջարկությունն ընդունվել է կառավարության կողմից:

Հայաստանի ԱԱՊ-ն իր գործունեության առաջին իսկ օրերից, ուշադրություն է արժանացել օտարերկրյա գործարարների կողմից: Տնտեսական կապեր հաստատելու առաջարկություններով, պայատին են դիմել ամերիկյան «Ֆրանսիական յուղ գտող մեքենաներ արտադրող»,² «Հոկոդ փայլեցնող, թվազող մեքենաներ արտադրող»,³ «Անվազողների եւ կառուցիկ»,⁴ «Աձելիների ընկերություն»⁵ եւ մի շարք այլ ընկերություններ: Ուշագրավ է, որ ամերիկյան Հյուսիսատտարանի միջոցով „Meridional“, առևտրի միությունը Հետաքրքրություն է ցուցաբերել Հայկական թաշկինակների եւ ժանյակների նկատմամբ:⁶

Փաստաթղթերը վկայում են, որ իտալական գործարարները Հետաքրքրություն են ցուցաբերել Հայկական պահածոների նկատմամբ:⁷ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, հենվելով իտալական կողմի հարցումի վրա, տեղեկություններ ստանալու գրություններով դիմել է պայատին: Պարզվում է, որ իտալացիներին Հետաքրքրել են թե պահածոներն ինչ մրցելից են պատրաստվում, ինչ ձևով եւ ինչ քանակությամբ ու մասշտաբով, որտեղից են ձեռք բերվում սուսերը, ուր են արտահանում պահածոները եւ ինչ գներով:⁸

Իսթումի պայատի Հյուսիսատտի նամակից հետևում է, որ չեխերին Հետաքրքրել է բուրգը, բամբակը, կաշվեղենը, որոնց փոխարեն նրանք առաջարկում են ապակեղեն, մեքենաներ, պողպատ, երկաթ եւ այլն:⁹ Նամակներ են փոխանակվել գնացույցների, ապրանքի տեսակնուն եւ այլ ֆինանսական հարցերի մասին, որոնք քննարկվել են պայատի 1920թ. օգոստոսի 4-ի նիստում:

Ինչ այն դժվար ժամանակներում, Հայաստանի Հանրապետությունն իր ճանապարհները արամադրել է տարանցիկ առևտրի համար: Պարսիկ փաճառականները դիմել են Հայկական իշխանություններին՝ տար հազար փութ նավթ տեղափոխելու խնդրանքով: Խնդրանքը լուծում է ստացել ապրանքի 20%-ը Հայաստանին թողնելու պայմանով:¹⁰

Հայաստանի առաջին Հանրապետության պայտը զբաղվել է նաև տեղեկատվական գովազդային գործունեությամբ, փորձել է հարցաթերթիկների միջոցով, ամյայներ ստանալ երկրի տնտեսական կյանքում տեղի ունեցող գործընթացների մասին:¹¹

Հայաստանում գործել է Հայ-ամերիկյան ընկերություն, որը զբաղվել է տնտեսական խնդիրներով:¹² Ժամանակակից համաշխարհային տնտեսական զարգացումների առումով Հետաքրքրություն են ներկայացնում այն հարցաթերթիկները, որ ուղարկել է ԱՄՆ-ի Հյուսիսատտարանը Առևտրաարդյունաբերական պայտին, որպեսզի լրացվեն եւ ուղարկվեն ամերիկյան առևտրական տներին Վաշինգտոնում:¹³ Ի պատասխան, Պայտը Հայտնում է, որ ներկա պայմաններում հարցաթերթիկները լրացնելու հնարավորություն չկա՝ երկրի քայքայված տնտեսական վիճակի պատճառով:¹⁴ Հայ-ամերիկյան տնտեսական կապերի զարգացմանը յուրջ խոչընդոտել է ամերիկյան բանկային համակարգի բացակայությունը Հարավային Կովկասում:

Ստեղծված իրավիճակը կարգավորելու, առևտրական հարաբերությունները խթանելու նպատակով ԱԱՊ-ը դիմում է Հայաստանում գործող Ամերիկյան նպաստամատույցի միջնորդությանը՝ նրա գրասենյակի միջոցով ապրանք ստանալու եւ վճարելու խնդրանքով, սակայն մերժում է ստանում: Ամերիկյան կողմը Պայտին խորհուրդ է տալիս դիմել Կովկասում տեղակայված տնտեսական գործունեությամբ զբաղվող ամերիկյան ընկերություններին:¹⁵

Բաղաբական Հանդամանքների բերումով, ՀՀ ԱԱՊ-ը Հայաստանի Առևտրաարդյունաբերական Հանրապետության ֆինանսների կոմիտեի գեկանների 29-ի N 460 հրամանագրով, զազարեցրել է իր գործունեությունը:¹⁶

Ամփոփելով վերը նշված փաստերը, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի առաջին Հանրապետության Առևտրաարդյունաբերական պայտն իր կարճատև գոյության ընթացքում որոշակի դրական դեր է խաղացել երկրի տնտեսական կյանքում:

Վարդան Ցոլակյան

ТОРГОВО - ПРОМЫШЛЕННАЯ ПАЛАТА ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

Правительство Республики Армения в целях создания благоприятных условий для развития экономики страны 20 февраля 1920г. в системе Министерства финансов учредило Торгово – промышленную палату.

Палата была полугосударственной, полубытовой организацией. Будучи подведомственной, она имела самостоятельный статус. В своей деятельности руководствовалась утвержденным государством уставом, имела свою печать. Деятельностью Палаты руководил выборный орган – Правление.

Место деятельности – Ереван. Палата стремилась установить свои подразделения по всей стране, а также установить деловые связи за пределами страны.

За короткий период своего существования Палата выступила законодательными инициативами в защиту интересов как частных предпринимателей, так и государства. Архивные документы свидетельствуют об интересе зарубежных фирм (американских, итальянских) к деятельности Торгово – промышленной Палаты Первой Республики Армении.

Вардан Цолякян

¹ ՀԱԱ, ֆ. Պ-209, ց. 1, գ. 2, թ. 22:

² Նույն տեղում, ց. 1, գ. 9, թ. 41:

³ Նույն տեղում, թ. 31:

⁴ Նույն տեղում, թ. 25:

⁵ Նույն տեղում, թ. 20:

⁶ Նույն տեղում, ց. 1, գ. 2, թ. 39:

⁷ Նույն տեղում, գ. 3, թ. 145, գ. 2, թ. 182:

⁸ Նույն տեղում, ց. 1, գ. 2, թ. 35:

⁹ Նույն տեղում, թ. 145:

¹⁰ ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 168, թ. 16:

¹¹ Նույն տեղում, գ. 10, թ. 6-28 եւ այլն:

¹² Նույն տեղում, գ. 2, թ. 186, գ. 3, թ. 178-179:

¹³ Նույն տեղում, գ. 2, թ. 37, 42-43:

¹⁴ Նույն տեղում, գ. 3, թ. 163:

¹ Նույն տեղում, գ. 2, թ. 20 եւ շրջ.:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, գ. 2, թ. 209:

Հաղորդումներ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀՕԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ԱՐԽԻՎԱՑԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմամբ մեր ժողովրդի կյանքում սկսվեց մի նոր ժամանակաշրջան: Հայաստանը գարձավ հարզատ հողից հարկազրկված հեռացած եւ օտար երկրներում ապաստան գտած հայի ազգային միավորման կենտրոնը՝ մայր Հայրենիքը: Հայաստանում սկսվեցին արմատական սոցիալական վերափոխումներ: Չնայած եղած դժվարություններին, հայ ժողովուրդը մեծ ողբերգությամբ ձեռնամուխ եղավ իր երկրի վերաշինարարությանը՝ աշխատելով հնարավորին չափ արագ դուրս գալ քայքայման ու քաղցի ճիրաններից, նոր մակարդակի բարձրացնելով երկրի տնտեսությունն ու մշակույթը:

Հայաստանի վերաշինությանը մեծապես նպաստեցին մի շարք բարեգործական ընկերություններ ու կազմակերպություններ ինչպես բուն երկրում, այնպես էլ արտասահմանում՝ առանձնապես Միլիոնքը: Այդ կազմակերպություններից հիշատակելի է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) բեղուն աշխատանքը, որը ժամանակին մեծ դեր ունեցավ երկրի սովյալ բնակչության օգնելու գործում՝ օժանդակելով շինարարությանը, գաղթականներին հետ կապերի սերտացմանը, երկրի շինարարությանը նրանց մասնակից դարձնելուն ու ներգաղթի աշխուժացմանը:

Վերը հիշատակված փաստերի մասին են պատմում Հայաստանի ազգային արխիվում պահվող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք արտացոլում են ՀՕԿ-ի եւ նրա բոլոր մասնաճյուղերի գործունեությունը: ՀՕԿ-ի հիմնադիր ժողովից հետո, 1923-1925թթ. ԽՍՀՄ-ի հայաշատ քաղաքներում ու մի շարք երկրների հայ գաղթօթարներում ստեղծվեցին ՀՕԿ-ի մասնաճյուղեր:

Այս մասնաճյուղերի շարքում իր առանձնակի տեղն ունի Փրանսիայի ՀՕԿ-ը: Այն իր գանգվածային աշխատանքների տեսակետից ԱՄՆ-ից հետո կարեւոր տեղ է գրավում, եւ դա բնական է, այնտեղ 1923թ. բնակվում էին 60.000 հայեր: Փրանսիայի ՀՕԿ-ի գործունեությունը կարեւոր էր նաեւ, քանի որ մի շարք գաղութների հետ Հարաբերություններ պահպանելու համար էր հանդիսանում կենտրոն (Բարկաններ, Սիրիա, Ալժիր, Թունիս եւ այլն):

Չնայած որոշակի դժվարություններին, Փրանսիայի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն ու գոյություն ունեցող 35 մասնաճյուղերի միջոցով կարեւոր աշխատանք է կատարվել: ՀՕԿ-ը Փրանսիայում մեծ հեղինակություն է վայելել, ինչը երևում է արխիվային փաստաթղթերից: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման տարեդարձերին նվիրված ժողովներին ու հավաքներին Փարիզի, Մարսելի, Լիոնի ժողովարաններում խմբվում էին չուրջ 2-3 հազար աշխատավորներ:

Փրանսիայի ՀՕԿ-ը ծավալում է բազմարժանեղակ ու բեղուն գործունեություն: Փարիզում սկսվում է «Երեւան» թերթի հրատարակությունը, աշխատանքներ են տարվում Հայաստանում շենքեր կառուցելուն օգնելու ուղղությամբ: Այդ առթիվ մի փաստաթղթում կարդում ենք. «Մի քանի շենք կառուցելը մեծ բան է Հայաստանի հսկա շինարարական աշխատանքների կողքին, սակայն այն անչափ կարեւոր է, որ դրանք կառուցվում են հայ գաղթականության զրկանքների ու դաժան աշխատանքի ենթակա հայ աշխատավորների դժվար գնով ստացած խնայողություններով, այդ շենքերի կառուցումը առանձին արժեք է

ստանում մեզ համար, դրանով շեշտվում է նաև այն խորը համակրանքը եւ հավատը, որ գաղթականությունն ունի ինտերգրային Հայաստանի հանդեպ...»:

Նշանակալի է Փարիզի հայ արկիանց միության կողք Փարիզի եւ նրա արվարձանների հայերին՝ իրենց հանգանակության միջոցով Երեւանում «Փարիզահայ տուն» կառուցելու համար, որ նախատեսվում էր բնակեցնել անտուն եւ անպատասար որբերի ու քնտանիքների:

Առանձնակի ուշադրություն էր դարձվում Հայաստանի գյուղերին ու գյուղական շրջաններին օգնելու ու այնտեղ որոշակի կոնկրետ գործեր սկսելու խնդրին:

Կարոցասեր կանանց միությունը, որ Մարսելում ուներ հայ աղջիկների վարժարան, որոշակի գումար է հատկացնում (18.000 դոլար) ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը՝ կարիքավոր գյուղերում գյուղական դպրոցներ կառուցելու համար:

Փաստաթղթերից մեկում կարդում ենք. «... Պիտի հնարավորությունն ստեղծել գյուղացիներու բարորությունը ապահովելու համար: Հիմա կարիք կա գյուղի ճարտարապետական հատակագծի եւ նախահաշված ծրագրի, որպեսզի գրտական ըլլամք ստիպողական ձեռնարկությունց եւ նախնական ծախքերու քանակին, ըստ այնմ պետք եղած հարցերը լուծելու համար: Երևում է տրակտորի պետքը անհետաճգելի է, պարզեք եւ ճշտեք մարկան, որպեսզի այնպիսի տրակտոր ճարել, որի նորոգելը տեղում գյուրին լինի: Հենց ստանանք ձեր ծրագրերն ու նախահաշիվները, անհրաժեշտ մանրամասներով, նոր գյուղի հաստակածով, ու քարտեղով, հանդերձ, պիտի փութանք հարկավոր կարգավորություն անել եւ հաջորդաբար արամագրել ինչ գումար որ կարելի ըլլա գույացնել այդ նպատակների համար...»:

Առանձնակի ուշադրություն արժանացան Հայաստանի բնական աղետներից սուժած գյուղերն ու դրանց բնակիչները: Նրանց աջակցությանը կառուցվեցին մի շարք ջրանցքներ (Եիրակ, ԷվՋիրյա), կազմակերպվեցին ճահճների (Ղառարու, Դավայու) չորացման աշխատանքները: Ստացվեց մեծ քանակությամբ սեմամաշու ցորեն, ալյուր, հագուստեղեն, կոշիկեղեն, որ տրվեց բնական աղետներից վնասված շրջաններին՝ մտրեխից, կարկառահարությունից, երկրապտես երաշտից եւ անձրեւներից ստաջացած սակավաբերությունը մեղմելու համար:

Փրանսիայի ՀՕԿ-ի գլխավոր վարչությունն եւ նրա մասնաճյուղերի մեծ աշխատանքի շնորհիվ հայրենիք առաքվեցին մեծ քանակի հագուստ, դեղորայք, ստեղծվեց մայրախաչի 2 բուժկետ, վերաբաղվեցին ու հիմնվեցին դպրոցներ, աշակերտություն համար ստացվեց բավականին քանակի գրենական պիտույքներ, դրամական նպաստներ, զանազան հիմնարկների անտոկոս փոխառություն եւ այլն:

ՀՕԿ-ի միջոցով մեծ օգնություն էր ցուցաբերվում եւ մեր բուհերին՝ Համալսարանի հասցեով ստացվեցին բավականին սարքավորումներ, գրականություն, լրագրեր, ամսագրեր: Հանրային գրադարանի հասցեով Օժան Կարոյի կողմից ստացվում է «20-րդ դարի Լաուուս» 6-Հատորյակը, Արամ Չարքի կողմից Օմար Խայամի քառյակները:

Փրանսիայի ՀՕԿ-ի մասնաճյուղերի շնորհիվ տեղերում կազմակերպվեցին «Մարտունի» լսարան-ընթերցարանն ու թատերախումբը, «Տալվորիկ» մարմնամարզական միություն, գեղարվեստական միություն, երգչախումբ եւ այլն, որոնց գործունեությամբ առաջացած գումարները եւս փոխանցվում են հայրենիք՝ ամենատարբեր կարիքներ հոգալու համար:

Բազմաթիվ սփյուռքահայերի նվիրատվությունների ու կտակների շնորհիվ (Պողոս Նուբար փաշա, Հակոբյան, Ռ.մարկոսյան, Գյուլպենեկյան, Խերյան, Մ.Ջերազ, Տ.Մարգարյան, Սամվելյանց, Սարյան, Պալյան, Նուշիկյան, Տիգրանակերտցիների միություն, նոր եվգալիացիների միություն, Մեթեմեթյան եւ այլն) կառուցվեցին դպրոցներ, ջրանցքներ (Եվվարդ), գյուղեր, հայ որակյալ արհեստավորներ պատրաստելու համար արհեստագործական ուսումնարան, Հայաստանում մեղվաբուծությունը զարգացնելու նպատակով Արաբսոսի ստորոտում մեղվաբուծարան, մանկամսուրներ, մանկապարտեզներ, բժշկակետեր, հիվանդանոցներ, տեխնիկումներ, խրճիթ-ընթերցարաններ եւ շատ այլ շինություններ:

Նշենք, որ Փրանսիայի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն ու մասնաճյուղերը մեծ աշխատանք ծավալեցին ու իրենց նյութական ու քարոյական

ներգրումն ունեցան Հայաստանի ավանների ու գյուղերի կառուցման ու բարեկարգման, նրա նվաճումների, շինարարութան, տնտեսական ու մշակութային վերելքի հարցում:

Մեր շարագրանքը ցանկանում ենք ավարտել Փարիզից Երվանդ Հակոբյանի՝ Հայ բարեգործական ընդհանուր միութեան նախագահ Պողոս Նուբար փաշային հղած մի հուշիչ նամակով, որը շատ խորհրդանշական էր 20-30-ական թվականների համար:

«Նա հարուստ մարդ մը չեմ... բայց հայրենիքիս անձն ավելի կսիրեմ: Նկատելով որ Ձեր հիմնած Հայկական միութիւնը մեծապես ազգասիրական գործ մըն է եւ երկար տարիներէ ի վեր ազգասեր հայերու կողմէ երազված հաստատութիւն մը, որ կը չված է մեծագույն կարիքը ընձեռելու Հայաստանի մեր գժբախտ հայրենակիցներուն, ներփակ Ձեզ կը հանձնեմ 25.000 Ֆրանկի չեկ մը մեր սիրելի Միութեան համար եւ կ'սնդրեմ, որ իմ համեստ նվիրատուութեանս տարեկան տոկոսները հատկացնեք Սասունի Դալվորիկ գյուղին պետքերուն: Պետք բւերով կը հասկընամ նպատտ հիշյալ գյուղին, որբերուն, կամ քաջաբերութիւն երկրագործութիւնս:

Ձեր վսեմութիւնը բոլորովին ազատ է հիշյալ տոկոսները իր հարմար դատած եղանակով ծախել Դալվորիկ գյուղին համար:

Եթե օր մը քիչ մը ավելի հաջողութիւն ունենամ իմ համեստ գործերուս մեջ, հաստատ մտադրութիւն ունիմ, եւ ամենամեծ ուրախութեամբ, ավելի մեծ գումար մը գնել մեր սիրելի Միութեան գրամագրութեան ներքո...»:

Այս նամակը, որ բնորոշ էր սփյուռքի մեր շատ հայրենակիցների՝ մի անգամ եւս շեշտում է այն սրտացամբ ու ջերմ վերաբերմունքը, որ ունեն տարագիր հայր իր հայրենիքի նկատմամբ:

Մարինե Մարտիրոսյան ՀԱԱ բաժնի վարիչ

ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ **ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՎԵՆ**

Իր բազմադարյան պատմութեան ընթացքում Հայ ժողովուրդը ստեղծել է պատմա-մշակութային ու վավերագրական բազմազարգ հոգևոր հուշարձաններ, որոնց շարքում առանձնահատուկ տեղ են զբաղում մեզ հասած մագաղաթյա հնագույն ձեռագրերը, պատմական, գիտական, տնտեսական, փիլիսոփայական, կրոնա-բարոյական եւ այլ տիպի աշխատութիւններ, վավերագրեր եւ պաշտոնական փաստաթղթեր: Դրանց մի մասը դարերի ընթացքում ոչնչացվել է թե՛ օտարերկրյա նվաճողների կողմից, թե՛ պատահական դիպվածով: Այսպես օրինակ, 13-րդ դարի պատմիչ Ստ.Օրբելյանը վկայում է, որ թուրք սելջուկները 1170թ. Տաթևի վանքը գրավելուց հետո, այրել են գրադարանում եղած ամբողջ գրականութիւնը (մոտ 10 հազար կտոր գիրք): Հայտնի է նաեւ, որ 1890-ական թվականներին թուրքերն սկսել են խուզարկել Վանի գրադես մարզկանց տները նրանց բանտարկելու նպատակով: Այս թնհուրհուր, Գարեգին Սրվանձտյանի կրտսեր եղբայր Սիմեոնը, երկուսը կրելով, թե ընտանիքի անդամները կբանտարկվեն, թոնրի կրակին է հանձնում Սրվանձտյանի ամբողջ արխիվն ու գրադարանը: Սրանք իրոք անդառնալի կորուստներ են, որոնք ցավօք սրտի տեղի են ունեցել եւ որոնց պատճառով Հայ ժողովրդի պատմութեան այս կամ այն էջը այլեւս հնարավոր չէ վերականգնել:

Սակայն ամեն ինչ էլ, որ անդառնալիորեն կորստյան է մատնված: Հայաստանին ու Հայ ժողովրդի պատմութեանը վերաբերող հարյուր հազարավոր փաստաթղթեր Հայ ժողովրդի հետ միասին տարագրվել ու սփռվել են աշխարհով մեկ: Բնակութիւն հաստատելով աշխարհի այս կամ այն անկյունում, Հայ ժողովուրդը միշտ էլ լծվել է ստեղծագործ աշխատանքի, հիմնելով եկեղեցիներ, դպրոցներ, հասարակական, քաղաքական ու մշակութային կազմակերպութիւններ, որոնց գործունեութեամբ առաջացած փաստաթղթերը համարվում են կարեւորագույն սկզբնաղբյուրներ Հայ ժողովրդի պատմութեան լուսարանման գործում: Համոզված կարել է ասել, որ այս փաստաթղթերի իմի բերումը խթան կհանդիսանա ազգային համընդհանուր մտածողութեան ձեւափոխման համար:

Հասկանալի է, որ խնդրի լուծումը կապված է չափազանց լուրջ դժվարութիւնների ու բարդութիւնների հետ, բայց չփորձել դա անել, անհերելի է:

Այս ուղղութեամբ առաջին քայլերը կատարվել են 1922թ. փետրվարի 11-ին, երբ Մոսկվայում Խորհրդային Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Ս.Տեր-Գարրիելյանը գիմում է Խորհրդային Ռուսաստանի Համապատասխան առյաններին՝ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (1915թ.) էջմիածնից Մոսկվա տեղափոխված 150 արկղ ձեռագրերն ու վավերագրերը, ինչպես նաև եկեղեցական թանկարժեք իրերը, Հայաստան փոխադրելու համար: Եւստով, 1922թ. ապրիլի 5-ին, Մոսկվայի Հայոց Համայնքի ներկայացուցիչներն Ամենայն Հայոց Կաթողիկոսին հղած զեկուցագրում հայտնում են, որ 1915թ. էջմիածնից Մոսկվա տեղափոխված գույքն անվնաս ու անթերի վիճակում հանձնված է Հայաստանի կառավարութեանը:

Այնուհետև, Հայ արխիվագետները հաղթահարելով երբեմն անուժելի թվացող դժվարութիւններ, տասնամյակների ընթացքում, կարողացան Հավաքել մեծ քանակութեամբ արխիվային նյութեր եւ հարստացնել Հայաստանի ազգային արխիվային ֆոնդերը Հայ ժողովրդի պատմութեան վերաբերյալ հետաքրքիր ու հազվագյուտ փաստաթղթերով: Անցած ավելի քան 80 տարիների ընթացքում ԱՊՀ եւ արտասահմանյան երկրներից Հայաստան են տեղափոխվել հարյուր հազարավոր արժեքավոր փաստաթղթեր:

Սակայն, լրացուցիչ ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ Հայաստանին ու Հայ ժողովրդի պատմութեանը վերաբերող բազմաթիվ

փաստաթղթեր դեռևս մնացել են աշխարհի շատ երկրների արխիվներում, թանգարաններում ու գրադարաններում:

Այսպես, Երևանում և Երևանի պատրիարքարանի արխիվում (մատենագրարանում) պահպանվում են 3000-ից ավելի հայկական հազվագյուտ ձեռագրեր եւ մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր:

Միջինարյան միաբանություն Վենետիկի եւ Վիեննայի արխիվներում պահվում են Համապատասխանաբար 3000 եւ 1200 ձեռագրեր եւ զգալի քանակությամբ հազվագյուտ արխիվային փաստաթղթեր: Փարիզի «Նուբարյան մատենագրարանում» պահպանվում են շուրջ 25000 արժեքավոր ու հազվագյուտ հայագիտական գրքեր, մեծ քանակությամբ ձեռագրեր եւ հարուստ արխիվային ֆոնդեր: Այստեղ են կենտրոնացված նաև 1919-1920թթ. Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակցած Հայկական ազգային պատգամավորություն զործունեության վերաբերյալ փաստաթղթերը, որոնց մի մասն արդեն տեղափոխված է Հայաստանի ազգային արխիվ: Արժեքավոր արխիվային փաստաթղթեր եւ ձեռագրերի հավաքածուներ են պահպանվում Փարիզի Ազգային եւ Սորբոնի Համալսարանի գրադարաններում, որոնք հավաքվել են Ֆրանսիայի արևելագետների կողմից:

Մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր են հայտնաբերվել Լեհաստանի արխիվներում՝ խորհրդային արխիվագետներ Ջ.Վալիշևիչի, Լ.Պոպովայի եւ Է.Բասկալովի կողմից: Այսպես, Վարշավայի հնագույն ակտերի դիվանի արխիվում մագաղաթների հավաքածույում գտնվող 1701թ. թվագրված ձեռագրերում նշվում է, որ Լեհական Ավգուստ 2-րդ թագավորի քարտուղարը լվովցի հայազգի առևտրական Ալեքսանդր Բախյան էր: Այստեղ հայտնաբերվել են նաև Կիմենտ 11-րդի կողմից 1720թ. Լվովի հայկական մենաստանին տված հրովարտակը եւ Լվովի հայկական եկեղեցուն 1751թ. վերաբերող առանձին փաստաթղթեր:

Վարշավայի նոր ակտերի արխիվի դավանության եւ հասարակական լուսավորության նախարարության ֆոնդում պահպանվում է բնագրական գրադարանի Լվովի հայ կաթոլիկ արքեպիսկոպոսության 1919-1939թթ. գործունեության, ինչպես նաև հայոց պատմության այլ հարցերի վերաբերյալ:

Մեծաքանակ արխիվային փաստաթղթեր են հայտնաբերվել Լեհաստանի Գիտությունների ակադեմիայի (1584-1700թթ.), Լուբլինի պետական վիսեփոսության (1626-1700թթ.) արխիվներում, Կրակովի Կաթոլիկան համալսարանի (16-19-րդ դդ.) եւ Վրոցլավի Օսոլինսկու անվ. գրադարաններում (16-18-րդ դդ.), ինչպես նաև Չարտրիքսկու թանգարանի ձեռագրերի բաժնում (16-18-րդ դդ.):

Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ փաստաթղթերով հարուստ են նաև Բուլղարիայի արխիվները եւ գրադարանները (Պոլդիպի օկրուգային պետական արխիվ՝ 30 գործ, շուրջ 2500 թերթ, Սոֆիայի Վ.Կարլովի անվ. գրադարան եւ այլն), որոնք վերաբերում են 19-րդ դարի կեսերին:

Մեծաքանակ արխիվային փաստաթղթեր են պահպանվում ԱՄՆ-ի արխիվներում եւ գրադարաններում: Հիշատակման արժանի են հատկապես Հուլիոս խաղաղության, պատերազմի եւ հեղափոխության գրադարանի ֆոնդերը եւ Կոլումբիայի օկրուգի «Ֆրիդ Գեյբերի օֆ արտ» արխիվը, որտեղ պահպանվում են 7-13-րդ դդ. հայկական հնագույն ձեռագրեր: Վաշինգտոնի Ազգային արխիվում պահպանվում է Կոստանդնուպոլսի պատրիարքարանի արխիվը, որն ԱՄՆ է տեղափոխվել 1919թ. եւ առայսօր գտնվում է ցրոն վիճակում (մոտ 2տ. փաստաթուղթ): Վաշինգտոնում՝ ԱՄՆ-ի պետքեպարտամենտի արխիվում պահպանվում են Բիթլիսի եւ Էրզրումի դատարանների, ինչպես նաև Արեւմտյան Հայաստանում գործած ազգային եւ հասարակական կազմակերպությունների արխիվային փաստաթղթերը:

Արժեքավոր եւ հազվագյուտ արխիվային փաստաթղթեր են պահպանվում Հարվարդի, Պրինստոնի, Սթենֆորդի, Կոլումբիայի, Միչիգանի, Բերկմանի համալսարանների գրադարաններում: Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ փաստաթղթերով հարուստ են նաև Ֆիլադելֆիայի արվեստների թանգարանը, Գ. Հաթինգտոնի գրադարանը Կալիֆորնիայի Սան-Մարինո քաղաքում, Նյուբերքի գրադարանը Ջիկագոյում, ֆոնսթերի գրադարանը Այովա նահանգի Օթոլուպա քաղաքում, Վոյտերի պատկերասրահը եւ Հաբեթի գրադարանը Մերիլենդ նահանգի Բալթիմոր քաղաքում եւ Բոստոնի հանրային գրադարանը: Բոստոնում Վահան

թոփայանի կողմից կազմակերպվել է «Հայկական մշակութային կազմակերպություն», որտեղ հավաքվել ու պահպանվում են հազվագյուտ գրքերի, պարբերական մամուլի, ձեռագրերի եւ արխիվային փաստաթղթերի հարուստ հավաքածուներ:

Լոնդոնի Բրիտանական թանգարանի ձեռագրերի հավաքածուներում պահպանվում են Ռ.Փորթերի Անգրիկոլիտում 1817-1820թթ. կատարած ճանապարհորդության մասին նոթերը, որոնցում շատ կարեւոր ու հետաքրքիր տեղեկություններ կան Հայաստանի եւ հայերի մասին: Անգլիայում ծովակալության եւ ռազմական նախարարության արխիվներում պահպանվում են 1919-1920թթ. Անգլիա տեղափոխված Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի փաստաթղթերի մի մասը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի հավաքածուն, որն անգլահաստի տեղեկություններ է պարունակում 12-19 դարերի հուշերը, գրական ու հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ: Այդ հավաքածուն բնագրվում է շուրջ 150 ձեռագրեր, որոնք ինամբրով ու մանրակրկիտ քարտավորվել են դեռևս 1913թ.:

Համաշխարհային ճանաչում է վայելում հայտնի կոլեկցիոներ Չանթեր Վեաթի գրադարանի հայկական ձեռագրերի հավաքածուն, որտեղ պահպանվում են 12-18-րդ դարերի տարբերակ ձեռագրեր եւ հազվագյուտ գրքեր, որոնք անգլահաստի տեղեկություններ են պարունակում հայկական մշակույթի վերաբերյալ:

Օքսֆորդի համալսարանին կից գրադարանի ֆոնդերում պահպանվում են շուրջ 120 ձեռագրեր. 12-14-րդ դարերի ավետարաններ, 15-16-րդ դարերի սագոսագրքեր եւ 17-18-րդ դարերի եկեղեցական այլ գրքեր:

Հսկայական քանակությամբ արխիվային փաստաթղթեր են պահպանվում նաև Հնդկաստանի, Պարսկաստանի, Կահիրեի ազգային արխիվներում եւ շատ այլ վայրերում:

Բերված փաստերն ու օրինակները, բնականաբար, չեն կարող սպառիչ լինել. քանի որ կասկածից դուրս է, որ կատարվող հետազոտությունների եւ ուսումնասիրությունների արդյունքում կհայտնաբերվեն հայոց պատմության վերաբերյալ արխիվային նորանոր ֆոնդեր ու փաստաթղթեր:

Արտերկրում ստեղծված հայկական արխիվների գեոգրական, քաղաքական ու պատմական մեծարժեքությունը կասկածից դուրս է: Դրանք ոչ միայն վերաբերում են հայ ժողովրդի պատմությանը, այլև պարունակում են բացառիկ եւ հազվագյուտ տեղեկություններ հարեւան ժողովուրդների պատմության վերաբերյալ: Արտերկրի հայկական արխիվները հայ ժողովրդի բնահանուր սեփականություն են եւ պետք է կենտրոնացվեն, թեկուզ պատճենների տեսքով, Հայաստանի ազգային արխիվում:

Սոս Մարուքյան
ՀԱԱ տնօրենի տեղակալ

АРХИВИСТ И ИСТОРИК – СОТРУДНИЧЕСТВО ВО ИМЯ НАУКИ* (НА ПРИМЕРЕ РАБОТЫ НАЦИОНАЛЬНОГО АРХИВА АРМЕНИИ)

В постсоветское время взаимосотрудничество архивистов и историков получило определенную направленность.

Наряду с традиционными формами сотрудничества общественная потребность и запрос диктуют новые, более интересные формы.

Скрытая долгое время правда о событиях по истории армянского народа, освобождение исторической науки от цензуры и политические события в Армении породили большой спрос на документальные источники.

Архивисты в свою очередь пересмотрели свое отношение к понятию “закрытые” документы. В архивах были образованы комиссии по рассекречиванию документов, которые работали в тесном сотрудничестве с историками республики.

Процесс рассекречивания документов отражающих сыграл решающую роль в подготовке исследований и публикаций. Большой интерес представлял комплекс документов бывшего партархива вошедший в состав архивного фонда Армении. Закрытые до 90-х годов прошлого столетия для широкого круга исследователей документы ЦК КПА, личные фонды руководящих работников КПА, стали основой для научных исследований и публикаций. Немаловажное значение имело передача архивных фондов из Комитета Государственной безопасности Армении.

В научный оборот вошли документы, которые позволили историкам пересмотреть определенные периоды истории Армении “переписать” некоторые темы.

Все эти процессы зримо повлияли на взаимосотрудничество архивистов и историков.

Для координации тематики исследований и публикаций в Научные Советы академических институтов и ведущих вузов страны вошли архивисты, а ведущие историки республики активно сотрудничали в составе научного совета Национального архива Армении и редколлегии журнала “Вестник архивов Армении”.

Приоритетными темами публикаций и исследований являлись – история церкви и ее роль в жизни армянского народа и в сохранении ее исторических ценностей; история Первой республики /1918-1920гг./; жизнь и деятельность отдельных политических деятелей; политические репрессии в годы сталинского режима и др.

В течении последних десяти лет подготовлено и издано 10 томов по истории армянской церкви. Как известно, армянская апостольская церковь сыграла положительную роль в истории армянского народа, армянская церковь являлась хранительницей языка, культуры, образования, национальных традиций. В годы самодержавия церковь боролась за сохранение национальных церковно-приходских школ, имущества армянской церкви. В годы 1-ой мировой войны и трагедии армянского народа – геноцида в

* Как доклад был прочитан на Международной научно-практической конференции “Архивы и общество сегодня”, проведенной в Минске 12-го ноября 2003г.

Западной Армении церковь организовала комитеты по приему и оказанию помощи беженцев и сирот. В годы сталинских репрессий церковь подверглась гонениям и многие религиозные деятели были репрессированы или расстреляны. Все эти вопросы нашли свое документальное подтверждение в публикациях по истории церкви. Впервые в научный оборот было введено более 4 тыс. документов. В сборниках впервые были упомянуты имена репрессированных религиозных деятелей, руководителей епархий из архивов комитета госбезопасности. Все тома – это подлинные документы, впервые введенные в научный оборот. Необходимо подчеркнуть, что труды эти подготовлены архивистами и историком, при финансовой поддержке спонсоров армянской диаспоры.

Введение в научный оборот большого массива документов позволили архивистам и историкам института истории АН Армении подготовить и издать, и таким образом, подвести документальную базу под борьбу карабахских армян за свою независимость, начатую еще в начале прошлого века. В 1992г. архивистами и историками Армении был издан сборник “Нагорный Карабах в 1918-1923гг”. В сборнике впервые были опубликованы документы не только архивов Армении, но и центральных архивов России. Материалы сборника стали основой ряда исследований историков Армении по общественно – политической истории Нагорного Карабаха и впервые историки получили ответ на многие волнующие их вопросы. История Первой республики и политическая обстановка в Армении после крушения царизма и до установления Советской власти в Армении, т.е.с февраля 1917г. по декабрь 1920г. или совершенно отсутствовал в учебниках истории или же была представлена в отдельных исследованиях негативно.

Этот пробел был восполнен подготовкой и изданием сборника документов и материалов “Республика Армения в 1918-1920гг. /политическая история/”.

В подготовке сборника приняли участие ведущие историки института истории АН Армении и Национального архива Армении. В сборник вошли около 400 документов. Впервые в сборник были включены полные тексты дипломатических документов, документы бывшего партархива Армении. Были введены в научный оборот документы, полученные из Франции о деятельности армянских делегаций на Парижской мирной делегации.

Продолжая тему взаимосотрудничества архивистов и историков нельзя не упомянуть о повидовой публикации документов, примером является сборник “Законы Парламента Республики Армения”. В сборник вошли 1203 закона с начала деятельности парламента с 1-го августа 1918г. по декабрь 1920г. Объемный по охвату материалов, сборник стал сразу библиографической редкостью для исследователей и его востребованность требует переиздания.

Интересны документальные публикации о жизни и деятельности отдельных политических деятелей. Из поколения в поколение из уст передавались имена национальных героев Андраника, Нждея, Назарбекова и др. Долгие годы вылились сборники документов, подготовленные авторитетной редакционной коллегией из историков и архивистов, однако исходя из политических соображений эти сборники не издавались.

Благодаря приобретению государств независимости отсутствие цензуры, а также интерес общественности к объективному правдивому представлению деятельности национальных героев, были подготовлены и изданы сборники “Андраник Озаян”, “Воспоминания генерала Назарбекова”.

Сборник “Андраник Озаян” был подготовлен еще в 1965г. во времена хрущевской “оттепели”, однако издание сборника не было разрешено ЦК КПСС. И только в 1992г. был издан сокращенный вариант сборника в

“Вестнике архивов Армении”. В публикационной деятельности архивистов и историков большая роль принадлежит журналу Национального архива “Вестник архивов Армении”. Большая часть совместных публикаций издавалась через периодический орган архивов.

Неординарная фигура Нждея, внесшего свой вклад в историю 1-ой республики, долгое время было запретным в истории Армении с ним была связана история Зангезурской республики и ее борьба с большевизмом в феерале-июле 1921г. В 2002г. были изданы 2 тома о жизни и деятельности Гарегина Нжде, приуроченные к юбилею политического деятеля.

Одной из форм взаимного сотрудничества является участие архивистов в исследованиях фундаментального характера – например, четырехтомного труда “История армянского народа”. Новейший период Истории Армении с 1945 по 1990г., характерный изобилием “белых пятен”, таких как политические репрессии, репатриация армян из-за рубежа и их массовая депортация в 1949 г., карабахское национально-освободительное движение, распад СССР и образование независимого государства и др. Все эти вопросы были представлены директором Национального Архива Армении, А. Вирабяном, отдельно изданной книгой “От Сталина до Хрущева”.

Новой формой сотрудничества архивистов и историков является подготовка научно-популярных книг по краеведению.

В 90-ых годах прошлого века появилось патриотическое начинание – изучение архивных материалов по истории сел и деревень Армении. В основном работу начали представители сельской интеллигенции – бывшие директора школ, педагоги истории, пенсионеры, и др.

Однако багаж знаний представителей не был достаточным для всестороннего и объективного освещения истории населенных пунктов и по предложению архивистов для подготовки научно-популярного издания была образована редакционная коллегия, состоявшая из историков нового и новейшего периода, археологов, этнографов и архивистов. Одним из этих трудов является широкое освещение истории отдельных родов. Благодаря кропотливой работе архивистов в книгах представлена генеология 3–4 поколений жителей того или населенного пункта. Взаимное сотрудничество редколлегии, состав которой изменялся и дополнялся в зависимости от исследования истории конкретного населенного пункта, успешно подготовило и издало несколько десятков книг по теме. Спонсорами при подготовке и издании книг являлись в основном выходцы из конкретных сел.

Естественно, у историков и архивистов Армении много проблемных вопросов. Это и отсутствие координальных планов, взаимосодействие с армяноведческими центрами зарубежья, а также слабое финансирование.

К сожалению, не разработан сводный план публикаций и научных исследований, слабо привлекаются к совместной публикаторской деятельности представители зарубежья, арменоведческие центры. Основной издательской базой остается орган архивов Армении “Вестник”. В публикаторской деятельности появилось новое явление – подготовка и издание документов за счет частного финансирования, которое в основном не стабильное.

Соня Мирзоян
зам.директор НАА

Հրատու

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

2002թ. դեկտեմբերի 20-ին Ռուսաստանի դաշնային արխիվային ծառայության ներկայացուցիչները երևանում է՛ն արխիվային գործի գործակալությունը անհատույց գործնական օգտագործման համար հանձնեցին Ռուսաստանի դաշնային արխիվային ծառայության մշակած «Արխիվային ֆոնդ» ծրագրային համայնքը:

Ռուսաստանի դաշնային արխիվային ծառայությունը իրավունք վերապահեց է՛ն արխիվային գործի գործակալությունը՝ բաղմացել և անհատույց հանձնել համայնքը ենթակա կազմակերպություններին՝ արխիվային գործունեությունում օգտագործելու համար:

* * *

Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանը, 2003թ. մայիսի 25-26-ը թեհրանում մասնակցեց Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության աջակցությամբ Ամստերդամի սոցիալական պատմության միջազգային ինստիտուտի կազմակերպած «Բռնագատումները, արբորները և բռնի գաղթը Կովկասում 1920-1950 թվականներին» դիտաժողովին:

Թեհրանում, մինչև գիտաժողովի սկսվելը, նա մայիսի 23-ին այցելեց Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, որտեղ արտակարգ և լիազոր դեսպան Գ.Նարբեյանյանի հետ քննարկվեցին արխիվային գործի բնագավառում Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության համագործակցության առարկա խնդիրները և հեռանկարները: Նույն օրը դեսպանի հետ այցելեց Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արքեպ. Ասրգյանին:

Մայիսի 24-ին է՛ն դեսպանության մշակույթի Հարցերով պատասխանատու զիվանագետների հետ կայացավ հանդիպում Ի՛ն Հ Ա Գ ն փաստաթղթայինի և ռուսալեզու արխիվային կազմակերպության պաշտոնի կենտրոնի գլխավոր տնօրեն գոտոր Ռեզա Նազարահարի հետ: Իրանական կողմից ներկա էին կենտրոնի փոխտնօրեն Ալիոզա Բիրզեյին և կենտրոնի կազմի մեջ մտնող նախարարության արխիվի տնօրեն, դոկտոր Շուջային:

Հանդիպման ընթացքում քննարկվեց արխիվային գործի զրվածքը Իրանում և Հայաստանում, երկկողմանի կապերի հաստատման, համատեղ ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման հնարավոր տարբերակներ: Գոհունակությամբ շեշտվեց այն հանգամանքը, որ ավարտին է մոտենում արխիվային գործի բնագավառում է՛ն մշակույթի և երիտասարդության Հարցերի նախարարության և Ի՛ն Հ Ա Գ ն միջև համագործակցության երկկողմանի համաձայնագրի կնքման նախապատրաստական աշխատանքները Իրանական կողմը շեշտեց սերտ համագործակցություն հաստատելու պատրաստակամության մասին: Ի՛ն Հ Ա Գ ն արխիվում, որը գտնվում էր նորակառույց շենքում և հագեցված էր ամենաարդիական տեխնիկայով, պահպանվում են 40 միլիոն փաստաթուղթ՝ 1300 թվականից սկսած, որտեղ կան բազմաթիվ փաստաթղթեր Հայաստանի և Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ:

Գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին պատմաբաններ, զիվանագետներ և լրագրողներ Իրանից, Հայաստանից և Ազրբեյջանից, մայիսի 25-ին բացեց Ի՛ն Հ արտաքին գործերի նախարարի տեղակալը: Ներկայացվեցին 15, այլ թվում՝ Ա.Վիրաբյանի «Հայերի բռնագաղթը Սիրի (Ալժիրի երկրամաս) 1949 թվականին» գեկուցումներ:

Նույն օրը հանդիպում կայացավ Իրանի ազգային արխիվում, որտեղ արխիվի տնօրեն գոտոր Քիանուշ Քիանիի հետ տեղի ունեցավ ընդ և անկեղծ խոսակցություն՝ Հայ-իրանական մշակույթային կապերի խորացման և ամրապնդման, արխիվային գործի բնագավառում երկկողմանի համաձայնագրի կնքման, պատմաբան-արխիվագետների փոխանակման և այլ Հարցերի շուրջ: Ինչպես Ա Գ ն արխիվի ղեկավարները, այնպես էլ ազգային արխիվի տնօրենը, շեշտում էին այն հանգամանքը, որը էթե Իրանը արխիվային գործի բնագավառում Հարեան այլ երկրների հետ ունի բեղմնավոր համագործակցություն, սպա

Հայաստանի Հետ դեռևս քայլեր չեն ձեռնարկվել – իրանական կողմը պատրաստ է արագացնել այդ գործընթացները:

* *
*

2003թ. մայիսի 27-28-ին Բելյուուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում կայացած «Տեղեկատվական տեխնոլոգիաները արխիվային գործում» թեմայով միջազգային գիտա-պրակտիկ սեմինարին մասնակցեց եւ «Հայաստանի ազգային արխիվի գիտա-տեղեկատու Համակարգի ձևավորման Համար ծրագիրը» գեկուցումով: Հանդես եկավ արխիվի ավտոմատացման բաժնի վարիչ Ինգա Ջադեթյանը:

* *
*

Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանը եւ տնօրենի տեղակալ Ա.Միրզոյանը 2003թ. նոյեմբերի 10-12-ին Մինսկում մասնակցեցին.

1. Արխիվների Միջազգային խորհրդի (ԱՄՆ) եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի («Եվրասիկա») 4-րդ ընդհանուր Համաժողովին.

2. ԱՊՀ մասնակից պետությունների արխիվային ծառայությունների ղեկավարների Հերթական խորհրդաժողովին.

3. «Արխիվները եւ Հասարակությունն այսօր» միջազգային գիտագործնական գիտաժողովին:

Նշված միջոցառումներն անցկացվեցին ԱՊՀ գործադիր կոմիտեի նիստերի ղաչկեմում:

1. Արխիվների միջազգային խորհրդի (ԱՄՆ) եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի (Եվրասիկա) 4-րդ ընդհանուր Համաժողովը կայացավ նոյեմբերի 10-ին (ժամը 11⁰⁰-18⁰⁰): Այն բացեց «Եվրասիկա» բաժանմունքի նախագահ, ՌԴ արխիվային ծառայության ղեկավար Վ.Կոզլովը: Հիտադրական համաժողովի մասնակիցներին Բելյուուսի Հանրապետության փոխվարչապետի հրած ողջույնի ուղերձը: Բաժանմունքի անդամները, այդ թվում եւ Ա.Վիրաբյանը, Հանդես եկան Հաղորդումներով իրենց երկրներում արխիվային գործի զարգացման մասին: Բաժանմունքի 2003թ. աշխատանքի արդյունքների եւ 2004թ. ծրագրի մասին Հանդես եկավ բաժանմունքի գործադիր բյուրոյի քարտուղարը: Բաժանմունքի նախագահ Վ.Կոզլովը Հաղորդեց ԱՄՆ գործադիր կոմիտեի Սանկ-Պետերբուրգում 2003թ. Հունիսի 10-12-ին կայացած Հերթական նիստի մասին:

ԱՄՆ 2004թ. օգոստոսին Վիեննայում կայանալիք 15-րդ Համաշխարհային կոնգրեսին բաժանմունքի մասնակցությունը մասին Հարցի քննարկման ժամանակ ի գիտություն ընդունվեց այն Հաղորդումը, որ ԱՄՆ նախատեսում է մի քանի երկրների, այդ թվում Հայաստանի մեկական ներկայացուցչի մասնակցությունը կոնգրեսին ԱՄՆ-ի միջոցների հաշվին:

Քննարկվեցին նաև կազմակերպական այլ Հարցեր: Համաժողովին գիտորդի կարգավիճակով մասնակցում էին Լեհաստանի, Լիտվայի եւ Լատվիայի արխիվային ծառայությունների ղեկավարները:

2. ԱՊՀ մասնակից պետությունների արխիվային ծառայությունների ղեկավարների Հերթական խորհրդաժողովը կայացավ նոյեմբերի 11-ին (ժ.10⁰⁰-12⁰⁰): Այն անցավ Բելյուուսի Հանրապետության նախարարների խորհրդին կից արխիվների եւ գործավարության կոմիտեի նախագահ Վ.Ազամուշկոյի ղեկավարմամբ:

Որպես նախորդ խորհրդաժողովի կազմակերպիչ եւ անցկացնող, Ղազախստանի Հանրապետության արխիվային ծառայության ղեկավարը Հանդես եկավ նախորդ խորհրդաժողովի արձանագրության կատարման մասին Հաղորդումով: Հաղորդման շուրջը ծավալվեց մաքերի փոխանակում:

ԱՊՀ կառավարությունների ղեկավարների կողմից 2003թ. սեպտեմբերի 18-ին Յայթայում արխիվային գործի եւ փաստաթղթավարության Համառուսական գիտա-հետազոտական ինստիտուտին ԱՊՀ մասնակից պետությունների արխիվագիտության, փաստաթղթավարության եւ կառավարման փաստաթղթային ապահովման գծով կազմակերպվեցին վերապատրաստման եւ որակավորման բարձրացման բազային կազմակերպության կարգավիճակ տայու որոշման կապակցությամբ կազմակերպության աշխատանքների կազմակերպման վերաբերյալ Հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Մ.Լարինը:

Խորհրդաժողովը քննարկեց արխիվային ոլորտում ազգային օրենսդրության ներդաշնակեցման Հարցը (ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների 1999թ. Հունիսի 4-ի ստորագրած «Արխիվային տեղեկատվության օգտագործման բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության սկզբունքների եւ ձևերի մասին») Համաձայնագրի 7-րդ հոդվածին Համաձայն):

Ա.Վիրաբյանը Հանդես եկավ «ՀՀ արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին Հաղորդումով:

Որոշվեց ներդաշնակեցման մասին առաջարկություններն ԱՊՀ գործկոմ ներկայացնել մինչեւ 2003թ. դեկտեմբերի 20-ը:

Քննարկվեց ԱՊՀ մասնակից պետությունների պետական արխիվային ծառայությունների ղեկավարների խորհրդակցական խորհրդի կանոնադրության նախագիծը, որին Հավանություն տրվեց եւ որոշվեց այն ուղարկել ԱՊՀ գործկոմ՝ Համապատասխան ընթացակարգով Հետագա քննարկման:

Խորհրդաժողովի արդյունքների մասին ընդունվեց արձանագրություն:

3. «Արխիվները եւ Հասարակությունն այսօր» միջազգային գիտագործնական գիտաժողովը կայացավ նոյեմբերի 11-ին (ժ.14⁰⁰-18⁰⁰): Լավեցին արդի Հասարակական կյանքում արխիվների տեղի եւ դերի վերաբերյալ 15 գեկուցումներ: Գիտաժողովին «Արխիվագետը եւ պատմաբանը-Համագործակցություն Հանուն գիտության» թեմայով Հանդես եկավ Հայաստանի ազգային արխիվի տնօրենի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու Ա.Միրզոյանը:

Գիտաժողովին ընդունեց երաշխավորություններ Եվրասիական տարածաշրջանի երկրների արխիվային ծառայությունների կողմից արխիվային տեղեկատվության միասնական սկզբունքների կիրառման Համար:

Գործուղման ընթացքում Լեհաստանի պետական արխիվների գլխավոր տնօրենի տեղակալ Հենրիկ Կուրովսկու Հետ ձեռք բերվեց Համաշխարհային Համագործակցության մասին Համաձայնագրի նախապատրաստման աշխատանքներ սկսելու մասին:

Ա.Վիրաբյանը եւ Ա.Միրզոյանը մի քանի անգամ Հանդիպեցին եւ Բելյուուսի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան, ԱՊՀ գործկոմում ՀՀ ներկայացուցչի Սուրեն Հարությունյանի Հետ, որի ընթացքում քննարկվեցին Բելյուուսի եւ Հայաստանի արխիվային ծառայությունների Համագործակցության մասին Հարցեր:

ԽՐՈՆԻԿԱ, ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2003 թվի ամռանը, Ֆրանսահայ Կարպիս Ջրբաշյանը նվիրատվության կարգով ՀԱԱ-ին Հանձնեց Հայտնի Ռամկավար ազատական կուսակցության գործիչ Արտավ Դարբինյանի անձնական արխիվի մի մասը:

Նշենք, որ ՀԱԱ-ում է պահվում Ա.Դարբինյանի անձնական ֆոնդը, բացի այդ, մյուս ֆոնդերում եւս կան նրա գործունեության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր:

ՀԱԱ-ում գտնվող այդ փաստաթղթերը մեծ արժեք են ներկայացնում Հայ պատմագիրների Համար: Նոր ստացված նյութերը եւս ունեն գիտա-պատմական արժեք, որոնց մեծ մասը արտացոլում է Ռամկավար ազատական կուսակցության գործունեությունը եւ անշուշտ կհամարվի ու կլրացնի արխիվում պահվող Հարուստ նյութերը:

* * *

ՄԵՐ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՄՆԵՐԸ

2003թ. հոկտեմբերի 24-ին Հայաստանի ազգային արխիվի ցուցասրահը մեծ հանդիսավորությամբ իր գոնե՛րը բացեց բազմաթիվ Հյուրերի առջև: Ցուցասրահն իր փաստաթղթերի ու նյութերի ցուցահանդեսների առաջին ցուցադրությունը նվիրել էր Հայ-ուսուսական բարեկամական հարաբերություններին, որոնք պայտն են դարձրել խորթից ու էլ ավելի են ամրապնդվել Թուրքմենչայի Հայտնի պայմանագրով:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին բարձրաստիճան Հյուրերը Հայաստանից եւ Ռուսաստանից: Հայաստանում Ռուսաստանի դաշնութային դեսպան պր. Դրյուկովը, Հյուրեր Ռուսաստանից, Երեւանի Սյամոնական համալսարանի ռեկտոր Ա. Դարբինյանը, ներկայացուցիչներ բազմաթիվ այլ բուհերից, Հայաստանի ազգային ակադեմիայից, ՀՀ Մշակույթի նախարարությունից, մեր շարք հեռուստակայաններից:

Ցուցահանդեսի դահլիճը զարդարված էր երկու եղբայրական երկրների՝ Հայաստանի եւ Ռուսաստանի ազգային դրոշներով, ծաղիկներով: Շուրջ 300 տարվա պատմություն ունեցող երկու ժողովուրդների բարեկամությունը ներկայացված էր արժեքավոր փաստաթղթերով ու ցուցադրական նյութերով, որոնք հաստատում են եղբայրական ժողովուրդների համայն կապերը: Դրանք Ռուսաստանի կայսրերի հրովարտականներ են, ակտեր, պայմանագրեր, բազմաթիվ բարտեզներ ու եղեկեցական գործիչների կոնդակներ, պաշտոնյաների գրադրություններ, որոնք խոսում են Հայ-ուսուսական դիտական, մշակութային ու տնտեսական կապերի մասին: Այդ փաստաթղթերի մեջ տեղ էին գտել նաեւ Լազարյանների, Կարախանի, Մառի, Պրոտոզևսու, ազմիրալ Իսակովի, մարշալ Բաղդամյանի եւ այլ անվանի անձանց ձեռագրերը:

Ցուցահանդեսին բացման խոսքով հանդես եկավ ՀԱԱ տնօրեն Ա.Վիրաբյանը: Փոխտնօրեն Ա.Միրզայանը Հյուրերին հանգամանորեն ծանոթացրեց ցուցադրված նյութերի հետ: Իրենց տպավորությունների մասին արտահայտվեցին Հայաստանի ՌԴ դեսպան Դրյուկովը եւ Երեւանի սյամոնական համալսարանի ռեկտոր Ա. Դարբինյանը:

2003թ. նոյեմբերին լրացավ Հայ խոշոր քաղաքական գործիչ Ա. Քոչինյանի 90-ամյակը: ՀՀ ազգային արխիվը իր փաստաթղթային հարուստ նյութերի մի մասը արամադրել էր ցուցահանդեսի կազմակերպմանը: Ցուցափեղկերի տակ տեղ էին գտել Ա.Ն.Քոչինյանի կյանքն ու գործունեությունն արտացոլող նյութեր: Ա.Ն.Քոչինյանի հիշատակը հարգելու էին եկել ՀՀ գիտությունների ակադեմիայից, մշակույթի նախարարությունից, ՀԿ կուսակցությունից, Հասարակական կազմակերպություններից: Ցուցահանդեսին ներկա էին նաեւ Անտոն Քոչինյանի զավակներն ու հարազատները:

ՀՀ ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանը ԳԱ փոխտնօրեն Վ.Բարխուդարյանը, ՀԿԿ համանախագահ Յու. Մանուկյանը, Հ.Ոսկանյանը իրենց ելույթներում ներկայացրեցին Ա.Քոչինյանին՝ որպես կուսակցական ղեկավարի, քաղաքական եւ հասարակական գործչի, որը խորհրդային Հայաստանի բարգավաճման, ազգային գիտություն, տնտեսության ու մշակույթի ցարգացման հարցում խոշոր դեր է ունեցել:

* * *

Խորհրդային կարգերի տարիներին Հայ ժողովրդի բազմաթիվ նշանավոր գործիչներ տարբեր բնագավառներում ճանաչվեցին ամբողջ աշխարհում: Այդ պայտնն անունների շարքում առաջիններից էր Արամ Իլյիչի Խաչատրյանը, որի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ՀՀ Ազգային արխիվում քաղվեց մեծ ցուցահանդես: Բազմաթիվ փաստաթղթեր պատմում էին 20-րդ դարի մեծագույն երաժշտի կյանքի եւ գործունեությունից մասին:

Լուսանկարներից մեկում փոքրիկ Արամ Իլյիչը ուսուցչուհի Սոֆիա Արդուբյանի եւ առաջին դասարանի իր ընկերների հետ է, իսկ մյուսում՝ մեծ կոմպոզիտորը շրջապատված է արդեն իր սաներով: Մեկ այլ լուսանկարում Ա.Խաչատրյանը մի խումբ արվեստագետների ու Ա.Միկոյանի հետ է, Հ.Դանիելյանի ու Ա.Իսահակյանի, Գ.Ֆ.Կարայանի հետ:

Ներկայացված էին նաեւ նամակներ, հեռագրեր, հիշողություններ, տեղա-կան եւ արտասահմանյան մամուլում տպագրված նշանավոր անձանց հղովածներ, կարծիքներ նրա մասին, գրքեր, լիբրետոներ եւ այլ հետաքրքիր նյութեր:

* * *

Հաջորդ ցուցադրությունը նվիրված էր Հայ ժողովրդի եւս մի երախտավորի, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, ՀնՍՀ ժողովրդական ճարտարապետ Ալ.Թամանյանի 125-ամյա հոբելյանին:

Ցուցադրությունը կազմակերպվել էր Հայաստանի Ազգային արխիվի եւ Ալ.Թամանյանի անվան տուն-թանգարանի կողմից՝ թանգարանի շենքում:

Ազգային արխիվը ներկայացրել էր մի շարք նյութեր, որոնց շնորհիվ ցուցահանդեսի մասնակիցները ծանոթացան ոչ միայն Թամանյան ճարտարապետի ու շինարարի հետ, այլ նաեւ Թամանյան մեծ մարզու, ազգասերի, պետական խոշոր գործչի հետ:

Ուշադրով է 1921թ. նամակը ուղղված ՀՀ ժողովմոտրհի նախագահ Ա.Լուկաշինին, որը հաստատում է Ալ.Թամանյանի Խորհրդային Հայաստան վերադառնալու նրա համաձայնությունը փաստը:

Հետաքրքիր էին Հայաստանի հնությունների պահպանության ընկերության կանոնադրությունը, որի հիմնադիր անդամներն էին Ալ.Թամանյանը եւ Մ.Սարգսյանը, Երեւանի Վերաշինությունից հասակագիծը, նոր ժողտան (օպերայի եւ բալետի շենքը) կառուցման վերաբերյալ ցուցադրված նյութերը:

Փաստաթղթերի մյուս խումբը տեղեկացնում է մեզ Ստեփանակերտի նախագծի կազմման համար տեղանքի նկարահանումների կազմակերպման անհրաժեշտություն, Գետտաի հուշը կարգավորելու, Սեւանա լճի օգտագործման, հուշարձանների պահպանության, Պետրոգրադի պատկերասրահներից ու այլ վայրերից նկարներ ձեռք բերելու եւ այդ հարցերում Թամանյանի անմիջական դերի մասին:

Հետաքրքիր էին նաեւ Ալ.Թամանյանի գրությունները պաշտոնական առյաններ Թ.Թորոմանյանին եւ արվեստի մի շարք այլ գործիչներին բնակարաններ հատկացնելու մասին:

Ցուցադրված էին նաեւ բազմաթիվ պետական, կառավարական եւ մշակութային շինությունների նախագծեր, մակետներ, ընտանեկան լուսանկարներ:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

**«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆ»
1878-1936**

Փաստաթղթերի ու նյութերի ժողովածու
Երեւան, 2000թ., 684 էջ

Կազմողներ՝ Ա.Ա.Սարգսյան, Է.Վ.Հովսեփյան, Մ.Վ.Մարտիրոսյան:
Պատասխանատու խմբագիրներ՝ Վ.Մ.Հարությունյան, Ն.Ա.Սարգսյան:

Ժողովածուն ընդգրկում է Ա.Թամանյանի կյանքի ու գործունեության միջնեւ այժմ քիչ Հայտնի, սակայն անչափ կարեւոր էջերը: Կազմողներն իրենց համապարփակ աշխատանքում ներկայացրել են ոչ միայն մեծ ճարտարապետին, այլ որ անչափ կարեւոր է՝ քչերին Հայտնի Թամանյան մարզուն, արվեստագետին ու գործչին իր ողջ մեծությունը, ամբողջական նկարագրով:

Հովանավորության Էմմա	- Էջեր Սեդրակ Մանգինյանի նամակագրություններից	3
Գասպարյան Ռուբեն	- Մի քանի փաստաթուղթ կիլիկիահայրապետության սոցիալ-քաղաքական կացությունից (1900-1908թթ.)	9
Միլլիբանյան Սոնյա	- Գեներալ Ստեփան Կորզանովի զեկուցագրերը ու նամակները Կարսի մարզի մասին	20
Ավագյան Գոհար	- Հայ սպանների աքսորը 1920-21թթ.	34
Վաղանյան Գրիգոր	- Նիկողոսյոս եւ Հայկ Ադոնցյանների նամակներն Արշակ Սաֆրաստյանին	54
Ավետիսյան Մարտ	- Վավերագրեր Հայաստանում երաժշտական բարձրագույն կրթության հիմնադրման եւ գործունեությունից մասին	58
Մանուկյան Գոհար	- Փաստաթղթեր 1930-ական թվականների քաղաքական բռնաճնշումների մասին	68
Մխիթարյան Լուսինե	- ԱՄՆ-ի Հայ գաղթական կազմակերպության կազմակերպչական գործունեության մասին	90
Մանգոսյան Վարդիթեր	- Ռոմանոս Մխիթարյանի մասին Ամերիկայի Հուշերում (ծննդյան 120-ամյակի առթիվ)	128
Ֆելիքսյան Անի	- Միլիտարիստների ներգաղթը Խորհրդային Հայաստան (1960-ական թվականներ)	133

ՀՈԳՎԱԾՆԵՐ

Մովսիսյան Ֆելիքս	- Ներսես Աշտարակեցի եւ 1830-1831թթ. լեհական ապստամբությունը	145
Խուրդյան Գեորգ	- ՀԵ Դաշնակցության գործունեությունն Ալեքսանդրապոլում 1890-1895թթ.	149
Ասոյան Լիլիթ	- Հայ բնակչության տեղաբաշխումը Եվրոպական Ռուսաստանում քստ 1897թ. մարզահամարի	154
Սահակյան Ռուբեն	- Ոստիկանության ծառայության կազմակերպումը եւ գործունեությունը Վանի նահանգագետությունում շրջանում	159
Պետրոսյան Գեղամ	- Հայաստանի Հանրապետության կազմակերպության ծառայության կազմակերպչական գործունեությունը 1918թ. հունիս-նոյեմբեր)	169
Բաբաջանյան Վանիկ	- Կուսակցությունների շրջանում Հայաստանի առաջին Հանրապետության կազմակերպչական գործունեությունը	183
Շախիջանյան Կարինե	- Արհեստակցական միությունները Հայաստանի առաջին Հանրապետությունում	190
Ցոլակյան Վարդան	- Հայաստանի առաջին Հանրապետության առևտրաարդյունաբերական պլանը.....	197

ՀԱՂՈՐԳՈՒՄՆԵՐ

Մարտիրոսյան Մարինե	- Ֆրանսիայի ՀՕԿ-ի գործունեության արտացոլումը արևելյան փաստաթղթերում	203
Մարուքյան Սոս	- Պատմաճշակության արժեքները պետք է վերադարձվեն	206

Միլլիբանյան Սոնյա	- Արևելագետը եւ պատմաբանը-Համագործակցություն հանուն գիտության	209
ԼՐԱՏՈՒ		
Միջազգային կազմեր	-	212
Խորհրդային	-	214
Արևելագետներ	-	216
Հրատարակումներ	-	

СО Д Е Р Ж А Н И Е

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ

Эмма Овсепян	- Страницы из переписки Седрака Мандиняна	3
Рубен Гаспарян	- Некоторые документы о социально-политическом состоянии киликийских армян (1900-1908гг.)	9
Соня Мирзоян	- Докладные и письма генерала Степана Корганова о Каресской области	20
Гоар Авакян	- Ссылка армянских офицеров в 1920-1921гг.	34
Владимир Казахеян	- Письма Никогоёса и Гайка Адонцов Аршаку Сафрастяну	54
Алвард Казиян	- Документы об основании и деятельности высшего музыкального заведения Армении	58
Маро Аветисян	- Документы о политических репрессиях 1930-ых годов	68
Гоар Манукян	- Армянская колония США и его связи с Арменией в 1945-1985гг.	90
Лусине Мхитарян	- Романос Меликян в воспоминаниях Арама Амирбекияна (к 120-летию рождения)	128
Армен Бадалян	- Репатриация сирийских армян в Советскую Армению (1960-ые годы)	133

СТАТЬИ

Феликс Мовсисян	- Нерсес Аштаракеци и польское восстание 1830-1831гг.	145
Геворг Худинян	- Деятельность А.Р.Ф. Дашнакцутюн в Александрополе 1890-1895гг.	149
Лилиг Асоян	- Распределение армян в Европейской России по материалам переписи 1897 года	154
Рубен Саакян	- Организация и деятельность армянской полции в городе Ване в период губернаторства	159
Гегам Петросян	- Связи Республики Армения с Верховным Главнокомандованием войск юга России (июнь-ноябрь 1918г.)	169
Ваник Бабаджанян	- Парти в коалиционном правительстве за годы первой Республики Армении ..	183
Карине Шахиджанова	- Профессиональные союзы за годы первой Республики Армении	190
Вардан Цолакян	- Торгово-промышленная палата первой Республики Армения	197

СООБЩЕНИЯ

Марине Мартиросян	- Отражение деятельности ХОК-а Франции в архивных документах	203
Сос Марукач	- Нужно возвращать историко-культурные ценности	206

Соня Мирзоян	- Архивист и историк-сотрудничество во имя науки	209
--------------	--	-----

ИНФОРМАЦИЯ

Международные связи	-	212
Хроника	-	214
Архивные публикации	-	216

«Բանբեր Հայաստանի արխիվներ» գիտագործնական հանգեսն ընդգրկված է ԲՈՂ-ի կողմից հաստատված «Դեկտորական եւ Թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության համար:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հավաքումները:

Խմբագրության հասցեն՝ Երեւան-33, Հրաչյա Քոչարի 5, հեռ. 225-355

Հանգեսը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարութունում:

Գրանցման վկայական N 01ՄՊ000164:

Հիմնագիր՝ Հայ արխիվագետների հասարակական կազմակերպություն:

Ստորագրված է տպագրության 2003թ. դեկտեմբերի 15-ին:

Չափսը 70x100¹/₁₆: Տպաքանակը՝ 300: Տարածվում է անվճար:

«Լույսաս» ՍՊԸ տպարան: Երեւան, Վ.Վաղարշյան 12 «Ա.»:

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վերաբյան

Խմբագրական խորհուրդ

Արմեն Բաղալյան (պատասխանատու քարտուղար)

Ալբերտ Կիրիմյան, Ավագ Հարությունյան, Էմմա
Հովսեփյան, Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան, Արամ
Սիմոնյան, Հարություն Ֆելեքյան

© Բանբեր Հայաստանի արխիվներ, 2003թ.